

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ԾՆՆԴՈՅ - ՄԱՂԱՔԻԱ

ԲՈՔ ԱԹԼԻ

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ. ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ
2002 (Վերանայված 2010)

**ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ԾՆՆԴՈՑ – ՄԱՂԱՔԻԱ**

ԴՈԿ. ԲՈՒ ԱԹԼԻ
Bible Lessons International

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I.	ՍՈՒՐԲ ԳԻՐԸԸ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ	3
II.	ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ	11
	Ա. ԿԻՐԱՌՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ	11
	Բ. ԻՆՉՈՒ Է ՊԵՏՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ	11
	Գ. ԻՆՉՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ	12
	Դ. ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ	12
	Ե. ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ	13
III.	ԹՈՐԱՆ	
	Ա. ԾՆՆԴՈՑ	20
	Բ. ԵԼԻՑ	33
	Գ. ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ	43
	Դ. ԹՎՈՑ	58
	Ե. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ	65
IV.	ՎԱՂ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ	
	Ա. ՀԵՍՈՒ	73
	Բ. ԴԱՏԱՎՈՐԱՑ	81
	Գ. ՀՌՈՒԹ (ԳՐԵՐ)	88
	Դ. 1, 2 ԹԱԳԱՎՈՐԱՑ	93
	Ե. 3, 4 ԹԱԳԱՎՈՐԱՑ	102
V.	ՍԱՆԴՂԱԿ ԲԱԺԱՆՎԱԾ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ	117
VI.	ՍՈՒՐԲ ԳՐԵՐԸ	
	Ա. ՄՆԱՑՈՐԴԱՑՆԵՐ	122
	Բ. ԵԶՐԱՍ	128
	Գ. ՆԵՆՄԻԱ	135
	Դ. ԵՍԹԵՐ	142
VII.	ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	149
	Ա. ԵԲՐԱՅԱԿԱՆ ՊՈՆԵԶԻԱ	153
	Բ. ԳՐՔԵՐԸ	
	ՀՈՒՐ	156

	ՍԱՂՄՈՍՆԵՐ	163
	ԱՌԱԿԱՑ	172
	ԺՈՂՈՎՈՂ	178
	ԵՐԳ ԵՐԳՈՑ	185
VIII.	ՄԵԾ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ	
	Ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	192
	Բ. ԳՐՔԵՐԸ	
	ԵՍԱՅԻ	197
	ԵՐԵՄԻԱ	219
	ՈՂԲ ԵՐԵՄԻԱ	227
	ԵԶԵԿԻԵԼ	233
	ԴԱՆԻԵԼ	240
IX.	ՓՈՔՐ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ	
	ՈՎՍԵԱ	247
	ՀՈՎԵԼ	253
	ԱՄՈՎՍ	259
	ԱԲԴԻԱ	268
	ՀՈՎՆԱՆ	275
	ՄԻՔԻԱ	280
	ՆԱՎՈՒՄ	286
	ԱՄԲԱԿՈՒՄ	292
	ՍՈՓՈՆԻԱ	297
	ԱՆԳԵԱ	302
	ՉԱԶԱՐԻԱ	307
	ՄԱՂԱԶԻԱ	313

Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վստահելի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք մենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հաստատել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք գնում: Այս հարցերը, որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող.1:13-18; 3:9-11): Ես կարող եմ հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակութային կամ կրոնական կլիշեները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետագոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, ապրելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Սկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է երկրաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և հավատամքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատակությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ հասկացա այն Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգայական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորում կամ հերքում Աստվածաշնչում շատ խրթին հատվածների տարբերվող և իրարամերժ մեկնությունները, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակութային, հարանվանական և փորձառական շեղումները: Աստվածաշունչը հաճախ ես կարդացել էի միայն իմ սեփական հայացքները հաստատելու համար: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքան ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առնակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտո-
րության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

Նախադրյալներ

1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնա-
հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (Հոգու)
մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:
2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ մարդկանց՝ բոլորի համար: Աստված
հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի
թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: Հետևաբար, այն պետք է
մեկնաբանվի այդ օրերի և ոչ թե մեր օրերի լույսի ներքո: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա
մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար:
Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ
հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի
հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի
լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ
նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք
կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն
շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
 - ա. Ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
 - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
 - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
 - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդ-
հանուր ուղղերձի հետ
 - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
 - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
 - է. գուգահեռ հատվածները


Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասի-
րության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք
պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ
հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևաբար պետք է դրանցից խուսափել:

I. Աննպատակահարմար մեթոդներ


- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր
նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության
սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ:
Սա հանախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջա-
վայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի
կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված
հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով
որպես փոխադրյալական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին
անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագիր ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված
վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք չեն առնչվում բնագրի հեղինակի
նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հանախ հաջողում է Աստվածաշնչի

առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոստոյի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար»):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Նախկինում ընթերցանության տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են այս երեք բաղադրիչներից մեկի վրա: Սակայն Սուրբ Գրքի ներշնչանքն ավելի հարմար է հաստատել հետևյալ փոփոխված սխեմայով:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

II. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Սուրբ Հոգուն, տեքստը

և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է գցում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառեք:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը
3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է: Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները՝

1. Ընթերցանության առաջին ցիկլը

ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանչական տեսությամբ:

- (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
- (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
- (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)

բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:

գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման

դ. Գտեք գերակշռող գրական ժանրը

- (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմվածք
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
 - դ) Օրենսգիրք
- (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմվածքներ (Ավետարանները, Գործքը)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը

ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը

բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը

գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտողությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար
 - բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) տարեթիվը
 - (3) ստացողները
 - (4) գրի առնվելու հատուկ նպատակը
 - (5) մշակութային միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
 - (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը
 - գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը՝ սխեման, պարբերությունների մակարդակի՝ աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում եք: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գույն կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:
 - դ. Ստուգեք պատմական միջավայրը սերտողությանը օժանդակող միջոցներով
4. Ընթերցանության չորրորդ ցիկլը
- ա. Վերընթերցեք տվյալ գրականական բաժինը մի քանի թարգմանություններով
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
 - բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
 - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես.1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
 - (3) հակադրվող հասկացությունները
 - գ. Թվարկեք հետևյալ կետերը
 - (1) կարևոր տերմինները
 - (2) անսովոր տերմինները
 - (3) կարևոր քերականական կառուցվածքները
 - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
 - դ. Գտեք համապատասխան զուգահեռ հատվածները
 - (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով՝ ա) «սխտեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
 - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարադոքսալ զույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային զույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
 - (3) Գտեք զուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Սուրբ Հոգին:
 - ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
 - (1) սերտողության Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավատացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

III. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ, մեկնաբանության նպատակին: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չիմանանք, թե ինչ էր դա արտահայտում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում՝ բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Սակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրականական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզանից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Սա հավաստի կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստինը:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակություն է ճիշտ: Այդ նշանակությունը կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա կիրառում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված կլինի նամակը ստացողների կարիքների հիման վրա, սակայն պետք է կապված լինի բնագրի հեղինակի նպատակի հետ:

IV. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցի մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգացանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգու օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի ճանաչելու ցանկության համար (տես՝ Սաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բալանսավորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)
«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսա-

վորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզները, Նա չի նշանակում այս պարզներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր այն հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. այն ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լիովին հասկանալի լինել»:

2. Ըստ Կիրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, էջ 75 գրքում (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):

Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:

3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):

«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր գանձերին: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր գանձերի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակությամբ մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա հանձնվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահրաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

V. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Սերտոողության Ուղղեցույց Մեկնաբանության Գիրքը* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրականական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները.

ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS⁴)

բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)

գ. Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (NKJV)

դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)

ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)

զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանչական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդ և հաջորդ պարբերության հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից հաղորդած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Մա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.
 - ա. գրական համատեքստից
 - բ. պատմական, մշակութային հասկացություններից
 - գ. քերականական տեղեկություններից
 - դ. բառային սերտողություններից
 - ե. համապատասխան գուգահեռ հատվածներից
5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՎ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կրթացնեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.
 - ա. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV), հետևում է “Textus Receptus” տեքստային ձեռագրերին:
 - բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:
 - գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:
 - դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Փրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանություն է:
6. Նրանց, ովքեր չեն կարդում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.
 - ա. ձեռագրային փոփոխությունները
 - բ. բառի այլընտրանքային նշանակությունները
 - գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը
 - դ. խրթին տեքստերըԹեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար:
7. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

I. ՀԱՃԱԽ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ա. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ

1. Էլ (EL)
2. Էլոհիմ (Elohim)
3. ՅԱՀՎԵ (YHWH)
4. Ադոնայ (Adon)
5. Էլ Շադայ (El Shaddai)

Բ. ՏԵՔՍՏԵՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

1. Մազորեթիկ Տեքստ (MT)
2. Սեպտուագինտա (LXX)
3. Վուլգատտա
4. Միդրաշ
 - ա. Halakah – Թորայի մեկնաբանություն
 - բ. Haggada – ամբողջ ՀԿ-ի պատմություններն ու առակները
5. Թալմուդ
 - ա. Միշնա /Mishnah/ - հին հայտնի ռաբբիների բանավոր ավանդույթները ըստ Թորայի
 - բ. Գեմարա /Gemara/ - հետագա ռաբբիների կողմից Միշնայի շուրջ մեկնաբանություններ
6. Թարգումներ /Targums/
7. Մեռյալ Ծովի Գալաները

II. ԻՆՉՈՒԷ Է ՊԵՏՔ ՀԿ-Ը ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ

Ա. Այն հանդիսանում էր միակ Սուրբ Գիրքը, որն ունեին Հիսուսը և Առաքյալները: Նրանք հաճախ էին այնտեղից մեջբերում:

Բ. Այն Աստծո ինքնահայտնությունն է: ՀԿ-ը ներշնչված է:

- | | |
|----------------------------|---------------------|
| 1. Մատթեոս 5:17բ | 5. 1 Պետրոս 1:23-25 |
| 2. 2 Տիմոթեոս 3:15-17 | 6. 2 Պետրոս 1:20-21 |
| 3. 1 Կորնթացիների 2:9-13 | 7. 2 Պետրոս 3:15-16 |
| 4. 1 Թեսաղոնիկեցիների 2:13 | |

Գ. Այն մեր համար է գրվել:

1. Հռոմեացիների 4:23-24; 15:4
2. 1 Կորնթացիների 9:9-10; 10:6,11

Դ. Ինչպե՞ս պետք է Քրիստոնյաները արձագանքեն ՀԿ-ին:

1. Մի քանի պատմական մոտեցումներ
2. կատարելապես ընդունեն
3. կատարելապես անտեսեն
4. հարգեն այն որպես հայտնություն, սակայն չկապվեն դրան
5. այն փրկության միջոց չէ
 - ա. Հռոմեացիների 4

բ. Գործք 15; Գաղատացիների 3

6. Երբայեցիներին

7. Այն Աստծո հայտնությունն է մարդուն և մեր կյանքերի համար նպատակ ունի: Այն Նոր Կտակարանի համար հիմք է նախապատրաստում (խոստումից դեպի իրականացում):

III. ԻՆՉՊԵՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ (ԱՍՏՎԱԾԱՇՈՒԻՆՉԸ) Մի քանի կարևոր մեկնաբանական սկզբունքներ.

Ա. Աստվածաշունչը գրված է նորմալ մարդկային լեզվով.

1. Աստված չի թաքցնում ճշմարտությունը
2. Աստված Իրեն հարմարեցրել է մեր հասկացողության կարողությանը

Բ. Ճիշտ մեկնաբանության բանալին բնագրի ներշնչված հեղինակի մտադրությունն է: Այն կարելի է գտնել այն տերմինների հատակ նշանակության մեջ, որոնք գործածվել են հենց հեղինակի կողմից և հասկացվել սկզբնական՝ առաջին ունկնդիրների կողմից: Հետևաբար, Մուրբգրային հատվածը ճիշտ մեկնաբանելու համար պետք է նկատի ունենալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. պատմական միջավայրը;
2. գրական համատեքստը;
3. ժանրը (գրականության տեսակը);
4. քերականությունը (շարահոսությունը);
5. բառերի ժամանակին ունեցած նշանակությունը;
6. հեղինակի կողմից կատարած տեքստուալ կառուցվածքը:

Գ. Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է (2 Տիմ.3:16), հետևաբար, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց Աստվածաշունչն է: Մենք սա կոչում ենք «հավատքի անալոգիա» կամ զուգահեռ հատվածներ.

1. փնտրում ենք ամենահստակ՝ պարզ Մուրբգրային հատվածը
2. փնտրում ենք Աստծո ընդարձակ մտադրությունը՝ նպատակը;
3. փնտրում ենք պարադոքսալ զույգերում ներկայացված ճշմարտությունը:

Դ. Ինչպե՞ս կարելի է տարբերել մշակութային և փոփոխական ճշմարտությունը, միջմշակութային և հավիտենական ճշմարտությունից:

1. Արդյո՞ք ՀԿ-յան ճշմարտությունը հաստատվում է որևէ ՆԿ-յան հեղինակի կողմից:
2. Արդյո՞ք Աստվածաշունչը նույնաձև է իր այս ճշմարտության ներկայացման մեջ:
3. Արդյո՞ք այդ ճշմարտությունը պարուրված է ակնհայտ մշակութային տերմիններով:

IV. ՀՆԱԳՈՒՅՆ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԿ-ՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Ա. Ջրային տարածքները (արևմուտքից մինչև արևելք)

- | | |
|--|------------------------------------|
| 1. Միջերկրական Ծով (Մեծ կամ Վերին Ծով) | 8. Հորոկ Գետ |
| 2. Նեղոս Գետ | 9. Առնոն Գետ |
| 3. Կարմիր Ծով | 10. Գալիլիայի Ծով (Գեննեսարեթ Լիճ) |
| 4. Աքքաբայի Ծովածոց | 11. Եփրատ Գետ |
| 5. Եգիպտոսի Գետ (Վտակ) | 12. Տիգրիս Գետ |
| 6. Ադի Ծով (Մեռյալ Ծով) | 13. Պարսից Ծոց (Ստորին Ծով) |
| 7. Հորդանան Գետ | |

Բ. ՀԿ-ում Աստիտ ժողովրդի վրա ազդեցություն թողած Երկրները (արևմուտքից դեպի արևելք)

- | | | | |
|-------------------|-------------|---------------|----------------|
| 1. Հռոմ | 6. Պաղեստին | 11. Ամմոն | 16. Ասորիք |
| 2. Հունաստան | 7. Հուդա | 12. Փյունիկիա | 17. Բաբելոն |
| 3. Կապտոր (Կրետե) | 8. Իսրայել | 13. Սիրիա | 18. Պարսկաստան |

- | | | | |
|-------------------|-----------|-----------------------|------------|
| 4. Քիթիմ (Կիպրոս) | 9. Եդովմ | 14. Խելթեր (Անատոլիա) | 19. Մադիան |
| 5. Եգիպտոս | 10. Մովար | 15. Արաբիա | 20. Իլամ |

Գ. Ամենամեծ երկրների մայրաքաղաքները /երկրորդ ստուգմամբ/

- | | |
|-----------------------|--------------------------------|
| 1. Մեմֆիս (Եգիպտոս) | 5. Դամասկոս (Սիրիա) |
| 2. Երուսաղեմ (Հուդա) | 6. Նինվե (Ասորեստան) |
| 3. Սամարիա (Իսրայել) | 7. Բաբելոն (Բաբելոնիա) |
| 4. Տիվրոս (Փյունիկիա) | 8. Մուսա /Շուշան/ (Պարսկաստան) |

Դ. Այլ կարևոր քաղաքներ /երրորդ ստուգմամբ/

- | | |
|--------------|------------------------|
| 1. Ուր | 6. Բեթլեհեմ |
| 2. Խառան | 7. Քերքոն |
| 3. Մակեդոնով | 8. Բերսաբե |
| 4. Սյուբեմ | 9. Ավարիս/Չոան/Տայանիս |
| 5. Երիբով | 10. Թեգրե |

Ե. Լեռներ /երրորդ ստուգմամբ/

- | | |
|--------------------------------|---------------------------|
| 1. Արարատ Լ | 5. Կարմեղոս |
| 2. Հերմոն | 6. Նաբավ/Պիսոդա |
| 3. Թաբոր | 7. Սիոն/Մորիա (Երուսաղեմ) |
| 4. Գերաղ կամ Գարիզին (Սյուբեմ) | 8. Սինա/Քորեբ |

V. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Ա. Չթվագրված դեպքեր (Ծննդ. 1-11)

- | | |
|----------------------|---------------------|
| 1. արարչագործություն | 3. ջրհեղեղ |
| 2. անկում | 4. Բաբելոնի աշտարակ |

Բ. Տաս տարեթվեր և դեպքեր.

1. Նահապետական ժամանակաշրջանը (Ծննդ. 12-50 և Հոր) – Ք.Ա. 2000թ.
2. Ելք (Ելից) – Ք.Ա. 1445/1290 թթ.
3. Նվաճումը (Հեսու) – Ք.Ա. 1400/1250 թթ.
4. Միացյալ միապետություն (Սավուդ, Դավիթ, Սողոմոն) – Ք.Ա. 1000 թ.
5. Բաժանված միապետություն (Ռոբովամ- Հերոբովամ I) – Ք.Ա. 922 թ.
6. Սամարիայի անկումը (Իսրայել) – Ք.Ա. 722 թ.
7. Երուսաղեմի անկումը (Հուդա) – Ք.Ա. 586 թ.
8. Կյուրոս արքայի հրամանը (Պարսից թագավորություն) – Ք.Ա. 538 թ.
9. Երկրորդ տաճարը – Ք.Ա. 516 թ.
10. ՀԿ-ի փակումը (Մադաբիա) – Ք. Ա. 430 թ.


Գ. Աստծո ժողովրդի գլխավոր թշնամիները.

- | | |
|--------------|---------------|
| 1. Եգիպտոս | 6. Բաբելոն |
| 2. Քանան | 7. Պարսկաստան |
| 3. Փղշտացիք | 8. Հունաստան |
| 4. Սիրիա | 9. Հռոմ |
| 5. Ասորեստան | |

Դ. Թագավորները ըստ ժամանակացույցի

1. Միացյալ Միապետություն
 - ա. Սավուդ
 - բ. Դավիթ
 - գ. Սողոմոն
2. Իսրայել


- ա. Հերոբովամ I
 - բ. Աքաար
 - գ. Հերոբովամ II
 - դ. Ովսեե
3. Հուդա
- ա. Ռոբովամ
 - բ. Ոզիա
 - գ. Եզեկիա
 - դ. Մանասե
 - ե. Հովսիա
 - զ. Հովաքազ (3 ամիս)
 - է. Հովակիմ
 - ը. Հովաքին (3 ամիս)
 - թ. Սեդեկիա
 - ժ. Գողոդիա (Պարսից Կառավարիչ)
4. Պարսկաստան
- ա. Կյուրոս II (Ք.Ա. 550-530 թթ.)
 - բ. Կամբիզես (Ք.Ա. 530-522 թթ.)
 - գ. Դարեհ I (Ք.Ա. 522-486 թթ.)
 - դ. Ասվերոս I (Ք.Ա. 486-465 թթ.)
 - ե. Արտաշես I (Ք.Ա. 465-424 թթ.)
5. Տե՛ս Հուդայի և Իսրայելի ինչպես նաև Ասորեստանի, Բաբելոնի, Պարսկաստանի և Հունաստանի թագավորների ամբողջական ցանկը 3 և 4 Թագավորաց գրքերի վերջում:




- p - GEDALIAH (P)
- a - ZEDEKIAH (J)
- n - JEHOIACHIN (J)
- m - JEHOIAKIM (J)
- l - JEHOAHAZ (J)
- k - JOSIAH (P)
- j - MANASSEH (J)
- i - HEZEKIAH (J)
- h - UZZIAH (J)
- g - JEROBOAM II (I)

- f - AHAB (I)
- e - JEROBOAM I (I)
- d - REHOBOAM (J)
- c - SOLOMON (UM)
- b - DAVID (UM)
- a - SAUL (UM)



WATERWAYS




NATIONS




ANCIENT NEAR EAST



**ANCIENT
NEAR EAST**



OTHER CITIES



**ANCIENT
NEAR EAST**

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՎԱՆՈՒՄԸ

Ա. Եբրայերենում (MT) գրքի անունը հենց գրքի առաջին բառն է՝ *Bereshith*, «սկզբում» կամ «սկզբնական շրջանում»:

Բ. Սեպտուագինտայի թարգմանությունից այն «Ծննդոց» է, որը նշանակում է «սկիզբ» կամ «ծագում՝ ծնունդ», որը վերցվել է 2:4ա-ից: Հնարավոր է, որ սա է հեղինակի բանալի «ուրվագծող արտահայտությունը» կամ վերջնականորեն, որպեսզի կապակցի տարբեր աստվածաբանական կենսագրականներ իրար հետ, ինչպես Բաբելոնական սեպագրերի գրողներն էին անում: Բանալի արտահայտությունն ավելի անցյալին է նայում, քան ապագային:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Սա Եբրայերեն Կանոնի առաջին բաժնի, այսպես կոչված՝ «Թորայի» կամ «ուսմունքների» կամ «Օրենքի» մի մասն է կազմում:

Բ. Սեպտուագինտայում /Յոթանասանց/ այս բաժինը հայտնի է որպես Պենտատուկ՝ Հնգամատյան (հինգ գլխեր):

Գ. Անգլերենում այն երբեմն կոչվում է «Մովսեսի Հինգ Գրքերը»:

Դ. Ծննդոց-Երկրորդ Օրինաց գրքերը Մովսեսի կողմից գրված շարունակական դեպքեր են՝ ստեղծագործությունից մինչև Մովսեսի կյանքի օրերի վերաբերյալ:

III. ԺԱՆՐԸ

Ծննդոց գիրքը հիմնականում աստվածաբանական, պատմական իրադարձություններ են, սակայն նաև պարունակում է տարատեսակ գրական ժանրեր.

Ա. Պոեզիա. օրինակ՝ 2:23; 4:23 (հավանաբար 1-2)

Բ. Մարգարեություն. օրինակ՝ 3:15; 49:1բ (նաև բանաստեղծական)

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աստվածաշունչը չի նշում այս գրքի հեղինակին: Ծննդոցը չունի «ես» բաժիններ, ինչպես օրինակ Եզրասի, Նեեմիայի գրքերը, կամ «մենք» բաժիններ՝ ինչպես Գործք Առաքելոցը:

Բ. Հրեական ավանդույթը.

1. Անտիկ շրջանի հրեա գրողներն ասում են, որ այն Մովսեսն է գրել.

ա. Բեն Սիրաք «Ժողովողի» 24:23, գրված մոտ Բ. Ա. 185 թ-ին:

բ. Բաբա Բաթրա 14բ, Թալմուդի մի մասը

գ. Ալեքսանդրիացի Ֆիլոն, Եգիպտոսից. հրեա փիլիսոփա, որը գրել է անմիջապես Հիսուսի ծառայության տարիներից առաջ:

դ. Ֆլավիոս Ջոզեֆուսը՝ հրեա պատմաբան, որը գրել է անմիջապես Հիսուսի ծառայության տարիներից հետո:

2. Թորան մի ամբողջական պատմական արձանագրություն է: Ծննդոցից հետո յուրաքանչյուր գիրք սկսվում է «և» շաղկապով (բացի Թվոցից):

3. Սա հայտնություն էր տրված Մովսեսին.
 - ա. Ասվում է, որ Մովսեսը գրել է՝
 - 1) Ելից 17:14
 - 2) Ելից 24:4,7
 - 3) Ելից 34:27,28
 - 4) Թվոց 33:2
 - 5) 2 Օրինաց 31:9,22,24-26
 - բ. Ասվում է, որ Աստված խոսել է Մովսեսի միջոցով՝
 - 1) 2 Օրինաց 5:4-5,22
 - 2) 2 Օրինաց 6:1
 - 3) 2 Օրինաց 10:1
 - գ. Ասվում է, որ Մովսեսը խոսել է Թորայի խոսքերը ժողովրդին՝
 - 1) 2 Օրինաց 1:1,3
 - 2) 2 Օրինաց 5:1
 - 3) 2 Օրինաց 27:1
 - 4) 2 Օրինաց 29:2
 - 5) 2 Օրինաց 31:1,30
 - 6) 2 Օրինաց 32:44
 - 7) 2 Օրինաց 33:1

4. ՀԿ-յան հեղինակները այն վերագրում են Մովսեսին.
 - ա. Հեսու 8:31
 - բ. 4 Թագ. 14:6
 - գ. Եզրաս 6:18
 - դ. Նեեմիա 8:1; 13:1-2
 - ե. 2 Մնացորդաց 25:4; 34:12; 35:12
 - զ. Դանիել 9:11
 - է. Մադաբիա 4:4

Գ. Քրիստոնեական ավանդույթը.

1. Հիսուսը Թորայից բերված մեջբերումները վերագրում է Մովսեսին՝
 - ա. Մատթեոս 8:4; 19:8
 - բ. Մարկոս 1:44; 7:10; 10:5; 12:26
 - գ. Դուկաս 5:14; 16:31; 20:37; 24:27,44
 - դ. Հովհաննես 5:46-47; 7:19,23
2. ՆԿ այլ հեղինակներ ևս Թորայից կատարված մեջբերումները վերագրում են Մովսեսին՝
 - ա. Դուկաս 2:22
 - բ. Գործք 3:22; 13:39; 15:1, 15-21; 26:22; 28:23
 - գ. Հռոմեացիների 10:5,19
 - դ. 1 Կորնթացիների 9:9
 - ե. 2 Կորնթացիների 3:15
 - զ. Եբրայեցիների 10:28
 - է. Հայտնություն 15:3
3. Վաղ եկեղեցու շատ Հայրեր են ընդունել այս գրքի Մովսեսական հեղինակությունը: Իրենեոսը, Ալեքսանդրացի Կլեմենտը, Ռոդոփիները և Տերտուլիանոսը, բոլորն էլ հարցեր են ունեցել, թե ինչ առնչություն ունենա Մովսեսը Ծննդոցի ներկայիս կանոնի ձևի հետ:

Դ. Ժամանակակից Գիտնականները

1. Ըստ երևույթին Թորային եղել են որոշակի խմբագրական հավելումներ (գուցե մերօրյա ընթերցողներին հնագույն այս աշխատությունը հնարավորինս հասկանալի դարձնելու համար).

- ա. Ծննդոց 12:6; 13:7; 14:14; 21:34; 32:32; 36:31; 47:11
- բ. Ելից 11:3; 16:36
- գ. Թվոց 12:3; 13:22; 15:22-23; 21:14-15; 32:33բ
- դ. 2 Օրինաց 3:14; 34:6
- ե. 2 Օրինաց 3:14; 34:6
- զ. Հնում դպիրները չափազանց գրագետ և կիրթ էին: Նրանց տեխնիկան տարբերվում էր երկրից երկիր.
- 1) Միջագետքում շատ զգույշ էին, որպեսզի ոչինչ չփոխեն, և նույնիսկ ստուգում էին իրենց աշխատությունների հավաստիությունը: Ահա մի հնագույն շումերական դպրական ծանուցագրում. («աշխատությունը սկզբից մինչև վերջ ավարտված է, կրկնօրինակված, խմբագրված, համեմատված և հաստատված նշան առ նշան» մոտ Ք.Ա. 1400թ.):
 - 2) Եզիպտոսում նրանք անվճար սրբագրում էին հնագույն տեքստերը, որպեսզի դրանք թարմեցնեին ժամանակակից ընթերցողների համար: Քումրանի դպիրները նույնպես հետևում էին այս մոտեցմանը:
2. 19-րդ դարի գիտնականները տեսականորեն եկան այն համոզման, որ Թորան հանդիսանում է երկար ժամանակահատվածում շատ աղբյուրներից շարադրված փաստաթուղթ (Graft-Wellhausen): Սա հիմնված էր.
- ա. Աստծո տարբեր անունների,
- բ. տեքստում առկա ակնհայտ կրկնությունների,
- գ. արձանագրությունների ձևի,
- դ. դեպքերի աստվածաբանության վրա:
3. Ենթադրյալ աղբյուրներն ու տարեթվերը.
- ա. J աղբյուր (ՅԱՀՎԵ անվան կիրառությամբ) – Ք.Ա. 950թ.
- բ. E աղբյուրը (Էլոհիմ անվան կիրառությամբ) – Ք.Ա. 850 թ.
- գ. JE միասին համադրված – Ք.Ա. 750 թ.
- դ. D աղբյուրը («Օրենքի Գիրքը» 4 Թագ.22:8, որը հայտնաբերվեց Ուսիայի բարեփոխության ընթացքում, Տանարը վերականգնելիս, և ըստ հավանականության դա եղել է Երկրորդ Օրինաց գիրքը, գրված Ուսիայի օրոք ապրող անհայտ քահանայի կողմից, որը աջակցում էր թագավորի կողմից ձեռնարկված բարեփոխմանը) – Ք.Ա. 621թ.
- ե. P աղբյուրը (բոլոր քահանայական նյութերը, հատկապես ծիսակարգերը) – Ք.Ա. 400 թ.
- զ. Ակնհայտ է, որ Թորայի վրա կատարվել են խմբագրական հավելումներ: Հրեաները պնդում են, որ դա կատարել է.
- 1) Քահանայապետը, հենց գրի առնվելու ընթացքում,
 - 2) Երեմիա Մարգարեն,
 - 3) Եզրաս դպիրը. IV Եզրասի մեջ ասվում է, որ նա դարձյալ այն գրի առավ, քանի որ բնագրերը ոչնչացվել էին Ք.Ա. 586թ.-ի Երուսաղեմի Անկման ժամանակ:
- է. Սակայն J. E. D. P. տեսությունը ավելին է ասում մեր ժամանակակից գրական տեսությունների և կատեգորիաների վերաբերյալ, քան Թորայի տված վկայությունը (Ռ. Կ. Հարրիսոն *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 495-541 և *Թինդեյլի Մեկնություններ «Ղևտացիներին»*, էջ՝ 15-25 /R. K. Harrison, *Introduction to the Old Testament, and Tyndale's Commentaries "Leviticus"*):
- ը. Եբրայերեն Գրականության բնորոշ հատկանիշները.
- 1) Չուգորդումները, ինչպես օրինակ Ծննդոց 1 և 2 տարածված են Եբրայերենում: Սովորաբար ընդհանուր նկարագրություն է տրվում և ապա դրան հաջորդում է մասնավոր դեպքը: Հնարավոր է սա եղել է ճշմարտությունները շեշտադրելու հատուկ միջոց կամ բանավոր հիշողությանը օգնելու կերպ:
 - 2) Անտիկ շրջանի ռաբբիններն ասում էին, որ Աստծո ամենատարածված երկու անուններն աստվածաբանական կարևորություն ունեին.

- (ա) ՅԱՀՎԵ՝ Աստծո Ուխտի անունը, երբ Նա հաղորդակցվում է Իսրայելի հետ որպես Փրկիչ և Ազատագրող (տես՝ Սաղմ. 103):
 - (բ) ԷԼՈՂԻՄ՝ Աստված որպես երկրի վրա գոյություն ունեցող ամբողջ կյանքի Արարիչը, Ապահովողը և Պահապանը (տես՝ Սաղմ. 104):
- 3) Մերձավոր Արևելքի ոչ աստվածաշնչյան գրականության մեջ մեծ տեղ է զբաղեցում ժանրերի և բառապաշարի բազմազանությունը, որոնք հանդիպում են իրար համարժեք գրական աշխատություններում (Հարրիսոն, էջ՝ 522-526):

Ե. Հնագույն Մերձավոր Արևելքի գրականության վկայությունն ակնարկում է, որ Մովսեսը գործածում էր գրված սեպագիր փաստաթղթեր կամ Միջագետքի ոճի բանավոր ավանդույթներ, որպեսզի գրի առնի Ծննդոցը: Սա ոչ մի դեպքում չի ենթադրում ավելի քիչ ներշնչանք, այլ փորձ է բացատրելու Ծննդոց գրքի գրական ֆենոմենը: Ծննդոց 37-ից սկսած ակնհայտ եզրիտական ոճի, ձևի և բառապաշարի ազդեցությունը թվում է մատնացույց է անում Մովսեսին, որը գործածում էր Եզրիտոսում իսրայելացիների գտնված ժամանակից առկա թե՛ գրական աշխատություններ, թե՛ բանավոր ավանդույթներ: Մովսեսի պաշտոնական կրթությունը լիովին եզրիտական էր: Հնգամատյանի ճշգրիտ գրական կառուցվածքը անհայտ է: Ես հավատում եմ, որ Մովսեսն է հանդիսանում Հնգամատյանի մեծամասնության հավաքագրողն ու հեղինակը, չնայած որ հավանական է, որ նա օգտվել է դպիրներից և/կամ գրավոր ու բանավոր ավանդույթներից: ՀԿ առաջին մի քանի գրքերի պատմականությունն ու հավաստիությունը հաստատ է:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Ծննդոցը բովանդակում է տիեզերքի արարումից մինչև Աբրահամի ընտանիքն ընկած ժամանակահատվածը: Աբրահամի կյանքը հնարավոր է թվագրել այդ ժամանակաշրջանի աշխարհիկ գրականության միջոցով: Մոտավոր տարեթիվն այս դեպքում կլինի Ք.Ա. 2000 թ., այսինքն Ք.Ա. երկրորդ հազարամյակը: Այս փաստի համար հիմք են հանդիսանում.
1. հայրը ընտանիքի համար որպես գործող քահանա լինելը (ինչպես Հորը)
 2. քոչվորի կյանքը, որի դեպքում հետևում էին նախիրներին և հոտերին
 3. այս ժամանակաշրջանում Սեմական ազգերի միգրացիան
- Բ. Ծննդոց 1-11 վաղ դեպքերը «պատմական» իրադարձություններ են (գուցե «պատմական դրամա»), սակայն ներկայիս բոլոր հնարավոր գիտությունները չեն կարող դրանք թվագրել:
- Գ. Ծննդոց գիրքը ուսումնասիրելիս պետք է հիշել, որ պատմական այս դեպքերը արձանագրել է Մովսեսը, որը Աստծո ժողովրդին Եզրիտոսից դուրս հանեց կա՛մ (1) Ք.Ա. 1445թ-ին՝ համաձայն 3 Թագ.6:1, կա՛մ էլ (2) համաձայն հնագիտության՝ Ք.Ա. 1290թ-ին: Հետևաբար, լինի դա բանավոր ավանդույթների, մեզ անհայտ գրավոր աղբյուրների, թե ուղիղ աստվածային առաջնորդության, Մովսեսը արձանագրում է, թե «ինչպես ամեն ինչ սկսվեց» և «ինչու»:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- Ա. Աստվածաշնչյան այլ գրքեր.
1. Ստեղծագործությունը՝ Սաղմոս 8, 19, 50 և 104
 2. Աբրահամի ժամանակը՝ Հորի գիրքը
- Բ. Աշխարհիկ հնագիտական աղբյուրները.
1. Ծննդոց 1-11-ի մշակութային միջավայրի մեզ հայտնի գրական ամենավաղ համարժեքը դա Էբլայի սեպագիր տախտակներն են հյուսիսային Սիրիայից, որը թվագրված է մոտ Ք.Ա. 2500թ. և գրված է արքադերենով:
 2. Ստեղծագործություն.

- ա. Ստեղծագործության վերաբերյալ Միջագետքյան ամենամոտ արձանագրությունը *Էնումա Էլիշ* է, թվագրված մոտ Ք.Ա. 1900-1700թթ., որը գտնվել է Նինվեի Աշուրբանիպալի գրադարանում և ևս մի քանի վայրերում: Գոյություն ունեն արքադերենով գրված որոշ սեպագիր արձանագրություններ, որոնք նկարագրում են Մարդուքի կողմից արարչագործությունը:
- 1) Աստվածները՝ *Աիսու* (թարմ ջուր՝ արական սեռ) և *Թիամատթ* (աղի ջուր՝ իգական սեռ) ունեին անկառավարելի, չարանճի երեխաներ: Այս երկու աստվածները փորձում էին լռնեցնել ավելի երիտասարդ աստվածներին:
 - 2) Աստծո երեխաներից մեկը՝ *Մարդուքր*, օգնեց հաղթելու *Թիամատթին*: Նա շինեց երկիրը նրա մարմնից:
 - 3) *Մարդուքր* ստեղծեց մարդկությանը մեկ ուրիշ պարտված աստծուց՝ *Զինգուից*, որը *Թիամատթի* արու գուզընկերն էր, *Աիսուի* մահից հետո: Մարդկությունը ծագեց *Զինգուի* արյունից:
 - 4) *Մարդուքր* դարձավ բաբելոնյան պանթեոնի գլխավորը:
- բ. «Ստեղծագործության կնիքը» սեպագիր արձանագրություն է, որը մերկ տղամարդու և կնոջ պատկեր է պտղատու ծառի կողքին, ծառի բնի վրա փաթաթված մի օձի հետ, որը թեքված է դեպի կնոջ ուսերը, կարծես թե խոսում է նրա հետ:
3. Ստեղծագործությունը և ջրհեղեղը. «*The Artahasis Epic*» գիրքը արձանագրում է ավելի փոքր աստվածների ապստամբություն՝ ծանր աշխատանքի և յոթ մարդեղեն գույգերի ստեղծագործության պատճառով, որոնք կատարելու էին այս ավելի փոքր աստվածների պարտականությունները: (1) Խիտ բնակչության և (2) աղմուկի պատճառով մարդկային էակները թվով կրճատվեցին աղետի, երկու սովերի և վերջում էլ ջրհեղեղի միջոցով, որը ծրագրել էր *Enlil*-ը: Այս մեծ իրադարձությունները մինևույն հերթականությամբ կարելի է գտնել Ծննդոց 1-8 գլուխներում: Այս սեպագիր արձանագրությունը թվագրված է գրեթե այն նույն ժամանակակի համար ինչ *Էնումա Էլիշ* և *Գիլգամեշի Էպոս* աշխատությունները, մոտ Ք.Ա. 1900-1700: Բոլորն էլ արքադերեն լեզվով են:
4. Նոյի ջրհեղեղը
- ա. Նիփուրից շումերական մի արձանագրություն, որ կոչվում է *Էրիդույի Ծննդոց*, թվագրված մոտ Ք.Ա. 1600թ., պատմում է *Չիսուդրայի* և գալիք ջրհեղեղի մասին:
- 1) *Էնկա* ջրի աստվածը զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին
 - 2) *Չիսուդրա* թագավորական քահանան փրկվում է մի մեծ նավի մեջ
 - 3) Ջրհեղեղը տևում է յոթ օր
 - 4) *Չիսուդրան* բացում է նավի պատուհանը և արձակում մի քանի թռչունների տեսնելու, թե արդյոք ցամաքը հայտնվել է, թե ոչ
 - 5) Նա նաև ցույց է ոչխար է գոհ մատուցում, երբ դուրս է գալիս նավից:
- բ. Չորս Ծումերական հեքիաթներից ջրհեղեղի վերաբերյալ շարադրված մի բաբելոնյան պատմություն, որը հայտնի է որպես *Գիլգամեշի Էպոս*, բնագիրը թվագրված մոտ Ք.Ա. 2500-2400թթ., չնայած որ գրավոր շարադրանքը սեպագիր արքադերենով էր, այն շատ ավելի ուշ էր գրված: Այն պատմում է ջրհեղեղից փրկված մեկի մասին, որի անունն էր Ութնափիշտիմ (*Utnapishtim*), որը պատմում է Գիլգամեշին՝ Ուտուկի թագավորին, թե ինչպես էր նա փրկվել այդ մեծ ջրհեղեղից և նրան շնորհվել էր հավիտենական կյանք:
- 1) *Էա /Ea/* ջրի աստվածը, զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին և *Ութնափիշտիմին* (*Չիսուդրայի* բաբելոնյան տարբերակը) ասում, որ նավ կառուցի:
 - 2) *Ութնափիշտիմը* և նրա ընտանիքը, ընտրված դեղաբույսերի հետ միասին, փրկվում են ջրհեղեղից:
 - 3) Ջրհեղեղը տևում է յոթ օր:
 - 4) Նավը հանգչում է Պարսկաստանի հյուսիս-արևելյան մասում՝ Նիսիռ լեռան վրա:
 - 5) Նա երեք տարբեր թռչուններ է արձակում, որպեսզի տեսնի արդյոք ցամաքը հայտնվել է, թե ոչ:

5. Միջագետքյան գրականությունը, որը նկարագրում է հնում տեղի ունեցած մի ջրհեղեղ, բոլորն էլ նույն աղբյուրից են բխում: Անունները հաճախ տարբերվում են, սակայն պատմությունը նույնն է: Օրինակ՝ *Zivsudra*, *Atrahasis* և *Utnapishtim* անունները բնութագրում են միևնույն մարդ արքային:
6. Ծննդոցի վաղ շրջանի դեպքերի պատմական զուգահեռները կարելի է բացատրել մարդկության սփռվելուց առաջ (Ծննդ.10-11) Աստծո մասին գիտության և փորձառության լույսի ներքո: Այս իրական պատմական կարևորագույն հիշողությունները մանրակրկիտ մշակվել են և առասպելացվել, դառնալով ներկայումս մեր ունեցած ջրհեղեղի արձանագրությունները, որոնք ընդհանուր են ամբողջ աշխարհում: Նույնը կարելի է ասել նաև ստեղծագործության (Ծննդոց 1-2) և մարդկանց ու հրեշտակների միության վերաբերյալ (Ծննդոց 6):
7. Նահապետների Օրոք (Միջին Բրոնզե Դար)
 - ա. Մարի /Mari/ արձանագրությունները. սեպագիր օրենսդրական (Ամմոնացիների մշակույթ) և անձնական տեքստերը, որոնք գրված են արքադերենով՝ մոտ Ք.Ա. 1700թ:
 - բ. Նուզի /Nuzi/ արձանագրությունները. որոշ ընտանիքների սեպագիր արխիվներ (քոռեցիների մշակույթ) գրված արքադերենով, Նինվեից մոտ 100 մղոն դեպի հարավ-արևելքում, մոտ Ք.Ա. 1500-1300թթ: Նրանք արձանագրում են ընտանեկան և աշխատանքային ընթացակարգեր, ծեսեր: Ավելի մասնահատուկ օրինակների համար տե՛ս Ուոլթոն, էջ՝ 52-58 /Walton, pp. 52-58/:
 - գ. Ալալակ /Alalakh/ արձանագրությունները. սեպագիր տեքստեր հյուսիսային Սիրիայից, մոտ Ք.Ա. 2000 թ:
 - դ. Ծննդոցում գտնվող մի քանի անուններ Մարի տախտակներում նշվում են որպես տեղանուններ՝ Սեգովր, Փեդեգ, Թարա, Նաքովր: Աստվածաշնչյան այլ անուններ նույնպես ընդհանուր են, օրինակ՝ Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Լաբան և Հովսեփ:
8. «Համեմատական պատմագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քետացիների հետ միասին, հին հրեաները ամենաճշգրիտ, օբյեկտիվ և պատասխանատու սղագիրներն էին Մերձավոր Արևելքի պատմության մեջ», Ռ. Կ. Հարրիսոնը իր *Աստվածաշնչյան Քննադատություն* գրքում, էջ՝ 5 /R. K. Harrison *Biblical Criticism*, p.5/:
9. Պարզվում է, որ հնագիտությունը շատ է օգնում Աստվածաշնչի պատմականությունը հաստատելու հարցում: Սակայն, պետք է զգույշ լինել: Հնագիտությունը չի կարող լիարժեք վստահելի ուղեցույց հանդիսանալ.
 - ա. սկզբնական շրջանի աղբատիկ պեղումների պատճառով
 - բ. հայտնաբերված գտածոների շուրջ զանազան, սուբյեկտիվ մեկնությունների պատճառով
 - գ. Հին Մերձավոր Արևելքի ժամանակագրության հետ համաձայն չլինելու պատճառով (չնայած որ դա սկիզբ է առել ու զարգացել երեք օղակներից):
- Գ. Ստեղծագործության վերաբերյալ եգիպտական պատմությունների համար տե՛ս Հ. Ուոլթոնի *Անտիկ իսրայելական գրականությունն իր մշակույթային համատեքստում*, /John H. Walton, *Ancient Israelite Literature in Its Cultural Context*. Grand Rapids, MI: Zondervan, 1990. Pp. 23-24, 32-34/:
 1. Եգիպտական գրականության մեջ ստեղծագործությունը սկսում էր անկայուն, քառսային, նախնադարյան ջրից: Այն դիտարկվում էր որպես ջրի քառսից զարգացող զանգված:
 2. Մեմֆիսից եգիպտական գրականության մեջ, ստեղծագործությունը տեղի է ունենում Պտահի /Ptah/ խոսված խոսքի միջոցով:
- Դ. Տիեզերագիտության հարցերով զբաղվող ավետարանական խմբերի հասցեներ.
 1. Ստեղծագործության Գիտահետազոտական Ինստիտուտ (Երիտասարդ Երկիր)

Փոստարկղ 2667
 Էլ Կայոն, ԿԱ 92021-0667
 Institute for Creation Research (Young Earth)
 P. O. Box 2667
 El Cajon, CA 92021-0667

2. Հավատարու Պատճառներ (Հին Երկիր)
Փոստարկդ 5978
Փասադենա, ԿԱ 91117

Reasons to Believe (Old Earth)
P. O. Box 5978
Pasadena, CA 91117

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (ՀԱՄԱՏԵՔՍ)

Ա. Մովսեսի կողմից գործածվող «ծննդաբանությունը» (*toledoth*) արտահայտության հիման վրա.

1. Երկնքի և երկրի ծնունդները, 1:1-2:3
2. մարդկության ծնունդը, 2:4-4:26
3. Ադամի սերնդաբանությունը, 5:1-6:8
4. Նոյի սերնդաբանությունը, 6:9-9:17
5. Նոյի որդիների սերնդաբանությունը, 10:1-11:9
6. Սեմի սերնդաբանությունը, 11:10-26
7. Թարայի (Աբրահամ) սերնդաբանությունը, 11:27-25:11
8. Իսմայելի սերնդաբանությունը, 25:12-18
9. Իսահակի սերնդաբանությունը, 25:19-35:29
10. Եսավի սերնդաբանությունը, 36:1-8
11. Եսավի որդիների սերնդաբանությունը, 36:9-43
12. Հակոբի սերնդաբանությունը, 37:1-50:26 (#1-11 ունի Միջագետքի գրական հիմք, սակայն #12 ունի եգիպտական գրական ձևաչափ):

Բ. Նպատակը.

1. տղամարդու և կնոջ ստեղծագործության համար, 1-2
2. մարդկությունը և արարչագործությունը անկում է ապրում, 3:1-11:26
3. մի մարդ բոլոր մարդկանց համար (3:15), 12-50
ա. Աբրահամ (12:1-3), 11:27-23:20
բ. Իսահակ, 24:1-36:4
1) Հուդա (Մեսիայի ճյուղը)
2) Հովսեփ (Ժառանգության կրկնակի հողակտոր), 37:1-50:26

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ինչպե՞ս ամեն ինչ սկսվեց

1. Աստված (1-2): Աստվածաշունչն ունի ոչ թե բազմաստվածության, այլ միաստվածության աշխարհայացք: Այն կենտրոնանում է ստեղծագործության «ո՞վ», և ոչ թե «ինչպե՞ս» հարցի վրա: Լիովին հատկանշական է տվյալ ժամանակներին:
2. Աստված ուզում էր փոխհարաբերություն: Ստեղծագործությունը Աստծո համար պարզապես բեմահարթակ է մարդու հետ փոխհարաբերվելու համար:
3. Առանց Ծննդոց 1-3 և 12-ի անհնար է հասկանալ Աստվածաշնչի մյուս գրքերը:
4. Մարդիկ պետք է հավատքով արձագանքեն այն ամենին ինչ գիտեն Աստծո կամքի վերաբերյալ (Ծննդ. 15:6 և Հռոմ. 4):

Բ. Ինչո՞ւ է աշխարհն այսքան չար ու անարդար: Այն «շատ բարի» էր (1:31), բայց մարդկությունը մեղք գործեց (3): Մարսափելի հետևանքները ակնհայտ են.

1. Կայենը սպանում է Աբելին, (4)
2. Ղամբքի վրեժխնդրությունը (4:23)

3. մարդու ամբարշտությունը, (6:5,11-12; 8:12)
4. Նոյի հարբեցողությունը, (9)
5. Բաբելոնի Աշտարակը, (11)
6. Ուրի բազմաստվածությունը

Գ. Ինչպե՞ս է Աստված ուղղելու այն.

1. Մեսիան գալու է (3:15)
2. Աստված կանչում է մեկին, որպեսզի կանչի բոլորին (Ծննդ. 12:1-3 և Ելից 19:5-6)
3. Աստված կամենում է աշխատել ընկած մարդու հետ (Ադամ, Եվա, Կայեն, Նոյ, Աբրահամ, Հրեաներ և Հեթանոսներ) Իր շնորհքի միջոցով.
 - ա. խոստումներ
 - բ. ուխտեր (առանց պայմանների և պայմանական)
 - գ. զոհաբերություն
 - դ. երկրպագություն

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «Աստված ասաց...» 1:3,6,9,14,20,24 (NASB & NIV)
2. «Եկեք...» 1:26; 3:22; 11:7 (NASB & NIV)
3. «մեր պատկերով» 1:26,27; 5:1,3; 9:6 (NASB & NIV)
4. «Տեր Աստված քայլում էր» (մարդաբանական) 3:8 (NASB & NIV)
5. Հսկաներ /Նեֆիլիմ/ 6:4 (NASB & NIV)
6. Ուխտ 6:18; 9:9-17 (NASB & NIV)
7. «Աբրահամը հավատաց Տիրոջը, և Նա նրա կողմից արդարություն համարեց սա» 15:6 (NIV, «Աբրամը հավատաց Տիրոջը և նա դա նրան արդարություն համարեց»)
8. Ողորմություն (*hesed*) 24:12,27; 32:10 (NIV, «բարություն»)
9. Ընտանեկան կուռքեր (*teraphim*) 31:19,30,34 (NIV, «ընտանիքի աստվածներ»)
10. Հմայություն 44:5 (NASB & NIV)

Բ. Անձիք

- | | |
|--------------------------|-----------------------------------|
| 1. Մեթ, 4:25 | 11. Հազար, 16:1 |
| 2. Ենովք, 5:21-24 | 12. Իսմայել, 15:15; 25:12-19 |
| 3. Մաթուսաղա, 5:22,25-27 | 13. Իսահակ, 21:3 |
| 4. Սեմ, 9:18; 10:27-31 | 14. Լարան, 24:29 |
| 5. Քանան, 9:20-27 | 15. Քետուրա, 25:1 |
| 6. Ներրովթ, 10:8-10 | 16. Հակոբ (Իսրայել), 25:26; 32:28 |
| 7. Թարա, 11:24-32 | 17. Դինա, 30:21 |
| 8. Ղովտ, 11:31 | 18. Պետափրես, 37:36 |
| 9. Աբրահամ, 12:18 | 19. Թամար, 38 |
| 10. Մելքիսեդեկ, 14:18 | 20. Մանասե և Եփրեմ, 41:51,52 |

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

Ա. Առաջին քարտեզը – Ծննդոց 1-11

- | | |
|------------------------|-----------------------------|
| 1. Եղեմի պարտեզ, 2:8 | 7. Նինվե, 10:12 |
| 2. Տիգրիս Գետ, 2:14 | 8. Հեբուս, 10:16 |
| 3. Եփրատ Գետ, 2:14 | 9. Սողոմ, 10:19; 13:10 |
| 4. Արարատ Լեռ, 8:4 | 10. Քաղղեացիների Ուր, 11:28 |
| 5. Սենաար, 10:10; 11:2 | 11. Խառան, 11:31-32 |

6. Բաբելոն, 10:10; 11:9

Բ. Երկրորդ քարտեզը Ծննդոց 12-50 համար (համարակալված)

- | | |
|-------------------------------|--------------------------------|
| 1. Սյուքեմ, 12:6; 33:18 | 12. Մովաբ, 19:37 |
| 2. Բեթել, 12:8; 13:3; 35:6 | 13. Ամնոն, 19:38 |
| 3. Նեգովր, /Negev/ 12:9; 13:1 | 14. Բերսաբեն, 21:14; 26:33 |
| 4. Հորդանան Գետ, 13:10-11 | 15. Փղտացիների երկիր, 21:32 |
| 5. Քեբրոն, 13:18; 23:2 | 16. Փառանի Անապատ, 21:21 |
| 6. Ադի Ծով, 14:3 | 17. Մորիայի երկիր, 22:2 |
| 7. Կադես-Բառնեա, 14:7; 16:14 | 18. Արամ, 24:10 |
| 8. Դամասկոս, 14:15 | 19. Եդովմ, 25:30; 36:1,8-9,19 |
| 9. Սաղեմ, 14:18 | 20. Հարոկ Գետ, 32:22 |
| 10. Եգիպտոսի Գետ, 15:18 | 21. Բեթլեհեմ, 35:19 |
| 11. Սուրի Անապատ, 16:7 | 22. Գեսեմի երկիր, 45:10; 46:34 |

XI. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՐՑԵՐ ԾՆՆԴՈՑ 1-11 ՇՈՒՐՁ

1. Ասվածաշունչը քննարկո՞ւմ է Աստծո ծագման մասին:
2. Արդյո՞ք Աստվածաշունչը ստեղծագործության հարցում հակասում է գիտությանը:
3. Ինչպիսի՞ կապ կա Ծննդոց 1-ի և ստեղծագործության վերաբերյալ Մերձավոր Արևելքի այլ արձանագրությունների միջև:
4. Սահմանի՞ր *fiat* և *ex nihilo* տերմինները:
5. Ինչո՞ւ են Ծննդոց 1 և 2 գլուխներում Աստծո համար երկու տարբեր անուններ նշվում:
6. Արդյո՞ք գոյություն ունեն մարդու արարչագործության երկու տարբեր պատմություններ:
7. Ի՞նչ է նշանակում այն խոսքը, որ տղամարդն ու կինը ստեղծվեցին Աստծո պատկերով:
8. Ինչո՞ւ է Մեկ Աստծո համար կիրառված հոգնակի թիվ. 1:26,27; 3:22; 11:7
9. Ինչո՞ւ է գլուխ 3-ը այդքան կարևոր Աստվածաշնչի մյուս գրքերը հասկանալու համար:
10. Արդյո՞ք խոսող կենդանիները (3:1) ապացույց են, որ այս պատմությունը առասպելական է:
11. Ինչո՞ւ է այդքան կարևոր 3:15-ը:
12. Ի՞նչ առնչություն ունի 3:16-ը ներկայիս կյանքի հետ:
13. Կան արդյո՞ք երկու հատուկ ծառեր, թե միայն մեկն է՝ Եդեմի Պարտեզում:
14. Թվարկեք հասարակության այն զարգացումները, որոնք տեղի ունեցան Կայենի տոհմաճյուղից, 4:16-24:
15. Ո՞րն էր ջրհեղեղի նպատակը:
16. Ո՞րն էր մարդկանց կողմից Բաբելոնի աշտարակաշինության նպատակը:

ՀԱՐՑԵՐ ԾՆՆԴՈՑ 12-50 ՇՈՒՐՁ

1. Ինչպիսի՞ տարբերություն կա Նոյի և Աբրահամի ուխտերի միջև:
2. Ի՞նչ առնչություն ունի Աբրահամի ուխտը ոչ հրեա ազգերի հետ:
3. Ի՞նչ երկու թուլության և հավատքի պակասի նշաններ երևացին Աբրամի մեջ, գլուխ 12-ում:
4. Ո՞վ է Մելքիսեդեկը և ինչո՞ւ Աբրահամը նրան տասանորդ տվեց:
5. Ինչո՞ւ է 15:12-21-ը այդքան կարևոր:
6. Ովքե՞ր են գլուխ 18-ի երեք մարդիկ: (Ինչո՞ւ և որտե՞ղ)
7. Ինչո՞ւ Աբրահամը ստեց Սառայի հետ ամուսնության հարցի շուրջ: Ո՞ւմ նա ստեց:
8. Ինչո՞ւ Ռեբեկան և Հակոբը խաբեցին Իսահակին: (27)
9. Ինչո՞ւ Ռուբենը, Դևիդն և Սիմոնը մերժվեցին լինելու Մեսիայի տոհմաճյուղը: (34 և 49)
10. Նկարագրե՞ք Հովսեփի երազները ձեր սեփական բառերով: (37)
11. Ինչո՞ւ Հովսեփը ձևացրեց, թե չի ճանաչում իր եղբայրներին:
12. Ինչո՞ւ Հովսեփի որդիները Հակոբի մյուս որդիների հետ հավասար ժառանգություն ստացան:

Genesis 1-11





**ANCIENT
NEAR EAST**

Genesis 12-50





**ANCIENT
NEAR EAST**



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



ԵԼԻՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Եբրայերենում (MT) այն գրքի առաջին խոսքն է՝ «և սրանք են բառերը (անունները)»:

Բ. LXX թարգմանության մեջ նշվում է *ek 'odos*, որը նշանակում է «դուրս գալու ճանապարհ» կամ «դուրս գալու ուղի»:

Գ. Լատիներեն Ձերոմի Վուլգատան նշում է “exodus” – «Ելից՝ Ելք»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եբրայերեն Կանոնի՝ «Թորա», «ուսմունքներ» կամ «Օրենք» կոչվող առաջին բաժնի մի մասն է կազմում:

Բ. Սեպտուագինտայում /Յոթանասանագ/ այս բաժինը հայտնի է որպես Պենտատուկ՝ Հնգամատյան (հինգ գլխեր)։

Գ. Անգլերենում այն երբեմն կոչվում է «Մովսեսի Հինգ Գրքերը»:

Դ. Ծննդոց-Երկրորդ Օրինաց գրքերը Մովսեսի կողմից գրված իրար հաջորդող դեպքեր են՝ ստեղծագործությունից մինչև Մովսեսի կյանքի օրերը:

III. ԺԱՆՐԸ – Ելից Գիրքը պարունակում է երեք գրական ժանր:

Ա. Պատմական իրադարձություն, Ելից 1-19; 32-34

Բ. Պոեզիա, Ելից 15

Գ. Խորանի բնութագրություններ, Ելից 25-31, և դրա կառուցումը, 35-40

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Թորան մի ամբողջական արձանագրություն է: Ելից գիրքը սկսվում է «և/արդ» կապով: Տե՛ս ընդարձակ քննարկումը Ծննդոցի ուրվագիծ բաժնում:

Բ. Ելից գրքում մի քանի տեղեր կան, որտեղ ասվում է, որ Մովսեսը գրեց.

1. 17:14

2. 24:4,12

3. 34:27,28

Գ. Հեսու 8:31 մեջբերում է Ելից 20:25 և վերագրում այն Մովսեսին: Հիսուսը մեջբերում է Ելից 20:12, 17 և վերագրում այն Մովսեսին, Մարկ.7:10:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Ելիցի տարեթվի շուրջ կա երկու գիտական կարծիք .

1. Ըստ 3 Թագ.6:1, որն ասում է. «Եգիպտոսի երկրից դուրս գալուց 480 տարում... Սողոմոնը սկսեց Տիրոջ տան կառուցումը»:

- ա. Սողոմոնը սկսեց թագավորել Ք.Ա. 970թ: Այս թիվը բացահայտվել է Քարքարի պատերազմի (Ք.Ա. 853թ.) օգնությամբ, որը գործածվել է որպես որոշ չափով հայտնի տարեթիվ:
- բ. Տանարը կառուցվել է իր թագավորության չորրորդ տարում (Ք.Ա. 965թ.), իսկ Ելիցը տեղի է ունեցել մոտ Ք. Ա. 1445/6 թ.:
2. Ըստ այդմ այն պետք է տեղի ունեցած լիներ եգիպտական 18-րդ դինաստիայի ժամանակ:
- ա. Գերության շրջանի Փարավոնը այդ դեպքում կլիներ *Թութմոս III /Thutmose III/* (Ք.Ա.1490-1436թթ.):
- բ. Ելիցի շրջանի Փարավոնը կլիներ *Ամենհոտեպ II /Amenhotep II/* (Ք.Ա. 1436-1407թթ.)
- 1) Ունանք հավատում են Երիքովի այն վկայությանը այն փաստի հիման վրա, որ ոչ մի դիվանագիտական փոխադարձ պարտավորություն չկար Երիքովի և Եգիպտոսի միջև *Ամենհոտեպ III-ի* կառավարման ժամանակ (Ք.Ա. 1413-1377թթ.):
 - 2) *Ամառնայի* տեքստերը արձանագրում են դիվանագիտական փոխադարձ պարտավորություններ, որոնք գրվել են իսեցու վրա *Habiru*-ի մասին, որը Քանանի երկրի վրայով անցավ *Ամենհոտեպ III-ի* թագավորության ժամանակ: Հետևաբար Ելիցը տեղի է ունեցել *Ամենհոտեպ II-ի* թագավորության օրոք:
 - 3) Դատավորների ժամանակաշրջանը այնքան էլ երկար չէ, եթե Ելիցի տարեթիվը 13-րդ դարն է:
3. Այս տարեթվերի հետ կապված առկա խնդիրներն են.
- ա. Սեպտուագինտան (LXX) նշում է ոչ թե 480, այլ 440 տարի:
- բ. Հնարավոր է, որ 480 տարիները ներկայացնում են 12 սերունդ՝ յուրաքանչյուրը 40 տարի, հետևաբար սիմվոլիկ թիվ է:
- գ. Ահարոնից մինչև Սողոմոն թագավորը կան 12 սերունդ քահանաներ (տես՝ 1 Մնաց.6), ապա 12 սերունդ էլ Սողոմոնից մինչև Երկրորդ Տանարը: Հրեաները հույների պես մեկ սերունդը հաշվում են որպես 40 տարի: Այսպիսով, մենք ունենում են 480 տարի դեպի ետ և դեպի առաջ (թվերի սիմվոլիկ կիրառություն) (տես՝ Բիմսոնի *Ելիցի և Նվաճման տարեթվերի վերահաշվարկ //Bimson's Redating the Exodus and Conquest*):
4. Գոյություն ունեն երեք այլ տեքստեր, որոնք տարեթվեր են նշում.
- ա. Ծննդոց 15:13,16 (տես՝ Գործք 7:6), գերության 400 տարիներ,
- բ. Ելից 12:40-41 (տես՝ Գաղ.3:17);
- 1) MT – պանդիստության 430 տարիներ Եգիպտոսում
 - 2) LXX – պանդիստության 215 տարիներ Եգիպտոսում
- գ. Դատավորաց 11:26 – Հեփթայեի օրերից մինչև նվաճումն ընկած ժամանակահատվածը 300 տարի (պաշտպանում է 1445 թիվը)
- դ. Գործք 13:19 - Ելիցը, անապատում դեգերելը և նվաճումը՝ 450 տարի
5. Թագավորացների հեղինակը կիրառել է հատուկ պատմական մեջբերումներ և թվերը չի ամբողջացրել (Էդվին Թիել, *Եբրայեցի Թագավորների Ժամանակագրություն*, էջ՝ 83-85 /Edwin Thiele, *A Chronology of the Hebrew Kings*):
- Բ. Հնագիտությունից փորձառական ապացույցը կարծես թե մատնացույց է անում Ք.Ա. 1290թ. կամ Եգիպտական 19-րդ Դինաստիան:
1. Հովսեփը կարողացավ այցելել իր հորը և Փարավոնին նույն օրը: Առաջին բնիկ Փարավոնը եղել է *Սեթի I* (1309-1290), որը սկսեց տեղափոխել Եգիպտոսի մայրաքաղաքը Թեբեսից ետ դեպի Նեղոսի Դելտա, մի վայր, որը կոչվում էր *Ավարիս/Չուան/ Տանիս*, և որը հանդիսացել է Հիքսոսների հին մայրաքաղաքը: Նա էլ պետք է որ լիներ գերության ժամանակի Փարավոնը:
 - ա. Սա կարծես թե համապատասխանում է Եգիպտոսում Հիքսոսների տիրակալության վերաբերյալ երկու կտոր տեղեկություններին:
 - 1) Ռամզես II-ի ժամանակներից հայտնաբերվել է մի քարե կոթող, որը հիշատակում է, որ Ավարիսը հիմնադրվել է 400 տարի առաջ (Ք.Ա. 1700-ական թթ-ին Հիքսոսների կողմից):

- 2) Ծննդոց 15:13-ի մարգարեությունը նշում է գերության 400 տարիներ:
- բ. Սա ակնարկում է, որ Հովսեփի իշխանության գալը Հիքսոս (Սեմական) Փարավոնի օրոք է եղել: Նոր եգիպտական դինաստիայի մասին խոսվում է Ելից 1:8-ում:
2. Հիքսոսները, որի եգիպտերեն բառի նշանակությունն է «օտար երկրների իշխաններ», մի խումբ ոչ եգիպտական ծագման Սեմական իշխաններ էին, ովքեր տիրում էին Եգիպտոսի վրա 15-րդ և 16-րդ դինաստիաների ժամանակ (Ք.Ա.1720-1570թթ): Ոմանք ցանկանում են կապել նրանց Հովսեփի իշխանության գալու հետ: Եթե մենք Ելից 12:40-ի 430 տարին հանենք Ք.Ա.1720թ-ից, ապա կստանանք մոտ Ք.Ա. 1290 թ.:
 3. Սերթի Առաջինի որդին Ռամզես II (Ք.Ա.1290-1224թթ.) էր: Այս անունը նշվում է որպես երբայեցի գերիների միջոցով Եգիպտոսի պահեստային քաղաքներից մեկը կառուցողի, Ելից 1:11: Ավարիս/Չան/Տանիս քաղաքը հայտնի էր որպես «Ռամզեսների Տուն», Ք.Ա.1300-1100թթ.:
 4. Թուրամո III հայտնի էր որպես մեծն շինարար, ինչպես և Ռամզես II:
 5. Ռամզես II ուներ 47 աղջիկ, որոնք ապրում էին տարբեր վայրերում:
 6. Հնագիտությունը բացահայտել է, որ Քանանի պարսպապատ քաղաքներից շատերը (Հազորը, Դեբիրը, Լաքիսը) ոչնչացվել են և արագ վերակառուցվել մոտ Ք.Ա.1290թ-ին: Եթե դրան գումարենք անապատի 38 տարվա դեգերումները, ապա սա կհամընկնի Ք.Ա. 1290թ. հետ:
 7. Հնագիտությունը գտել է Ռամզեսներին հաջորդող Մերնեփթա (Ք.Ա. 1224-1214թթ./տե՛ս՝ Մերնեփթայի արձանագրությունը, թվագրված՝ Ք.Ա.1220թ./) փարավոնի հիշատակի արձանագրության մեջ իսրայելացիներին վերաբերող մի հատված, որտեղ ասվում է, որ նրանք եղել են հարավային Քանանում:
 8. Եդովմը և Մովաբը կարծես թե Ք.Ա.1300-ականների ավարտին ձեռք են բերել հզոր ազգային ինքնություն: Այս երկրները 15-րդ դարում դեռևս կազմավորված չէին:
 9. Ջոն Ջ. Բիմսոնի *Ելիցի և Նվանման Վերաթվագրում* վերնագրով գիրքը, որը հրատարակվել է Շեֆիլդի Համալսարանի կողմից, 1978-ին /John J. Bimson *Redating the Exodus and Conquest*/ առարկում է վաղ թվագրության բոլոր այս հնագիտական փաստարկները:

VI. ԱՅԼ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՊՎԱԾ ԵԼԻՑԻ ՀԵՏ

Ա. Կասկածելի է Ելիցի ժամանակ Եգիպտոսից դուրս եկած մարդկանց թիվը.

1. Թվոց 1:46; 26:51 տեղեկացնում են, որ կային պատերազմելու տարիքի (20-50 տարեկան, տես՝ Ելից 38:26) 600,000 տղամարդիկ: Հետևաբար, եթե հաշվենք կանանց, երեխաներին և ծերերին, ապա հավանաբար եղել է 1,5-2,5 միլիոն մարդ:
2. Սակայն երբայերենում *հազար՝ Eleph*, տերմինը կարող է նշանակել.
 - ա. մի ընտանիք կամ ցեղ, Հեսու 22:14; Դատ.6:15; 1 Թագ.23:23; Չաք.9:7
 - բ. ռազմական միավոր, Ելից 18:21,25; 2 Օր.1:15
 - գ. տառացի հազար, Ծննդ.20:16; Ելից 32:28
 - դ. սիմվոլիկ կիրառությամբ, Ծննդ.24:60; Ելից 20:6 (2 Օր.7:9); 34:7; Երեմ.32:18
 - ե. Ուզարտականից միևնույն բաղաձայները *alluph*, որը նշանակում է «խմբապետ՝ իշխան» (տես՝ Ծննդ.36:15): Սա կարող է նշանակել, որ Թվոց 1:39-ի համար կային 60 խմբապետներ և 2700 տղամարդիկ Դանից: Խնդիր է առաջանում, երբ ըստ երևույթին չափազանց շատ խմբապետներ են նշվում որոշ ցեղերում տղամարդկանց թվաքանակի համար:
 - զ. Կա մի հետաքրքիր քննարկում NIV սերտողության Աստվածաշնչում, էջ՝ 186:
3. Հնագիտությունը գնահատել է այս ժամանակաշրջանում Եգիպտոսի և Ասորեստանի զորքերի քանակը տասնյակ հազարներով: Հեսու գրքում որոշ հատվածներ կարծես թե ակնարկում են, որ Իսրայելն ուներ մոտ 40,000-անոց զորք (տես՝ Հեսու 4:13; 7:3; 8:3,11,12):

Բ. Կասկածելի է Ելիցի երթուղին.

1. Կապված հետևյալ տեղանքների հետ՝ (1) եգիպտական քաղաքների, (2) ջրի վտակների՝ գետերի, և (3) երբայեցիների առաջին ճամբարների տեղանքները բոլորն էլ անհայտ են:
2. «Կարմիր Ծով» տերմինը տառացի *Yam Suph*, որը.

- ա. նշանակում է «եղեգների ծով» կամ «նոյախոտերի ծով»: Այն կարող է վերաբերել աղի ջրերի՝ Հովան 2:5; 3 Թագ. 9:26, կամ թարմ ջրերի՝ Ելից 2:3; Եսայի 19:26: LXX առաջինն է թարգմանել այս տերմինը որպես «Կարմիր Ծով», որին հետևել է Վուլգատան և ապա KJV անգլերեն տարբերակը:
- բ. վերաբերում է «հարավի ծովին» կամ «ծայրամասի (երկրագնդի) ծովին»: Հնարավոր է նկատի ունենալ ներկայիս Կարմիր Ծովը, Հնդկական Օվկիանոսը կամ Պարսից Ծոցը:
- գ. ՀԿ-ում ունենալ մի քանի կիրառություն (տես՝ Թվոց 33:8,10):
3. Գոյություն ունի երեք հնարավոր երթուղի, որոնք ընդգրկում են երեք տարբեր ջրամբարներ:
- ա. Հյուսիսային երթուղին. սա Միջերկրականի Ծովեզերքով էր, որն անցնում է հայտնի «փղտացիների ճանապարհ» առևտրային մայրուղով: Սա Ավետյաց Երկիր տանող ամենակարճ ճանապարհն էր: Իրենց հանդիպած ջրամբարը պետք է, որ այս ճանապարհի ծանծաղ, ճահճոտ տարածքները լինեին, որոնք կոչվում էին Մարբոնիս Լիճ կամ Մենգալիս Լիճ: Ամեն դեպքում հաշվի առնելով Ելից 13:17 տեսնում ենք, որ այն կարծես բացասում է այս տարբերակը: Նաև եգիպտական ամրոցների առկայությունն այս երթուղու վրա նույնպես հակասում է այս տարբերակը:
- բ. Միջին երթուղի. այս երթուղին պետք է որ ընդգրկեր կենտրոնական լճերը, որոնք կոչվում էին. (1) «Դառը Լճեր», (2) «Բալահ Լիճ», (3) «Թիմսա Լիճ»: Սա պետք է որ անցներ Սուրի Անապատի միջով անցնող քարավանային երթուղով:
- գ. Հարավային երթուղի. սա պետք է որ ընդգրկեր այսօր Կարմիր Ծով կոչվող աղի ջրերի մեծ ջրային տարածքները: Այս տարածքով անցնող քարավանային երթուղի կար, որը կապում էր «Արքայական Մայրուղու» հետ (տրանս-հորդանանյան ճանապարհը դեպի Դամասկոս) Գասիոնգաբերում:
- 1) Այս տարբերակը բացառում է միայն այս ջրային տարածքներում եղեգների բացակայությունը:
 - 2) Սույն տարբերակը մատնաշում է, որ ըստ 3 Թագ. 9:26 Գասիոնգաբերը Կարմիր Ծովի ափին Ելաթի մոտ է: Սա կլինի Աքաբայի Ծովածոցը կամ Կարմիր Ծովի մի մասը (տես՝ Թվոց 21:4; 2 Օր. 27; Դատ. 11:16; Երեմ. 49:12):
- դ. Թվոց 33 գլուխը հստակ ցույց է տալիս խնդիրը: Համար 8-ում նրանք «ծովի միջով անցան», ապա համար 10-ում՝ բանակատեղի դրեցին «Կարմիր Ծովի» մեկ ուրիշ ջրային տարածքի մոտ:
- ե. Ինչպիսի ջրային տարածք էլ որ նրանք անցած լինեն, այն Աստծո հրաշքն է եղել: Իսրայելը ապահովվեց մահացած եգիպտացի զինվորների զինամթերքով, որոնց ծովի ափքները բերեցին հենց այն ջրամբարի մոտ, որտեղ իջևանել էին իսրայելացիները: Եվս մեկ հրաշք, Ելից 14:30; 15:4-5:
- զ. Այլ գրական աղբյուրներից հնարավոր է, որ «Ելաթը» /“the yom suph”/ եղել է հարավային մասում ջրարտեզագրված, խորհրդավոր մի ջրամբար: Որոշ գրքերում Հնդկական Օվկիանոսը կամ Բենգալի ծովափը կոչվում է “yom suph”:
4. Մինա լեռան տեղակայությունը նույնպես կասկածելի է.
- ա. Եթե Մովսեսը Փարավոնից երեք օրվա ճամփորդություն խնդրելիս այն տառացի նկատի ունենալ և ոչ թե փոխաբերորեն (3:18; 5:3; 8:27), ապա դա այնքան էլ բավարար ժամանակ չէր, որպեսզի նրանք կարողանային հասնել հարավային Մինայի թերակղզային ավանդական տարածաշրջանը: Այդ իսկ պատճառով որոշ գիտնականներ այս լեռը քարտեզի վրա տեղակայում են Կադես-Բառնեա օազիսի մոտակայքում:
- բ. Մին անապատում գտնվող «Հերել Մուսա» կոչվող ավանդական այս տեղանքն ունի մի քանի նպաստող կետեր իր տարբերակի օգտին՝
- 1) լեռան առջև սփռված ընդարձակ հարթավայրը,
 - 2) 2 Օրինաց 1:2 ասում է, որ Մինա Լեռից մինչև Կադես-Բառնեա տասնմեկ օրվա ճանապարհ էր,

- 3) «Սինա» տերմինը երբայերեն չէ: Հնարավոր է այս անվանումը կապված է Սին անապատի հետ, որն ակնարկում է փոքրիկ անապատային թուփ: Այս լեռան երբայերեն անվանումը Քորեր է (անապատ),
- 4) Սինա լեռը մ. թ. 4-րդ դարից ի վեր եղել է ավանդական տարածաշրջանը: Այն գտնվում է «Մադիանի երկրում», որն ընդգրկում է Սինայի թերակղզու և Արաբիայի մի մեծ տարածք,
- 5) կարծես թե հնագիտությունը հաստատել է Ելիցի պատմության մեջ նշված մի քանի մեծ քաղաքների տեղանքները (*Եղամ, Դուքա, Ռաֆիդիմ*), որոնք գտնվում են Սինա թերակղզու արևմտյան կողմում:

VII. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Ելիցի վերաբերյալ Եգիպտոսից ընդհանրապես գրավոր վկայություններ չկան: Մա անսովոր չէ *ՅԱՀՎԵ*-ի կողմից եգիպտական աստվածներին կատարյալ պարտության մատնելու դեպքում:

Բ. Գոյություն ունեն օրենքների որոշ մշակութային օրինակներ, որոնք նման են *Տասնաբանյանին*.

1. *Լիպիտ-Իշտարի Օրենքները* (Շումերական), Իսին թագավորից (Ք.Ա. 1934-1924թթ.):
2. *Իշնունայի Օրենքները* (անտիկ բաբելոնյան), թվագրված մոտ Ք. Ա. 1800թ-ին, Աշնունայի թագավոր Դադուշայի իշխանության օրոք:
3. *Համնուրաբի Կանոնը* (անտիկ բաբելոնյան)՝ Բաբելոնի թագավորի կողմից: Համնուրաբի (Ք.Ա. 1728-1686թթ.):
4. Քետացի թագավորներ՝ Մուպսիլի I կամ Հաթթուսիլի I-ի օրենքները՝ մոտ Ք. Ա. 1650թ.
5. Միջագետքի օրենքի կանոնները կենտրոնանում են հիմնականում քաղաքացիական օրենքների վրա, մինչդեռ աստվածաշնչյան օրենքները կենտրոնանում են հիմնականում կրոնական/ծիսական կանոնների վրա: «... կարելի է առաջարկել քաղաքացիական հակումներ՝ կանխակարծիքներ բոլոր սեպագիր օրենքներում և ծիսական հակումներ՝ իսրայելական օրենքներում... Միջագետքում վիրավորանքը վերջին հաշվով դիտարկվում է որպես հասարակության հետ առնչվող երևույթ, մինչդեռ Իսրայելում՝ բոլոր վիրավորանքները վերջին հաշվով դեմ են Աստծուն»: - Ուոլթոն, էջ՝ 80:
6. Ալբերտ Ալտը իր *Հին Կտակարանի Պատմության և Կրոնի Թեզեր* /*Albert Alt Essays on Old Testament History and Religion*, Oxford, 1966, pp. 81-132/ գրքում պատկերում է երկու տեսակի օրենքներ.
 - ա. պայմանական, որն ունի պայման պարունակող ենթամասեր: Դրան բնորոշ է «եթե ... ապա» կառուցվածքը: Այն չի դիմում կրոնական կամ հանրային նորմերի, այլ սահմանում է արգելքներ և հետևանքներ:
 - բ. ապացուցելի, որը չի պարունակում պայմանական ենթամասեր:
 - 1) Ելից 21 և 2 Օր.27:15-26 կիրառում են երրորդ դեմք և կապված են անհատի, հատուկ իրավիճակների հետ
 - 2) Ղևտ.18:7-17 և Ելից 20, 2 Օր.5 կիրառում են երկրորդ դեմք և ավելի ընդհանուր են իրենց մասշտաբով:
 - գ. Միջագետքի օրենքը հիմնականում պայմանական է, մինչ Իսրայելինը՝ հիմնականում ապացուցելի:

Գ. Ինչ վերաբերում է ազատական այս հին վիճարկմանը, թե Մովսեսը չէր կարող գրել իմանալ. հնագիտությունը հաստատել է քանանացիների առաջին այբուբենի գոյությունը, որը գործածվում էր Եգիպտոսում՝ Մովսեսի օրոք:

1. Փաստ են հայտնաբերվել Սեմական ստրուկների վերաբերյալ, Սինայի եգիպտական հանքահորերում, Ք.Ա.1400թ-ից (Օլբրայթ, ԲԱՍՈՐ, #110 [1948], էջ՝ 12-13) /Albright, BASOR, #110/:
2. Խեցեկավ (կավե կտորներ, որոնք կիրառվում էին գրություններ պահելու համար) է հայտնաբերվել Թագուհիների Սարահարթից՝ Թերեսում. Օլբրայթ, Բասոր, #110 (1948), էջ՝ 12:

VIII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (ՀԱՄԱՏԵՔՍ)

Ա. Համառոտ նկարագրությունը.

1. Իսրայելը Եգիպտոսում, 1-11
2. Իսրայելը հեռանում է Եգիպտոսից, 12-18
3. Իսրայելը Սինա լեռան մոտ, 19-40
 - ա. Կյանքի Օրենքները՝ Սինա Լեռ, 19-24
 - բ. Երկրպագության Օրենքները՝ Սինա Լեռ, 25-40
 - 1) Խորանի նախագիծը, 25-31
 - 2) Ապստամբություն և ուխտի նորոգություն, 32-34
 - 3) Խորանը շինված, 35-40

Բ. Պատուհասները

1. Դրանք ցույց են տալիս Եգիպտոսի աստվածների դեմ Աստծո դատաստանը: Ըստ երևույթին տեղի են ունեցել 18 ամիսների ընթացքում: Պարունակում են բնական տարերքներ, մինչդեռ.
 - ա. գերբնական ժամադրությամբ,
 - բ. գերբնական ուժգնության,
 - գ. գերբնական տեղակայությամբ,
2. 10 պատուհասների համառոտ նկարագրությունը.
 - ա. Նեղոսի արյան վերածվելը, 7:14-25
 - բ. գորտերը, 8:1-15
 - գ. ոջիլները, մժեղները, 8:16-19
 - դ. շնանանճերը, 8:20-32
 - ե. նախիրների հիվանդությունը, 9:1-7
 - զ. թարախապալարները, 9:8-12
 - է. կարկուտը, 9:13-35
 - թ. մորեխները, 10:1-20
 - ժ. թանձր խավարը, 10:21-29
 - ի. մահվան հրեշտակը, առաջնեկների մահը, 11:1-8

Գ. Գլուխ 23-ի տոների, ծոմերի ցանկը.

1. Շաբաթը, 23:3
2. Չատիկը (Նիսան 14), 23:5; Ելից 12
3. Բաղարջակերաց Տոնը (Նիսան 15-21), 23:6-8; 2 Օր.16:1-8
4. Երեխայրիքի Տոնը /Հունձքի Տոնը/ (Նիսան 22), 23:9-14
5. Շաբաթների Պենտեկոստեի Տոնը (50 օր անց Նիսան 21, Սիվան 6), 23:15-21; 2 Օր.16:9-12
6. Փողեր փչելու տոնը (Տիշրի 1), 23:23-25, Թվոց 29:1-6
7. Քավության Օրը (Տիշրի 10), 23:26-32; Թվոց 29:7-11
8. Տաղավարահարաց /վրանների/ Տոնը (Տիշրի 15), 23:33-44; Թվոց 29:12-40; 2 Օր.16:13-17

Դ. Մանրամասն նկարագրություն.

1. տես՝ Ռ. Կ. Հարրիսոն, *ՀՂ Ներածություն*, էջ՝ 560-562 /R. K. Harrison, *Introduction to the OT*/
2. տես՝ Ի. Ջ. Յանգ, *ՀՂ Ներածություն*, էջ՝ 63-72 /E. J. Young, *An Introduction to the OT*/
3. տես՝ NIV Սերտողության Աստվածաշունչը, էջ՝ 85-87 /NIV Study Bible/

IX. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այն շարունակում է ծննդոցում սկսված պատմությունը: Փաստագրում է ընտրյալ ընտանիքի զարգացումները մինչև ընտրյալ ազգ դառնալը: Չնայած որ նրանք գերեվարվում են Եգիպտոս, ժառանգելու են Ավետյաց Երկիրը (Ծննդ. 12:1-3; 15:16):

Բ. Արձանագրում է Սինա Լեռան (Զորեբի) վրա տրված ուխտի օրենքները.

1. Ինչպես պետք է ապրենք (Տասնաբանյան և հավելյալ կանոններ)
2. Ինչպես պետք է երկրպագենք (Խորանը, քահանաներ, ծիսակարգեր, ժամանակ և ծեսեր)
3. «Ինչպես պետք է անել» Խորանի ձեռնարկը (Գևտացիների)

Գ. Այն արձանագրում է Աստծո սիրո և ողորմության հրաշալի գործերն Իսրայելի հանդեպ, որոնց մասին մարգարեացվել էր Աբրահամին, Ծննդոց 15:16:

Դ. Աստծո գործելակերպը Փարավոնի հանդեպ ցույց է տալիս Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև եղած հավասարակշռությունը:

1. Աստված խստացրեց Փարավոնի սիրտը.
 - ա. 7:3, 13
 - բ. 9:12
 - գ. 10:1, 20, 27
 - դ. 11:10
 - ե. 14:4,8
2. Փարավոնն ինքը խստացրեց իր սիրտը.
 - ա. 8:15, 32
 - բ. 9:34

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. նստատեղի, 1:16 (NIV, delivery stool – որդեծնության աթոռակ)
2. հանիր քո կոշիկները, 3:5 (NASB & NIV)
3. «Երեք օրվա ճանապարհ», 3:18; 5:3; 8:27 (NASB & NIV)
4. «Ես կխստացնեմ նրա սիրտը» 4:21; 7:3, 13; 9:12, 35; 10:1, 20, 27 (NASB & NIV)
5. կախարդներ, 7:11, 22 (NASB & NIV)
6. անարատ, 12:5 (NIV, առանց խորշոմի)
7. ամալի սյուն, 13:21-22 (NASB & NIV)
8. մարգարեուհի, 15:20 (NASB & NIV)
9. հաց (մանանա), 16:4, 8, 14-15, 31 (NASB & NIV)
10. քահանայական թագավորություն, 19:4-6 (NASB & NIV)
11. ամբողջովին բնաջնջել /հայերենում՝ սպանել/ (*herem*), 22:20 (NIV, ոչնչացվեց)
12. սուրբ սյուներ /հայերենում՝ կուռքեր/, 23:24 (NIV, սուրբ քարեր)
13. եփուղ, 25:7 (NASB & NIV)
14. քավություն /անգլ.՝ ողորմության աթոռ/, 25:17 (NIV, քավության ծածկոց)
15. *Ուղիս և Թումիս*, 28:30 (NASB & NIV)
16. գիրքը, 32:32-33 (NASB & NIV)
17. Առաջավորության /անգլ.՝ ներկայության/ հաց, 35:13 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք

- | | |
|----------------------------------|-------------------------|
| 1. Հիքոսու, /հայերենում չկա/ 1:8 | 5. Փենեհես, 6:25 |
| 2. Տիրոց հրեշտակ, 3:1,4 | 6. կործանիչը, 12:23 |
| | 7. Նադար և Աբիուղ, 24:1 |

- | | |
|--|--------------------|
| 3. ԵՍ ԵՄ (ՅԱՀՎԵ), 3:14; 6:3 (NIV, ԵՍ ԵՄ որ Էն) | 8. Ամադեկ, 17:8-16 |
| 4. Ռագուել, 2:18, Հոթոր, 3:1; 18:11-12 | 9. Քերովրե, 25:19 |




XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

- | | |
|-------------------------------|--------------------------------------|
| 1. Փիթոմ, 1:11 | 7. Սուր Անապատ |
| 2. Ռամսես, 1:11 | 8. Մին Անապատ |
| 3. Մադիամ, 2:15 | 9. Փառանի Անապատ |
| 4. Քորեբ լեռ, 3:1 | 10. Ծովի Ճանապարհ (փղշտացիներ) 13:17 |
| 5. Գեսեմ, 8:22 | 11. Ագաբայի Ծովածոց |
| 6. Յամ Սուֆ (NIV, Կարմիր Ծով) | |


XII. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ Փարավոնը վախեցավ Եբրայեցիներից: 1:7-10
2. Ինչո՞ւ պետք է արու երեխաներին զցեին Նեղոս գետը: Ինչո՞ւ էր Փարավոնի ընտանիքը լողանում Նեղոսում: Ինչո՞վ էր նշանակալից Նեղոսի ջրերի արյան վերածվելը:
3. Ինչո՞ւ Մովսեսը փախավ Մադիամի երկիր:
4. Ինչո՞ւ էր Աստծո կողմից Մովսեսին Իր անունը հայտնելը այդքան կարևոր: (3:13-16)
5. Ի՞նչ է ասում 3:22-ը ՅԱՀՎԵ-ի և Եգիպտոսի աստվածների միջև ընդհարման վերաբերյալ:
6. Ինչպե՞ս ենք բացատրում Ելից 6:3-ը ՅԱՀՎԵ-ի Ծննդոց 4:26-ում հայտնվելու լույսի ներքո:
7. Ինչպե՞ս են ազդում պատուհասները Եգիպտոսի կրոնի վրա:
8. Արդյո՞ք Աստված խստացրեց Փարավոնի սիրտը, որպեսզի նրանից վերցնի իր ազատ կամքը:
9. Ո՞րն է առաջնեկների մահվան նշանակությունը:
10. Որտեղի՞ց եբրայեցիները ձեռք բերեցին իրենց ռազմական զենքերը:
11. Ի՞նչ կերպերով է գլուխ 18-ի Մովսեսի գործողությունը Հոթորի հանդեպ արտացոլում, որ նա հավատում է ՅԱՀՎԵ-ին:
12. Ի՞նչ է ակնարկում Իսրայելի քահանայական թագավորություն լինելը:
13. Թվարկի՞ր Տաս Պատվիրանները:
14. Թվարկի՞ր գլուխ 23-ի տոները:
15. Նկարի՞ր Խորանի նկարը և դրա կահավորանքը:
16. Ի՞նչ է խորհրդապատկերում գլուխ 32-ի Ոսկե Հորթը:

EXODUS



PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Եբրայերեն տեքստում (MT) հանդիսանում է գրքի առաջին բառը՝ «և Նա (ՅԱՀՎԵՆ) կանչեց»:

Բ. Թալմուդը (Միշնա) այն անվանում է «Բահանաների օրենքը»:

Գ. LXX թարգմանությունից «Ղևտական Գիրք» է:

Դ. Լատիներեն Ջերոմի Վուլգատան այն վերնագրել է «Ղևտացիների»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Հանդիսանում է «Թորա», «ուսմունքներ» կամ «Օրենք» կոչվող Եբրայական Կանոնի առաջին բաժնի մի մասը:

Բ. Այս բաժինը LXX-ում հայտնի է որպես Հնգամատյան՝ Պենտատուկ (հինգ գալարներ):

Գ. Երբեմն անգլերենում այն կոչվում է «Մովսեսի Հինգ Գրքերը»:

Դ. Այն պարունակում է Մովսեսի կողմից գրված՝ ստեղծագործությունից մինչև իր կյանքի տարիները ներառյալ պատմությունները. Ծննդոցից մինչև 2 Օրինաց գիրք:

III. ԺԱՆՐԸ. Գիրքը հիմնականում օրենսդրություն է, բացառությամբ 8-10 գլուխների պատմական դեպքերի:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ. Գլուխ 1:1 ներկայացնում է հաճախակի կրկնվող (35 անգամ) «ՅԱՀՎԵՆ ասաց Մովսեսին» խոսքերը: Տե՛ս մանրամասն քննարկումը Ծննդոցի ուրվագծում:

V. ՏԱՐԵԹԻՎԸ. Համեմատե՛ք Ելից 40:2, 17-ը Թվոց 1:1-ի հետ: Սա ցույց է տալիս, որ այն տրվել է Մովսեսին Աստուծոց, Ելիցից հետո 2-րդ տարվա 1-ին ամսում: Տե՛ս մանրամասն քննարկումը Ելիցի ուրվագծում:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Ծիսակարգերը Միջագետքում

1. Չոհաբերությունը հիմնականում որևէ աստծու մատուցված կերակուր էր: Չոհասեղանը այդ աստծու սեղանն էր, որտեղ դրվում էր կերակուրը: Չոհասեղանի կողքին խնկամանն էր, որով գրավում էին աստծու ուշադրությունը: Արյան մեջ ոչ մի ծիսական նշանակություն չկար: Կենդանուն սպանողը կտրում էր նրա կոկորդը: Կերակուրը բաժանվում էր աստվածների, քահանա թագավորի և մասնակիցների միջև: Չոհ մատուցողին ոչինչ չէր հասնում:

2. Ազատագրման գոհ գոյություն չունեի:

3. Հիվանդությունը կամ ցավը աստվածներից էին: Ինչ-որ կենդանի էր բերվում և սպանվում. սա հանդիսանում էր մատուցողի համար որպես փոխանորդ:

4. Իսրայելի ծիսակարգը տարբերվում էր և յուրահատուկ էր: Կարծես թե դրա իմաստը նրանում էր, որ գոհ մատուցողը Աստծուն էր վերադարձնում իր աշխատանքի մի մասը՝ անհրաժեշտ կերակուրի համար (տես՝ Ծննդ.4:1-4; 8:20-22):

Բ. Ծիսակարգերը Քանանում (շատ նման Իսրայելի ծիսակարգերին)

1. Աղբյուրները.
 - ա. աստվածաշնչյան դեպքերը,
 - բ. Փյունիկյան գրականություն,
 - գ. Ռաս Շամրայի արձանագրությունները Ուգարտայից, Քանանի աստվածների դիցաբանության վերաբերյալ՝ Ք.Ա. 1400թ-ից,
2. Իսրայելի և Քանանի զոհաբերությունները շատ նման են իրար, սակայն Քանանի զոհաբերությունների մեջ զոհի արյունը ընդհանրապես չի շեշտադրվում:

Գ. Ծիսակարգերը Եգիպտոսում.

1. Մատուցվում էին զոհեր, սակայն չէին կարևորվում
2. Կարևորը զոհը չէր, այլ զոհ մատուցողի վերաբերմունքը
3. Չոհեր կատարվում էին, որպեսզի հանգստացնեին աստվածների բարկությունը
4. Չոհ մատուցողը ազատագրման կամ ներման հույս ուներ

Դ. Իսրայելի զոհաբերության համակարգը. Իսրայելի զոհաբերությունները ավելի մոտ էին Քանանին, չնայած որ ամենևին էլ պարտադիր չէ, որ դրանց հետ կապ ունեին:

1. Նկարագրող արտահայտություններ.
 - ա. Չոհաբերությունն անմիջականորեն արտահայտում էր մարդկության Աստծո կարիքը:
 - բ. ՀԿ-յան օրենքները, որոնք կարգավորում էին զոհաբերությունները, չենք կարող ասել, որ զոհի նախաձեռնողն էին (տես՝ Ծննդ. 7:8; 8:20):
 - գ. Չոհաբերությունը մի տեսակ նվիրատվություն էր՝ ընծա (կենդանու կամ բանջարեղենի)
 - դ. Նվիրատվությունը՝ Աստծուն մեծարելու համար, պետք է ամբողջովին կամ մասամբ սպանվեր զոհասեղանի վրա
 - ե. Չոհասեղանը զոհասեղան էր և խորհրդապատկերում էր Աստծո ներկայությունը: Չոհաբերությունը արտաքին երկրպագության գործողություն էր (գործադրվող աղոթք):
 - զ. Չոհաբերության սահմանումն էր «գործադրված աղոթքները» կամ «ծիսական աղոթքները»: Ծիսակարգի նշանակությունը և դրա դեմ մեր մշակույթի հակվածությունը քննարկվում է Գորդոն Ջ. Ուենհեմի գրքում (Թինդեյլ, *Թվոց*, էջ՝ 25-39 /Gordon J. Wenham *Numbers*): Ղևտացիների և Թվոց գրքերը նմանատիպ բազմաթիվ նյութեր են պարունակում, որոնք ներկայացնում են Մովսեսի և Իսրայելի համար զոհաբերության իմաստը:
2. Չոհաբերությունը բովանդակում է.
 - ա. Ընծաներ Աստծուն՝
 - 1) պարունակում է այն գիտությունը, որ ամբողջ երկիրը Տիրոջն է,
 - 2) ամեն ինչ, որ մարդն ունի, դրանց համար պարտական է Աստծուն,
 - 3) հետևաբար, ճիշտ է, որ մարդը Աստծուն տուրք մատուցի,
 - 4) այն հատուկ տուրք էր կամ ընծա, մի բան, որով մարդը կարիք ուներ պահպանելու իր իսկ գոյությունը: Ինչ-որ բան տալուց առավել այն անհրաժեշտություն էր մարդուն համար: Դա նշանակում էր իրենից մի ինչ-որ մասնիկ Աստծուն նվիրաբերել:
 - 5) ընծան հեղելով կամ սպանելով Աստծո համար, այլևս հնարավոր չէր վերադարձնել
 - 6) ողջակեզը դառնում էր անտեսանելի և բարձրանում էր վեր՝ Աստծո թագավորություն
 - 7) նախկինում, ավելի վաղ ժամանակներում, զոհասեղաններ կառուցվում էին այն վայրերում, որտեղ Աստված հայտնվում էր մարդկանց: Չոհասեղանը սկսվեց դիտարկվել որպես տուրք վայր, հետևաբար, զոհը բերում էին այդտեղ մատուցելու:
 - բ. Արտահայտում էր իր ամբողջ կյանքի նվիրաբերումն Աստծուն.
 - 1) Ողջակեզը հանդիսանում էր երեք կամավոր զոհաբերություններից մեկը:
 - 2) Կենդանին ամբողջությամբ այրվում էր, արտահայտելու Աստծո հանդեպ մեր ունեցած խորը մեծարանքի զգացումը:
 - 3) Սա շատ տպավորիչ ընծա էր Աստծո համար:
 - գ. Աստծո հետ հաղորդակցություն.
 - 1) զոհաբերության հաղորդակցելի մասը

- 2) օրինակն է խաղաղության գոհը, որը խորհրդապատկերում է Աստծո և մարդու փոխհարաբերությունը
 - 3) զոհաբերությունը կատարվում էր այս փոխհարաբերությունը ձեռք բերելու կամ վերականգնելու համար
- դ. Մեղքի թողություն.
- 1) երբ մարդը մեղանշում էր, նա պետք է խնդրեր Աստծուն, որ վերականգնի այն փոխհարաբերությունը (ուխտի), որը խաթարվել էր
 - 2) խաթարված փոխհարաբերության պատճառով, մեղքի զոհաբերության հետ բոլորին կերակուր մատուցել չէր թույլատրվում
 - 3) արյան կարևորությունը
 - (ա) դրվում էր զոհասեղանի վրա մարդու համար
 - (բ) դրվում էր վարագույրի՝ քողի վրա, քահանայի համար
 - (գ) դրվում էր քավության տապանակի վրա՝ Քահանայապետի և ժողովրդի համար (Ղևտ.16)
 - 4) գոյություն ունեին երկու տեսակ մեղքի զոհաբերություններ: Երկրորդը կոչվում էր հանցանքի զոհ: Այս զոհի ժամանակ մեղավորը պետք է իր աչքերում վերականգներ իր խրայելացի ընկերոջը, որի հանցանքը վերցվում կամ սպանվում էր կենդանու զոհի հետ միասին:
 - 5) կանխամտածված կամ դիտավորյալ մեղքի համար զոհ գոյություն չունեի, 4:1,22,27; 5:15-18; 22:14

Ե. ՏԱՐԲԵՐ ՉՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. ԳԼՈՒԽ 1.

ա. Ներածական Սահմանում, «Տերը խոսեց Մովսեսին», 1:1-2; 4:1; 5:14; 6:1,19; 7:22,28

- 1) Նախիրներից կամ հոտերից
- 2) «Երբ /եթե/», հ. 2, ցույց է տալիս, որ սա պարտադրաբար չէր, այլ հոժարակամ

բ. Ողջակեզ, հհ. 3-17 (6:8-13)

- 1) Չոհասեղան
 - (ա) անաչառ զոհասեղանը, որը նաև կոչվում էր ողջակեզի զոհասեղան, Խորանի դռնով զոհասեղան կամ բրոնզապատ սատիմի փայտից զոհասեղան (տես՝ Ելից 27):
 - (բ) սրանով էր այն տարբերվում Սրբարանի (տես՝ Ելից 30) խունկի զոհասեղանից (ոսկե զոհասեղան):
 - (գ) ողջակեզի զոհասեղանից ածուխներ էին տարվում խունկի զոհասեղանի համար
 - (դ) ողջակեզի զոհասեղանը գտնվում էր Խորանի մուտքի հենց մեջտեղում
 - (ե) զոհասեղանն ուներ եղջյուրներ, որոնք հանդիսանում էին դրա ամենասուրբ մասը: Արյունը ցողվում էր եղջյուրներին (տես՝ Ելից 30:10)
 - (զ) եղջյուրները հավանաբար նախատեսված էին որպես՝
 - i. ձեռքերի սիմվոլ, որոնք զոհը վեր էին պարզում
 - ii. ուժի կամ գերակայության սիմվոլ (2 Օր.33:17; 2 Թագ.22:3)
 - iii. հետագայում, այն մարդիկ, որոնք ամուր բռնում էին զոհասեղանի եղջյուրները, ապահով էին մինչև դատարանը կակայոցներ իրենց դատը (3 Թագ.1:50-51; 2:28)
- 2) Չոհր
 - (ա) անարատ ցուլ, որը առաջինն է նշվում, իր կարևորության և արժեքի պատճառով, հ. 3
 - (բ) արու այծ կամ ոչխար, հ. 10
 - (գ) տատրակներ կամ մատղաշ աղավնիներ, հ. 14 (աղքատների համար)
- 3) Ողջակեզի վայրը Ժողովրդի Վրանի դռան մոտ էր

- 4) Ձեռնադրումը միայն ցիկների համար էր, ոչ թե այծերի, ոչխարների կամ թռչունների, հ. 4
- (ա) գոհ մատուցողն ինքն էր սա անում (ոչ թե քահանան)
- (բ) շատերը կարծում են, որ սա հանցանքը փոխանցելու սիմվոլիկ գործողություն է
- (գ) ոմանք էլ հավատում են, որ՝
- i. դա նշանակում է, որ տվյալ կենդանին պատկանում է այդ անհատին
 - ii. գոհը պետք է ներկայացվեր մատուցողի անունով
 - iii. այս գոհի պտուղը պատկանում է այն մարդուն, որը ձեռնադրում է կենդանուն
- 5) Չոհը կտրելը.
- (ա) ցուլը կտրվում էր «Տիրոջ առջև» այն մարդու կողմից, որը կատարում է գոհը: Մատուցողը պետք է սպանի գոհին, մորթագերծի և կտրատի: Քահանայի դերը (բացառությամբ հանրային գոհերի) սկսվում է այն ժամանակ, երբ գոհ մատուցողը գոհին բերում է գոհասեղանի մոտ:
- (բ) ոչխարը կամ այծը՝ հ. 11 - «գոհասեղանի հյուսիսային կողմում, Տիրոջ առաջ»:
- Այս հատուկ վայրը նախատեսված էր ավելի փոքր կենդանիների համար:
- (գ) թռչունը. այս գոհին սպանում և մատուցում էր քահանան: Մատուցողը պետք է միայն դեն նետեր թռչնադրը:
- 6) Արյան կիրառությունը.
- (ա) կենդանիների
- i. Քահանան արյունը բերում է գոհասեղանի մոտ և շրջանաձև ցողում գոհասեղանի վրա:
 - ii. Կենդանու կյանքը նրա արյան մեջ էր (տես՝ Ծննդ.9:4; Ղևտ.17:11): Կյանքն արդեն իսկ պատկանում էր Աստծուն, հետևաբար արյունը ոչ մի մաս չէր ներկայացնում մարդու ընծայի մեջ:
 - iii. Թռչնի արյունը քամվում էր գոհասեղանի կողքին և չէր այրվում կրակի մեջ:
- 7) Մարմնի գործածությունը.
- (ա) ցուլը, հ. 6
- i. Չոհ մատուցողը մաշկագերծում էր գոհին: Քահանան կարող էր իրեն պահել մորթին (տես՝ 7:8):
 - ii. Մատուցողը գոհի մարմինը կտորների էր բաժանում
 - iii. Քահանան գոհը դնում էր գոհասեղանի վրա նույն այն դասավորությամբ ինչպես կենդանի ժամանակ էր
 - iv. ոտքերը և փորոտիքը ջրով լվացվում էին ջրակոնքից
 - v. քահանան ամբողջը այրում էր գոհասեղանի վրա
- գ. Երբ էր պետք մատուցել ողջակեզ
- 1) Տաղավարահարաց՝ վրանների Տոնին
 - 2) Քավության Օրը
 - 3) Շաբաթների Տոնին, Երեխայրիքի Տոնին կամ Պենտեկոստեին
 - 4) Փողերի Տոնին
 - 5) Տարուբերվող Խուրձի Տոնին (Ղևտ.23)
 - 6) Բաղարջակերաց Տոնին՝ Չատկին
 - 7) Ամսագլուխների Տոնին՝ Նոր Լուսնի Տոն
 - 8) Շաբաթի Տոնին
- դ. Ողջակեզի նշանակությունը.
- 1) Աստծուն ընծա,
 - 2) Դիտարկվում էր որպես ամենաթանկ գոհը,
 - 3) Այն կարծես թե գործ ուներ ընդհանուր առմամբ մեղքի հասկացողության կամ գոհունակության հետ
 - 4) Չոհաբերության գաղափարի ամենակատարյալ ներկայացումն էր,

- 5) Այլաբանորեն մարդու կյանքի զոհաբերության իմաստն ուներ,
 - 6) Ներկայացնում է անհատի կողմից Աստծո ծառայությանը լիարժեք նվիրվելու իմաստը,
 - 7) Չոհի տեսակավորված արժեքը.
 - (ա) ցուլ
 - (բ) ոչխար, այծ
 - (գ) թռչուններ
 - 8) Սա ցույց է տալիս, որ ցանկացած մարդ, որ գիտակցում է հոգևոր իր կարիքը, կարող է մոտենալ Աստծուն: Աստված բոլոր մարդկանց էլ հոգ է տանում:
- ե. Հատուկ կարգադրություններ քահանաների համար, 6:8-12
- 1) Ողջակեզը ամբողջ գիշեր մնում էր զոհասեղանի կրակատեղում
 - 2) Կրակը պետք է միշտ վառ պահվեր ողջակեզի տակ այրվելիս
 - 3) Կարգադրություններ, որոնք Քահանայի հագուստին էին վերաբերում
 - 4) Մոխիրը հեռացնելու վերաբերյալ կարգադրություններ

2. ԳԼՈՒԲԻՄ 2:1-16 (6:14-23)

ա. Ներածություն

- 1) Այս գլխում խոսվում է ցորենի ընծայի մասին
- 2) Ցորենի ընծան՝ զոհը, ծագել է արմատ հանդիսացող «ընծա» բառի նշանակությունից: Այն դարձել է տեխնիկական տերմին ոչ կենդանական կամ բուսական զոհերի՝ ընծաների համար:
- 3) Գերությունից հետո ցորենի ընծան հայտնվում է որպես հավելում ողջակեզի և խաղաղության զոհի համար և ռաբբինները ասում են, որ այն կարող էր առանձին էլ մատուցվեր շատ աղքատ մարդկանց կողմից:
- 4) Թվոց 18:19 և 2 Մնաց.13:5-ում նաև նշվում է աղի ուխտի մասին: Աղը թթխմորի հակադրությունն էր: Այն կիրառվում էր որպես Աստծո ուխտի խորհրդապատկեր, քանի որ անապականացու էր և երկար մնացող:

բ. Ցորենի ընծան իրենից ներկայացնում էր մարդու աշխատանքի նվիրումն Աստծուն:

- 1) Աստծուն ընծա էր մարդկանց ամենօրյա կերակուրից
- 2) Ընդհանրապես համեմունք էր (հատկապես գերությունից հետո ժամանակներում) ողջակեզին կամ խաղաղության զոհին:
- 3) Չոհը հանդիսանում էր քահանայի համար Աստծո հոգածությունը: Միայն մի փոքր մասն էր այրվում որպես ամբողջի հիշատակ:
- 4) «Հիշատակ» բառը նկարագրում է մատուցված չափաբաժինը, կամ էլ այն բաժինը, որը բերում է ամբողջականը Տիրոջ առաջ:
- 5) Տիրոջ Ընթրիքի Նոր Կտակարանյան գաղափարը որպես «հիշատակ» արտահայտում է Հին Կտակարանի այս նույն հասկացությունը:
- 6) «Սուրբ» և «ամենասուրբ» տերմինների միջև տարբերությունը՝
 - (ա) «սուրբ». քահանան և իր ընտանիքը կարող էին ուտել այն որևէ մաքուր վայրում
 - (բ) «ամենասուրբ». կարող էին ուտել միայն քահանաները և միայն Ժողովքի Վրանի /Խորանի/ սրահում

գ. Տեսակները

- 1) Չթխված այուր (հարուստների համար), 2:1-3
- 2) Թխված հացեր կամ խմորեղեն, 2:4-11
- 3) Եզիպտացորենի կամ ցորենի կանաչ հասկերը (աղքատների համար), 2:12-16
 - (ա) Չթխված այուրը հանդիսանում էր ամենաբարձր զոհաբերությունը: Դա ամենաընտիր ցորենի այուրից էր:
 - (բ) Թխված խմորեղեններ
 - i. բաղադրիչներից էր նաև յուղը
 - ii. թոնրում պատրաստված, հ. 4

- iii. տապակի վրա, հ. 5
- iv. սանի մեջ եփված, հ. 7
- (գ) Եգիպտացորենի կամ ցորենի կանաչ հասկերը /թարմ հասկերը/
 - i. պետք է ծեծված լիներ
 - ii. մանր կտորների կտրատված
 - iii. զարդարված՝ ինչպես հյուրերի առջև դրվող կերակուր

դ. Բաղադրիչները.

- 1) Ընտիր այլուրը համապատասխանում է անարատ կենդանուն
- 2) Յուղը բարգավաճման խորհուրդն էր և հետևաբար Աստծո ներկայության սիմվոլը
 - (ա) կիրառվում էր որպես սնունդ, զոհ, դեղամիջոց և օծություն
 - (բ) Հավանաբար յուղի կիրառությունը փոխարինում էր յուղի ընծային՝ զոհին
- 3) Անուշահոտ խունկը Հնդկաստանից կամ Արաբիայից էր
 - (ա) Դիտարկվում էր որպես անուշահոտությամբ շատ մաքուր մի բան
 - (բ) Խորհրդանշում էր աղոթքն ու փառաբանությունը
- 4) Աղը.
 - (ա) Կյանք տվող ինչպես նաև պահպանող հատկությամբ
 - (բ) Հավանաբար ավելի շատ սեղանի համար, քան պահպանության
- 5) Բացառվող տարրերը.
 - (ա) Թթիմորը բացառվում էր, հ. 11
 - i. հավանաբար թթվելու՝ հասունանանլու պատճառով
 - ii. թթիմորը ասոցացվում է ապականության հետ
 - iii. կարող էր մատուցվել երեխայրիքի՝ առաջին պտղի հետ և քահանային
 - (բ) Մեղրը բացառվում էր
 - i. քաղցրաչուրը պտղաչուր էր և ոչ թե մեղրաչուր
 - ii. հավանաբար այն բանի համար, որ քանանացիները իրենց ծեսերում մեղր էին կիրառում

ե. Մատուցման ծիսակարգը

- 1) Այն բերվում էր քահանայի մոտ: Նա էր վարում ամբողջ արարողությունը (2:2, 9, 16)
- 2) Ընծայի մի մասը պետք է սրբարանում քահանան ուտեր: Այն ամենասուրբ էր:

զ. Նշանակությունը

- 1) Նվեր ստորադասից գերադասին
- 2) Դրա մի մասի այրումը ներկայացնում էր տվյալ անձի աշխատանքի մի մասի նվիրաբերումն Աստծուն
- 3) Ակնհայտ իմաստը՝
 - (ա) Ողջակեզ. անձի կյանքի նվիրումը
 - (բ) Սննդի ընծա. անձի ամենօրյա աշխատանքի նվիրաբերում

է. Յորենի Ընծայի համար հատուկ կարգադրություններ, 6:14-23

- 1) Չոհասեղանի առաջ մատուցել
- 2) Որպես ընծա Աստծուն մատուցված աշխատանք, սակայն իրականում այն ապահովում էր քահանայությանը

3. ԳԼՈՒԽ 3:1-17 (7:13-34) ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՉՈՀ

ա. Ներածություն

- 1) Ինչու
 - (ա) հաղորդության ընծա
 - (բ) ուխտի զոհ
 - (գ) միասնական զոհ
 - (դ) եզրափակիչ զոհ
- 2) այն գոհունակություն էր արտահայտում Աստծուն՝ ընտանիքի, ընկերների և Աստծո հետ իր փոխհարաբերության համար

- 3) Սովորաբար հանդիսանում էր մի շարք գոհաբերությունների վերջին փուլը, որի ժամանակ հաշտություն էր հաստատվում:
- 4) Ողջակեզը արտահայտում էր հնազանդության թանկարժեքությունը, մինչ խաղաղության գոհն արտահայտում էր Աստծո հետ հաղորդակցության ուրախությունն ու ցնծությունը:
- 5) Արու կամ էգ, սակայն անարատ
- 6) Տարբեր գոհեր.
 - (ա) նախիրից՝ արու կամ էգ
 - (բ) տարբերությունը, որ դրված էր ոչխարի և այծի միջև, ոչխարի պոչի յուղի (դմակի) պատճառով էր
 - i. հոտերից գառ՝ արու կամ էգ
 - ii. հոտերից այծ՝ արու կամ էգ

բ. Ծիսակարգը.

- 1) Չոհին ներկայացնելը
 - (ա) Չոհին ձեռնադրում էին
 - (բ) Ժողովքի Վրանի մոտ մորթվում էր
 - (գ) Չոհի հետ ընթացակարգերը նույնն են, ինչ ողջակեզի ժամանակ
 - (դ) Արյունը ցողվում էր գոհասեղանի շուրջըրորը
 - (ե) Ընտրված մասերը այրվում էին գոհասեղանի վրա՝ Աստծո առաջ
 - i. յուղը (ոչխարի դմակը) խորհրդանշում էր բարգավաճում
 - ii. երիկամները, լյարդը խորհրդանշում էին կամքի և զգացմունքների տեղը
 - iii. յուղոտ մասերը դրվում էին գոհ մատուցողի ողջակեզների վրա կամ առավոյան գառան գոհաբերության վրա
- 2) Գոհության գոհը՝ ընծան պարունակում էր (7:11-14)
 - (ա) Յուղի հետ շաղախված անթթխմոր հաց
 - (բ) Յուղով ցողված անթթխմոր չորահացեր
 - (գ) Յուղով շաղախված ընտիր այուր

գ. Քահանայի մասնաբաժինը, 7:28-34.

- 1) Կրծքամիսը պատկանում էր քահանային, որպես տարուբերվող ընծա
- 2) Տարուբերելը իրենից ներկայացնում էր մատուցողի և քահանայի ձեռքերի մեջ գոհը դնելը: Այն ցույց էր տալիս, որ գոհը մատուցվում էր մատուցողների կողմից Աստծուն, և դրա ընդունվելը հետադարձվում էր քահանային տալով:
- 3) Աջ ազդրը՝ զիստը պատկանում էր պաշտոնավարող քահանային
- 4) Բարձրացվող գոհը Աստծուն էր բարձրացվում և ընդունվում էր քահանայի կողմից

դ. Մատուցողի մասնաբաժինը, 7:15-18

- 1) Գոհության՝ շնորհակալության ընծան պետք է ուտեին հենց մատուցման օրը, հ. 15
- 2) Ուխտի կամ կամավոր ընծան պետք է ուտեին մատուցման օրը կամ դրան հաջորդող օրը, հ. 16
- 3) Այս բաժինն այն էր, որ չէր մատուցվել Աստծուն և Աստծուց տրվել քահանային
- 4) Խորհրդապատկերորեն Աստված ուտում է մատուցողի և նրա ընտանիքի ու ընկերների հետ միասին այս գոհի ժամանակ
- 5) Այս ընծան շեշտադրում է, որ փոխհարաբերությունները վերականգնված են:

4. ԳԼՈՒԽ 4:1-5:13 (6:24-30) ՄԵՂՔԻ ՊԱՏԱՐԱԳ

ա. Ներածություն.

- 1) Առաջին պատարագն է, որտեղ քավությունը գերակայող տարր է հանդիսանում:
- 2) Այս գոհը՝ պատարագը, վերահաստատում է մարդու և Աստծո միջև ուխտը: Այն վերականգնում է փոխհարաբերությունը:
- 3) Այս պատարագը պարունակում է՝

- (ա) Անտեղյակության մեղքերը
- (բ) Անուշադրության մեղքերը
- (գ) Ցանկության մեղքերը
- (դ) Բացթողումների մեղքերը
- (ե) Չէր քավում դիտավորյալ, մեծամտորեն, ապստամբությամբ Աստծո դեմ կատարած մեղքերը: Դիտավորյալ, կանխամտածված, բարձրացած ձեռքով մեղքի համար պատարագ՝ զոհ չկար (տես՝ Թվոց. 15:27-31):

բ. Նշանակությունը.

- 1) Այս զոհը քավում էր մեղքերի հանցանքն ու պատիժը:
- 2) Պարունակում էր Աստծո կողմից շնորհքի մասը և մարդու կողմից՝ հավատքի:
- 3) Ոչ մի զոհաբերություն չէր կարող հասնել որևէ բանի միայն ծիսակարգի միջոցով: Գործողության ետևում կանգնած էր զոհ մատուցողի հավատքը:
- 4) Չնայած դրան, զոհն ավելին էր, քան միայն մատուցողի կողմից կատարած արտահայտություն: Այն իր համար ինչ-որ բան էր անում: Դա վերահաստատում էր Աստծո հետ իր փոխհարաբերությունը:
- 5) Ծեսը Աստծո կողմից տրված ընթացակարգ էր և ոչ թե անձնական հավատքին փոխարինող գործողություն:
- 6) Աստված ատում է ցանկացած կրոնավոր գործողություն, որը չի կատարվում հավատքով. Եսայի 1:1-20; Ամովս 5:21-24; Միքիա 6:6-8:

գ. Ծիսակարգը.

- 1) Քահանայապետի համար, հհ. 3-12
 - (ա) Քահանայապետ՝ օծված քահանա.
 - i. Մարդկանց սխալ առաջնորդելու մեղքի համար
 - ii. Անձնական բնույթի մեղքի համար
 - iii. Քահանայապետը լինելով համայնքի հոգևոր ներկայացուցիչը, եթե մեղք էր գործում, ապա նրա մեջ բոլորն էին մեղք գործում: Համայնքի վերաբերյալ հրեական հասկացությունն այսպիսին է (տես՝ Հեսու 7; Հռոմ. 5:12):
 - (բ) Ընթացակարգերը.
 - i. Քահանայապետը բերում էր անարատ ցիլիկն զոհասեղանի մոտ,
 - ii. Նա իր ձեռքերն էր դնում նրա գլխի վրա,
 - iii. Քահանայապետը մորթում էր կենդանուն,
 - iv. 7 անգամ արյուն էր ցողում վարագույրի առջև.
 - ա) Սա մաքրում էր Խորանը
 - բ) սիմվոլիկ կերպով ճանապարհ էր բացում դեպի Աստված
 - գ) խնկի զոհասեղանի եղջուրներին արյուն էր քսվում
 - դ) մնացած արյունը լցվում էր ողջակեզի զոհասեղանի հիմքի վրա
 - v. Ամբողջ ճարպը դրվում էր զոհասեղանին
 - vi. Կենդանու մնացած մասերը դուրս էին բերվում ճամբարից մի մաքուր վայր, հ. 12; որտեղ թափվում էին զոհասեղանից վերցված մոխիրը: Այնտեղ այրվում էր կենդանու մնացորդը:
- 2) Ազգի՝ ժողովրդի համար, հ. 13-21
 - (ա) Նրանք մեղանչում էին, երբ օրենքի պատվիրանները չէին պահում, հհ. 13-21
 - (բ) Ընթացակարգերը.
 - i. Ծերերը զոհասեղանի մոտ էին բերում մի անարատ ցիլիկ,
 - ii. Ծերերը ձեռնադրում էին ցիլիկի գլուխը,
 - iii. Նրանք մորթում էին կենդանուն,
 - iv. Քահանայապետը 7 անգամ արյուն էր ցողում վարագույրի առջև.
 - ա) Սա մաքրում էր Խորանը
 - բ) սիմվոլիկ կերպով ճանապարհ էր բացում դեպի Աստված
 - գ) խնկի զոհասեղանի եղջուրներին արյուն էր քսվում

- դ) մնացած արյունը թափվում էր զոհասեղանի հիմքի վրա:
- v. Այս ամբողջը մատուցվում էր զոհասեղանի վրա
 - vi. Կենդանու մնացած մասը ճամբարից դուրս մի մաքուր վայր էր տարվում, հ. 12, որտեղ թափվում էր զոհասեղանի մոխիրը: Այնտեղ այրվում էր կենդանուց մնացած մասերը:
- 3) Առաջնորդի համար, հհ. 22-26
- (ա) Առաջնորդը (իշխան) հհ. 22-26
 - i. Ցեղապետը
 - ii. Համայնքում պատասխանատու անձը
 - iii. Վերակացուն
 - (բ) Ընթացակարգերը.
 - i. Առաջնորդը զոհասեղանին մի նոխագ էր մոտեցնում (մեծ, արու, թավամազ այծ)
 - ii. Առաջնորդը ձեռքերը դնում էր կենդանու գլխին,
 - iii. Առաջնորդը մորթում էր կենդանուն,
 - iv. Քահանայապետը ողջակեզի զոհասեղանի եղջյուրներին արյուն էր սրսկում և մնացած արյունը թափում էր զոհասեղանի հիմքի վրա,
 - v. Ամբողջ ճարպն այրվում էր զոհասեղանի վրա,
 - vi. Քահանաները ուտում էին մսի մնացած մասը:
- 4) Անհատի համար, հհ. 27-35
- (ա) Անհատը, երբ հասկանում էր, որ մեղք է գործել, պետք է մատուցեր այսպիսի զոհ.
 - (բ) Ընթացակարգերը.
 - i. Անհատը բերում էր էգ այծ կամ էգ գառ,
 - ii. Ձեռքերը դնում էր կենդանու գլխի վրա,
 - iii. Անհատը մորթում էր կենդանուն,
 - iv. Քահանան զոհասեղանի եղջյուրներին արյուն էր սրսկում, մնացած արյունը թափում էր զոհասեղանի հիմքին,
 - v. Ամբողջ ճարպը դրվում էր զոհասեղանին և այրվում,
 - vi. Քահանաները ուտում էին մնացած միսը:
- 5) Հատուկ դեպքեր, որոնք պահանջում էին մեղքի պատարագ, 5:1-13 (Սա կարծես թե ընդգրկում է նաև ուխտի կողակցի դեմ կատարած դիտավորյալ մեղքը):
- (ա) Եթե որևէ վկա առաջ չի գալիս և վկայություն տալիս (ինֆորմացիայի պակասի դեպքում), 5:1
 - (բ) Անմաքուր կենդանու դիպչելիս, 5:2
 - (գ) Անմաքուր մարդու դիպչելիս, 5:3
 - (դ) Անմտածված երդմամբ խոսելու դեպքում, 5:4
 - (ե) Վերը նշված մեղքերի համար պատարագը՝
 - i. Էգ այծ կամ ոչխար
 - ii. Երկու տատրակ կամ երկու աղավնի
 - iii. արդուի 1/10 չափ ընտիր այուր
- 6) Մեղքի պատարագի ծիսակարգը, 6:24-30
- (ա) Քահանան կարող էր ուտել այն ինչ մնացել էր
 - (բ) Եթե հանդերձների վրա արյուն էր թափվել, պետք է դրանք լվացվեին
 - (գ) Եթե կավե ամանի վրա էր արյուն թափվել, ապա այն պետք է կոտրվեր
 - (դ) Եթե պղնձե ամանի մեջ էր զոհը եփվել, ապա այդ ամանը պետք է լավ լվացվեր
 - (ե) Եթե ողջակեզի արյունը Սրբարան էր բերվել, ապա միսը պետք է այրվեր և քահանան չէր կարող ուտել դրանից:
- 7) Մեղքի Պատարագի նշանակությունը
- (ա) Կանխամտածված մեղքի համար զոհ չկար. միայն անուշադրությամբ կատարված կամ անտեղյակության մեղքերի համար, 5:15, 18:

(բ) Ինչ է պարունակում իր մեջ ներումը՝

- i. Մարդու բաժինը հավատքն է,
- ii. Աստծո բաժինը՝ ողորմությունը:

5. ԳԼՈՒԽ 5:14-19 ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՆՑԱՆՔԻ ՊԱՏԱՐԱԳ

ա. Ներածություն

- 1) Մինչ մեղքի պատարագը գործ ուներ գործված մեղքի հետ, հանցանքի պատարագը վերաբերում էր այն վնասին, որը հասցվել էր ուխտի գործընկերոջը և նրան, թե ինչ հնարավոր փոխհատուցում էր անհրաժեշտ:
- 2) Մեղքի և հատուցման պատարագները շատ նման էին
- 3) Անհատի իրավունքներն արտահայտված Տաս Պատվիրաններում (Ելից 20; 2 Օր.5) (ա) տուն (բ) ունեցվածքի կուտակում (գ) կյանք
- 4) Այս պատարագը շեշտադրում է մեր եղբոր դեմ մեղանչելու տեսքով կատարած վնասը և վնասված առարկայի արժեքի փոխհատուցումը՝ դրան ավելացրած արժեքի 1/5 մասը:

բ. Մեղքեր, որոնք պատարագ էին պահանջում.

- 1) Աստծո կամ Նրա սեփականության դեմ կատարած մեղքերը. (ա) երեխայիքը՝ առաջին պտուղները (բ) առաջնեկները, 14-16 (գ) տասանորդը (դ) ոչ ճիշտ կերպով կատարված պատարագը՝ ընծան (ե) էժանագին ընծաները
- 2) «Եթե մեկը մեղանչում է և անում մի բան, որն Աստված պատվիրել է չանել, թեև նա անտեղյակ էլ լինի այդ մասին, միևնույն է հանցավոր է և պետք է կրի իր պատիժը»:

Չ. Հնում զոհերը, պատարագները մատուցվում էին մի քանի նպատակով.

- ա. աստվածների զայրույթը մարելու համար
- բ. աստվածներին կերակրելու համար
- գ. աստվածների հետ հաղորդակցվելու համար
- դ. փառաբանության համար
- ե. ներման կամ հաշտության կարիքի դեպքում

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ.

1. Գլուխներ 1-16 – Ինչպե՞ս է պետք մոտենալ Սուրբ Աստծուն:
2. Գլուխներ 17-26 – Ինչպե՞ս է պետք շարունակել Սուրբ Աստծո հետ փոխհարաբերությունը:

Բ. Հեղինակի ներածական սահմանման սեփական կիրառությունը, «Եվ Տերը խոսեց Մովսեսին (կամ Ահարոնին) ասելով...»

1. Սա կարող է ակնարկել, որ այս հայտնության նյութը տրվել է որոշակի ժամանակահատվածում:
2. Այն տեղերը, որտեղ հայտնվում է այս բանաձևը. 1:1-3:17; 4:1-5:13; 5:14-19; 5:20-26; 6:1-11; 6:12-16; 6:17-7:21; 7:22-38; 8:1-10:20; 11:1-47; 12:1-8; 13:1-59; 14:1-32; 14:33-57; 15:1-33; 16:1-34; 17:1-16; 18:1-3; 19:1-37; 20:1-27; 21:1-24; 22:1-16; 22:17-25; 22:26-33; 23:18; 23:9-22; 23:26-32; 23:33-44; 24:1-23; 25:1-26:46; 27:1-34:

Գ. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՈՒՐՎԱԳԻԾ.

1. Անմաքրության հեռացումը, գլուխներ 1-16
 - ա. Չոհարերության օրենքները, 1:1-7:38
 - 1) Ողջակեզ, գլուխներ 1:3-17 և 6:8-13
 - 2) Կերակուրի պատարագ, գլուխներ 2:1-17 և 6:14-23
 - 3) Խաղաղության պատարագ, գլուխներ 3:1-17; 7:33 և 7:11-21
 - 4) Մեղքի պատարագ, գլուխներ 4:1; 5:13 և 6:24-30
 - 5) Հատուցման պատարագ, գլուխներ 5:14-6:7; 7:1-10
 - (ա) Ոչ դիտավորյալ մեղք ՅԱՀՎԵի ուխտի հանդեպ, 4:1-35; 5:14-19
 - (բ) Դիտավորյալ մեղք ուխտի ընկերոջ հանդեպ, 5:1-13; 6:1-7 (Գլուխներ 1-6:7 մարդկանց համար; գլուխներ 6:8-7:36՝ քահանաների համար)
 - բ. Քահանաների սրբացումը՝ նվիրաբերումը, 8:1-10:20
 - 1) Օծության նախապատրաստություն, 8:1-5
 - 2) Լվացում, հանդերձավորում և օծում, 8:6-13
 - 3) Չոհարերության օծում, 8:14-32
 - 4) Մովսեսը Ահարոնին կարգադրություններ է տալիս, 9:1-7
 - 5) Ահարոնը և իր որդիները սկսում են, 9:8-21
 - 6) Ահարոնը օրհնում է ժողովրդին և ՅԱՀՎԵին
 - 7) Նադաբի և Աբիուդի մեղքը, 10:1-3
 - 8) Նրանց ճակատագիրը և վախճանը, 10:4-7
 - 9) Ծառայության ընթացքում զինու ժուժկալությունը, 10:8-11
 - 10) Չոհարերությունների քահանայի մասնաբաժինը, 10:12-20
 - գ. Մաքուրը և անմաքուրը, գլուխներ 11-15
 - 1) Կենդանիներ, գլ. 11 (տես՝ 2 Օր.14:6-20)
 - 2) Որդեծնություն, գլ. 12
 - 3) Մաշկային հիվանդություններ, գլ. 13-14
 - (ա) Մարդու համար, 13:1-46
 - (բ) Հանդերձների համար, 13:47-59
 - (գ) Սրբազործում, 14:1-32
 - (դ) Տների համար, 14:33-53
 - (ե) Ամփոփում, 14:54
 - 4) Մաքրություն ֆիզիկական արտադրություններից (կանացի և տղամարդու), գլ. 15
 - դ. Քավության Օր (Yom Kippur), մաքրվելու ամենամյա օր, գլ. 16 (սա կարծես 1-16 գլուխների կուլմինացիան է)
 - 1) Քահանայական պատրաստությունը, 16:1-4
 - 2) Քահանայապետի համար մեղքի պատարագը, 16:5-10
 - 3) Ծիսակարգը, 16:23-28
 - 4) Ամենամյա գործողությունը, 16:29-34
 2. Աստծո հետ սրբության և փոխհարաբերության վերականգնումը, գլ. 17-26
 - ա. Չոհի Արյունը, 17:1-16
 - բ. Կրոնական և բարոյական չափանիշներ՝ կանոններ, 18:1-20:27
 - 1) Արյունապղծություն
 - 2) Սեռական մեղքեր
 - 3) Պատիժներ, գլ. 20
 - գ. Քահանաների Սրբությունը, 21:1-22:33
 - դ. Ամենամյա տոնական օրերի Սրբությունը, 23:1-24:23
 - 1) Ծաբաթ, 23:1-3
 - 2) Չատիկ և Բաղարջակերաց Տոն, 23:5-8
 - 3) Երեխայրիքի Տոն, 23:9-14

- 4) Հունձքի տոն, 23:15-24
- 5) Պենտեկոստե, 23:23-25
- 6) Քավության Օր, 23:26-32 (միայն ծոմապահության օր)
- 7) Տաղավարահարաց (Վրանների Տոն), 23:33-43
- ե. Հատուկ Տարիները, 25:1-55
 - 1) Շաբաթի, հհ. 2-7
 - 2) Հոբելյանական, հհ. 8-55
 - (ա) Պահպանումը՝ ծիսակարգը, հհ. 8-12
 - (բ) Արդյունքները, հհ. 13-34
 - (գ) Անհատի արժեքի և ազատության յուրաքանչյուր ուխտը, հհ. 35-55
- զ. Ուխտի Օրհնությունները և անեծքները, 26:1-46
- 3. Հավելված (երդումներ), 27:1-34
 - ա. Անձիք, հհ. 1-8
 - բ. Կենդանիներ, հհ. 9-13
 - գ. Բնակավայրեր, հհ. 14-15
 - դ. Տարածքներ, հհ. 16-25
 - ե. Առաջնեկներ, հհ. 26-27
 - զ. Նվիրաբերված առարկաներ, հհ. 28-39
 - է. Տասանորդ, հհ. 30-34

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Ղևտացիների գիրքը գործ ունի Իսրայել ազգի և քահանայության դերի քաղաքացիական և կրոնական կյանքի օրենսդրական հիմունքների հետ: Այն Ելից 25-40 գլուխներում նկարագրված Խորանի ուղեցույցն է:
- Բ. Նկարագրում է, թե ինչպես կարող է մեղավոր մարդը մոտենալ սուրբ Աստծուն և թե ինչպես կարող է պահպանել իր փոխհարաբերությունը Նրա հետ: «Սրբությունը» այս գրքի բանալի բառն է (տես՝ 11:44 /Մատթ.5:48/):
- Գ. Հրաշքների հրաշքն է, որ Աստված փափագում է, որ մեղավոր մարդը գա Իրեն և Նա դրա համար ճանապարհ է պատրաստել՝ զոհաբերության համակարգը:
- Դ. Հայտնված է ՅԱՀՎԵի բնավորությունը՝
 - 1. Չոհաբերության համակարգ ապահովելու միջոցով, տես՝ գլ. 1-7 (Շնորհք)
 - 2. Պատմական դեպքերի միջոցով, տես՝ գլ. 8-10 (Արդարություն)
 - 3. Ժողովրդի հետ Իր մշտական ներկայության միջոցով (Հավատարմություն)

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

- Ա. Տերմիններ և արտահայտություններ
 - 1. քավություն, 1:4; 4:26 (NASB & NIV)
 - 2. անուշահոտություն, 1:9, 13, (NIV, Հանելի բուրմունք)
 - 3. ոչ դիտավորյալ, 4:1,22,27; 5:15-18; 22:14 (NASB & NIV)
 - 4. փոխհատուցում, 6:5 (NASB & NIV)
 - 5. տարուբերվող պատարագ, 7:30 (NIV, թափահարվող)
 - 6. սուրբ (*kadosh*), 11:44 (NASB & NIV)
 - 7. բորոտություն, 13:1, (NIV, վարակիչ մաշկային հիվանդություն)
 - 8. նոխագ, 16:8 (NASB & NIV)
 - 9. այծ դևեր /դևեր/, 17:7, (NIV, այծ կուռքեր)

10. հմայություն, 19:26 (NIV, կախարդություն)

11. հորեյան տարի, 25:30 (NASB & NIV)

Բ. Համառոտ սահմանված անձիք

1. Նադաբ և Աբիուդ, 10:1

2. Ազազել, 16:8, 10 (NIV, նոխազի համար)

3. Մոդոք, 18:21; 20:2

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՑԵՉԻ ՎՐԱ – Չկան

XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է ներկայացնում գոհաբերության համակարգը: Ինչո՞ւ է «արյունը» այդքան հաճախ նշվում, (3:17; 7:26; 17:11):

2. Ինչպե՞ս կարող է կենդանու մահը ներել մարդու մեղքը:




3. Ինչո՞ւ են հինգ տեսակ գոհաբերություններից երեքը կամավոր:

4. Ի՞նչ մահվան արժանի մեղք գործեցին Ահարոնի որդիները:

5. Ինչո՞ւ մաքուր և անմաքուր կենդանիների միջև կա տարբերություն:


6. Իսրայելի բոլոր տոների շարքում ի՞նչ յուրահատուկ բան կա Քավության Օրվա մեջ:

7. Ո՞րն է Շաբաթ Տարվա և Հորեյան Տարվա մեջ թաքնված նշմարտությունը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԹՎՈՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- Ա. Եբրայերենում (MT) վերնագիրը «Անապատում» է: Սա հենց առաջին բառը չէ, բայց գտնվում է առաջին նախադասության մեջ՝ հինգերորդ բառը:
- Բ. LXX-ում այն վերնագրված է «Թվեր /Թվոց/», քանի որ 1-4 և 26 գլուխներում երկու անգամ մարդահամար է տեղի ունեցել:

II. ԿԱՆՈՆԸ

- Ա. Այն հանդիսանում է Եբրայական «Թորա», «Ուսմունքներ» կամ «Օրենք» կոչվող Կանոնի առաջին բաժնի մի մասը:
- Բ. Այս բաժինը LXX-ում հայտնի է որպես Պենտատուկ (հնգամատյան):
- Գ. Անգլերենում այն երբեմն կոչվում է «Մովսեսի Հինգ Գրքերը»:
- Դ. Ծննդոց-Երկրորդ Օրինաց գրքերը Մովսեսի կողմից գրված շարունակական դեպքեր են՝ ստեղծագործությունից մինչև Մովսեսի կյանքի օրերը:

III. ԺԱՆՐԸ

Այս գիրքը շատ նման է Ելիցին: Այն պատմական իրադարձությունների և օրենսդրության, ինչպես նաև Բաղասամի հնագույն պոետիկ պատգամների մի ամբողջ համադրություն է (տես՝ Թվոց 23-24):

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Սա Թորայի առաջին գիրքն է, որ անվանակոչում է մի գրավոր աղբյուր՝ «ՅԱՀՎԵԻ Պատերազմների Գիրքը», 21:14-15:
- Բ. Այս գիրքն ասում է, որ Մովսեսը կարող էր և արձանագրել է Անապատում Դեզերելու ժամանակաշրջանը:
- Գ. Թվոցը նաև ապահովում է ակնհայտ խմբագրական հավելումների մի քանի օրինակներ (հավանաբար Հեսուն կամ Սամվել մարգարեն)。
1. 12:1, 3 2. 13:22 3. 15:22-23 4. 21:14-15 5. 32:33 6. 32:33բ
- Դ. Շատ դեպքերում Մովսեսի մասին խոսվում է երրորդ դեմքով, բացի ուղղակի խոսքի մեջբերումներից: Սա ակնարկում է, որ Մովսեսը այս նյութերը հավաքագրելիս օգտվել է դպրական օժանդակությունից:
- Ե. Հետաքրքիր է նշել, որ Թվոց գիրքը նաև պարունակում է երկու ոչ իսրայելական գրական ստեղծագործություններ. (1) Ամորիական ծաղրական բանաստեղծություն՝ 21:27-30 (հավանաբար հ. 30 եղել է իսրայելական հավելում), և (2) Բաղասամի խոսակցությունը Բաղակի հետ՝ Մովսեսի թագավորի, 23-24 գլուխներում: Դրանք ցույց են տալիս, որ գիրքը կազմելիս նաև ներառվել են գրավոր կամ բանավոր նյութեր (տես՝ *Տիրոջ Պատերազմների Գիրքը /The Book of the Wars of the Lord/*):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Գիրքը մեզ փոխանցում է տարեթիվը.

1. 1:1; 10:10 ասում է, որ դա Ելիցից հետո 2-րդ տարվա 2-րդ ամիսն էր: Դրանից հետո եկել են դեգերելու 38 տարիները:
2. 9:1-ն ասում է, որ դա Ելիցից հետո 2-րդ տարվա 1-ին ամիսն էր:

Բ. Ելիցի ժամանակը անհայտ է: Այն կա՛մ Ք. Ա. 1445 թ., կա՛մ էլ Ք.Ա. 1290թ. է:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Թվոց Գրքից չորս բան կա, որոնք բացառապես արտացոլում են Եգիպտական մշակույթը.

1. Եբրայական ճամբարի տեղակայումը ըստ ցեղախմբերի (Թվոց.2:1-31; 10:11-33) և ցեղերի քայլելու դասավորությունը (Թվոց.1-7): Սա ճշգրտորեն համընկնում է Ռամսես II-ի կողմից կիրառվող կարգուկանոնին իր Սիրիական ռազմարշավի մեջ, որը հայտնի է Արմառնայի Տեքստերից: Այս քանանական փաստաթղթերը՝ Ք. Ա. 1300թ. ժամանակաշրջանից, նկարագրում են Քանանի և Եգիպտոսի միջև սոցիալական, քաղաքական և կրոնական փոխգործակցությունները: Նաև հետաքրքիր է, որ այս Եգիպտական հատակագիծն ու կարգուկանոնը փոխվեցին, ինչպես տեղեկանում ենք Ք.Ա. առաջին հազարամյակի ասորական հարթաքանդակներից: Ասորիները ճամբարում էին շրջանաձև:
2. Թվոց 10-ի արձաթե փողերը արտացոլում են եգիպտական աղբյուր: Հնագիտությունը հատկապես դրանք հայտնաբերել է նշված Թուրանահամոնի տիրակալության օրոք, մոտ Ք.Ա. 1350թ.: Նաև այս արձաթե փողերը, որոնք կիրառվում էին կրոնական և քաղաքացիական նպատակներով, տարածված են Արմառնայի Տեքստերում:
3. Ձիաքարշ կառքերը Եգիպտոսին ծանոթացրեցին *Հիքսոսները*՝ 15-րդ և 16-րդ դինաստիաների սենական իշխանները: Եգներով քաշվող սայլերը նույնպես բացառիկ էին Եգիպտոսի համար: Դրանք երևում են Ք.Ա. 1470թ-ին Թուրամոս III-ի սիրիական ռազմարշավների ժամանակ: Քանանի ժողովուրդը անձանոթ էր այս վագոնների հետ, հավանաբար այն պատճառով, որ Քանանը շատ քարքարոտ լեռնային տարածք էր: Այս սայլերը ուղարկվեցին Հակոբին բերելու համար (Ծննդ. 45:19,21,27): Դրանք նաև օգտագործվում էին հրեաների կողմից Ելիցում (Թվոց 7:3,6,7):
4. Եվս մեկ վերջին յուրահատուկ եգիպտական տարր, որ Եբրայեցիները կրկնօրինակել էին, դա ամբողջովին սափրված քահանաներն էին (8:7):

Բ. 1-4 և 26 գլուխներում արձանագրված երկու մարդահամարները զուգահեռվում են՝

1. Մարի Տախտակներում /արձանագրություններում/, Ք.Ա. 1700թ-ից
2. Եգիպտոսի հնագույն թագավորությունից մի փաստաթղթում՝ Ք.Ա. 2900-2300թթ.

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Աշխարհագրական միջավայրի համաձայն տրված համառոտ նկարագրություն.

1. Խոստացյալ Երկիր ճամփորդելու համար Սինա լեռան մոտ նախապատրաստություններ, 1:1-10:10:
2. Խոստացյալ Երկիր ճամփորդությունը, 10:11-21:35
ա. դեպի Կադես, 10:11-12:16
բ. Կադեսում, 13:1-20:13
գ. Կադեսից, 20:14-21:35
3. Դեպքերը Մովաբի Հարթավայրերում, 22:1-36:13

Բ. Մանրամասն նկարագրություն.

1. Ռ. Կ, Հարրիսոն, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 614-615 /R.K. Harrison, *Introduction to the Old Testament*/
2. Ի. Ջ. Յանգ, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 84-90 /E. J. Young, *An Introduction to the Old Testament*/
3. NIV Սերտոդոյան Աստվածաշունչը, էջ՝ 187-188:

- Գ. ԹՎՈՑ ԳՐՔԻ ՎԵՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԿԸ մեկը նյութերի անսովոր հավաքագրումն է, այսինքն՝ օրենքի և պատմական իրադարձությունների խառնուրդը և դրա հետ ներառված տարաբնույթ նյութեր: Դրա կառուցվածքի վերաբերյալ մի քանի տեսություններ.
1. Ըստ երևույթին սա կիրառել են «փաստագրական վարկածների» կողմնակիցները: J. E. D. P. բաժանում է գիրքը ոչ-պատմական, ոչ-մովսիսական շատ աղբյուրների:
 2. Ջ. Ս. Ռայթը իր կյանքի վերջում դպիրների հետ խորհրդատվության ժամանակ առաջարկում է Մովսիսական նյութերի ծաղկաբաղ: ԹՎՈՑ ԳՐՔԻ մաս-մաս էությունը՝ բնույթը նկատելի է, սակայն այն վերագրված է Մովսեսի կյանքի ժամանակահատվածին:
 3. Գորդոն Ջ. Ուենհեմը (*Tyndale Commentary On Numbers, ԹՎՈՑ ԳՐՔԻ ԹԻՆՊԵՆՅԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ*, էջ՝ 14-18) առաջարկում է երեք համագործ կիրառելով Ելից, Ղևտացիներ և ԹՎՈՑ ԳՐՔԵՐԻ աստվածաշնչյան նյութերը, և դրանք կապելով երեք ճամփորդությունների հետ. (1) Կարմիր Ծովից մինչև Սինա լեռ, (2) Սինա լեռից մինչև Կադես, (3) Կադեսից մինչև Մովսես: Այսպես անելով թե՛ «ճամփորդությունների» և թե՛ «կանգառների» համար մի ակնհայտ համագործ է բացահայտվում: Հետագայում նա կապում է այս երեքպատիկ գուգահեռներ անցկացնելը Ծննդոց 1-11; Ծննդոց 12-50 և 2 Օրինացի հետ: Սա խոստումնալից է թվում: Դա մեզ ցույց է տալիս, որ Հնագույն Մերձավոր Արևելյան հեղինակները ունեին գրական կառուցվածքներ կամ ձևաչափեր, որոնք վերահսկում էին իրենց գրական ժանրերը, սակայն դրանք որպես արևմտաբնականների անծանոթ են մեզ :

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս գիրքը Ծննդոցում սկսված պատմությունների շարունակությունն է: Սակայն պետք է հիշել, որ սա «արևմտյան պատմություն» չէ, այլ Մերձավոր Արևելքի աստվածաբանական պատմություն: Դեպքերը բացառապես ժամանակագրական ճշգրիտ հերթականությամբ չեն շարադրված, այլ հատընտիր են, որպեսզի հայտնեն Աստծուն և Իսրայելի բնույթը:

Բ. Այն հայտնում է Աստծո բնավորությունը.

1. Նրա ներկայությունը երևում է ամպի մեջ.
 - ա. Ամպը հանգչեց՝ իջավ Խորանի «Մուրք Սրբաբանի» վրա, 9:15: Աստված ընդունեց այն և դրա ծիսակարգերը որպես Աստծո և մարդու հանդիպման համար վայր և կերպ:
 - բ. Ամպը առաջնորդում էր ժողովրդին, 9:17-23: Աստված նրանց հետ էր և առաջնորդում էր նրանց հենց Իր ներկայությամբ:
 - գ. Ամպը մարմնավորում էր Աստծո ներկայությունը, ով Իրեն հայտնեց Մովսեսին, 11:17,25; 16:42-43:
 - դ. Ամպը դարձավ Աստծո ներկայության խորհրդապատկերը դատաստանի մեջ, ինչպես նաև հայտնության մեջ, 12:1-8, 14:10:
 - ե. Ամպը Աստծո ներկայության տեսանելի խորհրդապատկերն էր ոչ միայն Իսրայելի համար, այլ նաև շրջապատող ազգերի, 14:14; 23:21:
 - զ. Աստծո ներկայությունը ամպի տեսքով Ելիցի և Անապատում Դեզերելու ժամանակաշրջանում դադարեց որպես այդպիսին, երբ նրանք մտան Խոստացյալ Երկիրը, սակայն Աստված դեռևս նրանց հետ էր Ուխտի Տապանակի միջոցով, 35:34:
2. Նրա շնորհքն ու ողորմությունը.
 - ա. Նրանց հետ Իր մշտական ներկայությունը տրտունջների մեջ և Նրա ուղարկած առաջնորդներին մերժելիս, 11:1; 14:2, 27,29,36; 16:11,42; 17:5; 20:2; 21:5

բ. Անապատում նրանց համար Աստծո հոգածությունը.

- 1) ջուր
- 2) կերակուր
(ա) մանանա (ամեն օր, բացի Շաբաթ օրից)
(բ) լոբ (երկու անգամ)
- 3) հանդերձները, որոնք չէին մաշվում
- 4) Ամպը՝
(ա) հովանի
(բ) լուսավորություն
(գ) առաջնորդող ուղեցույց
(դ) հայտնություն

գ. Նրա կողմից Մովսեսի բարեխոսությանը մտիկ տալը.

- 1) 11:2
- 2) 12:13
- 3) 14:13-20
- 4) 16:20-24
- 5) 21:7

3. Նրա արդարությունը (Սրբությունը).

ա. Իսրայելի 38 տարի Անապատում Թափառելու պատժի ժամանակաշրջանը (14)

բ. Մովսեսին պատժելը, որը չկարողացավ մտնել Խոստացյալ Երկիրը (20:1-13; 27:14; 2 Օր.3:23-29):

գ. Կորիսի և Ռուբենի ցեղի առաջնորդների մահը, (16:1-40):

դ. Մովսեսի և Ահարոնի առաջնորդությունը անարգելու համար ժողովրդի վրա եկած պատուհասը (16:41-50):

ե. Աստծո կողմից դատապարտված կռապաշտությունը Սատիմում՝ Ղևտացիների ձեռքով վնաս պատճառողների մահը (25):

Գ. Երբ Իսրայելը Սինա լեռան մոտ Ուխտի համաձայնության մեջ մտավ, ՅԱՀՎԵԻՆ վստահելը և Նրա Խոսքին խստորեն հնազանդելը դարձան կարևորագույն պարտավորություններ:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ (NASB):

1. Ժողովքի խորան, 1:1 (NASB & NIV)
2. փրկագին, 3:46 (NIV; փրկագնել)
3. Նազովրեցի /ուխտավոր/, 6:2 (NASB & NIV)
4. օտարական պանդուխտ, 9:14 (NIV; օտարական)
5. Ամպը, 9:15 (NASB & NIV)
6. «և նրանց միջի խառնիճաղանջ բազմությունը», 11:4 (NASB & NIV)
7. «իրենց հագուստները պատռեցին», 14:6 (NASB & NIV)
8. ծուլեր, 15:38 (NASB & NIV)
9. *Qoip /Sheol/*, 16:30 (NIV; գերեզման)
10. կարմիր երինջ, 19:2 (NASB & NIV)
11. կիզիչ օձեր, 21:6 (NIV; թունավոր օձեր)
12. ապաստանի քաղաք, (NASB & NIV)
13. արյան վրեժխնդրություն, 35:19, 21 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.

1. Եթովպացի կին, 12:1 (NIV, «նրա Եթովպացի կինը»)
2. Ենակ, 13:28,33
3. Հերուսացիներ, 13:29




4. Կորին, 16:1 (NIV, “Korath”)
5. Բաղասամ, 22:5
6. Բահադ, 22:41

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Եսրողի ձոր, 13:23 (Քերրոնի հյուսիսում)
2. Արքունի Ճանապարհ, 20:17
3. Փասգա լեռ, 21:20
4. Առնոն գետ, 21:24
5. Հաբոկ գետ, 21:24
6. Ասուր, 24:22
7. Սատիմ, 25:1
8. Քեներեթ Ծով, 34:11 (NIV; “Sea of Kinnereth”)


XI. ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ Ղևին մյուս ցեղերի հետ միասին չհամարվեց, 1:49:
2. Ինչպե՞ս էին Ղևտացիները կապված առաջնեկների հետ, 3:12-13:
3. Նկարագրեք շնությունը ստուգելու կերպը, 5:16:
4. Թվարկեք ուխտավորի երդման պահանջները, 6:1:
5. Ինչպե՞ս կրացատրեք 4:3 խոսքը 8:24-ի հետ:
6. Արդյո՞ք Մովսեսն է գրել 12:3-ը:
7. Ինչո՞ւ Աստված սահմանեց 40 տարվա դեգերելու ժամանակաշրջան:
8. Ի՞նչ է նշանակում «ոչ դիտավորյալ» տերմինը կապված մեղքի և գոհի հետ, ինչպես գրված է գլուխ 15-ում:
9. Ո՞րն էր գլուխ 20-ում Մովսեսի մեղքը: Ի՞նչ եղավ դրա հետևանքը:
10. Արդյո՞ք Բաղասամի ավանակը իրոք խոսեց, 22:28: Ի՞նչ առաջարկեց Բաղասամը Բաղակին, որ հաղթի Իսրայելին:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40
SCALE IN MILES

ԵՐԿՐՈՐԳ ՕՐԻՆԱՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. Սա ՆԿ-ում ՀԿ-ից ամենաշատ մեջբերված չորս գրքերից մեկն է (Ծննդոց, Երկրորդ Օրինաց, Սաղմոսներ և Եսայի): Երկրորդ Օրինաց գրքից մեջբերված է 83 անգամ:
- Բ. Պետք է որ լինեն Հիսուսի ամենասիրելի ՀԿ-յան գրքերից մեկը.
1. Անապատում Սատանայի կողմից փորձվելիս Նա անընդհատ այս գրքից էր մեջբերում (Մատթ.4:1-16; Ղուկ.4:1-13):
 2. Լեռան քարոզի ետևում հավանաբար կանգնած է այս գրքի բովանդակությունը, Մատթ.5-7:
 3. Հիսուսը մեջբերեց 2 Օր.6:5 որպես ամենամեծ պատվիրան, Մատթ.22:34-40; Մարկ.12:28-34; Ղուկ.10:25-28:
 4. Հիսուսը շատ հաճախ էր մեջբերում ՀԿ-ի այս բաժինը (Ծննդոցից մինչև 2 Օրինաց), քանի որ իր օրերի հրեաները այդ էին համարում կանոնի ամենահեղինակավոր բաժինը:
- Գ. Սա մեր ամենագլխավոր օրինակն է Սուրբ Գրքում մի նոր իրավիճակում Աստծո կողմից տրված հայտնության վերամեկնաբանության: Այս բանի օրինակ կարող է հանդիսանալ Ելից 20 և 2 Օրինաց 5-ում Տաս Պատվիրանների միջև եղած թեթև տարբերությունը: Ելից 20-ը եղել է Անապատում Դեզերելու Ժամանակաշրջանում, մինչ 2 Օրինաց 5 պատրաստում էր ժողովրդին Քանանում նստակյաց կյանքի համար:
- Դ. Երկրորդ Օրինաց գիրքը, ըստ իր սահմանման, հանդիսանում է Մովսեսի կողմից պատգամների մի շարք, ուղղված՝
1. հիշելու Աստծո կողմից Իսրայելի հանդեպ ցուցաբերած հավատարմությունը,
 2. վերաշեշտադրելու Սինա լեռան վրա տրված Օրենքը,
 3. վերաբացատրելու դրա կիրառությունները Քանանում հողագործական կյանքի համար,
 4. պատրաստելու Խոստացյալ Երկրում (Հետու) Ուխտի նորոգության արարողությանը,
 5. արձանագրելու Մովսեսի մահը և իշխանության փոխանցումը Հետուին:
- Ե. Երկրորդ Օրինացը նաև հանդիսանում է այսօր աստվածաբանների միջև գրական ձևավորման շուրջ երկխոսության կենտրոնը: Ժամանակակից գիտությունը բաժանված է Հնգամատյանի հետ կապված շարադրանքի տեսությունների միջև: Ժամանակակից գիտությունը բաժանված է Հնգամատյանի շարահուսության իր ունեցած տեսություններով:

II. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- Ա. Եբրայերենում Հնգամատյանի գրքերի վերնագրերը հանդիսանում են իրենց առաջին տաս բառերից որևէ մեկը և սովորաբար առաջին բառը.
1. Ծննդոց՝ «Սկզբում»
 2. Ելից՝ «Եվ սրանք են անունները»
 3. Ղևտացիների՝ «Եվ Նա /Տերը/ կանչեց»
 4. Թվոց՝ «Անապատում»
 5. Երկրորդ Օրինաց՝ «Եվ սրանք են այն խոսքերը»
- Բ. Թավմուդում (Միշնա Հաթոր– 17:18) այն կոչվում է «օրենքի կրկնություն»:
- Գ. ՀԿ-ի հունարեն թարգմանության մեջ, որ կոչվում է Մեպտուագինտա (LXX)՝ գրված մոտ Ք. Ա. 250թ-ին, կոչվում է «Երկրորդ օրենք», 17:18-ի սխալ թարգմանության պատճառով:

Գ. Անգլերեն վերնագիրը ստացել ենք Ջերոմի Լատիներեն Վուլգատայից, որը կոչում է այն «Երկրորդ օրենք» (Deutro-nomian /Deuteronomy/):

III. ԿԱՆՈՆԸ – Սա Թորայի վերջին՝ ամփոփողիզ գիրքն է, որը ձևավորում է Եբրայական Կանոնի երեք բաժիններից առաջինը:

Ա. Թորան կամ Օրենքը՝ Ծննդոց – Երկրորդ Օրինաց

Բ. Մարգարենները.

1. Վաղ Մարգարեններ՝ Հեսու – Թագավորացներ (բացի Հռութից)
2. Ուշ Մարգարեններ՝ Եսայի – Մաղաքիա (բացի Դանիելից և Ողբ Երեմիայից)

Գ. Գրերը.

1. Մեգեղոթ (5 մագաղաթները).
 - ա. Երգ Երգոց
 - բ. Ժողովող
 - գ. Հռութ
 - դ. Ողբ Երեմիա
 - ե. Եսթեր
2. Դանիել
3. Իմաստասիրական Գրականություն.
 - ա. Հոբ
 - բ. Մաղմոսներ
 - գ. Առակաց
4. 1 և 2 Մնացորդացներ

IV. ԺԱՆԲԸ

Ա. 2 Օրինացը ընդհանուր նախաբանով և նախքան Իսրայելը կանցներ Խոստացյալ Երկիրը, Հորդանան Գետի արևելյան կողմում Մովսեսի մահվան նկարագրության փակման խոսքով:

Բ. Այս գիրքը նաև պարունակում է Մովսեսի մի հին երգ՝ սաղմոս, գլուխներ 31:30-32:43:

Գ. Ծննդոց 49-ի պես 2 Օրինաց 33-ը Հակոբի որդիների մասին մարգարեություն է:

V. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հրեական Ավանդույթը.

1. Հնագույն ավանդույթը համամիտ է, որ հեղինակը Մովսեսն է:
2. Այս մասին գրված է՝
 - ա. Թալմուդում՝ Բարա-Բաթրա 14բ
 - բ. Միշնայում
 - գ. Բեն Սիրաքի Ժողովող 24:23-ում (գրված մոտ Ք. Ա. 185թ-ին)
 - դ. Ալեքսանդրիացի Ֆիլոն
 - ե. Ֆլավիոս Ջոզեֆուսը
3. Սուրբ Գիրքն է ասում՝
 - ա. Դատավորաց 3:4 և Հեսու 8:31

բ. «Մովսեսը խոսեց».

- 1) 2 Օր.1:1,3

- 2) 2 Օր.5:1
 - 3) 2 Օր.27:1
 - 4) 2 Օր.29:2
 - 5) 2 Օր.31:1,30
 - 6) 2 Օր.32:44
 - 7) 2 Օր.33:1
- գ. «ՅԱՀՎԵՆ խոսեց Մովսեսին».
- 1) 2 Օր.5:4-5,22
 - 2) 2 Օր.6:1
 - 3) 2 Օր.10:1
- դ. «Մովսեսը գրեց».
- 1) 2 Օր.31:9,22,24
 - 2) Ելից 17:14
 - 3) Ելից 24:4,12
 - 4) Ելից 34:27-28
 - 5) Թվոց 33:2
- ե. Հիսուսը մեջբերեց կամ ակնարկ կատարեց 2 Օրինացից և ասաց. «Մովսեսն ասում էր» կամ «Մովսեսը գրում էր».
- 1) Մատթեոս 19:7-9; Մարկոս 10:4-5 – 2 Օրինաց 24:1-4
 - 2) Մարկոս 7:10 – 2 Օրինաց 5:16
 - 3) Ղուկաս 16:31; 24:27, 44; Հովհ.5:46-47; 7:19,23
- զ. Պողոսը հաստատում է Մովսեսին որպես հեղինակ.
- 1) Հռոմ.10:19 – 2 Օր.32:21
 - 2) 1 Կորն.9:9 – 2 25:4
 - 3) Գաղ.3:10- 2 Օր.27:26
 - 4) Գործք 26:22; 28:23
- է. Պետրոսն էլ հաստատում է Մովսեսին որպես հեղինակ Պենտեկոստեի իր քարոզի մեջ՝ Գործք 3:22:
- ը. Եբրայեցիների հեղինակը հաստատում է Մովսեսին որպես հեղինակ՝ Եբր.10:28; 2 Օր.17:2-6

Բ. Ժամանակակից Գիտությունը

1. 18-րդ և 19-րդ դարերի շատ աստվածաբաններ հետևելով Գրաֆ-Ուելիոզենի բազմահեղինակության տեսությանը (J.E.D.P.) պնդում են, որ Երկրորդ Օրինացը գրվել է մի քահանա մարգարեի կողմից՝ Հուդայում Ովսիայի իշխանության ժամանակ, որպեսզի օգնի նրան հոգևոր բարեփոխումներ կատարելու մեջ: Սա պետք է նշանակեր, որ գիրքը գրվել էր Մովսեսի անունով մոտ Ք.Ա. 621թ-ին:
2. Նրանք դա հիմնավորում են հետևյալ կերպ.
 - ա. 3 Թագ.22:8; 2 Մնաց.34:14-15. «Տիրոջ Տան մեջ ես գտա Օրենքի գիրքը»,
 - բ. Գլուխ 12-ը տալիս է Խորանի և հետագայում Տանարի համար միայն մեկ տարածք,
 - գ. Գլուխ 17-ը խոսում է ապագա մի թագավորի մասին,
 - դ. Ճիշտ է, որ Հնագույն Մերձավոր Արևելքում և Հրեական շրջանակներում անցյալի հայտնի որևէ մարդու անունով գիրք գրելը տարածված երևույթ էր,
 - ե. Գոյություն ունեն գրելաոճի, բառապաշարի և քերականության նմանություններ Երկրորդ Օրինացի և Հեսու, Թագավորացների և Երեմիա գրքերի միջև,
 - զ. Երկրորդ Օրինացը արձանագրում է Մովսեսի մահը, գլուխ 34,
 - է. Հնգամատյանում առկա են հետագա ակնհայտ խմբագրական հավելումներ.
 - 1) 2 Օրինաց 3:14
 - 2) 2 Օրինաց 34:6

- ը. Երբեմն թվացյալ համարժեք համատեքստերում և պատմական ժամանակահատվածներում առկա է Աստծո անունների կիրառության մեջ անբացատրելի բազմազանություն՝ Էլ, Էլ-Շադայ, Էլոհիմ, ՅԱՀՎԵ:

VI. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե անգամ գիրքը գրել է Մովսեսը, ապա Եգիպտոսից Ելքի ժամանակի և տևողության հետ կապված գոյություն ունի երկու հավանականություն.

1. Եթե 3 Թագ.6:1-ի նշանակությունը տառացի է, ապա մոտ Ք.Ա. 1445թ-ին (Թուլթոնո III-ի և Ամենհոթեպ II-ի 18-րդ դինաստիայի ժամանակ):
 - ա. LXX թարգմանությունը տալիս 480 տարվա փոխարեն տալիս է 440 տարի:
 - բ. Այս թիվը կարող է արտահայտում է ոչ թե տարիներ (սիմվոլիկ), այլ սերունդներ:
2. Հնագիտական ապացույցները Ելիցի համար թվագրում են Ք.Ա. 1290թ-ը (Եգիպտական 19-րդ դինաստիան).
 - ա. Սեթի I (1390-1290) Եգիպտոսի մայրաքաղաքը տեղափոխեց Թեբեսից դեպի Դելտա շրջան՝ Չոան / Տանիս:
 - բ. Ռամզես II (1290-1224).
 - 1) Նրա անունը հայտնվում է այն քաղաքում, որը կառուցել են երրայեցի ստրուկները, Ծննդ.47:11; Ելից 1:11;
 - 2) Նա ուներ 47 աղջիկ;
 - 3) Նրան չի հաջորդում իր ավագ որդին:
 - գ. Պաղեստինի բոլոր մեծ քաղաքները ավերվել էին և մոտ Ք.Ա.1250թ-ին արագ վերակառուցվեցին:

Բ. Ժամանակակից գիտության տեսությունը բազմաթիվ հեղինակների շուրջ.

1. J (YHWH / ՅԱՀՎԵ) Ք.Ա. 950թ.
2. E (Elohim / Էլոհիմ) Ք.Ա. 850թ.
3. JE (համադրությունը) Ք.Ա. 750թ.
4. D (Deuteronomy) Ք.Ա. 621թ.
5. P (Քահանաները) Ք.Ա. 400թ.

VII. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Ք.Ա.2-րդ հազարամյակի քետական պայմանագրերը Երկրորդ Օրինացի կառուցվածքի համար մեզ առաջարկում են մի հնագույն, պատմականորեն տվյալ ժամանակին զուգահեռ (ինչպես նաև Ելից-Ղևտացիներ և Հեսու 24): Այս պայմանագրի ձևաչափը փոխվեց Ք.Ա. 1-ին հազարամյակում: Սա մեզ համար Երկրորդ Օրինացի պատմականության ապացույց է: Այս թեմայի շուրջ ավելի տեղեկությունների համար կարող եք ընթերցել Ջ. Ի. Մենդենհոլդի *Օրենքը և Ուխտերը Իսրայելում և Հնագույն Մերձավոր Արևելքում* :

Բ. Քետական օրինակը և Երկրորդ Օրինացում դրա համարժեքները.

1. Նախարան (2 Օրինաց 1:1-5, խոսողի՝ ՅԱՀՎԵԻ մասին, ներածական մաս)
2. Թագավորի անցյալում կատարած գործերի վերանայում (2 Օրինաց 1:6-4:49՝ անցյալում Աստծո գործերը Իսրայելի համար)
3. Դաշնագրի՝ պայմանագրի տերմինները (2 Օրինաց 5-26).
 - ա. Ընդհանուր (2 Օրինաց 5-11)
 - բ. Հատուկ (2 Օրինաց 12-26)
4. Պայմանագրի արդյունքները (2 Օրինաց 27-29).
 - ա. Օգուտները (2 Օրինաց 28)
 - բ. Հետևանքները (2 Օրինաց 27)

5. Աստծո վկա (2 Օրինաց 30:19; 31:19, նաև 32, Մովսեսի երգը դիտարկվում է որպես վկա).
 - ա. մի կրկնօրինակ Աստծո տաճարում
 - բ. մի կրկնօրինակ էլ վասալի՝ ծառայի մոտ, որպեսզի ամեն տարի կարդա
 - գ. Զետական պայմանագրերի յուրահատկությունը հետագայում ասորական և սիրիական պայմանագրերի համեմատ հետևյալն է.
 - 1) թագավորի անցյալի գործերի պատմական վերանայումը
 - 2) անեծքի բաժինը հայտարարվում էր աղախնու կողմից:

VIII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Գրքի ներածական մասը, 1:1-5

Բ. Առաջին քարոզը, 1:6-4:43 (ՅԱՀՎԵԻ անցյալի գործերը այսօրվա համար)

Գ. Երկրորդ քարոզը, 4:4:44-26:19 (ՅԱՀՎԵԻ մեր և բոլոր օրերի համար).

1. Ընդհանուր – Տաս Պատվիրանները (5-11)
2. Հատուկ օրինակներ և գործնական լուսաբանումներ (12-26)

Դ. Երրորդ քարոզը, 27-30 (ՅԱՀՎԵԻ Օրենքը ապագայի համար, 27-29).

1. Անեծքներ (27)
2. Օրհնություններ (28)
3. Ուխտի նորոգություն (29-30)

Ե. Մովսեսի վերջին խոսքերը, 31-33.

1. «Հրաժեշտի» քարոզ, 31:1-29
2. Մովսեսի երգը, 31:30-32:52
3. Մովսեսի օրհնությունները, 33:1-29

Զ. Մովսեսի մահը, 34

IX. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Վերջնական պատրաստություններ Խոստացյալ Երկիրը մտնելուց առաջ: Աստծո Ուխտը Աբրահամի հետ (Ծննդ.12:1-3), երկրի և սերնդի խոստում: ՀԵ-ը կենտրոնանում է երկրի՝ հողատարածքի վրա:

Բ. Մովսեսը պատրաստում է ժողովրդին նստակյաց ագրարային կյանքին ի հակադրություն քոչվոր կյանքի: Նա հարմարեցնում է Սինայի Ուխտը Խոստացյալ երկրի համար:

Գ. Գիրքը շեշտադրում է անցյալում, ներկայում և ապագայում Աստծո հավատարմությունը: Ուխտը, սակայն, պայմանական է: Իսրայելը պետք է արձագանքի և շարունակի ապրել հավատքով, ապաշխարությամբ և հնազանդությամբ: Եթե այդպես չանի, ապա 27-29 գլուխների անեծքերը իրականություն կդառնան:

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ.

1. «Երկինքն ու երկիրն են վկայակոչում», 4:26 (NASB & NIV)
2. «Խատուցելու են հայրերի անօրենությունը նրանց որդիներին...», 5:9 (NIV, «պատժելու են որդիներին հայրերի մեղքերի համար՝ մինչև նրանց երրորդ և չորրորդ սերունդը»):

3. «... բայց ողորմություն կանեմ նրանց՝ մինչև հազար սերունդ», 5:10 (NIV, «բայց սեր կցուցաբերեմ մինչև հազար սերունդ»)
4. «սիր», (Shema) 6:4 (NASB & NIV)
5. «ճակատնոց լինեն աչքերիդ մեջտեղում» (Ֆիլակտեր) 6:8 (NIV, «որպես սիմվոլներ...»)
6. «քո տան դրանդիքի վրա գրիր դրանք», (*mezuzah*) 6:9 (NIV, «դռների»)
7. «նգովյալ /նգովքի տակ/» *herem*, 13:17 (NIV, «այդ դատապարտված բաները»)
8. «երկնային գորքի /մարմնի/», 17:3 (NIV, «երկնքի աստղերը»)
9. «կրակով անցկացնել», 18:10 (NIV, «զոհեր»)
10. մեռելահարցուկ, 18:11 (NASB & NIV)
11. փրկված, 21:8 (NASB & NIV)
12. «սիրված/ատելի», 21:15 (NIV, «ոչ ուրիշների համար»)
13. «ձառի վրա կախված», 21:23 (NASB & NIV)
14. «շան գին», 23:18 (NIV, «տղամարդու պոռնկության վաստակ»)
15. «ապահարզանի թուղթ», 24:1 (NASB & NIV)
16. «օծվել յուղով», 28:40 (NIV, «օգտագործել յուղը»)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.




1. Ենակը, 1:28 (NIV, «Ենակի որդիները»)
2. Ռափա, 3:11 (NIV, «Ռափայի որդիները»)
3. Քեսացիներ, 7:1
4. Քանդակներ, 7:5 (NIV, «քանդակված սյուներ»)
5. Սարգարեն, 18:15-22
6. Հեսուրուն, 32:15; 33:5,26

XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Քորեթ լեռ, 1:2,6,19; 4:10,15
2. Սեիր լեռ, 1:2,44; 2:1,4,5,8,12,22 (լեռնաշղթա)
3. Կադես-Բարնես /Կադես/, 1:46; 32:51 (NIV, «Կադես»)
4. Բասան, 1:4; 3:1,4,10,11,13; 4:43,47
5. Ելաթ, 2:8 (Գափոն-Գաբեր)
6. Հերմոն լեռ, 3:8,9; 4:48
7. Գերադ լեռ, 11:29; 27:4,13
8. Գարիզին լեռ, 11:29; 27:12
9. Հովր լեռ, 32:50 (Հերել Հարուն)


XII. ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞վ է տարբերվում Երկրորդ Օրինաց գիրքը Ելից և Թվոց գրքերից (ժանրը):
2. Ինչո՞ւ է Մովսեսը կրկնում Ելիցի պատմությունը:
3. Երեխաներին սովորեցնելու հարցում ինչո՞ւ են առկա այսքան շատ տարբերություններ, (4:9; 6:7, 20-25; 11:19; 32:46):
4. Ինչպե՞ս է Երկրորդ Օրինաց 5-ի Տասնաբանյան տարբերվում Ելից 20-ից:
5. Ինչո՞ւ էր նրանցից պահանջվում, որպեսզի փրուզեին սուրբ սյուները և նրանց զոհասեղանները քանդեին (7:5):
6. Ինչպե՞ս է 10:12-21 բնութագրում Երկրորդ Օրինացը:
7. Ինչո՞ւ են 27-29 գլուխները այդքան կարևոր ամբողջ ՀԿ-ի մեկնաբանության հարցում:
8. Ո՞վ է արձանագրել Մովսեսի մահը (34):



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՀԵՍՈՒ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գրքի անվանումը Մովսեսին հաջորդող և գրքի գլխավոր հերոսը հանդիսացող Հեսուի անունն է:

Բ. Նրա անունը կազմված է Եբրայերեն երկու տերմիններից.

1. ՅԱՀՎԵ / YHWH (J և ևս մեկ ձայնավոր)
2. փրկություն (Օսես)

Գ. Սա հենց միևնույն եբրայերեն Հիսուս անունն է (Մատթ.1:21):

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Հեսու գիրքը հանդիսանում է Եբրայերեն կանոնի «Մարգարեներ» կոչվող բաժնի առաջին գիրքը:

Բ. Այս բաժինը բաժանված է երկու մասի.

1. հին մարգարեներ, որոնց մեջ ներառված են Հեսու- Թագավորացներ (բացի Հուլի գրքից)
2. ուշ մարգարեներ, որոնց մեջ ներառված են Եսայի – Մաղաքիա (բացի Դանիել և Ողբ Երեմիա գրքերից):

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս պատմական գրքերը շարունակում են Աստծո ժողովրդի պատմությունը, որը սկսվել է Ծննդոցում: Այն արևմտյան ժամանակագրության պատմություն չէ, այլ հատրնտի աստվածաբանական պատմություն: Սա ակնարկ չէ այն մասին, որ այն ճշգրիտ կամ հավաստի չէ, այլ նշանակում է, որ հեղինակները ընտրել են որոշակի հատուկ դեպքեր, որպեսզի սովորեցնեն Աստծո, մարդու, մեղքի, փրկության մասին աստվածաբանական ճշմարտություններ: Այս իմաստով դրանք նման են Նոր Կտակարանի Ավետարաններին և Գործ Առաքելոցին:

Բ. Հրեաների պատմությունը իրեն շրջապատող հարևան ժողովուրդների պես ցիկլային չէր՝ հիմնված բնության ցիկլերի վրա, այլ՝ «աստվածաբանական»: Այն նպատակ ու պատճառ ուներ: Աստված շարժվում էր դեպի կանխորոշված նպատակը՝ մեղքի անկում ապրած մարդկության փրկությունը (Ծննդ.3:15):

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ավանդական հեղինակը Հեսուն է.

1. Նրա սկզբնական անունը Օսես (փրկություն) էր, Թվոց 13:8:
2. Մովսեսը փոխեց նրա անունը Հեսու (ՅԱՀՎԵՆ «է» փրկությունը), Թվոց 13:16:
3. Որոշ անհայտ պատճառներով նրա անունը հեզվում է չորս տարբեր կերպերով.
ա. *yeshoshu'a*, (տարածված) Հեսու 1:1
բ. *yehoshu'a*, 2 Օրինաց 3:21
գ. *hoshe'a*, 2 Օրինաց 32:44
դ. *yeshu'a*, Նեեմ.8:17

Բ. Բարա Բաթրա 14բ ասում է, որ Հեսուն է գրել ամբողջ գիրքը, բացառությամբ իր մահվան արձանագրության հատվածը, որը արձանագրել է Եղիազար քահանան /Ահարոնի որդին/, 24:29-

30 և որ նրա որդին էլ՝ Փենեհեսը (Թվոց 25:7-13; 31:6-8; Հեսու 22:10-34) ավարտել է գիրքը՝ արձանագրելով Եդիազարի մահը, 24:31-33:

Գ. Հեսու մարդը.

1. Ծնվել է Եգիպտոսում՝ գերության մեջ
2. Տասներկու լուսններից մեկն էր. միայն նա և Քաղեբը ժողովրդին բերեցին հավատքի լուր (Թվոց 14:26-34):
3. Մովսեսի հավատարիմ օգնականը ամբողջ Ելիցի ընթացքում: Նա էր այն միակ անձը, որը Մովսեսի հետ բարձրացավ Սինա լեռը (կես ճանապարհը՝ Ելից 24:13-14):
4. Իսրայելական բանակի հրամանատար (Ելից 17:8-13):
5. Որպես Մովսեսին հաջորդող անձ առաջնորդեց Քանանի նվաճումը (2 Օրինաց 31:23):

Դ. Հեսուի հեղինակության որոշ վկայություններ՝ ապացույցներ.

1. Գիրքը հայտարարում է, որ Հեսուն է արձանագրել Աստծո ուխտը ժողովրդի հետ, 24:26, հետևաբար մենք գիտենք, որ նա կարող էր գրել:
2. Ակնհայտ երևում է, որ այն ականատեսի նյութ է.
ա. «մենք», 5:1 (MSS տարբերակը)
բ. «Հեսուն թո՛վատեց նրանց», 5:7-8
գ. Հեսուի առանձին հանդիպումը Տիրոջ Հրեշտակի հետ, 5:13-15
դ. «նա (Ռախաբը) Իսրայելում է բնակվում մինչև այսօր», 6:25 (սա հետագայում կատարված խմբագրությունն չէ, այլ այդ ժամանակի մեջ ապրող ականատեսի վկայություն)
3. Նա կիրառում էր գրավոր աղբյուրներ.
ա. «Ուղիղի» գիրքը /Book of Jashar/, 10:13 (2 Թագ.1:18)
բ. «գրքի մեջ», Հեսու 18:9
4. հնագույն քաղաքների ճշգրիտ անվանացանկ, որը համապատասխանում է տվյալ ժամանակի հեղինակի արձանագրությանը և ոչ թե հետագայում կատարված խմբագրությանը.
ա. Երուսաղեմը, որը կոչվում էր Հեբուս, 15:8; 18:16,28
բ. Քերթոնը, որը կոչվում էր Կարիաթ-Արբա, 14:15,16; 15:13,54; 20:7; 21:11
գ. Կարիաթարիմը, որը կոչվում էր Բասադա, 15:9,10
դ. Սիդոնը վերաբերում էր Փյունիկյան մի մեծ քաղաքի և ոչ թե Տիվրոսին, 11:8; 19:28, որը հետագայում դարձավ մայրաքաղաք:
5. Հեսու գիրքն էլ Հնգամատյանի պես ունի որոշակի խմբագրական հավելումներ.
ա. Հեսուի մահը
բ. Քերթոնի հետագա նվաճումը, 14:6-15; 15:13-14
գ. Դեբիրի հետագա նվաճումը, 15:15,49
դ. Դանի բնակեցումը հյուսիսային մասում, 19:47
ե. «մինչև այսօր» արտահայտությանը հանդիպում ենք շատ անգամներ, որը հետագայում կատարված խմբագրության վկայություն է, 4:9; 5:9; (6:25); 7:26 (երկու անգամ); 8:28-29; 9:27; 10:27; 13:13; 14:14; 15:63; 16:10; 22:3:

Ե. Ժամանակակից գիտությունը.

1. ուշադրություն դարձրեք Հնգամատյանի և Հեսուի գրքի միջև նմանություններին.
ա. ոճը
բ. բառապաշարը
2. J, E, D, P Փաստագրական Վարկածները Գիրքը դիտարկում են որպես տարբեր մարդկանց ձեռքով երկար ժամանակահատվածում գրված.
ա. J աղբյուրը գրել է 1-12 գլուխներից որոշ մասեր, որոնք կենտրոնանում են անհատական պայքարների վրա (Ք.Ա. 950-850թթ)
բ. E աղբյուրը գրել է 1-12 գլուխներից որոշ մասեր, որոնք կենտրոնանում են միասնական ռազմարշավների վրա (Ք.Ա. 750թթ.)

- զ. J & E-ի A համադրությանը հանդիպում ենք Ք.Ա. 650թ-ին, որտեղ հիմնականում J աղբյուրը բացատված է:
- դ. Գիրքը վերախմբագրվում է Ովսիայի օրոք մի քահանայի/մարգարեի կողմից, որը գրել է Երկրորդ Օրինացը: Այս անձը կամ խումբը կոչվում է Օրինացականների աղբյուր: Այս աղբյուրը նաև գրել է Երկրորդ Օրինացը, որպեսզի ամրապնդի Ք.Ա. 621թ-ին Ովսիայի կատարած բարեփոխումը, ավելի կենտրոնանալով Երուսաղեմի վրա, որպես միակ ճշմարիտ սրբատեղիի:
- ե. P աղբյուրը քահանաների խումբ էր, որը գրեց 13-21 գլուխները՝ Ք. Ա. 400-ականներին:
- զ. Որոշ հետագա հավելումներ ևս կատարվեցին Ք.Ա. 3-րդ դարում:
- 3. Ուշադրություն դարձրեք այս տեսության կանխակարծությանը: Նկատեք, թե ինչպես է այն տեքստը բաժանում իր պատմական միջավայրից և հեղինակից: Սա հնագույն տեքստերը արդի գրական տեսությունների լույսի ներքո վերլուծելու ժամանակակից փորձ է: Այնուամենայնիվ պետք է հայտարարել, որ.
 - ա. Հետուի հեղինակ լինելը գրքում տրված չէ:
 - բ. Հետուի մահը, Մովսեսի մահվան պես արձանագրված է գրքում:
 - գ. Տեղի են ունեցել որոշակի շարունակական խմբագրումներ ՀԿ-յան գրքերում:
 - դ. Մենք ընդունում ենք կազմավորման այս ընթացքը, որի արդյունքում ծնվել է ՀԿ-ը որպես ներշնչված գիրք:
 - ե. Ապացույց Վեցնամատյանի (Ծննդոցից մինչև Հետու) դեմ.
 - 1) Հրեական ավանդույթի մեջ գոյություն ունի հստակ տարբերակում Մովսեսի հինգ գրքերի (Հնգամատյանի) և Հետու գրքի միջև, որը սկսում է Եբրայական Կանոնի «Մարգարեներ» բաժինը:
 - (ա) Բեն Սիրաքը՝ *Իմաստություններ* գրքի հեղինակը, որը գրվել է Ք.Ա. 185թ-ին, 48:22-45:12-ում դնում է տարբերությունը:
 - (բ) Ֆլավիոս Չոզեֆուսը իր *Contra Apioness* 1:7 գրքում դնում է տարբերությունը:
 - (գ) Մագորեթիկ Տեքստի (MT) Հնգամատյանի փակման դպրական խոսքում դրված է տարբերությունը:
 - (դ) «Հափթարոթ» կոչվող շաբաթական ընթերցումները Ժողովարաններում դնում են այդ տարբերությունը:
 - (ե) Սամարացիները Հնգամատյանը ընդունում էին որպես Սուրբ Գրեր, սակայն ոչ Հետուի գիրքը:
 - 2) Ներքին ապացույցը (Young, էջ՝ 158)
 - (ա) Հետուի գրքում առկա է անձնական դերանվան հատուկ կիրառություն, որը Հնգամատյանում չկա:
 - (բ) Երիքով քաղաքը հեզվում է այլ կերպ:
 - (գ) Աստծո անունը՝ «Իսրայելի Աստվածը», Հետուի գրքում հանդիպում ենք 14 անգամ, սակայն երբեք չենք հանդիպում Հնգամատյանում:
 - զ. Մենք պետք է ընդունենք, որ շատ բան չգիտենք ՀԿ-յան այս գրքերի կազմավորման մասին, նախքան դրանք կդառնային այն ինչ հիմա ունենք մեր ձեռքերում:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Այս գիրքը վերաբերում է Խոստացյալ Երկրի նվաճմանը: Քանի որ մեզ հայտնի չէ Ելիցի և Անապատում Դեզերելու տարիների ճշգրիտ ժամանակը, մեզ նաև անհայտ է Նվաճման տարեթիվը.
 - 1. Ք.Ա. 1445-40 – մոտ 1400 թթ. (3 Թագ.6:1)
 - 2. Ք.Ա. 1290-40 – մոտ 1250 (հնագիտություն)

Բ. Հետուն գրվել է կամ խմբագրվել Դատավորացի ժամանակաշրջանում. որոշ քաղաքների անուններ փոխվեցին Իսրայելի հաղթանակից հետո: Օրինակներից մեկը Քանանացիների Սեփաթ

քաղաքն է, որի անվանումը հետագայում փոխվեց Հորմա, Դատ. 1:16-17: Սակայն, այս հետագա անունը մենք հանդիպում ենք Հեսու գրքում, 12:14; 15:30; 19:4:

Գ. Ռ. Կ. Հարրիսոնը ենթադրում է, որ այն գրվել է Դավթի թագավորության ժամանակ Սամուելի կողմից և հնարավոր է, որ Սամուելն է հանդիսանում Շիրիից ավանդույթների աղբյուրը (տես՝ Հին Կտակարանի Ներածություն, էջ՝ 673. *Introduction to the Old Testament*, R. K. Harrison):

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Հնագիտությունը ցույց է տալիս, որ Քանանի մեծապարիսպ քաղաքներից շատերը ավերվել են և արագ վերակառուցվել Ք. Ա. մոտ 1250թ-ին:

1. Գագիր
2. Լաշիշ
3. Բեթել
4. Դաբիր (նախկինում Կարիաթ-Մեփեր կոչվող, 15:15)

Բ. Հնագիտությունը չի կարողացել հաստատել կամ մերժել Երիքովի անկման աստվածաշնչյան դեպքը: Այժմ այդ տարածքը շատ անմխիթար վիճակում է.

1. եղանակի, տեղանքի պատճառով
2. հետագայում հին տեսարժան վայրերը հին շինանյութերով վերակառուցելու պատճառով
3. շերտերի հետ կապված ժամանակային անորոշության պատճառով

Գ. Հնագիտությունը Գերադ սարի վրա գտել է մի զոհասեղան, որը հնարավոր է կապ ունի Հեսու 8:30-31-ի հետ (2 Օրինաց 27:2-9): Այն շատ նման է */Mishnah/* Միշնայում (Թալմուդ) գտնվող նկարագրությանը:

Դ. Ուգարտայում գտնված Ռաս-Շամրա տեքստերը ցույց են տալիս քանանացիների կյանքը և կրոնը Ք.Ա. 1400-ականներին:

1. բազմաստվածության բնույթի երկրպագություն (պտղաբերության կուռքը)
2. Էլ աստվածը հանդիսանում էր գլխավոր աստվածը
3. Էլ-ի կենակիցը Աստարովթն էր (հետագայում նա Բահադի կենակիցն էր)
4. նրանց որդին Բահադն էր (Հադդադ)՝ փոթորկի աստվածը
5. Բահադը դարձավ քանանացիների պանթեոնի «գլխավոր աստվածը», Անաթը՝ կենակիցն էր:
6. Եզիպտոսի Իսիս և Օսիրիս արարողակարգերի նման ծեսեր
7. Բահադի երկրպագությունը կատարվում էր տարածքում գտնվող «բարձր տեղերում» կամ քարե պատվանդանների վրա (ծիսական պոռնկություն):
8. Բահադի խորհրդապատկերը կանգնեցված քարե սյուն էր (վարոցական սիմվոլ), մինչ Աստարովթը խորհրդապատկերվում էր փորագրված փայտե ցիցով կամ իրական ծառով, որը խորհրդանշում է «կյանքի ծառը»:

Ե. Հնագիտությունը հաստատել է, որ տարածաշրջանի մեծ Կայսրությունները (Քեսացիները, Եզիպտացիները և Միջագետքի ժողովուրդները) Ուշ Բրոնզե դար (Ք.Ա. 1550-1200թթ.) կոչվող այդ դարաշրջանում չէին կարողանում ազդել Պաղեստինի վրա:

Զ. Հնագույն քաղաքների անվանացանկը ճշգրտորեն տրվել է տվյալ ժամանակի հեղինակի, և ոչ թե հետագա խմբագրի կողմից.

1. Երուսաղեմը, որ կոչվում էր Հերուս, 15:8; 18:16,28 (15:28 ասում է, որ Հերուսացիները դեռևս բնակվում էին Երուսաղեմի մի հատվածում)
2. Քեբրոն, որ կոչվում էր Կարիաթ-Արբա, 14:15; 15:13,54; 20:7; 21:11
3. Կարիաթարիմը կոչվեց Բաադա, 15:9,10
4. Դաբիրը կոչվեց Կարիաթ-Սաննա, 15:49

5. Միդոնը վերաբերում է Փյունիկյան մեծ քաղաքին և ոչ թե Տիվրոսին, 11:8; 13:6; 19:28, որը հետագայում դարձավ մայրաքաղաք:

Է. Հեսու 24-ը ճշգրտորեն համապատասխանում է Ք.Ա. երկրորդ հազարամյակի քետացիների դաշնագրային օրենքների ձևաչափին (ինչպես 2 Օրինացը):

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Աշխարհագրական շարժը ձևավորում է գրքի բովանդակության ուրվագիծը.

1. սկսվում է Մովսիսի Հարթավայրերում, 1-2
2. անցնում են Հորդանան Գետը Երիթրվի մոտ Գադգադայի կողմը, 3-4
3. կենտրոնական Քանանի նվաճումը, 5:1-10:15
4. հարավային Քանանի նվաճումը, 10:16-43
5. հյուսիսային Քանանի նվաճումը, 11:1-23
6. երկրի աշխարհագրական բաժանումը ցեղերի միջև, 12:21

Բ. Համառոտ ուրվագիծը.

1. Քանանի գրավումը, 1-11
2. Խոստացյալ Երկիրը բաժանվում է ցեղերի միջև, 12-21
3. Հեսուի վերջին խոսքերը և մահը, 22-24

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ցույց տալու, որ Աստված կարող է և հավատարիմ է կատարելու Աբրահամին երկիր տալու Իր խոստումը (Ծննդոց 15:16):

Բ. Այն շարունակում է Ծննդոցում սկսած պատմությունը և հասցնում է մի նոր ժամանակաշրջանի: Այս ժամանակաշրջանում կենտրոնացված միավորող գործոնը ցեղային՝ տոհմական միավորումներն էին: Գոյություն չունեղ կենտրոնացված կառավարություն:

Գ. «Մուրբ Պատերազմը» (*herem*) մեզ շատ դաժան է թվում, սակայն Աստված զգուշացրել էր իսրայելացիներին քանանացիների մեղքերից հեռու մնալու: Ինչպես որ Աստված երկրից հեռացրեց քանանացիներին իրենց մեղքերի պատճառով, այնպես էլ Նա կհեռացնի հրեաներին այդ նույն մեղքերի պատճառով (Ասորեստանի և Բաբելոնի կողմից գերեվարվելու):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ կամ արտահայտություններ.

1. ծանծաղուտները /գետանցները/ 2:7 (NASB & NIV)
2. կայծքարի դանակներ /գայլախազից սուր դանակներ/, 5:2 (NASB & NIV)
3. «կայծ ու մեղր բխող երկիր», 5:6 (NASB & NIV)
4. «հեռացրու կոշիկներդ», 5:15 (NIV, «հանիր կոշիկներդ»)
5. «սուրբ» (*kadosh*), 5:15
6. «նզովքի տակ / նզովյալ» (*herem*), 6:17 (NIV, «հանձնված»)
7. «արև, կանգնիր Գաբավոնի վրա», 10:12 (NASB & NIV)
8. «ձեր ոտները դրե՛ք այս թագավորների պարանոցների վրա», 10:24 (NASB & NIV)
9. «ղևտական քաղաքները», 21:1-3 (NIV, «Մովսեսը հրամայեց, որ մեզ բնակվելու քաղաքներ տրվեն»)
10. «Տիրոջ ծառան», 24:29 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.




1. Ռախաբ, 2:1
2. «Տիրոջ զորքերի Չորապետը», 5:14 (NIV, «Տիրոջ զորքերի Հրամանատարը»)
3. Աքար, 7:1
4. Սալպաադ, 17:3
5. Փեննետ, 22:12

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ (թվագրված)

1. Մեծ Ծով, 1:4
2. Սատիմ, 2:1
3. Ադամ, 3:16
4. Գայի, 7:2
5. Գաբավոն, 9:3
6. Նեզև, 11:16
7. Արաբա, 11:16
8. Եսերոն, 12:5
9. Եգիպտոսի ձորը, (*wadi al 'arish*), 15:4 (NIV, «Wadi of Egypt»)
10. Ենովմի ձոր, 15:8 (NIV, «Բեն Ենովմի Ձոր»)
11. Սյուբեմ, 17:7
12. Սակեդդով, 17:11
13. Սելով, 18:1
14. Բերսաբեն, 19:2


XI. ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐՈՎ

1. Ինչպե՞ս է Աստված քաջալերում Հեսուին, ինչպես արեց Մովսեսին (1:1; 5:13-15):
2. Բացատրե՛ք, թե ինչպես պետք է իսրայելացիները հավատքով անցնեին Հորդանանը (3):
3. Ինչո՞ւ մանանան դադարեց:
4. Ինչո՞ւ իսրայելական զորքը պարտություն կրեց Գայիում:
5. Ինչպե՞ս Գիբեոնը խաբեց Հեսուին:
6. Արդյո՞ք հաստատ է, որ գլուխ 10-ը հրաշք է: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
7. Բացատրե՛ք դևտական և ապաստանի քաղաքների միջև կապը:
8. Ո՞րն է գլուխ 22-ում տեղի ունեցած խնդիրը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԴԱՏԱՎՈՐԱՅ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Վերնագիրը ծագել է երբայերեն “shophetim” տերմինից, որը նշանակում է «վեճ հարթել»: Երբայերեն այս տերմինը նման է.

1. «Խնամակալ» բառի համար փյունիկյան տերմինին
2. «Իշխան» բառի արքադերեն տերմինին
3. «Գլխավոր մագիստրոս» բառի կարթագենյան տերմինին

Բ. LXX-ում այն թարգմանվում է որպես “krital” կամ Դատավորներ:

Գ. Անգլերեն թարգմանությունը վերցված է Վուլգատայի “judicum” բառից:

Դ. Անգլերեն վերնագիրը շփոթեցնող է, քանի որ այս մարդիկ դատական սկզբունքներով չէին աշխատում, այլ տեղացի ակտիվ առաջնորդներ էին, որոնց Աստված էր բարձրացրել և Իր Հոգով իշխանություն տվել (3:10; 6:34; 11:29; 14:6,19; 15:14), որպեսզի իրականացնեին օտար հարստահարիչներից Իր ժողովրդին ազատելու հատուկ նպատակը (տես՝ 2:16): Ավելի հարմար վերնագիր կարող էր լինել «Ազատագրողներ»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Սա երբայական կանոնի երկրորդ բաժնի երկրորդ գիրքն է: Այն կոչվում է Մարգարեններ:

Բ. Այս երկրորդ բաժինը բաղկացած է երկու ենթաբաժիններից.

1. հին կամ վաղ մարգարեններ, որը մենք անվանում ենք պատմական գրքեր՝ Հեսուից մինչև Թագավորացներ (բացի Հռութից):
2. ուշ մարգարեններ, որը մենք անվանում ենք մարգարեններ՝ Եսայի-Մադաքիա (բացի Դանիել և Ողբ Երեմիա գրքերից):

III. ԺԱՆՐԸ – Հիմնականում պատմական իրադարձություններ են:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աստվածաշունչը լռում է

Բ. Բաբա Բաթրա 14ր-ն ասում է, որ Սամվել մարգարեն գրել է այն գիրքը, որը կրում է իր անունը, Դատավորաց գիրքը և Հռութի գիրքը:

Գ. Գիրքը պարփակում է երկար տարիների ժամանակահատված, ուստի հնարավոր չէ մի ականատես հեղինակ ունենալ:

Դ. Գիրքը հավանաբար հավաքագրվել է.

1. մի քանի անանուն գրավոր աղբյուրներից, ինչպիսիք են.
 - ա. «Տիրոջ պատերազմների Գիրքը», որը պատմական մի աղբյուր նշվում է Թվոց 21:14-ում:
 - բ. «Յաշարի գիրքը», որը մեկ այլ պատմական աղբյուր է նշված Հեսու 10:13 և 2 Թագ.1:18:

2. Հավանաբար մի քանի բանավոր աղբյուրներից: Ճշգրիտ բանավոր պատմությունները տարածված էին Հնագույն Մերձավոր Արևելքում, որտեղ նյութեր գրելը շատ թանկ էին և դժվար էր տեղափոխելը: Նման օրինակ կարող է լինել.
 - ա. «Գրի առնված Սամուել տեսանողի, Նաթան մարգարեի և Գադ տեսանողի գրքերում», 1 Մնաց.29:29

Ե. Թվում է թե բնագիրը հավաքագրողը գրել է Միացյալ Միապետության վաղ շրջանում.

1. Բեթլեհեմը հանախ է նշվում, հավանաբար ներկայացնելով Դավթի օրերը (տես՝ 17:7,8,9; 19:1,2,18 /երկու անգամ/):
2. Մի քանի տեքստեր արտացոլում են միապետության ժամանակաշրջանը հետևյալ արտահայտությամբ՝ «այդ օրերին Իսրայելում թագավոր չկար» (տես՝ 17:6; 18:1; 19:1; 21:25): Ծրջապատող բոլոր ազգերն ունեին թագավորներ, իսկ Իսրայելը՝ ոչ:

Զ. Առկա է հետազայում կատարված խմբագրության վկայություն.

1. 18:30 արտացոլում է՝
 - ա. Բ.Ա. 722թ-ին հյուսիսային տաս ցեղերի ասորական գերությունը
 - բ. Հեղիի օրոք փղշտացիների կողմից Տապանակի համառոտությունը, 1 Թագ.1-7:
2. Հրեական ավանդույթը հաստատում է, որ Երեմիան և/կամ Եզրաս դպիրը խմբագրել են ՀԿ-յան որոշ մասեր: ՀԿ-ի կազմավորումը իր ժամանակի մեջ մեզ համար կորած է՝ անհայտ: Սակայն սա չի ազդում ՀԿ-յան այս գրքերի աստվածային ներշնչանքի վրա:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Չնայած որ գրվել է Դավիթ թագավորի իշխանության օրոք և մի հավաքագրողի կողմից, սա չի նշանակում, որ պատմական նյութը ականատեսի աղբյուրներից չէ: Գոյություն ունեն վերը նշվածն ապացուցող երկու լավ օրինակներ.

1. Համար 1:21-ում հերուսացիները դեռևս պահում են Հերուս (հետազայում Երուսաղեմ) քաղաքի ներքին ամրոցը: Դավիթն այն չի գրավում մինչև 2 Թագ.5:6բ:
2. Համար 3:3-ում Սիդոնը թվարկված է ոչ թե Տիվոսի, այլ որպես Փյունիկեի գլխավոր քաղաք:

Բ. Գիրքը ընդգրկում է անմիջապես Հեսուի Նվաճումներից հետո ընկած ժամանակահատվածից մինչև Սամվել մարգարեի ծնունդը: Բացման տարեթիվը կախված է Ելիցի ժամանակից (Բ.Ա. 1445թ. կամ Բ.Ա. 1290թ.), Բ.Ա.1350թ. կամ Բ.Ա. 1200թ.: Վերջնաժամկետը կլինի մոտ Բ.Ա. 1020թ., որը Սավուդի իշխանության սկիզբն է (Բրայթ):

Գ. Եթե Դատավորացում տրված բոլոր տարիները գումարենք իրար, ապա կստացվի մոտ 390-410 տարի: Սա հնարավոր չէ դիտարկել ժամանակագրական առումով հերթականորեն տրված դեպքերի տարեթվեր, քանի որ 3 Թագ.6:1-ից Աստվածաշունչն ասում է, որ Ելիցից մինչև Սողոմոնի Տաճարի կառուցումը՝ Բ.Ա. 965թ, ընկած է 480 տարի: Սա նշանակում է, որ Դատավորները պետք է լինեին հիմնականում տեղացի առաջնորդներ և նրանց գործունեության ժամանակները մասնակիորեն համընկնում են:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Դատավորացի առաջին գլուխները ցույց են տալիս, թե որքան սահմանափակ էր Հեսուի նվաճումը: Հեսուն հիմնականում գրավեց քանանացիների մեծ քաղաքները և նրանց ռազմական պոտենցիալը: Աստված դժվարին գործը թողեց յուրաքանչյուր ցեղի՝ իր իսկ տարածքը մաքրելու համար, 2:6: Այս ռազմավարությունը իսրայելացիների նոր սերնդին փորձելու, ստուգելու համար էր, որոնք չէին տեսել Ելիցի և Նվաճման ժամանակ Աստծո հրաշքները, 2:1-10; 3:1:

Բ. Նոր սերունդը ձախողում էր իր ստուգարքը, 2:11բ; 3:7,12; 4:1; 6:1; 10:6; 13:1: Աստված պատասխանում էր նրանց մեղքին, ուղարկելով օտար հարստահարիչների, որպեսզի պատժի Իր ժողովրդին: Ժողովուրդը զոջում էր և Աստծուն օգնության կանչում: Աստված ուղարկում էր մի «ազատագրողի»: Այս մի քանի տարի երկիրը խաղաղության մեջ էր ապրում: Սա է այն հիմնական ձևաչափը, որի մեջ նկարագրվում է Դատավորաց գրքի դեպքերը, 2:6-16:31: («Մեղք, Տառապանք, Օգնություն, Փրկություն»):

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Կարծես թե Դատավորացի ժամանակը աստվածաբանորեն երեք տարբեր կերպերով է նկարագրված: Այս երեք մոտեցումները ձևավորում են գրքի ընդհանուր նկարագրությունը.

1. Հետուի նվաճման արդյունքները,
2. ազատագրողների անհրաժեշտությունը,
3. ուխտադրժության օրինակներ:

Բ. Գրքի համառոտ ուրվագիծը.

1. Նվաճման համառոտ արձանագրումը, 1:1-2:5
2. Աստծո ժողովրդի մեղքը, դատաստանը և ազատագրումը, 2:6-16:31
3. Աստծո ժողովրդի մեղքերի երեք օրինակ, որոնք հայտնում են այդ օրերի բարոյական մթնոլորտը.
 - ա. Միքայի կռապաշտությունը, 17
 - բ. Դանի գաղթը, 18
 - գ. Գարաայի սեռական մեղքը, 19-21

Գ. Գլխավոր Դատավորները և նրանց թշնամիները.

ԱՆՈՒՆ	ՏԵՔՍՏ	ԹՇՆԱՄԻ	ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ (1) կամ ԴԱՏԵԼՈՒ (2) ԺԱՄԱՆԱԿԸ
1. Գոթոնիել	3:7-11	Միջագետքը (Քուսարսաթեմ թագ.)	40 տարի (1)
2. Ավովի	3:12-30	Մովաբ (Էզդոն)	80 տարի (1)
3. Դեբորա (Բարակ)	4:1-24 (արձակ) 5:1-31 (պոեմ)	Քանանացիները (Հաբին և Սիսարա)	40 տարի (1)
4. Գեդեոն	6-8	Մադիանացիները և Ամադեկացիները	40 տարի (1)
5. Հեփթայե	10:17-12:7	Ամոնացիները (և Եփրեմը)	6 տարի (2)
6. Սամսոն	13-16	Փղշտացիները	20 տարի (2)

Դ. Փոքր Դատավորները.

<u>Անուն</u>	<u>Տեքստ</u>	<u>Թշնամի</u>	<u>Դատելու Ժամանակը</u>
1. Սամեգար	3:31	Փղշտացիները	?
2. Թովղա	10:1-2	?	23 տարի
3. Հայիր	10:3-5	?	22 տարի
4. Աբեսա	12:8-10	?	7 տարի
5. Ելոն	12:11-12	?	10 տարի
6. Աբդոն	12:13-15	?	8 տարի

Ե. Արիմելք, 9:1-57.

1. Գեղեոնի հարճից ծնված որդիներից մեկն էր,
2. միայն ազդեցություն ունեցավ Սյուքեմ քաղաքի վրա,
3. տարբերվում էր մյուս Դատավորներից

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս գիրքը պարզ ցույց է տալիս մեղքի մեջ անկման շարունակվող հետևանքները.

1. Յուրաքանչյուր հաջորդ սերունդ խախտում էր Ուխտը և հետևում Քանանացիների պտղաբերության աստվածներին:
2. Նույնիսկ Խոստացյալ Երկրում Աստծո կողմից նշանակված ցեղային կյանքում, Դանի ցեղը որոշեց Աստծուն վստահելու փոխարեն գաղթել դեպի ամենահյուսիսային տարածքը, որպեսզի հաղթի փոշտացիներին :

Բ. Աստված օգտագործեց հեթանոս ազգերին, որպեսզի դատի Իր ժողովրդին (հետագայում Սիրիա, Ասորեստան և Բաբելոն): Սա արտացոլում է 2 Օրինաց 27-29 գլուխների անեծքների բաժինները:

Գ. Այս գիրքը ցույց է տալիս արդար Թագավոր ունենալու անհրաժեշտությունը, որը կարող էր առաջնորդել միացյալ ցեղերին:

Դ. Այս գիրքը շարունակում է հրեա ժողովրդի պատմությունը, որը սկիզբ էր առել Ծննդոց գրքում:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ.

1. ձեռքերի ու ոտքերի բութ մատները կտրած, 1:7 (NASB & NIV)
2. եղջյուրը փչեց, 3:27 (NIV, «փողը փչեց»)
3. եզների մտրակ, 3:31 (NASB & NIV)
4. մարգարեուհի, 4:4 (NASB & NIV)
5. ճաքաղ, 8:2 (NASB & NIV)
6. «Մեռնենիմի կաղնին» (*terebinth*), 9:37 (NIV, «Գուշակի ծառը»)
7. «Շիրքոլեթ», 12:6 (NASB & NIV)
8. «ամեն մարդ անում էր այն, ինչ իր աչքին ճիշտ էր թվում» 17:6; 18:1; 19:1; 21:25 (NIV, «ամեն մարդ անում էր այնպես, ինչպես հարմար էր գտնում»)
9. «ընտանեկան կուռքեր», 18:17 (NIV, «ընտանեկան աստվածներ»)
10. «անարժեք տղերք» (*belial*), 19:22 (NIV, «անօրեն մարդիկ»)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.

- | | |
|--|------------------|
| 1. Սիսարա, 4:2 | 5. Արիմելք, 9:1 |
| 2. Բարակ, 4:6 | 6. Քամովա, 11:24 |
| 3. Հայել, 4:17 | 7. Դագոն, 16:23 |
| 4. Հերոբահաղ, 6:32; 7:1 (NIV, «Հերու-Բահաղ») | |

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ (թվագրված)




- | | |
|-----------------------------------|----------------------|
| 1. Արմավենիների քաղաք, 1:16; 3:13 | 12. Սյուքեմ, 9:1 |
| 2. Արաղ, 1:16 | 13. Սասիա, 10:17 |
| 3. Բեթել, 1:22 | 14. Առնոյ գետ, 11:13 |
| 4. Սակեդդով, 1:27 | 15. Հաբոկ գետ, 11:13 |
| 5. Գագեր, 1:29 | 16. Թամնաթա, 14:1 |

- 6. Ակքով, 1:31
- 7. Հասոր, 4:2
- 8. Ռամա, 4:5
- 9. Թարոր լեռ, 4:6
- 10. Կիսոն գետ, 4:7
- 11. Հեզրայելի հովիտ, 6:33

- 17. Ասկադոն, 14:19
- 18. Գագա, 16:1
- 19. Սելով, 18:31
- 20. Հերուս, 19:10
- 21. Գաբաա, 19:12


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1. Ինչո՞ւ են Հեսու 1-12 գլուխների Նվանման պատմությունները այդքան տարբեր Դատավորաց 1-2 արձանագրություններից:
- 2. Ինչո՞ւ պետք է Իսրայելի Ցեղերը սպանեին բոլոր քանանացիներին և նրանց հետ ուխտի մեջ չմտնեին:
- 3. Ինչո՞ւ են որոշ Դատավորներ կոչվում Մեծ և ոմանք՝ Փոքր:
- 4. Ի՞նչ են ասում 4-5 գլուխները Աստծո մասին, երբ նա օգտագործում է կին առաջնորդների:
- 5. Ինչո՞ւ գլուխ 7-ում Աստված ուզեց, որ Գեդեոնը իր գորքը նվազեցնի:
- 6. Արդյո՞ք Հեփթայեն իր աղջկան Աստծուն զոհ մատուցեց (11:30-40):
- 7. Ինչպե՞ս կարող էր Աստված Սամսոնի պես ցանկասեր մարդուն օգտագործել:
- 8. Ինչո՞ւ էր Դանի ցեղի համար այդքան մեղսալի այդ տեղահանությունը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՀՌՈՒԹ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Գիրքը վերնագրված է իր գլխավոր հերոսներից մեկի՝ մովաբացի Հռութի անունով, որը Դավթի և Հիսուսի նախամայրն էր. Մատթ. 1:5:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «Սուրբ Գրեր» կոչվող Եբրայական Կանոնի երրորդ բաժնի մի մասն է:

Բ. Այն նաև Մեգիլոթ կամ «Հինգ Գալարներ» կոչվող հինգ փոքրիկ գրքերից կազմված հատուկ հավաքածուի մի մասն է կազմում: Այս հինգ գրքերից յուրաքանչյուրը՝ Հռութը, Եսթերը, Ժողովողը, Երգ Երգոցը և Ողբ Երեմիան ընթերցվում են տարբեր տոների ժամանակ: Հռութը ընթերցվում է Պենտեկոստեին կամ Շաբաթների Տոնին:

Գ. LXX Հռութ գիրքը դասում է Դատավորացից հետո: Ջոզեֆուսը *Contra Apion*, 1:8-ում ասում է, որ ՀԿ-ում կա միայն 22 գիրք: Սա հաստատում է, որ Դատավորացը և Հռութը համարվում էին որպես մեկ գիրք: Հետևաբար, «Սուրբ Գրեր» բաժնում այս գրքի ներառվելը հնարավոր է տեղի է ունեցել ավելի ուշ (Ջերոմ):

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքը հստակ պատմական իրադարձություն է, որը պատմվում է երկխոսության միջոցով: Գիրքն ունի 85 համար, որոնցից 50-ը երկխոսություններ են: Այս գրքի հեղինակը եղել է հրաշալի պատմություններ պատմող:

Բ. Որոշ գիտնականներ ենթադրում են, որ գիրքը ներկայացնում է՝ դրամա, և ոչ թե պատմություն, հետևյալ պատճառով.

1. հերոսների անունների սիմվոլիկ նշանակությունները.
 - ա. Մաարոն = հիվանդություն
 - բ. Բեյլոն = վատնում
 - գ. Օրփա /Որփա/ = համառ
 - դ. Նոյեմի = քաղցրություն
2. բոլոր հերոսներին շատ ազնվագարմ ներկայացնելու ոչ հատկանշական մեթոդը
3. հերոսների մեջ խիստ արտահայտված կրոնական հավատքը, այն էլ Դատավորների ժամանակաշրջանում, 1:1

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ինչպես ՀԿ-յան շատ այլ գրքեր, սա նույնպես անանուն է:

Բ. Բաբա Բաթրա 14բ ասում է, որ Սամուել մարգարեն է գրել իր անունով նշված գրքերը /անգլ.՝ 1 Սամուել, 2 Սամուել/, Դատավորացը և Հռութը: Քանի որ Հռութ 4:17,22 ակնարկում է, որ Դավիթը հանրաճանաչ էր, սա կասկածելի է թվում, սակայն ոչ անհնար:

Գ. Հռութ 4:7 ցույց է տալիս մի հետագա հեղինակի կամ խմբագրի իր հետևյալ արտահայտությամբ՝ «մինչև այժմ դեռ այսպիսի բան չէր եղել»:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Պատմության դեպքերը տեղի են ունենում Դատավորների Ժամանակաշրջանում, 1:1 (Ք.Ա. 1350 կամ 1200 թթ-ից մինչև Ք.Ա. 1020թ.): Հավանաբար այս պատճառով է LXX-ը Հռուսի գիրքը դասում Դատավորացից հետո:

Բ. Ըստ հավանականության դեպքերը տեղի են ունեցել Իսրայելի և Մովաբի միջև խաղաղության տարիներին.

1. համաձայն Դատավորաց 3:12-30-ի սա զարմանալի է
2. այնուհանդերձ, ժամանակ առ ժամանակ պետք է որ խաղաղություն տիրեր, 1 Թագ.22:3-4 (այսինքն՝ Սավուդ):

Գ. Ե՛րբ է գրվել գիրքը.

1. Գիրքն ըստ երևույթին գրվել է Դավթի իշխանության օրոք, 4:17,22: Դեպքերի պատմականությունը հաստատված է համաձայն այն փաստի, որ Դավթի տոհմաձառի մեջ Մովաբացի կինը հանդիսանում էր նրա համար (տես՝ 2 Օրինաց 23:3):
2. Հռուս գրքի ոճը և բառապաշարը նման է Թագավորացներին, սակայն ոչ Մնացորդացներին:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ – այս գրքում առկա միակ հնագիտական ուսումնասիրությունների միջոցով հայտնավերված վկայությունը կոշիկի փոխանցելն է որպես ժառանգության իրավունքները փոխանցելու օրինական նշան՝ ժեստ: Նմանատիպ սովորույթ հայտնաբերվել է Nuzi արձանագրություններում: Մյուսնք արքայերեն սեպագիր արձանագրություններ են Ք.Ա. երկրորդ հազարամյակից, որն անվանում ենք Նահապետների Շրջան:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Նոյեմիի ընտանիքը փախնում է Իսրայելի վրա ուղարկված Աստծո դատաստանից և տեղափոխվում Մովաբ, որտեղ ընտանիքի բոլոր տղամարդիկ մահանում են, 1:1-5:

Բ. Նոյեմին վերադառնում է Բեթլեհեմ, իր մովաբացի հարսի հետ միասին, 1:6-22:

Գ. Գարու հունձքի ժամանակ Հռուսը հանդիպում է Բոոսին: Նա բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում նրան, 2:1-23

Դ. Նոյեմին և Հռուսը ծրագրում են Բոոսին գայթակղել և դա նրանց հաջողվում է, 3:1-18

Ե. Բոոսը նախաձեռնում է դառնալ Նոյեմիի ազգականի փոխանորդը, Հռուս 4:1-22

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հեթանոս հավատացյալի աստվածահանո բնավորությունը, 1:16-17;

Բ. Թե՛ հրեա և թե՛ հեթանոս կանանց աստվածահանո բնավորությունը:

Գ. Դավիթ Թագավորի և Մեսիա Թագավորի տոհմաձառերը պարունակում են օտար կանայք, Մատթ. 1:5; Դուկ. 3:32 և դա Աստծո ծրագիրն էր:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. Եփրայթացի, 1:2; 4:11 (NASB & NIV)
2. Մարա, 1:20 (NASB & NIV)
3. Ամենակարողը (*El Shaddai*), 1:20 (NASB & NIV)
4. «ու՛մ թևերի տակ դու եկար ապաստանելու», 2:12 (NASB & NIV)
5. արդու, 2:17 (NASB & NIV)
6. ազգական (*go'el*), 2:20; 3:9; 4:14, (NIV, «մոտ բարեկամ»)
7. (ժառանգության ամուսնություն), 2 Օրինաց 25:5-10
8. «ծածկոցը ոտների կողմից բացել», 3:4,7-8,14 (NASB & NIV)
9. «մարդը հանեց իր կոշիկը և տվեց մյուսին», 4:7 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.




1. Ելիմելեք, 1:2
2. Հեսսե, 4:22

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵՉԻ ՎՐԱ (թվագրված)

1. Մովսար, 1:1
2. Բեթլեհեմ, 1:2


XI. ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երրայական Կանոնում ո՞րն է այս գրքի նպատակը:
2. Ինչո՞ւ այս ընտանիքը փախավ Իսրայելից:
3. Ի՞նչ կապ ունի *go'el* տերմինը ժառանգության ամուսնության սովորույթների հետ:
4. Ինչո՞ւ էր այս գիրքը Դավթի համար նվաստացուցիչ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

1, 2 ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է իր առաջին կարևոր հերոսի անունով՝ Սամվելի /անգլ.՝ 1 & 2 Samuel/: Նրա անունը նշանակում է.

1. «Նրա անունը El է», վերադառնալով Սեմին,
2. «El-ից խնդրած», (տես՝ 1 Թագ. 1:20):

Բ. Նա հանդիսանում էր որպես.

1. դատավոր՝ 1 Թագ. 7:6, 15-17
2. մարգարե՝ 1 Թագ. 3:20 (մարգարեները սկզբում կոչվում էին «տեսանողներ», 1 Թագ. 9:9; 1 Մնաց. 29:29)
3. քահանա՝ 1 Թագ. 10:8; 16:5

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եբրայական կանոնի Մարգարեներ կոչվող երկրորդ բաժնի մի մասն է: Այս բաժինը իր հերթին բաժանված է երկու մասի.

1. Հին կամ վաղ մարգարեներ, որի մեջ ներառված են Հեսուից մինչև Թագավորացներ գրքերը (բացի Հռութից)
2. ուշ մարգարեներ, որի մեջ ներառված են Եսայի գրքից մինչև Մաղաքիա (բացի Դանիել և Ողբ Երեմիա գրքերից)

Բ. Եբրայական Կանոնում սկզբնապես 1 և 2 Թագավորաց գրքերը եղել են որպես մեկ ամբողջական գիրք.

1. Բաբա Բաթրա 14բ /Baba Bathra 14b/ (MT տարբերակի փակման գրառումը հայտնվում է միայն 2 Թագավորացի վերջում)
2. Եվսեբիոսի *Եկեղեցական Պատմություն*, VII:25:2 /Eusebius *Ecclesiastical History*. VII:25:2/

Գ. Սեպտուագինտան (LXX) գիրքը բաժանել է երկու մասի՝ հավանաբար իր երկար լինելու պատճառով: Դրանք նաև անվանվել են հետևյալ կերպ.

1. 1 Սամուել – 1 Գիրք Թագավորությունների (Վուլգաթայում՝ 1 Թագավորաց)
2. 2 Սամուել – 2 Գիրք Թագավորությունների (Վուլգաթայում՝ 2 Թագավորաց)
3. 1 Թագավորաց – 3 Գիրք Թագավորությունների (Վուլգաթայում՝ 3 Թագավորաց)
4. 2 Թագավորաց – 4 Գիրք Թագավորությունների (Վուլգաթայում՝ 4 Թագավորաց)

III. ԺԱՆՐԸ

Ա. Հիմնականում կենսագրական, պատմական արձանագրություն է:

Բ. Սա նշանակում է, որ այն արձանագրում է պատմական սովորույթներ և դեպքեր, որոնք հարկադրապես խորհուրդ չեն տրվում բոլոր հավատացյալներին:

Գ. Սա ժամանակակից արևմտյան պատմություն չէ, այլ հնագույն մերձ-արևելյան պատմություն: Կենտրոնանում է հատրնտի դեպքերի վրա, որպեսզի փոխանցի աստվածաբանական ճշմարտություններ: Ուստի, նման է ՆԿ Ավետարաններին և Գործք Առաքելոցին: Այն պետք է մեկնաբանվի համաձայն. (1) ընտրության; (2) հարմարեցման; (3) դասավորության և (4) ներշնչանքի:

Սակայն պետք է նաև ասել, որ երբայեցիներն ու քետացիները ամենանշգրիտ պատմաբաններն էին: Մյուս հնագույն ժողովուրդները հակված էին հաղթանակները չափազանցեցնելու և պարտությունները չարձանագրելու:

Գ. Մերձավոր Արևելքի Գրականության հարստությունը այժմ հասանելի է գիտնականներին, քանի որ ժամանակակից հնագիտությունը ապահովել է հնարավոր ուսումնասիրություն 1 և 2 Թագավորացների ժանրի հարցում, հատկապես 1 Թագ.15- 2 և Թագ.8: Մասնավորապես Ք.Ա. 1200-ականներին Քետական մի փաստաթուղթ, որը կոչվում է “Apology of Hallusitis”, ունի շատ նմանություններ 1 և 2 Թագավորացների հետ: Այն հիմնականում մի նոր դինաստիայի պաշտպանություն է, որպեսզի նոր թագավորը չմեղադրվի մեկ ուրիշի օրինական իշխանությունը հափշտակելով, (*Zondervan Pictorial Encyclopedia*, vol. 5 p. 259-260):

1. շեշտադրում է այն դեպքերը, որոնց արդյունքում նոր թագավոր է նշանակվել
2. հաճախ պարունակում է դեպքերի ամփոփումներ, քան խիստ ժամանակագրություններ
3. հստակ ցույց է տալիս նախկին թագավորների՝ իշխանների թերությունները
4. ցույց է տալիս նոր թագավորի ռազմական հաղթանակները
5. հայտնում է նոր թագավորի աճող հռչակը
6. փաստագրում է նոր թագավորի կարևոր քաղաքական ամուսնությունները
7. շեշտադրում է նոր թագավորի կրոնական ջանքն ու ազգային գիտակցությունը
8. նոր թագավորի իշխանության ամփոփումը՝ աստվածային օրհնություններով և կազմակերպչական հաջողություններով հանդերձ

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հրեական ավանդույթը միշտ էլ պնդել է, որ հեղինակը Սամուել մարգարեն է.

1. Բաբա Բաթրա 14բ-ն ասում է, որ Սամուելը գրել է այն գրքերը, որոնք իր անունն են կրում, ինչպես նաև Դատավորաց և Հռութ գրքերը:
2. Գիրքն ինքնին ասում է, որ Սամուելն է գրել (տես՝ 1 Թագ.10:25)
3. Հետագայում հրեա գիտնականները նույնպես հասկացան, որ ինչպես 2 Օրինաց և Հետու գրքերը, այս գիրքը նույնպես արձանագրում է իր գլխավոր հերոսի մահը՝ 1 Թագ.25:1; 28:3, և նաև արձանագրում է իր մահից շատ ավելի ուշ տեղի ունեցած դեպքեր: Հետևաբար նրանք առաջարկեցին, որ.
 - ա. ըստ երևույթին Սարայիա դպիրն է ավարտել գիրքը, 2 Թագ.8:17,
 - բ. ըստ երևույթին Աբիաթար քահանան է ավարտին հասցրել գիրքը,
 - գ. գուցե Նաթան մարգարեի (NIV) որդի Չաբիուդն է հավաքագրել գիրքը (տես՝ 3 Թագ.4:5):

Բ. Ժամանակակից գիտությունը.

1. Ընդունված է, որ գրքերի բովանդակությունները գրված են դեպքերի ականատեսների կողմից (Bright):
2. Նաև ընդունված են, թե որ աղբյուրներն են գործածվել.
 - ա. «Հաշարի Գիրքը», 2 Թագ. 1:18
 - բ. Սամուելի հիշատակի գիրքը, 1 Թագ.10:25; 1 Մնաց.29:29
 - գ. Նաթան և Գադ մարգարեների հիշատակի գրքերը, 1 Մնաց.29:29
 - դ. Ժամանակի այլ հիշատակի գրքեր, 1 Մնաց.27:24
 - ե. Ժամանակակից շատ գիտնականներ սիրում են ենթադրել, որ Սամուելը, Նաթանը և Գադը (1 Մնաց.29:29) երեք պատմությունների հեղինակներն էին, որոնք իրար են միացվել Չաբիուդի՝ Նաթան մարգարեի որդու կողմից (3 Թագ.4:5), որը նույնպես իրավունք ուներ օրենքի փաստաթղթերից օգտվելու:
3. Նաև ապացույց կա հետագա խմբագրության, երբ Սամուել մարգարեի օրերի մասին խոսելիս կիրառվում է հետևյալ արտահայտությունը «մինչև այսօր», (տես՝ 1 Թագ.5:5; 6:18; 27:6; 30:25; 2 Թագ.4:3; 6:8; 18:18):

4. Ապացույց կա, որ այս խմբագիրը կամ խմբագիրները ապրել և աշխատել են Միացյալ Միապետության բաժանումից հետո Ք.Ա. 922թ. (Bright) կամ Ք.Ա. 930թ. (Harrison & NIV) կամ Ք.Ա. 933թ. (Young)՝ հյուսիսային տաս ցեղերի, որ կոչվեց Իսրայել, Եփրայիմ կամ Սամարիա և հարավային երեք ցեղերի միջև, որ կոչվեց Հուդա (տես՝ 1 Թագ.11:8; 17:52; 18:16; 27:6; 2 Թագ.5:5; 24:1):
5. Սամուելի գիրքը /1 և 2 Թագավորացները/ լավ օրինակ է ժամանակակից քննադատների համար, որոնք փնտրում են հավաքական գրականության նշաններ.
 - ա. Հեղիի ընտանիքի վախճանը որպես քահանաներ.
 - 1) 1 Թագավորաց 2:31բ
 - 2) 1 Թագավորաց 3:1բ
 - բ. Սավուղի օծումը.
 - 1) գաղտնի, 1 Թագավորաց 9:26-10:1
 - 2) հանրորեն (երկու անգամ), 1 Թագավորաց 13:14; 15:23
 - գ. Դավթի ծանոթությունը Սավուղի հետ.
 - 1) 1 Թագավորաց 16:21
 - 2) 1 Թագավորաց 17:58
 - դ. Դավիթը փախնում է Սավուղի պալատից.
 - 1) 1 Թագավորաց 24:3
 - 2) 1 Թագավորաց 26:5
 - ե. Դավթի և Հովնաթանի ուխտը.
 - 1) 1 Թագավորաց 18:3
 - 2) 1 Թագավորաց 20:16,42
 - 3) 1 Թագավորաց 23:18
 - զ. Դավիթը դիմեց Գեթին.
 - 1) 1 Թագավորաց 21:10
 - 2) 1 Թագավորաց 27:1
 - է. Գողիաթի սպանությունը.
 - 1) Դավիթ -1 Թագավորաց 17:51
 - 2) Ելեանա - 2 Թագավորաց 21:19
 - 3) 1 Մնաց.20:5 կարծես ցույց է տալիս, որ Գողիաթի և իր եղբոր հետ (Ղեեմի) միաժամանակ են գործ ունենում
 - ը. Սավուղին խնայելը.
 - 1) 1 Թագավորաց 24:3բ
 - 2) 1 Թագավորաց 26:5բ
 - թ. Ենթադրյալ համագործերի համար Ռ. Կ. Հարրիսոնն ասում է, «Կրկին պետք է նշեմ, որ աստվածաշնչյան պատմություններում ենթադրյալ անհամատեղելիությունները երբայերեն տեքստի անփույթ ընթերցանության կամ էլ երբեմն դիտավորյալ սխալ ներկայացման հատևանք են, որոնք իրականում գոյություն ունեն քննադատական երևակայության մեջ», *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 733 /R. K. Harrison, *Introduction* /:
6. Մենք պետք է ընդունենք, որ այս ՀԿ-յան գրքերի հեղինակներն անհայտ են (E. J. Young), ինչպես նաև դրանց հավաքագրման ընթացքը: Ամեն դեպքում, մենք պնդում ենք, որ.
 - ա. ընթացքը առաջնորդվել է Աստծո կողմից,
 - բ. դեպքերը իրոք պատմական են, և ոչ թե գեղարվեստական,
 - գ. դեպքերն աստվածաբանական բնույթի են

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Երբ են տեղի ունեցել դեպքերը.

1. 1 Թագ. գիրքը ընդգրկում է Սամուել մարգարեի ծնունդից՝ Ք.Ա.1105թ. մինչև Սավուղի մահը՝ Ք.Ա.1011/10թ. (Harrison & NIV; 1013 Young; 1000 Bright) ընկած ժամանակը:

2. 2 Թագ. գիրքը ընդգրկում է Սավուդի մահից՝ մոտ Ք.Ա. 1011թ. մինչև Դավթի թագավորության ավարտն (971/70 Harrison; 973 Young; 961 Bright) ընկած ժամանակահատվածը: Սողոմոնը սկսեց թագավորել Ք.Ա. 969թ.-ին:

Բ. Երբ է գրվել գիրքը.

1. 1 Թագավորաց 11:8; 27:6 ցույց է տալիս, որ գրքի մի որոշ մաս գրվել է իր ներկայիս տեսքով Միացյալ Միապետության բաժանումից հետո, Ք.Ա. 922թ. կամ Ք.Ա. 930թ:
2. «Մինչև այսօր» կրկնվող արտահայտությունը ցույց է տալիս, որ.
 - ա. գրքի որոշ մասեր գրվել են դեպքերից երկար ժամանակ անց. 1 Թագ.5:5; 6:18; 27:6; 30:25;
 - 2 Թագ.4:3; 6:8; 18:18:
 - բ. օգտագործված աղբյուրները արդեն իսկ ունեին այս արտահայտությունը:
3. Այս ժամանակահատվածի համար տարեթիվը որոշելու խնդիրներից մեկը 1 Թագ.13:1 հատվածն է, որը նշում է Սավուդի տիրակալության ժամանակը, սակայն ժամանակի ընթացքում փոխանցվելիս վնասվել է: Ինչ-որ մի թիվ ակնհայտ ձևով պակասում է:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. 1 Թագավորաց գիրքը շարունակում է Դատավորների ժամանակաշրջանում տիրող անարիստիկանականության և բարոյական այլասերվածության պատմությունը.

1. Դատավորաց 1-17 գլուխներին հատուկ են մեղքը, զավթումը, ներման աղոթքը և Աստուծոց ուղարկված ազատագրողները
2. Դատավորաց 18-21-ում թվարկվում են երեք բարոյական այլասերվածության օրինակներ:

Բ. Այդ ժամանակներում Միջագետքի և Եգիպտոսի մեծ տերությունները զավթողական՝ ընդլայնողական չէին.

1. Եգիպտոս.
 - ա. XX Դինաստիայի վերջին բնիկ եգիպտացի արքան (Ք.Ա.1180-1065, Bright) Ռամզես XI:
 - բ. XXI Դինաստիան (ոչ եգիպտական), որ կոչվում էր «Տանիիտ», մոտավորապես Ք.Ա. 1065-935թթ-ին էր (Bright):
2. Թիգլաթպալասար I-ից հետո Ասորեստանը անկում էր ապրում (Ք.Ա. 1118-1078, Bright):

Գ. Փղշտացիները (Էգեյան Ծովի ժողովուրդները) Ք.Ա. 1300թ-ին մեծաքանակ զորքով փորձեցին ներխուժել Եգիպտոս, սակայն պարտության մատնվեցին: Ք.Ա. 1250թ. նրանք բնակություն հաստատեցին Պաղեստինի հարավային եզրում: Նրանք կատարելագործել էին քեստացիներից վերցված երկաթե դարի տեխնոլոգիան և կարող էին հաստատվել հինգ մեծ քաղաքների շրջանում՝ Ասկալոն, Ազովտոս, Ակկարոն, Գեթ և Գազա: Նրանք ղեկավարվում էին հունական քաղաք-նահանգների պես, որոնցից յուրաքանչյուրն իր թագավորն ուներ: Իսրայելի թագավորության վաղ շրջանում նրանք դարձան իսրայելացիների գլխավոր թշնամիները:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Ըստ գլխավոր հերոսների համառոտ նկարագրությունը.

1. Հեղի և Սամուել, 1 Թագ.1-7
2. Սամուել և Սավուդ, 1 Թագ.8-15
3. Սավուդ և Դավիթ, 1 Թագ.16- 2 Թագ.1
4. Դավթի թագավորությունը, 2 Թագ.2-12
5. Դավիթը և Ժառանգորդները, 2 Թագ.13-20
6. Դավթի և նրա կառավարման շուրջ այլ մանրամասն տեղեկություններ, 2 Թագ.21-24

Բ. 1 և 2 Թագավորացները կարծես թե ուրվագծվում են հեղինակի կամ խմբագրի կողմից՝ պարունակելով ամփոփիչ խոսքեր.

1. 1 Թագավորաց 7:15-17
2. 1 Թագավորաց 14:49-51
3. 2 Թագավորաց 8:15-18
4. 2 Թագավորաց 20:23-26

Գ. Մանրամասն նկարագրություն.

1. տես՝ Ռ. Կ. Հարրիսոն, *Հին Կտակարանի Ներածություն*, /R. K. Harrison, *Introduction to the Old Testament*, p. 695-696/
2. տես՝ Ի. Ջ. Յանգ, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 180-187 /E.J. Young *An Introduction to the Old Testament*/
3. տես՝ NIV Սերտողության Աստվածաշունչը, էջ՝ 373 և 422 /NIV Study Bible/

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Սամուելը հարթակ է պատրաստում միապետության կազմավորման համար, ինչպես Մովսեսը հարթակ պատրաստեց ազգի ձևավորման համար.

1. 2 Օրինաց 17:14-20-ում Մովսեսը կանխատեսում է, որ Իսրայելը թագավոր է ունենալու, որտեղ նկարագրում է, թե արդար թագավորն ինչ պետք է անի և ինչ պետք է չանի:
2. 1 Թագավորաց գրքում լարվածություն է նկատվում թագավորի հանդեպ.

ա. բացասական կողմերը.

- 1) նրանք մերժեցին ՅԱՀՎԵին որպես Թագավոր, 1 Թագ. 8:7; 10:19
- 2) նրանք խնդրեցին թագավոր «ինչպես շրջապատող ազգերն» ունենին, 1 Թագ. 8:5; 12:19-20
- 3) դա հաճելի չէր Սամուելին. զգացողությունն այնպես էր, կարծես իրեն էին մերժել, 1 Թագ. 8:6

բ. դրական կողմերը.

- 1) *ՅԱՀՎԵն* իրականացրեց 2 Օրինացում տված Իր մարգարեությունը՝ նրանց թագավոր տալով. 1 Թագ. 8:7,9,22, «սիր ժողովրդի ձայնը»:
- 2) նոր թագավորին պատմիր աստվածահաճո կանոնները, 1 Թագ. 8:9 (2 Օր. 17:14-20)
- 3) թագավորը կազատի ժողովրդին, 1 Թագ. 9:16 (ինչպես դատավորները ժողովրդի արդոթին ի պատասխան, տես՝ 1 Թագ. 12:13):

Բ. Սամուելը արձանագրում է Քահանայապետից և Խորանից հոգևոր իշխանության փոխանցումը հայտնված մարգարեական պատգամ հաղորդողին՝ մարգարեին: Հնարավոր է սա տեղի ունեցավ ի պատասխան.

1. Հեղիի և նրա ընտանիքի հանդեպ Աստծո դատաստանի, 1 Թագ. 2:22-3:18
2. այն հավասարակշռության, որ անհրաժեշտ էր քահանաների ձևի և ծիսակարգերի ու մարգարեների համար կարևոր համարվող անձնական սրտանց հավատք ունենալու միջև:
3. թե՛ քահանաները և թե՛ մարգարեները ուխտի միջնորդներ էին ժողովրդի միջև
4. Սավուղը նայում էր Սամուելին, մինչ Դավիթը նայում էր Նաթանին և Գեթին, որպեսզի հստակ իմանային Աստծո կամքը:

Գ. 2 Թագավորացը արձանագրում է.

1. Դավթի հանդեպ Աստծո բարությունը
2. Դավթի ուժեղ և թույլ կողմերը
3. Աստծո դատաստանը Դավթի հանդեպ՝ իր մեղքի պատճառով, և դրա հետևանքները.
ա. ազգի հանդեպ
բ. Ուրիայի ընտանիքի հանդեպ

- գ. Բերսաբեի հանդեպ
- դ. Դավթի որդիների հանդեպ

Դ. 1 և 2 Թագավորացները շարունակում են Աստծո պատմությունը, որը սկսվել էր Ծննդոցում:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. 1 Թագավորաց.
 - ա. քաթանե եփուտ, 2:18,28 (NASB & NIV)
 - բ. «իմ եղջյուրը բարձրացավ», 2:1,10 (NASB & NIV)
 - գ. «Դանից մինչև Բերսաբե», 3:20 (NASB & NIV)
 - դ. «Չորքերի Տերը, որ նստած է Քերովբեներից վեր», 4:4 (NIV, «...Քերովբեների միջև»)
 - ե. «ամեն մարդ իր վրանը», 4:10 (NASB & NIV)
 - զ. ոսկե թուրքեր, 6:4 (NIV, «ոսկե ուռուցքներ»)
 - է. Աբենեզեր, 7:12 (NASB & NIV)
 - ը. «Իր սրտի համեմատ մարդ», 13:14 (NASB & NIV)
 - թ. «ամբողջ Իսրայելի երկրում մի դարբին չէր գտնվել», 13:19 (NASB & NIV)
 - ժ. «հնազանդությունը զոհերից թանկ է», 15:22 (NASB & NIV)
 - ի. «Տերը գղջաց...» 15:35 (NIV, «...վշտացավ»)
 - լ. «Տիրոջ կողմից մի չար ոգի նրան նեղում էր», 16:14 (NIV, «չարչարում էր»)
 - խ. «լորձունքը ծորում էր մորուքի վրա», 21:13 (NASB & NIV)
2. 2 Թագավորաց.
 - ա. Յաշարի գիրքը /«Ուղիղի» գիրքը/, 1:18 (NASB & NIV)
 - բ. Մեղոն, 5:9 (NIV, «հենարան տանիքներից»)
 - գ. ջլատել, 8:4 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.

1. 1 Թագավորաց
 - ա. Աննա, 1:1
 - բ. Ոփնի ու Փենեհես, 1:3
 - գ. Իքարոդ, 4:21
 - դ. Կիս, 9:1
 - ե. Հովնաթան, 14:1; 19:1
 - զ. Մեղքոդ, 14:49
 - է. Աբեններ, 14:50
 - ը. Գողիաթ, 17:4
 - թ. Դովեկ, 21:7
 - ժ. Աբիաթար, 22:20
 - ի. Ենդովրի վիուկը, 28:7 (NIV, «մեռելահարցուկ Ենդովրում»)
 - լ. Աբիգիա, 30:5
2. 2 Թագավորաց.
 - ա. Հերուսթե, 2:8
 - բ. Հովար, 2:13
 - գ. Ամնոն, 3:2
 - դ. Աբիստղոմ, 3:3
 - ե. Ադոնիա, 3:4
 - զ. Մեմփիբոսթե, 4:4
 - է. Ոգա, 6:3

- ը. Թամար, 13:5
- թ. Սադովկ, 15:24
- ժ. Սեմեի, 16:5

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ (թվագրված)

Ա. 1 Թագավորաց.

- 1. Կարիաթ-արիմ, 6:21
- 2. Ռամա, 7:17
- 3. Բերսաբեն, 8:2
- 4. Գադաադի Հաբիս, 11:1
- 5. Ողողոմի քարայր, 22:1
- 6. Նոր, 21:1
- 7. Են-գադի, 23:29
- 8. Սիկելակ, 30:1
- 9. Գեղրուե լեռ, 31:8

Բ. 2 Թագավորաց.

- 1. Ասկադոն, 1:20
- 2. Քերրոն, 2:3
- 3. Հեզրայել, 2:9
- 4. Գազեր, 5:25
- 5. Դամասկոս, 8:5
- 6. Ռարբա, 12:27
- 7. Թեկուե, 14:2
- 8. Հերուսացի Ոռնայի կայր, 24:16 (Երուսաղեմ)




XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. 1 Թագավորաց.

- 1. Ինչո՞ւ է Սամուելի ծնունդը արձանագրված, իսկ Սավուդինը և Դավթինը՝ ոչ:
- 2. Ինչո՞ւ Աստված մերժեց Հեղիին և նրա ընտանիքը:
- 3. Ինչո՞ւ Փենեհեսան ու Ոփնին Ուխտի Տապանակը պատերազմի դաշտ իջեցրին:
- 4. Ինչո՞ւ Սամուելը բարկացավ, երբ ժողովուրդը թագավոր խնդրեց:
- 5. Ինչո՞ւ Սավուդը մերժեց որպես թագավոր:
- 6. Բացատրե՛ք «Տիրոջից մի չար ոգի» արտահայտությունը:
- 7. Ինչո՞ւ էր Սավուդը փորձում սպանել Դավթին:
- 8. Ինչո՞ւ Սավուդը այցելեց Ենդովրի վիուկին:
- 9. Ինչպե՞ս մահացավ Սավուդը:


Բ. 2 Թագավորաց.

- 1. Ինչո՞ւ Դավիթը բարկացավ Հերուսթեի մահվամբ:
- 2. Ինչո՞ւ Դավիթը բարկացավ Աբենների մահվամբ:
- 3. Ինչո՞ւ Դավիթը օգնեց Մեմփիբոսթեին:
- 4. Ինչո՞ւ Աստված սպանեց Ոգային:
- 5. Ինչո՞ւ են գլուխ 7-ում Դավթին տրված Աստծո խոստումները այդքան կարևոր:
- 6. Ինչպե՞ս ազդեց Դավթի մեղքը Բերսաբեի հետ իր ընտանիքի վրա:
- 7. Բացատրե՛ք Սադովկի և Աբիաթարի միջև տարբերությունը:
- 8. Ինչո՞ւ Աստված բարկացավ Դավթի վրա, երբ նա մարդահամար կատարեց:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

3 ԵՎ 4 ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. 1, 2 Թագավորաց և 1, 2 Մնացորդաց գրքերի պես 3, 4 Թագավորաց գրքերը երբայերեն բնագրում եղել է մի ամբողջական գիրք: Այն կոչվել է “*Melakim*” կամ Թագավորներ: Այս անունը ծագել է ըստ այն փաստի, որ գիրքը պատմում է Իսրայելի և Հուդայի թագավորների պատմությունները:

Բ. 1,2 Թագավորաց և 1,2 Մնացորդաց գրքերի պես 3,4 Թագավորաց գրքերը առաջին անգամ բաժանվել են երկու գրքերի LXX-ի կողմից: Ըստ երևույթին սա արվել է այս գրքերի ծավալի պատճառով: Դրանք պարզապես չէին տեղավորվի մի մագաղաթի վրա՝ կաշվի ծանրության և ծավալի պատճառով: Մինչև մ.թ. 1448թ. դեռևս չկար առաջին երբայերեն գրքաժանը:

Գ. Այս երկու գրքերի վերնագիրը եղել է.

1. Երբայերեն՝ «Թագավորներ»
2. LXX՝ 3 և 4 Թագավորություններ
3. Վուլգաթայում՝ 3 և 4 Թագավորաց (1 և 2 Սամուել գրքերը եղել են 1 և 2 Թագավորացներ)

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գրքերը Երբայերեն կանոնի «Մարգարեներ» կոչվող երկրորդ բաժնի մի մասն են:

Բ. Այս բաժինը բաժանված է երկու մասի.

1. Վաղ մարգարեներ, որի մեջ մտնում են Հեսու-Թագավորաց գրքերը, բացի Հուդայից,
2. Ուշ մարգարեներ, որի մեջ մտնում են Եսայի-Մաղաքիա գրքերը, բացի Դանիել և Ողբ Երեմիա գրքերից:

Գ. Երբայերեն ՀԿ-ում գրքերի ցանկը հնարավոր է ազդեցության են ենթարկվել երբայական խորհրդապաշտության կողմից: Երբայերեն այբուբենն ունի 22 տառ: Եթե միավորենք մի քանի գիրք, ապա ՀԿ-ում կլինի 22 գիրք.

1. Դատավորացն ու Հռութը
2. 1 և 2 Թագավորացները
3. 3 և 4 Թագավորացները
4. 1 և 2 Մնացորդացները
5. Եզրաս, Նեեմիա
6. Երեմիա և Ողբ Երեմիա
7. տասներկու Փոքր Մարգարեները

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գրքերը հիմնականում հաճախակի մեջբերումներ գործածող պատմական դեպքեր են՝

1. դատական արձանագրություններից
2. մարգարեներից

Բ. Եթե համեմատենք 1 և 2 Թագավորաց, 3 և 4 Թագավորաց և Մնացորդաց գրքերը, ապա կհանդիպենք տարատեսակ պատմական իրադարձությունների.

1. 1 և 2 Թագավորաց գրքերը հիմնականում կենսագրական են: Դրանք կենտրոնանում են հետևյալ գլխավոր հերոսների վրա.
 - ա. Սամվել

- բ. Սավուղ
- գ. Դավիթ

2. 3 և 4 Թագավորացները հիմնականում ծաղկաքաղ է՝
 - ա. արքունի դատարանի արձանագրությունների.
 - 1) «Սողոմոնի ժամանակագրության /գործերի/ գիրքը», 3 Թագ.11:41
 - 2) «Հուդայի թագավորների գործերի գիրքը», 3 Թագ.14:29; 15:7,23
 - 3) «Իսրայելի թագավորների գործերի գիրքը», 3 Թագ.14:19; 15:31
 - բ. մարգարեական նյութեր.
 - 1) Եղիա
 - 2) Եղիսե
 - 3) Եսայի (գլ. 36-39)
 - 4) մարգարեական և պատմական արձանագրություններ հստակ կարելի է տեսնել Մնացորդաց գրքերում՝
 - (ա) 1 Մնացորդաց 29:29
 - (բ) 2 Մնացորդաց 9:29
 - (գ) 2 Մնացորդաց 12:15
 - (դ) 2 Մնացորդաց 13:22
 - (ե) 2 Մնացորդաց 26:22
3. Մնացորդաց գրքերը հիմնականում աստվածաբանորեն դրական նկարագրությունների հավաքածու է՝
 - ա. Միացյալ Միապետության թագավորների
 - բ. Հուդայի թագավորների

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Աստվածաշունչը լռում է 3 և 4 Թագավորաց գրքերի հեղինակների մասին, ինչպես և վաղ մարգարեների հիմնական գրքերի վերաբերյալ:
- Բ. Բաբա Բայթա 15ա ասում է, որ Երեմիան գրել է իր գիրքը, 3 և 4 Թագավորաց գրքերը և Ողբ Երեմիա գիրքը.
 1. Սա հավանական է 4 Թագավորաց գրքի վերջին մասի հիման վրա, որտեղ 24:18-25:30 շատ նման է երբայերենում Երեմիա 52-ին:
 2. Ակնհայտ է, որ հեղինակը եղել է Երուսաղեմի անկման ականատեսներից:
- Գ. Իրականում այս գրքերը հավաքագրողի աշխատանք է և ոչ թե հեղինակի:
- Դ. Նաև պետք է նշել, որ հավաքագրողը գործածել է մի քանի աղբյուրներ.
 1. Առաջին աղբյուրը Սուրբ Գրերն էին: Նա հանախ է մեջբերում կամ ակնարկում 2 Օրինաց գրքից և մի քանի մարգարեներից:
 2. Կան որոշ հատուկ նշված գրավոր աղբյուրներ.
 - ա. «Սողոմոնի գործերի գիրքը», 3 Թագ.11:41
 - բ. «Հուդայի թագավորների գործերի գիրքը», 3 Թագ.14:29; 15:7,23
 - գ. «Իսրայելի թագավորների գործերի գիրքը», 3 Թագ.14:19; 15:31
 - դ. 1 Մնացորդաց 29:29-ում նաև նշվում է Մամուել, Նաթան և Գեթ մարգարեների գրավոր արձանագրությունների մասին: Սա ցույց է տալիս, որ բանավոր ավանդույթները գրի էին առնվում:
- Ե. Գոյություն ունեն մի քանի խմբագրական հավելումներ 3 և 4 Թագավորաց գրքերում կամ հավաքագրողը մեջբերում է «մինչև այսօր» արտահայտությունը իր գործածած աղբյուրներից.

1. 3 Թագավորաց 8:8
2. 3 Թագավորաց 9:21
3. 3 Թագավորաց 12:19
4. 4 Թագավորաց 8:22

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Գրքի դեպքերն ընդգրկում են հետևյալ ժամանակները՝

1. սկսած Դավթի մահից և Սողոմոնի թագավորության մեկնարկից.
 ա. Բրայթ՝ Ք.Ա. 961թ.
 բ. Հարրիսոն՝ Ք.Ա. 971/970թթ.
 գ. Յանգ՝ Ք.Ա. 973թ.
 դ. NIV՝ Ք.Ա. 970թ.
2. մինչև Բաբելոնյան Եղմարովդաք թագավորի տիրակալությունը, որը հայտնի էր նաև Ամեդ-Սարդուկ անվամբ, Ք.Ա. 562-560 (Բրայթ)
3. բայց 4 Թագավորաց գիրքը չի նշում մարա-պարսկական Կյուրոս Մեծ թագավորին, որի գործը Ք.Ա. 539թ-ին բնաջնջեց Բաբելոն քաղաքը:

Բ. Գիրքը գրվել կամ հավաքագրվել է Բաբելոնյան Գերությունից որոշ ժամանակ անց կամ այդ ընթացքում:

Գ. Թագավորների իշխանության տարիների տևողությունն իրար գումարելիս այնքան մեծ թիվ է ստացվում, որ չի համընկնում գրքերում տրված ժամանակային սանդղակի հետ: Գոյություն ունեն մի քանի հավանական լուծումներ.

1. Տրված թվերը հաշվի չեն առնում՝ չեն արձանագրում համաթագավորության դեպքերը:
2. Օգտագործվել են երկու տարբեր օրացույցներ.
 ա. Սուրբ օրացույցը սկսվում էր աշնանը
 բ. Կրոնական օրացույցը սկսվում էր գարնանը
3. Երբ համեմատվում են Թագավորաց և Մնացորդաց գրքերի թվերը, պարզ է դառնում, որ թույլ են տրվել որոշակի դպրական վրիպումներ:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Հնագիտական ապացույցներ.

1. Մեսա Պողպատը, որը նաև հայտնի է որպես Մովաբական Քար, արձանագրում է Մեսայի՝ Մովաբի Թագավորի ապստամբությունը Իսրայելի դեմ, հենց Չամբրի Թագավորից հետո (Ք.Ա. 876-869թթ. - Բրայթ; Ք.Ա. 874/3թ.- Հարրիսոն /տես՝ 4 Թագ.3:4/):
2. Ասորի Սալմանասար III թագավորի Սև Կոթողը (Ք.Ա. 859-824թթ., Բրայթ և Հարրիսոն).
 ա. Ք.Ա. 853թ-ին Քարքարի Պատերազմը տեղի է ունեցել Օրոնտես գետի վրա: Սալմանասար III-ի Սև Կոթողից տեղեկության մեջ հիշատակվում է իսրայելացի Աքաբը և նրան վերագրում է հզոր ռազմական ուժ (Միքիայի հետ միասին, տես՝ 3 Թագ.22:1): Այս պատերազմը ՀԿ-ում արձանագրված չէ:
 բ. Այն ցույց է տալիս, որ Իսրայելի հաջորդ թագավորը՝ Հեուն (Ք.Ա. 842-815թթ., Բրայթ /տես՝ 4 Թագ.9-10/), հարկատու և հպատակ է դառնում Ասորեստանին: Սա նույնպես ՀԿ-ում արձանագրված չէ:
3. Մակկեդոնյան մի հասպիսից կնիք է գտնվել Հերոբոամ II-ի օրերից (Ք.Ա. 786-746թթ., Բրայթ; Ք.Ա. 782-753թթ., Հարրիսոն) Հերոբոամ անվամբ:
4. Խորշաբադի Տարեգրքերը նկարագրում են Սամարիայի թագավորությունն ու անկումը Սարգոն II-ի (Ք.Ա. 722-705) ձեռքով՝ Ք.Ա. 722թ-ին (տես՝ 4 Թագ.17):

5. Սենեքերիմի արձանագրությունը Ք.Ա. 701թ Երուսաղեմի պաշարման վերաբերյալ՝ Եզեկիայի թագավորության օրոք (Ք.Ա. 715-687թթ., Բրայթ /տես՝ 4 Թագ.18:13-19:37; Ես. 36-39/):
 6. Օգտագործելով հավաստի տարեթվեր (ասորական փաստաթղթերը և ՀԿ)՝ (1) Քարքարի Պատերազմի (Սալմանասար III-ը Իսրայելի և Սիրիայի դեմ) Ք.Ա. 853թ. և (2) արևի խավարման (Ք.Ա. 763թ. Իշդի-Սագալի խավարումների ասորական սանդղակը); (3) Սալմանասար III-ին Հեռի հարկատու լինելը (Ք.Ա. 84թ.): կարելի է 3 և 4 Թագավորաց գրքերի դեպքերի տարեթվերը հաստատել:
- Բ. Միջագետքի Տերությունների Համառոտ Պատմական Ուսումնասիրությունը (հիմնականում Ջոն Բրայթի *Իսրայելի Պատմություն*, էջ՝ 462, գրքի հիման վրա /John Bright *A History of Israel*/).
1. Ասորական Կայսրություն (Ծննդոց 10:11).
 - ա. Կրոնը և մշակույթը մեծապես ազդեցության էին ենթարկվել Շումերական/Բաբելոնյան Կայսրության կողմից:
 - բ. Տիրակալների փորձառական՝ նախնական ցանկը և մոտավոր տարեթվերը.
 - (1) 1354-1318 – Աշուր-Ուբալիթ I.
 - (ա) գրավել է քետացիների Քարքամիս քաղաքը
 - (բ) սկսեց հեռացնել քետական ներգործությունը և թույլ տվեց, որ զարգանա Ասորեստանը
 - (2) 1297-1266 Ադադ-Նիրարի I (հզոր արքա)
 - (3) 1265-1235 Սալմանասար I (հզոր արքա)
 - (4) 1234-1197 Թուխուլտի-Նինվազ I – Բաբելոնական Կայսրության առաջին արշավանքը դեպի հարավ
 - (5) 1118-1078 Թիգլաթպալասար I /Թագղաթ-Փադասար I/ – Ասորեստանը դառնում է Միջագետքի մեծագույն ուժերից
 - (6) 1012-972 Աշուր-Ռաբի II
 - (7) 972-967 Աշուր-Ռաշ-Իսու II
 - (8) 966-934 Թիգլաթպալասար II
 - (9) 934-912 Աշուր-Դան II
 - (10) 912-890 Ադադ-Նիրարի II
 - (11) 890-884 Թուխուլտի-Նինվազ II
 - (12) 883-859 Աշուր-Նասիր-Աբալ II
 - (13) 859-524 Սալմանասար III – Քարքարի պատերազմը, Ք.Ա. 853թ.
 - (14) 824-811 Շամաշի-Ադադ V
 - (15) 811-783 Ադադ-Նիրարի III
 - (16) 781-772 Սալմանասար IV
 - (17) 772-754 Աշուր-Դան III
 - (18) 754-745 Աշուր-Նիրարի V
 - (19) 745-727 Թիգլաթպալասար III.
 - (ա) անվանվել է իր Բաբելոնյան գահի անունով՝ Փուդ, 4 Թագ.15:19-ում
 - (բ) շատ հզոր արքա
 - (գ) Ք.Ա.735թ-ին «Սիրիա-Եփրատյան Միավորման» կազմավորումն էր, որը փորձում էր միավորել միջհորդանանյան ազգերի՝ Եփրատի գետաբերանից մինչև Եգիպտոս, հնարավոր բոլոր ռազմական ուժերը, Ասորեստանի աճող ռազմական ուժերը ճնշելու նպատակով: Հուդայի Աքագ թագավորը հրաժարվեց նրանց միանալ և Իսրայելն ու Սիրիան պաշարեցին նրան: Նա Եսայի մարգարեի խորհրդին հակառակ, օգնության խնդրանքով նամակ գրեց Թիգլաթպալասար III-ին (տես՝ 4 Թագ.16; Եսայի 7-12):
 - (դ) Ք.Ա.732թ-ին Թիգլաթպալասար III ներխուժում է և գրավում Սիրիան և Իսրայելը և գահին է նստեցնում ծառա թագավորի՝ Ովսեեին (732-722թթ.): Հազարավոր հրեաներ Հյուսիսային Թագավորությունից գերեվարվեցին Ասորեստան (տես՝ 4 Թագ.15):

- (20) 727-722 Սալմանասար V.
 (ա) Ովսենն դաշինք է կնքում Եգիպտոսի հետ և ենթարկվում հարձակման Ասորեստանի կողմից (տես՝ 4 Թագ.17):
 (բ) Ք.Ա. 724թ-ին պաշարվում է Սամարիան:
- (21) 722-705 Սարգոն II.
 (ա) Սալմանասար V-ի կողմից սկսած պաշարումից երեք տարի անց, նրան հաջորդող Սարգոն II-ը գրավում է Իսրայելի մայրաքաղաք Սամարիան: 27,000-ից ավելի մարդ տեղահանվում են Ասորեստան:
 (բ) Գրավվում է նաև Քետացիների կայսրությունը:
 (գ) 714-711թթ-ին միջհորդանանյան ազգերի ևս մի դաշինք Եգիպտոսի հետ միասին ապստամբում է Ասորեստանի դեմ: Այս դաշինքը հայտնի է որպես «Ազովտոսի Ապստամբություն»: Նույնիսկ Հուդայի Եզեկիա թագավորն էր սկզբում ներգրավված այս ապստամբության մեջ: Ասորեստանը ներխուժեց և ավերեց Պաղեստինյան մի քանի քաղաքներ:
- (22) 705-681 Սենեքերիմ.
 (ա) 705թ-ին Սարգոն II-ի մահից հետո միջհորդանանյան ազգերի և Եգիպտոսի մեկ այլ դաշնակցություն ապստամբեց: Եզեկիան ամբողջովին սատարում էր այս ապստամբությանը: Սենեքերիմը ներխուժեց 701թ-ին: Ապստամբությունը ձախողվեց, սակայն Երուսաղեմը Աստծո միջամտությամբ խնայվեց (տես՝ Ես.36-39 և 4 Թագ.18-19):
 (բ) Սենեքերիմը ապստամբությունը հանդարտեցրեց նաև Եղամում և Բաբելոնում:
- (23) 681-669 Էսարհադդոն.
 (ա) առաջին ասորի տիրակալը, որ հարձակվեց և գրավեց Եգիպտոսը
 (բ) Բաբելոնի հետ փոխըմբռնման լավ հարաբերության մեջ լինելով վերակառուցում է Բաբելոնի մայրաքաղաքը
- (24) 669-663 Աշուրբանիպալ.
 (ա) Եգրաս 4:10-ում նաև կոչվում է Ասենափար
 (բ) Նրա եղբայրը Շամաշ-Շումուքին դրվեց Բաբելոնի թագավոր: Արդյունքում Ասորեստանի և Բաբելոնի միջև խաղաղության մի քանի տարիներ եղան, սակայն առկա էր անկախության համար ստորգետնյա մի հոսանք, որը ժայթքեց 652-ին՝ իր եղբոր առաջնորդությամբ:
 (գ) Թեբեսի անկումը, Ք.Ա. 663
 (դ) պարտված Ելամը /Եղամը/, Ք.Ա. 653, 645
- (25) 633-629 Աշուր-Էթիլ- իանի
 (26) 629-612 Սինշարիշկուն
 (27) 612-609 Աշուր-Ուբալիթ II.
 Խառանում գերության մեջ թագադրված թագավոր, Ք.Ա. 614 թ-ին Աշերի և Ք.Ա. 612թ-ին՝ Նինվեի անկումից հետո:

2. Նեո-բեբելոնյան Կայսրություն.

ա. 703- ? Մերոդադ-Բալադան

- Ասորեստանի դեմ մի քանի ապստամբություններ վարեց

բ. 652 – Շամաշ-շում-Թոքին.

(1) Էսարհադդոնի որդին և Աշուրբանիպալի եղբայրը

(2) Ասորեստանի դեմ ապստամբություն սկսեց, սակայն պարտության մատնվեց

գ. 626-605 Նաբոպալասար.

(1) Նեո-Բաբելոնյան Կայսրության առաջին միապետն էր

(2) հարավից հարձակվեց Ասորեստանի վրա, մինչ Մարաստանի Քսերքսեսը հարձակվեց հյուսիս-արևելքից

- (3) հնագույն ասորական մայրաքաղաք Աշուրը անկում է ապրում Ք.Ա. 614թ-ին և հզորագույն նոր մայրաքաղաք Նինվեն՝ Ք.Ա. 612թ-ին:
- (4) Ասորական գործի մնացորդը նահանջում է Խառան: Նրանք նույնիսկ թագավոր են թագադրում:
- (5) 608թ-ին Նեքավոլ /Նեխո/ II Փարավոնը (տես՝ 4 Թագ.23:29) շարժվում է դեպի հյուսիս, որպեսզի օգնի ասորական գործի մնացորդին Բաբելոնի վեր բարձրացող հզորության դեմ մի մեծ պատնեշ կառուցելու համար: Հովսիան՝ Հուդայի աստվածավախ թագավորը (տես՝ 4 Թագ.23), թույլ չտվեց, որ եգիպտական գործն անցնի Պաղեստինի միջով: Մակեդոնում տեղի ունեցավ փոքրիկ ռազմական բախում: Հովսիան վիրավորվեց և մահացավ (4 Թագ.23:29-30): Նրա որդի Հովաքազին դարձրեցին թագավոր: Նեքավոլ II Փարավոնը շատ ուշ հասավ, որպեսզի կասեցնի Խառանում ասորական գործի բնաջնջումը: Նա կռվի մեջ մտավ թագադրված արքայազն Նաբուգոդոնոսը II-ի կողմից առաջնորդվող բաբելոնյան գործի դեմ և պարտություն կրեց Ք.Ա. 605թ-ին Եփրատ գետի վրա գտնվող Քարքամիսում:
Դեպի Եգիպտոս վերադարձի ճանապարհին նա կանգ առավ և թալանեց քաղաքը: Հովաքազի ընդամենը երեք ամիս թագավորելուց հետո, Նեքավոլ II Փարավոնը գահընկեց արեց նրան և երկրից հեռացրեց: Նրա փոխարեն թագադրեց Հովսիայի մյուս որդուն՝ Եդիակիմին /Հովակիմ/ (տես՝ 4 Թագ.23:31-35):
- (6) Նաբուգոդոնոսը II-ը հետապնդեց եգիպտական գործին դեպի Պաղեստինի հարավը, սակայն իր հոր մահվան գույժը լսելով վերադարձավ Բաբելոն:
Ավելի ուշ նույն տարվա մեջ նա վերդառնում է Պաղեստին, Հովակիմին թողնում է որպես Հուդայի թագավոր, սակայն գերեվարում է մի քանի հազար առաջավոր քաղաքացիների և նույնիսկ մի քանի հոգու արքունական ընտանիքից: Դանիելն ու նրա ընկերները այս գերիների մեջ էին:

դ. 605-562 Նաբուգոդոնոսը II.

- (1) 597-538թթ. Պաղեստինը լիովին գտնվում էր Բաբելոնի տիրապետության տակ:
- (2) Եգիպտոսի հետ Հովակիմ թագավորի դաշնակից լինելու պատճառով 597թ-ին Երուսաղեմ քաղաքից տեղի ունեցավ մեկ այլ տեղահանում (4 Թագ.24): Նա մահացավ Նաբուգոդոնոսը II-ի ժամանումից առաջ: Նրա որդին՝ Հովաքիմը միայն երեք ամիս էր թագավորել, երբ գերեվարվեց Բաբելոն: Տաս հազար քաղաքացիներ, ինչպես նաև Եզեկիելը, վերահաստատվեցին Բաբելոն քաղաքի մոտ գտնվող Քերար Ջրանցքի մոտ:
- (3) 586թ-ին Եգիպտոսի հետ մշտական շողոքորթություններից հետո, Երուսաղեմ Քաղաքը ամբողջովին ավերվեց (4 Թագավորաց 25) և տեղի ունեցավ զանգվածային տեղահանություն: Մեդեկիա թագավորը, որը հաջորդել էր Հովաքիմին, արտրվեց և Գողոդիան նշանակվեց որպես կառավարիչ:
- (4) Գողոդիան սպանվեց հրեա դասալիք ռազմական ուժերի կողմից: Այս ուժերը փախան Եգիպտոս և Երեմիային ստիպեցին իրենց միանալ: Նաբուգոդոնոսը արշավեց չորրորդ անգամ (605, 596, 586, 582) և հնարավորինս տեղահանեց մնացած բոլոր հրեաներին:

ե. 562-560 Եղմարովաքը, որը հայտնի էր նաև Ամեդ-Մարդուք անունով

- Նա քանտից ազատեց Հովաքիմին, սակայն նա ստիպված էր մնալ Բաբելոնում (տես՝ 4 Թագ.25:27-30; Երեմ.52:31):

զ. 560-556 Ներիզլիսար

- Նա Նաբուգոդոնոսի գեներալն էր, որը բնաջնջեց Երուսաղեմը:

է. 556- Լաբաշի-Մարդուկ

- Նա Ներիզլիսարի որդին էր, սակայն սպանվեց միայն իննը ամիս թագավորելուց հետո:

ը. 556-539 Նաբոնիդ.

- (1) Նաբոնիդը արքունի ընտանիքի հետ կապ չուներ, ուստի ամուսնացավ Նաբուգո-դոնոսը II-ի դստեր հետ:
- (2) Նա իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում Թեմա քաղաքում՝ «Սին» աստծուն նվիրված տաճարը կառուցելով: Նա այդ աստվածուհու մեծ քրմուհու որդին էր: Սրանով նա արժանացավ Մարդուքի քուրմերի թշնամությանը, որը հանդիսանում էր Բաբելոնի գլխավոր աստվածը:
- (3) Նա երկար ժամանակ փորձում էր հանդարտեցնել ապստամբություններն ու ամրապնդել թագավորությունը:
- (4) Նա տեղափոխվեց Թեմա և թողեց պետական գործերն իր որդուն՝ Բադդասարին, մայրաքաղաք Բաբելոնում (տես՝ Դանիել 5):

թ. ? – 539 Բադդասար (համաթագավորություն)

- Բաբելոն քաղաքը շատ շուտով ընկավ Գոբրիաս Գոթացու օրոք՝ Եփրատ գետի ջրերը ճեղքելով և մտնելով դիմադրություն չցուցաբերող քաղաքը: Քաղաքի քահանաները և ժողովուրդը Պարսիկներին համարում էին որպես ազատագրողներ և Մարդուքի վերականգնողները: Գոբրիասը Կյուրոս II-ի կողմից նշանակվեց Բաբելոնի Կառավարիչ: Հնարավոր է, որ Գոբրիասը եղել է Դանիել 5:31; 6:1-ի Մարաց Դարեհ արքան: «Դարեհ» նշանակում է «արքայական»:

3. Մարա-պարսկական Կայսրություն. Կյուրոս II-ի վերելքի ուսումնասիրությունը (Եսայի 44:28; 45:1-7).

ա. 625-585թթ. Կիակարեսը Մարաստանի թագավորն էր, որն օգնեց Բաբելոնին, որպեսզի հաղթի Ասորեստանին:

բ. 585-550թթ. Աստիագեսը Մարաստանի թագավորն էր: Կյուրոսը նրա թոռն էր Մանդանից:

գ. 550-530թթ. Անշամի Կյուրոս II-ը վասսալական արքա էր, որը ապստամբեց.

(1) Նաբոնիդի դեմ Բաբելոնական թագավորի, որը աջակցում էր Կյուրոսին:

(2) Կյուրոս II-ը գահընկեց արեց Աստիագեսին:

(3) Նաբոնիդը որպեսզի վերականգնի իշխանության բալանսը, դաշինք կնքեց՝

(ա) Եգիպտոսի հետ,

(բ) Լիդիայի Թագավոր Կրոտուսի հետ (Փոքր Ասիա)

(4) 547 – Կյուրոս II -ը արշավեց Մարդիսի դեմ (Լիդիայի մայրաքաղաքը):

(5) 539 – Նոյեմբերի 2, Գոթացի Գոբրիասը Կյուրոսի գործի հետ միասին գրավեց Բաբելոնը առանց որևէ դիմադրության: Գոբրիասը նշանակվեց Բաբելոնի կառավարիչ:

(6) 539 – Հոկտեմբերին, Կյուրոս II «Մեծն» անձամբ մուտք գործեց որպես ազատագրող: Ազգային փոքրամասնությունների հանդեպ նրա ցուցաբերած բարեհամբույր քաղաքականությունը հետադարձեցին տեղահանության տարիները որպես ազգային քաղաքականություն:

(7) 538 – Հրեաներին և ուրիշների թույլատրվեց վերադառնալ տուն և վերակառուցել իրենց ազգային տաճարները:

(8) 530 – Կյուրոսի որդին՝ Կամբիսես II, հաջորդեց նրան:

դ. 530-522 Կամբիսես II-ի թագավորությունը.

(1) Ք.Ա.525թ եգիպտական կայսրությունը միացրեց մարա-պարսկական կայսրությանը

(2) նա կարճատև թագավորեց,

(ա) ոմանք ասում են, որ նա ինքնասպան է եղել,

(բ) Հերոդոտոսն ասում էր, որ նա իր ձին թամբելիս իր իսկ սրով վնասել է իրեն և մահացել դրա հետևանքով առաջացած վարակից:

(3) կեղծ-սմերդիսների կարճատև թագավորությունը – 522

ե. 522-486 Դարեհ I (Հիսպասպես) նստեց թագավորության գահին

(1) Նա արքունի տոհմաձառից չէր, այլ ռազմական գեներալ

(2) Կազմավորեց Պարսից Կայսրությունը օգտագործելով Կյուրոսի Մատրապությունների համար մշակված ծրագիրը (տես՝ Եզրաս 1-6; Անգե; Չաքարիա)

- (3) Նա ստեղծեց մետաղադրամ, ինչպես Լիդիայում
- զ. 486-465 Քսերքսես I-ի թագավորությունը.
 - (1) հանդարտեցրեց եգիպտական ապստամբությունը
 - (2) մտադրություն ուներ արշավելու Հունաստան և իրականացնել պարսկական երազանքը, սակայն պարտություն կրեց Թերմոպոլիսի՝ Ք.Ա. 480թ-ին և Մալամիսի՝ Ք.Ա. 479թ-ին պատերազմներում:
 - (3) Եսթերի ամուսինը, որը Սուրբ Գրքում կոչվում է Ասվերոս, սպանվում է Ք.Ա. 465թ:
- է. 465-424 Արտաշես I (Լոնգիմանուս) թագավորեց (տես՝ Եզրաս 7-10; Նեեմիա, Մաղաքիա)
 - (1) Հույները շարունակում էին իրենց առաջխաղացումը, մինչև որ Պելոպոնյան Քաղաքացիական Պատերազմները սկսվեցին դիմադրություն ցուցաբերել
 - (2) Հունաստանը բաժանվում է (Աթենական-Պելոպոնյան)
 - (3) Հունաստանի քաղաքացիական պատերազմները տևեցին մոտ 20 տարի
 - (4) այս ժամանակահատվածում հրեա համայնքը ամրապնդվում է
 - (5) Քսերքսես II-ի և Սելիդիանոսի կարճատև թագավորությունը՝ Ք.Ա.423թ.
- ը. 423-404 Դարեհ II (Նոթոս) թագավորեց
- թ. 404-358 Արտաշես II թագավորեց
- ժ. 358-338 Արտաշես III թագավորեց
- ի. 336-331 Դարեհ III թագավորեց
- 4. Եգիպտոս.
 - ա. Հիքսոսներ (Հովիվ Թագավորներ – Սեմական իշխաններ) – 1720/10 – 1550
 - բ. 18-րդ Դինաստիա (1570-1310).
 - (1) 1570-1546 Ամոսիս
 - (ա) Թեբեսը դարձրեց մայրաքաղաք
 - (բ) զավթեց հարավային Քանանը
 - (2) 1546-1525 Ամենոֆիս I (Ամենհոթեփ I)
 - (3) 1525-1494 Թուրմոգ I
 - (4) 1494-1490 Թուրմոգ II – ամուսնացավ Թուրմոս I-ի դստեր՝ Հաթշեպսութի հետ
 - (5) 1490-1435 Թուրմոգ III (Հաթշեպսութի բարեկամը)
 - (6) 1435-1414 Ամենհոթեպ II
 - (7) 1414-1406 Թուրմոգ IV
 - (8) 1406-1370 Ամենհոթեպ III
 - (9) 1370-1353 Ամենհոթեպ IV (Ախենատեն)
 - (ա) երկրպագում էր Արևին, Աթենին
 - (բ) հիմնադրեց մեծագույն աստծո երկրպագության ձև (միաստվածություն)
 - (գ) Թեյ-Էլ-Ամառնայի նամակները այս ժամանակներից են
 - (10) ? – Սմենխար
 - (11) ? – Թուրանհամոն
 - (12) ? – Այ
 - (13) 1340 – 1310 Հարեմհադ
 - գ. 19-րդ Դինաստիա (1310-1200).
 - (1) ? – Ռամզես I (Ռամսես)
 - (2) 1309-1290 – Սեթի I (Սեթոս)
 - (3) 1290-1224 – Ռամզես II (Ռամսես II)
 - (ա) համաձայն հնագիտական ապացույցների Ելիցի ժամանակ տիրող փարավոնը
 - (բ) կառուցեց Ավարիս, Պիթոմ և Ռամզես քաղաքները Հաբարու ստրուկների միջոցով (հավանաբար Սեմական կամ եբրայական ծագման)
 - (4) 1224-1216 Մերնեփթա
 - (5) ? – Ամենմեսիգ
 - (6) ? – Սեթի II
 - (7) ? – Սիփթա

- (8) ? – Թիվորսերթ
- դ. 20-րդ դինաստիա (1180-1065).
- (1) 1175 -1144 Ռամզես III
 - (2) 1144-1065 Ռամզես IV-XI
- ե. 21-րդ դինաստիա (1065-935).
- (1) ? – Սմենդես
 - (2) ? – Խերիհոր
- զ. 22-րդ դինաստիա (935-725 - Լիբիական).
- (1) 935-914 Սիսակ (Սուսենք I կամ Սետենք I)
 - (ա) պաշտօանեց չերոբովամ I-ին մինչև Սողոմոնի մահը
 - (բ) գրավեց Պաղեստինը մոտ 925թ-ին (տես՝ 3 Թագ. 14-25; 2 Մնաց. 12)
 - (2) 914-874 Օսորթոն I
 - (3) ? – Օսորթոն II
 - (4) ? – Սիսակ II
- է. 23-րդ դինաստիա (759-715 - Լիբիական)
- ը. 24-րդ դինաստիա (725-709)
- թ. 25-րդ դինաստիա (716/15-663 – Եթովպական / Նուբիական).
- (1) 710/09-696/95 Շարաքո (Սարաքո)
 - (2) 696/95-685/84 Շեթփեքո (Սերիթքո)
 - (3) 690/689,685/84-664 Թիրհաքան (Թահարքա)
 - (4) ? – Թանթամուն
- ժ. 26-րդ դինաստիա (663-525 - Սաիթիկ).
- (1) 663-609 Սադմեթիկուս I (Psamtik)
 - (2) 609-593 Նեքո II (Նարոկր)
 - (3) 593-588 Սադմեթիկուս II
 - (4) 588-569 Արփիես (Հոփրա)
 - (5) 569-525 Ամասիս
 - (6) ? – Սադմեթիկուս III /Պսամետիխ/
- ի. 27-րդ դինաստիա (525-401 -Պարսկական).
- (1) 530-522 Կամբիսես II (Կյուրոս II-ի որդին)
 - (2) 522-486 Դարեհ I
 - (3) 486-465 Քսերքսես I
 - (4) 465-424 Արտաշես I
 - (5) 423-404 Դարեհ II

*տարբեր ժամանակագրության համար տես *Զոնդերվանի Պատկերագրող Աստվածաշնչի Հանրագիտարանը*, հատոր 2; էջ՝ 231 /*Zondervan's Pictorial Bible Encyclopedia*/

5. Հունաստան.

- ա. 359-336 Մակեդոնացի Փիլիպ II
- (1) կառուցեց Հունաստանը
 - (2) սպանվեց Բ.Ա. 336թ-ին
- բ. 336-323 Ալեքսանդր II «Մեծը» (Փիլիպի որդին)
- (1) Պարսկաստանի թագավոր Դարեհ II-ին գահընկեց արեց, Իսուսի ճակատամարտի ժամանակ
 - (2) 323թ.-ին, 32/33 տարեկան հասակում բարձր ջերմությունից մահացավ Բաբելոնում
 - (3) Ալեքսանդրի զենեակները նրա մահվան ժամանակ կայսրությունը բաժանեցին՝
 - (ա) Կասանդր – Մակեդոնիա և Հունաստան
 - (բ) Լուսմիկուս – Թրակիա
 - (գ) Սելևկիոս I – Սիրիա և Բաբելոն

- (դ) Պտղոմեոս – Եգիպտոս և Պաղեստին
 - (ե) Անտիոնես – Փոքր Ասիա (նա երկար չմնաց)
- զ. Սելևկյանները ընդդեմ Պտղոմեականների՝ Պաղեստինի կառավարման համար.
- (1) Միրիա (Սելևկյան իշխանները)
 - (ա) 312-280 Սելևկիոս I
 - (բ) 280-261 Անտիոքոս II Սոթեր
 - (գ) 261-146 Անտիոքոս II Թեոս
 - (դ) 246-226 Սելևկիոս II Կալինիկոս
 - (ե) 226-223 Սելևկիոս III Սերանոս
 - (զ) 223-187 Անտիոքոս III Մեծը
 - (է) 187-175 Սելևկիոս IV Ֆիլոպաթոր
 - (ը) 175-163 Անտիոքոս IV Էպիֆանես
 - (թ) 163-162 Անտիոքոս V
 - (ժ) 162-150 Դեմետրիոս I
 - (2) Եգիպտական (Պտղոմեական իշխանները).
 - (ա) 327-285 Պտղոմեոս I Սոթեր
 - (բ) 285-246 Պտղոմեոս II Ֆիլադելֆիոս
 - (գ) 246-221 Պտղոմեոս III Էվագատես
 - (դ) 221-203 Պտղոմեոս IV Ֆիլոպաթոր
 - (ե) 203-181 Պտղոմեոս V Էպիֆանես
 - (զ) 181-146 Պտղոմեոս VI Ֆիլոմեթոր
 - (3) Համառոտ ամփոփում.
 - (ա) 301 – Պաղեստինը 181 տարի շարունակ Պտղոմեոսի տիրակալության տակ
 - (բ) 175-163 Անտիոքոս IV Էպիֆանեսը՝ Սելևկյան 8-րդ իշխանը, ուզում էր հրեաներին հարկադրաբար հելլենիզմի դարձնել և անհրաժեշտության համար.
 - i. կառուցեց գիմնազիաներ,
 - ii. կառուցեց Տաճարի մեջ Չևսի հեթանոսական զոհասեղաններ:
 - (գ) 168- Դեկտեմբերի 13 – Անտիոքոս IV Էպիֆանեսը Երուսաղեմում զոհասեղանի վրա խոզ մորթեց: Ոմանք ենթադրում են, որ հենց սա է Դանիել 8-ի նշված «ավերող պղծությունը»:
 - (դ) 167 – Մատաթիասը՝ Մոդինի քահանան, և նրա որդիները ապստամբեցին: Նրա որդիներից ամենահայտնին Հուդա Մակկաբայեցին էր՝ «Հուդա Մուրճը»:
 - (ե) 165 – Դեկտեմբեր 25 – Տաճարը նորից նվիրաբերվում է: Սա կոչվում է *Hanukkah* կամ «Լույսերի Տոն»:
6. Տարեթվերի հետ կապված խնդիրների, ընթացակարգերի և կանխակարծիքների շուրջ հետաքրքիր քննարկումների համար տե՛ս *Աստվածաշնչյան Բացատրական Մեկնաբանություն /The Expositors Bible Commentary/* հատոր 4, էջ՝ 10-17:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Հեղինակի կողմից յուրաքանչյուր հյուսիսային և հարավային թագավորի համար կիրառվում է տեղեկատվության հստակ ձևաչափ: Սովորաբար Հուդայի Թագավորների վերաբերյալ տեղեկությունները ավելի լիարժեք են ներկայացված (վերցված Դոկ. Հյուի SWBTS դասընթացներից).

- | | |
|--|--|
| 1. թագավորների թագավորելու տարեթվերը կորոշված են հյուսիսում կամ հարավում թագավորող իր հակառակորդ զույգի հետ; | 6. բնակության վայրը; |
| 2. թագավորի անունը; | 7. մոր անունը; |
| 3. նրա հոր անունը; | 8. նրա թագավորության մասին որոշ տեղեկություններ |
| 4. նրա տարիքը թագադրվելիս; | 9. նրա կյանքի շուրջ ամփոփիչ խոսք; |
| 5. թագավորության տևողությունը | 10. նրա մահվան և թաղման դեպքերը; |
| | 11. հաճախ #4 և #7 Իսրայելի թագավորների դեպքում բաց թողնված |

Բ. Այս երկարատև պատմական նյութը համառոտ ներկայացնելու տարբեր կերպեր կան.

1. ըստ գլխավոր կերպարների.
 - ա. Դավիթ/Սողոմոն
 - բ. Ռեհոբովամ/Հերոբովամ I
 - գ. Աքար (Հեզաբել), Եղիա
 - դ. Եղիա/Եղիսե
 - ե. Եզեկիա/Եսայի
 - զ. Ովսեա/Նաքովր Փարավոն
 - է. Հովակիմ/Հովաքիմ/Նաբուգոդոնոսոր
2. ըստ ներգրավված ազգերի.
 - ա. Միացյալ Միապետությունը
 - բ. Իսրայել/Հուդա
 - գ. Սիրիա
 - դ. Ասորեստան
 - ե. Բաբելոն

Գ. Մանրամասն նկարագրության համար կարդացե՛ք.

1. Ի.Ջ. Յանգ, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 190-200 /E.J. Young, *An Introduction to the Old Testament*/
2. Ռ.Բ. Հարրիսոն, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 720-721 /R.K. Harrison, *Introduction to the Old Testament*/
3. NIV Սերտողության Աստվածաշունչ, էջ՝ 468-469 /NIV Study Bible/

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Սա արևմտյան պատմությունն չէ, այլ հինավուրց մերձավոր-արևելքի աստվածաբանական պատմություն.

1. Հյուսիսի բոլոր թագավորները դատապարտված էին Հերոբովամ I-ի կողմից կանգնեցած իբրև ՅԱՀՎԵԻՆ ներկայացնող ոսկե հորթի պատճառով:
2. Հյուսիսային ամենագորեղ երկու առաջնորդներին՝ Չամբրիին և Հերոբովամ II-ին շատ թեթև անդրադարձ է կատարվում, և նրանց ոչ մի քաղաքական և ռազմական ձեռքբերում չի արձանագրվում:
3. Ամենաընդարձակ նկարագրությունների բաժինը հատկացվում է Հարավային թագավորներից երկուսին՝ Եզեկիային և Հովսիային: Նրանք գովերգվում են Մովսիսական Ուխտի հավատարմության և նրանց կատարած հոգևոր բարեփոխումների համար:
4. Մյուս միակ թագավորը, որին տրվում է ընդարձակ նկարագրություն, դա Եզեկիայի որդի Սանասենն է: Ցավոք այս դեպքում այն պատճառով, որ նա իր հոր ճիշտ հակապատկերն էր և ժողովրդին առաջնորդեց մեծ մեղքի մեջ:

Բ. 3 և 4 Թագավորաց գրքերը շարունակում են Սամուելի թեման /1 և 2 Թագավորացների/: Այս գրքերը ձևավորում են այս ժամանակաշրջանին վերաբերող եզակի մի պատմություն: Քահանայության վրա մարգարեական փուլի գերիշխումը շարունակում է կատարելագործվել: Եղիան և Եղիսեն, որոնք իրականում գրի չէին առնում իրենց մարգարեությունները, գրվում են 3 և 4 Թագավորացների ամբողջ բովանդակության մեկ երրորդ մասը:

Գ. 3 և 4 Թագավորացները ցույց են տալիս Աստծո ժողովրդի խտորումը Մովսիսական Ուխտից: Վերջին հաշվով այն ավարտվում է Սամարիայի անկմամբ (Ք.Ա. 722թ.) և Երուսաղեմի անկմամբ (Ք.Ա. 586թ.): Սա ՅԱՀՎԵԻ թուլության պատճառով չէր, այլ ժողովրդի և իրենց առաջնորդների մեղքի: Ուխտի հավատարմությունն էր գլխավոր խնդիրը: ՅԱՀՎԵՆ հավատարիմ էր: Սողոմոնը, Հուդան և Իսրայելը՝ ոչ:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. 3 ԹԱԳԱՎՈՐԱՑ

1. Տերմիններ և արտահայտություններ.
 - ա. «կենդանի է Տերը...», 1:29 (NASB & NIV)
 - բ. «նստեցրե՛ք իմ ջորուն», 1:33 (NASB & NIV)
 - գ. «գոհասեղանի եղջյուրները բռնեց», 1:50; 2:28 (NASB & NIV)
 - դ. Յաքին և Բոոզ, 7:21 (NASB & NIV)
 - ե. «ձեռները տարածեց», 8:22 (NASB & NIV)
 - զ. «Իմ նկույթը իմ հոր մեջքից հաստ է», 12:10 (NIV, «հորս գոտկատեղից հաստ է»)
 - է. ոսկե հորթեր, 12:28 (NASB & NIV)
 - ը. «ցատկոտում էին գոհասեղանի շուրջ... իրենց մարմիններն էին կտրատում», 18:26,28 (NIV, «պարում էին... և կտրատվում...»)
 - թ. «իրիկնային գոհ մատուցելու պահ», 18:36 (NIV, «գոհի ժամանակը»)
 - ժ. «մեղմ քամու ձայն», 19:12 (NIV, «մեղմ շշնջոց»)
2. Համառոտ ներկայացված անձիք.
 - ա. Աբիսակ, 1:3
 - բ. Մեմեի, 2:8
 - գ. Զիրամ, 5:1; 7:13
 - դ. Սարայի Թագուհի, 10:10
 - ե. Աստարովթ, 11:5
 - զ. Մոդոք, 11:7
 - է. Միսակ, 11:40
 - ը. Չամբրի, 16:16
 - թ. Նաբովթ, 21:1
 - ժ. Միքիա, 22:24

Բ. 4 ԹԱԳԱՎՈՐԱՑ

1. Տերմիններ և արտահայտություններ
 - ա. «հրեղեն կառք և հրեղեն ձիեր», 2:11; 6:17 (NASB & NIV)
 - բ. «նա Տիրոջ առջև չար գոնվեց/գործեց», 3:2 (NIV, «... աչքերի առջև»)
 - գ. «մեջքիդ գոտի կապիր», 4:29 (NIV, «թիկնոցդ գոտուդ մեջ դիր»)
 - դ. «աղավնու աղբի մեկ կապիճ», 6:25 (NIV, «սերմի պատիճների մի կապիճ»)
 - ե. «Մովսեսի շինած պղնձե օձը», (*nehshan*) 18:4 (NASB & NIV)
 - զ. «նա ջրամբար ու ջրմուղ շինեց», 20:20 (NIV, «... ջրատար»)
 - է. «երկնքի զորքերը», 21:3 (NIV, «երկնային զորքերը»)
 - ը. «Օրենքի Գիրքը», 22:8 (NASB & NIV)
 - թ. Տոփեթ, 23:10 (NASB & NIV)
 - ժ. «պղնձե ծովը», 25:13 (NASB & NIV)
2. Համառոտ ներկայացված անձիք.
 - ա. Գեեզի, 4:11
 - բ. Նեեման, 5:1
 - գ. Գոթողիա, 11:1,3
 - դ. Փուդ, 15:19
 - ե. Սենեքերիմ, 18:13
 - զ. Մանասե, 21:1
 - է. Ողդա, 22:14
 - ը. Նեբավով, 23:29

- թ. Հովաթին, 24:8
- ժ. Մարայա, 25:18
- ի. Գողողիա, 25:22

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ (թվագրված)

Ա. 3 ԹԱԳԱՎՈՐԱՑ

1. Ռովգել, 1:9 (Երուսաղեմ)
2. Գեհոն, 1:33 (Երուսաղեմ)
3. Անաթոլթ, 2:26
4. Եգիպտոսի հեղեղատը, 8:65 (NIV, «Եգիպտոսի չորահունը»)
5. Մակեդոն, 9:15
6. Գասիոնգաբեր, 9:26
7. Սյուքեմ, 12:1
8. Փանուել, 12:25
9. Կեդրոնի հեղեղատ, 15:13 (NIV, «Կեդրոնի Հովիտ»)
10. Չիներեթ, 15:20 (NIV, «Բեներեթ»)
11. Սամարիա, 16:24
12. Կարմեղոս լեռ, 18:20
13. Կիսոնի հեղեղատ, 18:40 (NIV, «Կիսոնի Հովիտ»)
14. Հեզրայել, 18:45

Բ. 4 ԹԱԳԱՎՈՐԱՑ

1. Ակկարոն, 1:2
2. Աբանա և Փարփար գետերը, 5:12
3. Դոթայիմ, 6:13
4. Սելա/Վեմ, 14:7
5. Ելաթ, 14:22
6. Լաքիս, 18:14
7. Եդովմի որդիների ձորը, 23:10 (NIV, «...Բեն Եդովմ»)
8. Մակեդոն, 23:30
9. Ռեբդա, 25:6




XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. 3 ԹԱԳԱՎՈՐԱՑ.

1. Թվարկե՛ք մի քանի պատճառ, թե ինչու Դավթի ընտանիքում այդքան իրարանցում կար:
2. Ինչո՞ւ Սողոմոնն այդքան շատ կին ուներ: Նրա ծերության օրերում նրանք ինչպիսի՞ ազդեցություն ունեցան իր վրա:
3. Ինչո՞ւ է Տանարի համար այդքան տեղ և մանրամասներ տրվում:
4. Ինչո՞ւ քանդվեց Միացյալ Միապետությունը:
5. Նկարագրե՛ք Բահադի երկրագոյությունը:
6. Որո՞նք են 22:18-23-ի աստվածաբանական ենթատեքստերը:



Բ. 4 ԹԱԳԱՎՈՐԱՑ.

1. Բացատրե՛ք 5:15-18-ի ենթատեքստը:
2. Բացատրե՛ք 19:19-ի ենթատեքստը:
3. Թվարկե՛ք Եզեկիայի ուժեղ կողմերը՝ առավելությունները, և Մանասեի մեղքերը:
4. Ինչի՞ն է վերաբերում հետևյալ արտահայտությունը (22:8). «Ես գտա Օրենքի Գիրքը»:
5. ՅԱ՛ՀՎԵի Ուխտը պայմանական էր, թե՞ անվերապահ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE






ԲԱԺԱՆՎԱԾ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

ՀՈՒՂԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ (1 Մնաց.3:1-16; Մատ.1:6-11)					ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ				
ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՄՈՆ	Սր.Գրային Տեքստը	ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՄՈՆ	Սր.Գրային Տեքստը
Ռոբոլամ	922-915	933-917	931/30-913	3 Թագ.11:43-12:27; 14:21-31 2 Մնաց.9:31-12:16	Հերոբոլամ I	922-901	933-912	931/30-910/09	3Թագ.11:26-40; 12:12-14:20
Աբիա	915-914	916-914	913-911/10	3 Թագ.14:31-15:8 2Մնաց.11:20,22	Նադաբ	901-900	912-911	910/09-909/08	3 Թագ.14:20; 15:25-31
Ասա	913-873	913-873	911/10-870/69	3 Թագ.15:8-30; 16:8,10,23,29; 22:41,43,46 Երևմ.41:9	Բաասա	900-877	911-888	909/08-886/85	3 Թագ.15:16-16:7; 4 Թագ.9:9 2 Մնաց.16:1-6 Երևմ.41:9
Հովսափատ	873-849	873-849	870/69-848	3Թագ.15:24; 22:1-51; 4Թագ.3:1-12; 8:16-19 1 Մն.3:10 2 Մն.17:1-21:1	Էլա	877-876	888-887	886/85-885/84	3 Թագ.16:8-14
(Հովրամ Իշխանակից)	853-848	3 Թագ.22:50 4Թագ.1:17;8:16; 12:18	Չամբրի (գորքերի գեներալ)	876 876-869	887 887-877	885/84 885/84-874/73	3 Թագ.16:9-20 4 Թագ.9:31 3 Թագ.16:15-28 4 Թագ.8:26 Միքիա 6:16
Հովրամ (Հովամ)	849-842	849-842	848-841	Մատթ.1:8	Աքաբ	869-850	876-854	874/73-853	3 Թագ.16:29-22:40
Որոզիա	842	842	4 Թագ.8:24-9:29 2 Մնաց.22:1-9	Որոզիա	850-849	854-853	853-852	3Թագ.22:40,41,4 9,51-53 2 Մնաց.18:1-3,19
Գոթողիա (թագուհի)	842-337	842-836	841-835	4 Թագ.8:26; 11:1-20 2 Մնաց.22:2-23:21	Հովրամ	849-842	853-842	852-841	4 Թագ.1:17; 3:1-27; 8:16-9:29
Հովաս	837-800	836-797	835-796	4 Թագ.11:2-3; 12:1-21 2 Մնաց.22:11-12; 24:1-27	Հեու (Չորքերի Գեներալ)	842-815	842-815	841-814/13	3 Թագ.19:16-17 4 Թագ.9:1-10:36; 15:12 2 Մնաց.22:7-9 Ովսեա 1:4



ՀՈՒԳԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ (1 Մն.3:1-16; Մատթ.1:6-11)					ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ				
ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՍՈՆ	ՍԲ.ԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ	ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՍՈՆ	ՍԲ.ԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ
Ամսախա	800-783	797-779	796-767	4Թագ.12:21;14:1-22 2 Մնաց.25:1-28					
(Ոգիա համաթագավոր)	791/90-767	4Թագ.14:21; 15:1-7	Հովարթագ	815-801	814-798	814/13-798	4Թգ.10:35;12:1-9
Ոգիա (Ագարիա)	783-742	779-740	767 – 740/39	2 Մնաց.26:1-23; Ովս.1:1; Ամովս.1:1 Չաք.14:5	Հովաս	801-786	798-783	798-782/81	4Թագ.13:9-13,25 2Մնաց.25:17-25 Ովս.1:1; Ամովս 1:1
(Հովաթամ համաթագավոր)	750-742	750-740/39	4Թագ.15:7,32-38	(Երեմ. II համաթագավոր)	793/92-782/81	4Թագ.13:13; 14:16,23-29 Ովս.1:1
Հովաթամ	742-735	740-736	740/39-732/31	1Մնաց.5:17 2Մն.26:23-27:9 Ես.1:1; 7:1 Ովս.1:1; Միք.1:1	Հերոբոլամ II	786-746	783-743	782/81-753	Ամովս 1:1; 7:9-11
(Աքագ համաթագավոր)	744/43-732/31	4Թագ.15:30-16:20 2Մնաց.27:9-28:27	Չաքարիա	746-745	743	753-752	4Թագ.15:8-12
Աքագ	735-715	736-728	732/31-716/15	Ես.1:1; 7:1; 14:28; 38:8 Ովս.1:1; Միք.1:1	Սեղղում	745	743	752	4Թագ.15:10,13-15
(Եզեկիա համաթագավոր)	729-716/15	4Թագ.16:20;18:1-20,21 2Մն.28:27-32:33 Առակ.25:1	Մանահեմ	745-738	743-737	752-742/41	4Թագ.15:14,16-22
Եզեկիա	715-687	727-699	716/15-687/86	Ես.1:1;36:1-39:8 Ովս.1:1; Միք.1:1 Մատթ.1:9-10	Փակեիա	738-737	737-736	742/41-740/739	4 Թագ.15:23-26
(Մանասե համաթագավոր)	696/95-687/86	4Թագ.20:21-21:18;23:12,26;24:2	Փակեե	737-732	736-730	740/39-732/31	
Մանասե	687/86-642	698-643	687/86-642/41	2Մնաց.32:33-33:20 Երեմ.15:4; 4Թագ.21:18-26	Ովսեե	732-724	730-722	732/31-723/22	4Թագ.15:27-31;16:5 2Մնաց.28:6; Ես.7:1
Ամոն	642-640	643-641	642/41-640/39	2Մնաց.33:20-25 Երեմ.1:2; Սոփ.1:1 4Թագ.21:19-26	Սամարիայի Անկումը Ասորեստանի կողմից	Ք.Ա. 724	Ք.Ա. 722	Ք.Ա. 722	4 Թագ.17:1-18

ՀՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ (շարուն.)					ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ (շարուն.)				
ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՒՍՈՆ	ՍԲ.ԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏ	ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԱՐԵԹՎԵՐ	ԲՐԱՅԹ	ՅԱՆԳ	ՀԱՐԻՒՍՈՆ	ՍԲ.ԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏ
Հովսիս	640-609	640-609	640/39-609	4Թագ.21:24; 22:1-23:30 2Մնաց.33:25- 35:27 Երեմ.1:2; Սոփ.1:1 Մատ.1:10-11					
Հովաքազ	609 (3 ամիս)	609	609	4Թագ.23:30- 34 2Մնաց.36:1-4					
Հովակիմ	609-598	609-598	609-597	4Թագ.23:34- 24:6,19 2Մն.36:4-8 Երեմ.1:3; 22:18-23; 25:1; 26:1; 27:1; 35:1; 36:1 Դան.1:1-2					
Հովաքիմ	598/97 (3 ամիս)	598	597	4Թագ.24:6,8- 17; 25:27-30 2Մնաց.36:8-9 Երեմ.52:31; Եզեկ.1:2					
Սեդեկիա	597-586	598-587	597-587	4Թագ.24:17- 25:7 2Մն.36:10-11 Երեմ.1:3; 21:1-7; 24:8- 10;27:1;32:4-5; 34:1-22; 37:1- 39:7; 52:1-11					
Երուսաղեմի անկումը Բաբելոնի կողմից	Ք.Ա. 586	Ք.Ա.587	Ք.Ա. 587	Ողբ Երեմիա					



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



1 և 2 ՄՆԱՑՈՐԴԱՅ ԳՐՔԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- Ա. Եբրայերենում գիրքը վերնագրված է «օրերի (տարիների) խոսքերը (դեպքերը)»: Ըստ երևույթին սա կիրառվել է տարիների ժամանակագրության իմաստով: Նույն այս խոսքերը որպես գրավոր աղբյուր հանդիպում ենք 3 Թագ. 14:19,29; 15:7,23,31; 16:5,14,20,27; 22:46 համարներում նշված մի քանի գրքերի վերնագրերում: Այս արտահայտությունը 3 և 4 Թագավորացներում գործածվել է ավելի քան երեսուն անգամ և սովորաբար թարգմանվում է «ժամանակագրություններ»:
- Բ. LXX-ը վերնագրում է այն «բաց թողնված բաներ (Հուդայի թագավորներին վերաբերող)»: Այստեղից ենթադրում ենք, որ Մնացորդացները կապ ունեն 1 և 2 Թագավորացների հետ, իսկ 3 և 4 Թագավորաց գրքերը կարելի է համեմատել ինչպես Հովհաննեսի Ավետարանը ի համեմատ Համանման՝ Սինոպտիկ Ավետարանների:
- Գ. Ջերոմն իր լատիներեն թարգմանության մեջ՝ Վուլգատայում, այն վերնագրում է «ամբողջ սուրբ պատմության ժամանակագրություն», քանի որ այս գրքում սերնդաբանությունը հասնում է մինչև Ադամ, իսկ Եզրասի, Նեեմիայի համանման գրքերը անդրադառնում են հետզերության շրջանին:
- Դ. 1 և 2 Մնացորդաց գրքերը եբրայերեն բնագրում եղել են որպես մի ամբողջական գիրք, որը հետագայում բաժանվել է LXX-ի կողմից, ինչպես Թագավորաց գրքերը:

II. ԿԱՆՈՆԸ

- Ա. Այս գիրքը Եբրայական կանոնի «Սուրբ Գրեր» բաժնի վերջին գիրքն է: Սա նշանակում է, որ այն հանդիսանում է Եբրայերեն Աստվածաշնչի վերջին գիրքը:
- Բ. Եբրայերեն կանոնում դրա ունեցած դիրքը ենթադրում է՝
1. գրքի ուշ շարադրանքը,
 2. ամփոփիչ բնույթը,
 3. այն դիտարկվում էր որպես Հավելված,
 4. կանոնի մեջ ուշ է ընդգրկվել:
- Գ. LXX այն տեղադրել է Թագավորացներից հետո և Եզրասից առաջ: Չարմանալի է, որ Եզրաս, Նեեմիա գրքերը դրվում են Մնացորդացներից առաջ, հավանաբար Մնացորդաց գրքերի ամփոփիչ բնույթի համար կամ էլ, որ այն ավարտվում է դրական նոտայով:

III. ԺԱՆՐԸ

- Ա. Այս գիրքը աստվածաբանորեն հատընտիր պատմական իրադարձություն է:
- Բ. Այն շրջանցել է որոշ թագավորների տիրակալության հիմնական բացասական կողմերը.
1. Դավիթ
 2. Սողոմոն
 3. «աստվածավախ» Հուդայի Թագավորները՝
 - ա. Ասա
 - բ. Հովսափատ
 - գ. Ոզիա

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աստվածաշունչը լռում է հեղինակի մասին:

Բ. Բարա Բաթրա 15ա ասում է, որ Եզրասն ինքն է գրել Մնացորդացների սերնդաբանությունը: Սա մեկնաբանվում է երկու կերպ.

1. Եզրասը գրել է Մնացորդացները
2. Եզրասն ավարտել է իր կյանքից առաջ Մնացորդացներում սկսված պատմությունը:

Գ. Եզրաս 1:1-4 և 2 Մնացորդաց 36:22-23 շատ նման են Եբրայերենում: Թե՛ Յանգը և թե՛ Հարրիսոնն ասում են, որ առաջինը գրվել են Մնացորդաց գրքերը: Սա մասամբ հաստատվում է բաբելոնյան դպիրների կողմից կիրառվող դպրական տեխնիկայի միջոցով, որոնք երկու աշխատություններ իրար էին միացնում «ընդհանուր նախադասության» կամ կոլոֆոնի միջոցով: Այս տեխնիկան չի երևում ռաբբիական գրվածքներում: Սա ենթադրում է, որ Եզրասը իր գրքի համար որպես պատմական նախաբան կիրառում էր Մնացորդացները, որը շարունակում է հրեա ժողովրդի պատմությունը:

Դ. Մնացորդացների և Եզրաս, Նեեմիա գրքերի հեղինակը(ները) ունեն միևնույն աստվածաբանական նախասիրությունը և մոտեցումը.

1. Տանարն ու քահանայությունը կարևորելը (հատկապես Ղևտացիների ցանկը)
2. բազում վիճակագրական արձանագրությունների և սերնդաբանությունների գործածումը
3. բառապաշարն ու գրական ժանրերը նման են
4. պետք է ասել, որ դրանք նաև տարբերվում են.
 - ա. անունները տարբեր են հեզվում
 - բ. Մնացորդացները կենտրոնանում են Դավթի արքունի տոհմաձառի վրա, մինչ Եզրաս, Նեեմիան՝ Մովսիսական Ուխտի:

Ե. Ուիլյամ Օլբրայթը գրքի հեղինակությունը վերագրում է Եզրասին՝ Ք.Ա. 428-397-ի միջև: Եզրասի բարեփոխումը, որն արձանագրված է Եզրաս 7-10 գլուխներում, տեղի է ունեցել Ք.Ա. 458-457, Արտաշես I-ի տիրակալության օրոք:

Զ. Մնացորդացները գործածում են բազմաթիվ աղբյուրներ.

1. Նախկինում արդեն գրված Սուրբ Գրերը.
 - ա. Մնացորդացները գործածում են Թագավորացների մոտ կեսը կամ առնվազն միևնույն աղբյուրներից են օգտվում:
 - բ. 1 Մնացորդաց գիրքը կարծես թե յուրահատուկ ընդգծում է ՀԿ-յան որոշ տեքստեր.
 - (1) Ծննդ.35:22 – 5:1
 - (2) Ծննդ.38:7 – 2:3
 - (3) Ծննդ.38:30 – 2:4,6
 - (4) Ծննդ.46:10 – 4:24
 - (5) Ծննդ.46:11 – 6:16
 - (6) Ծննդ.46:13 – 7:1
 - (7) Ծննդ.46:21 – 7:6,12
 - (8) Ծննդ.46:24 – 7:13
 - (9) Հռութ 4:18-21 – 2:11-13
 - (10) 1 Թագ.27:10 – 2:9,25-26
 - (11) 1 Թագ.31:1-6 – 10:1-12

գ. NIV Սերտոդոլության Աստվածաշնչի Մնացորդացների ներածությունը ներառում է հետևյալ աղբյուրները.

- (1) Հնգամատյանը
- (2) Դատավորացը
- (3) Հռութը
- (4) 1 Թագավորացը
- (5) 3 և 4 Թագավորացները
- (6) Սաղմոսները
- (7) Եսային
- (8) Երեմիան
- (9) Ողբ Երեմիան
- (10) Չաքարիան

2. Բաժանված Թագավորությունից պատմական գրավոր արձանագրություններ.

ա. հավանաբար արքունի պետական փաստաթղթեր.

- (1) Դավիթ Թագավորի ժամանակագրությունները, 1 Մնաց.27:24
- (2) Հուդայի և Իսրայելի Թագավորների գիրքը, 2 Մնաց.16:11; 25:26; 28:26; 32:32
- (3) Իսրայելի և Հուդայի Թագավորների գիրքը, 2 Մնաց.27:7; 35:27; 36:8
- (4) Իսրայելի Թագավորների գիրքը, 1 Մնաց.9:1; 2 Մնաց.20:34
- (5) Իսրայելի թագավորների խոսքերը /պատմության գիրքը/, 2 Մնաց.24:27; 33:18

բ. մարգարեներ.

- (1) Դավիթ Թագավորի գործերը, 1 Մնաց.29:29
 - (ա) Սամուել տեսանողի ժամանակագրությունները,
 - (բ) Նաթան մարգարեի ժամանակագրությունները,
 - (գ) Գադ տեսանողի ժամանակագրությունները,
- (2) Սողոմոնի գործերը, 2 Մնաց.9:29.
 - (ա) Նաթան մարգարեի արձանագրությունները,
 - (բ) Սիլոնացի Աքիայի մարգարեությունը:
- (3) Հերոբոամ I-ի գործերը Ադդով տեսանողի տեսիլքներում, 2 Մնաց.9:29
- (4) Ռոբովամի գործերը 2 Մնաց.12:15-ում
 - (ա) Սենայիա մարգարեի արձանագրությունները
 - (բ) Ադդով տեսանողը
- (5) Աքիայի արարքները՝ գործերը, 2 Մնաց.13:22-ում, Ադդով մարգարեի կողմից
- (6) Հեուլի գործերը՝ 2 Մնաց.33:19-ում Ուզայի կողմից (LXX-ում՝ «տեսանողների»)

գ. Արձանագրություններ ըստ ցեղերի սերնդաբանության.

- (1) Սիմոն, 1 Մնաց.4:33
- (2) Գադ, 1 Մնաց.5:17
- (3) Բենիամին, 7:9
- (4) Ասեր, 7:40
- (5) Ամբողջ Իսրայելը, 9:1
- (6) Ղևտական պահակախումբը, 9:22 (յուրաքանչյուր Ղևտական բաժանմունք նույնպես ունի արձանագրություն /տես՝ 1 Մնաց.23:1; 28:13; 2 Մնաց.35:4/):

դ. Այլազգիների արձանագրություններ.

- (1) Սենեքերիմի նամակները, 2 Մնաց.32:17-70
- (2) Կյուրոսի հրովարտակը, 2 Մնաց.36:22-23

Է. Եզրաս-Նեեմիայի պես Մնացորդացները թվարկում են մի քանի ազգերի սերնդաբանություն: Մի քանիսը ծավալվում են մինչև գալիք IV և VI սերունդը: Սա հնարավոր է երկու կերպ.

1. կա՛մ սրանք խմբագրական հավելումներ են,
2. կա՛մ էլ տվյալ ժամանակաշրջանի ընտանիքներ են և ոչ թե սերունդները:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Մնացորդաց գրքերում երկու տեքստ կա, որոնցից կարելի է ենթադրել, որ դրանք գրվել են հետզերության շրջանում.

1. 1 Մնաց.3:19-21: Սա Չորաբաբելի սերունդների անվանացանկն է:
 - ա. ոմանք ասում են մինչև վեցերորդ սերունդ
 - բ. ուրիշներն էլ, թե միայն երկու սերունդ, որին հաջորդում է Դավթի ընտանիքների անվանացանկը, որոնք Չորաբաբելի երկու ժառանգների ժամանակակիցներն էին՝ Փաղատիան ու Եսային (Յանգ և Հարրիսոն):
 - գ. LXX ընդլայնել է Չորաբաբելի սերնդաբանության ցանկը մինչև տասնմեկերորդ սերունդ (սա ցույց է տալիս խմբագրական փոփոխությունը):
2. 1 Մնացորդաց 3:22-24: Սա հ.21-ում նշված Սեբենիայի սերունդների անվանացանկն է:
 - ա. ոմանք ասում են, որ ցանկն ընդգրկում է 4 սերունդ (NIV Մերտողության Աստվածաշունչ)
 - բ. եթե դա այդպես է, ապա հեղինակի (խմբագրի) կողմից այս գիրքը գրելու տարեթիվը սկսում է Չորաբաբելի սերնդաբանությունից՝ 3:19-21
3. 2 Մնաց.36:22-23.
 - ա. Սա մատնանշում է Կյուրոս II-ին և նրա հրովարտակը, որը թույլ տվեց բոլոր գերեվարված ժողովուրդներին, ինչպես նաև Հրեաներին, վերադառնալ տուն՝ հայրենիք:
 - բ. Կյուրոս II-ը այս հրամանը արձակեց Ք.Ա. 538թ-ին: Առաջին դարձը անմիջապես տեղի ունեցավ Հուդայից Մասաասար իշխանի կողմից, որը կառավարիչ էր նշանակված: Նա սկսեց կառուցել Տաճարը, սակայն ավարտին չհասցրեց: Հետագայում, պարսից Դարեհ I թագավորի օրոք ուրիշներն էլ սկսեցին վերադառնալ Դավթի և Հեսուի տոհմաձառից Չորաբաբելի հետ միասին, որը Քահանայապետի սերնդից էր: Նրանք Անգեի և Չաքարիայի քաջակերությամբ ավարտեցին Տաճարի Վերակառուցումը՝ Ք.Ա. 516թ-ին :

Բ. Գրքի սերնդաբանություններից հայտնի է, որ հավաքագրման տարեթիվը տատանվում է Ք.Ա. 500-423թթ-ի միջև: Այս վերջնաժամկետը ներառված է, քանի որ այն կարծես հանդիսանում է Հին Կտակարանում պատմական ամենավերջին ակնարկը: Դարեհ II-ը թագադրվել է Ք.Ա. մոտ 428թ-ին: Նրա մասին նշվում է Նեեմիա 12:22-ում: Ավանդույթը նաև ասում է, որ Հին Կտակարանի կանոնը վերջնականապես որոշվում է գրեթե այս ժամանակներում:

Գ. 1 Մնացորդացն ընդգրկում է 1 և 2 Թագավորացների միևնույն ժամանակահատվածը, սակայն նրա տված սերնդաբանությունը վերադառնում է մինչև Ադամ: 2 Մնացորդացը ընդգրկում է միևնույն ժամանակահատվածը ինչ 3 և 4 Թագավորացները, սակայն ավելի ընդարձակ տեսքով, գրեթե մինչև Կյուրոս II -ի ժամանակները:

VI. ԴԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Գոյություն ունեն որոշակի իրական տարբերություններ Թագավորացների և Մնացորդացների պատմական դեպքերի ներկայացման միջև.

1. Մնացորդացներում թվերն ավելի մեծ են (Յանգ, էջ՝ 394-400)
 - ա. Ընդհանրապես սա ճիշտ է. հմմտ.՝ 1 Մնաց.21:5 և 2 Թագ.24:9:
 - բ. հաճախ Մնացորդացներն ունեն ավելի փոքր թվեր. հմմտ.՝ 3 Թագ.4:26 և 2 Մնաց.9:29:
 - գ. թվերի հետ կապված խնդիրների մեծ մասը կարելի է գտնել նաև LXX թարգմանության մեջ, որը նշանակում է, որ նրանք Ք.Ա. 250թ-ը կանխաթվել են
 - դ. Բ.Ռ. Թիելը, իր *Եբրայեցի Թագավորների Խորհրդավոր Թվերը*, 1954, 1965 /E.R.Thiele *The Mysterious Numbers of the Hebrew Kings/* գրքում տարբերությունները բացատրում է.
 - (1) թագավորությունների երկու տարբեր տարեթվերի համաձայն.
 - (ա) մուտքի տարով,
 - (բ) առանց մուտքի տարվա,

(2) ըստ համաթագավորների:

2. Մնացորդացները շեշտադրում են Դավթի սերնդի Հուդայի թագավորների դրական կողմերը
3. Մնացորդացները բաց են թողնում Դավթի և Սողոմոնի վերաբերյալ բացասական նյութերի մեծ մասը: Սակայն ինչպես Յանգն է նշում, այն նաև շրջանցում է գրեթե ամեն ինչ, որ վերաբերում է նրանց անձնական կյանքին, ոչ միայն բացասական, այլ որոշ դրական կողմեր էլ:
4. Մնացորդացները նաև բաց են թողնում Հյուսիսային թագավորությանը վերաբերող ամեն ինչ: Պատճառն անհայտ է: Շատերը ենթադրում են, որ պատճառը Դանում և Բեթելում Հյուսիսային Թագավորների կողմից դրված ոսկե հորթերն էին, որի համար էլ նրանք դատապարտված էին: Դավթի (Մեսիական) ճյուղին միակ հավատարիմը և ճշմարիտը համարվում էր Հարավային Թագավորությունը:

Բ. Մնացորդացների պատմության հավաստիությունը սատարվում է.

1. իրար համազոր սերնդաբանության նյութերով.
 - ա. Թագավորացները,
 - բ. Մեռյալ Ծովի Մագաղաթները,
 - գ. LXX
2. գրքի պատմական հավաստիությունը հաստատվում է, երբ Մնացորդացների սերնդաբանության նյութը զուգահեռվում է Ծննդոցում և Թվոցում առկա ցանկի հետ՝ ըստ Մագորեթիկ Տեքստի և Սամարիայի Հնգամատյանի:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. Համառոտ ուրվագիծ.

1. Ադամից մինչև Սավուղ սերնդաբանությունը, 1 Մնաց.1:1-9:44
2. Դավթի թագավորությունը, 1 Մնաց.10:1-29:30
3. Սողոմոնի թագավորությունը, 2 Մնաց.1:1-9:31
4. Հուդայի մյուս թագավորների թագավորությունները Գերությունից մինչև Կյուրոս թագավորը, 2 Մնաց.10:1-36:23

Բ. Մանրամասն տեղեկությունների համար կարդացեք.

1. Ի.Ջ. Յանգ Հին Կտակարանի Ներածություն, էջ՝ 401-402 /E.J. Young, *An Introduction to the Old Testament*/
2. Ռ.Կ. Հարրիսոն Հին Կտակարանի Ներածություն, էջ՝ 1152-1153 /R.K. Harrison, *Introduction to the Old Testament*/
3. NIV Սերտողության Աստվածաշունչ, էջ՝ 581-582 /NIV Study Bible/

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Սա Հուդայի մասին աստվածաբանական հատընտիր պատմություն է, որն ընդարձակելով կիրառում է Թագավորացների զուգահեռ դեպքերը:

Բ. Սա գրվել է գերությունից հետո ապրող համայնքի համար, որոնց համար չափազանց կարևոր էր իմանալ, որ Ուխտի Աստվածը դեռևս իրենց Աստվածն է: Տանարը (քանի որ թագավոր չկար) Աստծո նորոգված Ուխտի կիզակետն էր: Աստծո Ուխտը դեռևս պայմանական էր, հիմնված Մովսիսական կանոնների հնագանդության վրա:

Գ. Գրքի հիմնական առանցքը 2 Թագավորաց 7-ում Դավթին և նրա որդուն /որդիներին/ տրված Աստծո խոստումներն են.

1. առնչվում է բացառապես Դավթի որդիներին և վերջին հաշվով Մեսիա Թագավորին
2. ներկայացնում է Դավթի, Սողոմոնի և Հուդայի «աստվածավախ» թագավորների թագավորության դրական դեպքերը:
3. 36:22-23-ը արձանագրում է Կյուրոս II հրամանով Եբրայեցիների վերադարձը Երուսաղեմ:

4. Ծեշտադրում է Դավթի ցեղից սպասվող ապագա Թագավորին՝ Մեսիային: Այս իրականությունն դառնալու կերպերից էր Դավթի, Սողոմոնի և Հուդայի աստվածահաճո թագավորների «աստվածավախությամբ» թագավորելու մասին արձանագրությունները: Մեսիային սպասելու հույսը նաև արտահայտված է Չաքարիայի և Մաղաքիայի գրքերում:

Դ. Նաև ընդգծվում է Աստծո ամբողջ ժողովրդի միաբանությունը: Սա երևում է «ամբողջ Իսրայելը» հավաքական տերմինի կիրառմամբ (տես՝ 1 Մնաց.9:1; 11:1-3,4; 12:38; 16:3; 18:14; 21:1-5; 28:1-8; 29:21,23,25; 2 Մնաց. 1:2; 2:8; 9:30; 10:1,16; 12:1; 18:16; 28:23; 29:24; 30:1,6,25-26; 34:7,9,33):

Ե. Սերնդաբանությունները կիրառվում են՝

1. ինչպես Եզրասում և Նեեմիայում, ցույց տալու, որ վերականգնված Իսրայելը իրավաբանորեն միևնույն հին Իսրայելն է,
2. Եբրայեցիների պատմությունը ամփոփելու մինչև Ադամ ետադարձ սերնդաբանությամբ:

*Քանի որ 1 և 2 Մնացորդացները պարունակում են հիմնականում նույն դեպքերը ինչ Թագավորացները, այս երկու գրքերի տերմինները, քարտեզները կամ հարցերը չեն լինի:

ԵԶՐԱՍ ԳՐԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Եզրաս և Նեեմիա գրքերը Եբրայերեն Կանոնում (MT) հանդիսանում են որպես մի ամբողջական գիրքը: Բաբա Բաթրա 15ա անվանում է այն Եզրաս:

1. Սա անսովոր է, քանի որ ակնհայտ է, որ դրանք երկուսն էլ պարունակում են միևնույն սերնդաբանության ցանկերը՝ Եզրաս 2:1 և Նեեմիա 7:6-20:
2. Ցանկերը չնայած մի փոքր տարբերությամբ հիմնականում նույնը լինելով, ենթադրում են, որ դրանք բնագրում եղել են երկու գիրք:
3. Սա հաստատվում է Եզրաս 7-10 և Նեեմիայում «Ես» բաժինների կիրառության միջոցով:

Բ. Հավանաբար դրանք միացվել են իրար, քանի որ Եզրասի (Եզրաս 7-10) ծառայությունը շարունակվում է Նեեմիա 8-10-ում:

Գ. Եզրասի և Նեեմիայի վերնագրերը հնագույն թարգմանություններում տարբերվում էին.

LXX	Վուլգատա	Ուիկլիֆ և Քավրդեյլ Անգլերեն	Արդի Անգլերեն
Եսդրա Բ (Բետա)	Եսդրա I	I Եզրաս	Եզրաս
Եսդրա Գ (Գամմա)	Եսդրա II	II Եզրաս	Նեեմիա
Եսդրա Ա (Ալֆա)	Եսդրա III	I Եսդրա /անկանոն/
	Եսդրա IV	II Եսդրա /անկանոն/

Դ. Առաջին Եբրայերեն տեքստի միջոցով այս գրքերը բաժանել է MT թարգմանության խմբագրությունը մ.թ.1448թ-ին:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եզրասի գիրքը Եբրայական կանոնի «Գրեր» կոչվող երրորդ բաժնի մի մասն է:

Բ. MT թարգմանության մեջ այն դրված է Մնացորդացներից առաջ: Սա անսովոր դասավորվածություն է: Ըստ ժամանակագրական հերթականության պետք է լինի՝ Մնացորդացներ, ապա Եզրաս/Նեեմիա: Մի քանի տեսություններ կան (տես՝ Նեեմիա, II. Բ):

III. ԺԱՆՐԸ

Ա. Ուղղակի արձակ տեսքով գրված պատմական դեպքեր են:

Բ. Բովանդակում է այլ փաստաթղթերից վերցված բազմաթիվ մեջբերումներ.

1. Պարսկական
2. Հրեական

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Բաբա Բաթրա 15ա ասում է, որ Եզրասն է գրել այս գիրքը, սակայն սա չի ենթադրում, որ նա նաև գրել է Նեեմիա գիրքը: Իրականում այլ հրեական աղբյուրներ (Գեմարա) ասում են, որ Նեեմիան է ավարտել այն (Եզրաս-Նեեմիա): MT-ի վերջին գրառումները կարելի է գտնել միայն Նեեմիա գրքի վերջում:

Բ. Չոզեֆուսը իր *Contra Apion*, 1:8-ում և Սարդիսի Մելիտոն /Melito of Sardis/ մեջբերված Եվսեբիոսի կողմից իր *Ժողովարանական Պատմություն /Ecclesiastical History/* IV:26, երկուսն էլ հաստատում են Եզրասի հեղինակ լինելու փաստը:

Գ. Եզրաս գրքի մի մասը, որը վերաբերում է Եզրաս Դպիրի կյանքին (7-10 գլուխները), գրվել է առաջին դեմքով, 7:27-28; 8:1-34; 9:1: Եզրասը Սաղովկի տոհմից քահանա էր և Պարսից արքա Արտաշես I-ի (Ք.Ա. 465-424) պալատում դպիր:

Դ. Եզրաս/Նեեմիա և Մնացորդաց գրքերի միջև շատ նմանություններ կան.

1. Եբրայերենում 2 Մնաց.36:22-23 փակումը գրեթե նման է Եզրաս 1:1-4-ին:

2. դրանք երկուսն էլ ունեն միևնույն աստվածաբանական նպատակը.

ա. Կենտրոնացում Տաճարի և քահանայության վրա (հատկապես Դևտացիների անվանացանկը)

բ. Եզրասն ու Նեեմիան կենտրոնանում են Մովսեսի հետ կապած Ուխտի վրա, մինչ 1 և 2 Մնացորդացները՝ Դավթի հետ:

Ե. Որոգինեսը (մ.թ. 185-253թթ.)՝ Ալեքսանդրիացի մի Քրիստոնյա գիտնական, առաջինն էր, որ գիրքը բաժանեց երկու մասի՝ Եզրաս և Նեեմիա: Ջերոմը նույնն արեց իր լատիներեն Վուլգաթայում:

Զ. Առաջին Եբրայերեն ձեռագիրը, որ գիրքը բաժանեց երկու մասի, մ.թ.1448թ-ին էր: Ըստ երևույթին այս ժամանակներում էր, որ Եբրայերեն այբուբենի 22 տառերին համապատասխան ՀԿ-ում 22 գիրք ունենալու հրեաների ցանկությունն իրականացավ:

Է. Հեղինակը (հավաքագրողը) օգտվել է շատ աղբյուրներից.

1. Պարսկական փաստաթղթեր,

2. Հրեական արձանագրություններ

ա. *ՅԱՀՎԵՏի* տաճարից վերցված Բաբելոնում գտնվող անոթների ցանկը, 1:9-11; 7:19-20

բ. վերադարձող գերիների անվանացանկը, 2:1-70; 8:1-20

գ. Եզրասի սերնդաբանությունը, 7:1-5

դ. խառն ամուսնություններ ունեցած մարդկանց անունները, 10:18-43

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եզրասը Սաղովկի (7:2) տոհմաձագից քահանա և դպիր էր՝ Արտաշես I-ի օրոք (Ք.Ա. 465-424):

1. Եզրասը Երուսաղեմ եկավ Արտաշես I-ի թագավորության յոթերորդ տարում՝ Ք.Ա. 458թ, դարձի ճանապարհը բռնած հրեա քսոսոսյալների երրորդ ալիքի հետ միասին:

2. Նեեմիան Երուսաղեմ եկավ Արտաշես I-ի թագավորության քսաներորդ տարում՝ Ք.Ա. 445թ, որպես Պարսից կառավարիչ:

Բ. Կարծես թե Եզրաս, Նեեմիայի սերնդաբանությունները, որի հեղինակը կամ հավաքագրողը ներկայացրել է Ք.Ա. 5րդ դարի վերջում՝

1. ենթադրում է, որ 1 Մնաց.3:15-24 թվարկում է Չորաբաբելից հետո չորս սերունդ և ոչ թե վեց:

2. ենթադրում է, որ Նեեմ.12:10-11-ի Հադդուան՝

ա. նույն Հադդուան չէ, որ Չոզեֆուսը ներկայացնում է Ալեքսանդր Մեծի ժամանակներում (Ք.Ա. 336-323թթ.):

բ. կամ այն, որ այս սերնդաբանությունը ավելացվել է բնագիրը գրվելուց հետո մի խմբագրի կողմից, որպեսզի թարմեցվի տեղեկությունը:

գ. կամ այն, որ նա շատ երիտասարդ էր Նեեմիայի օրերում և ապրել է մինչև խոր ծերություն հասնելով Ալեքսանդր Մեծի օրերը:

- Գ. Իրար հետ փոխկապակցված այս պատմությունները տվյալ գրքերի հեղինակությանը վերագրում են մոտավորապես հետևյալ տարեթվերը՝
1. Ք.Ա. 440թ. Եգրասի համար,
 2. Ք.Ա. 430թ. Նեեմիայի համար,
 3. Ք.Ա. 400թ. Մնացորդացների համար:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Ա. Եգրասում փաստաթղթերի ձևաչափը հետևում է Պարսկական դարաշրջանի պաշտոնական փաստաթղթերի ձևին և գրելաոճին.
1. Կյուրոսի հրովարտակը (Երրայերեն թարգմանությունը), 1:2-4 (Երուսաղեմ և Տանարին վերադառնալու մասին)
 2. Հռեումը Արտաշես I-ին օրինական պահանջներ է ներկայացնում, 4:7-16 (Երուսաղեմի պարիսպների համար)
 3. Արտաշես I-ի պատասխանը, 4:17-22
 4. Թաթանայը Դարեհ I-ին օրինական պահանջներ է ներկայացնում, 5:6-17
 5. Դարեհ I-ի պատասխանը (Տանարի վերաբերյալ).
 - ա. Կյուրոսի հրովարտակի մեջբերումը, 6:2-5
 - բ. Դարեհի անձնական պատասխանը Թաթանային, 6:6-12,13
 6. Արտաշես I-ի հրամանը Եգրասին, 7:12-26
- Բ. Էլֆանտյան պապիրուսը (Ք.Ա. 408թ.) հաստատել է Եգրաս/Նեեմիայի պատմականությունը նշելով Սանաբադատ Որոնացուն, Նեեմ.2:10,19; 4:1: Այն նաև ներկայացնում է Կայսերական Արամերենի ոճը:
- Գ. Մի քանի արծաթե անոթներ են հայտնաբերվել Սոկրոսիում, որոնց վրա փորագրված են «Քայնուի որդի Գեսամին», որն ապացույց է Եգրաս/Նեեմիայում Գեսամ Արաբացու պատմականության, և որը իշխել է Կեդարի թագավորության վրա (տես՝ Նեեմ.2:19; 6:1,6):

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

- Ա. Առաջին վերադարձողները Երուսաղեմ, 1:1-2:70
1. Կյուրոսի իշխանության օրոք (Ք.Ա. 550-530թթ.) Սասաբազարը նշանակվեց կառավարիչ, 5:14: Նա Հուդայի իշխան էր, 1:8, հավանաբար Հովաքիմի որդին: Նա Տանարի գանձերով վերադարձավ Երուսաղեմ, 1:1-11: Նա դրեց Տանարի հիմքերը, սակայն չկարողացավ ավարտին հասցնել վերակառուցումը, 5:13-17:
 2. Կյուրոսի և Դարեհ I-ի իշխանության օրոք (4:5; Ք.Ա. 522-486թթ.) Դավթի սերնդից Չորաբաբելը կառավարիչ նշանակվեց: Նա Երուսաղեմ վերադարձավ վերջին Քահանայապետի սերնդից Հեսուի հետ միասին, 2:1-70:
- Բ. ՅԱՀՎԵԻՆ ուղղված Մովսիսական երկրպագության վերահաստատումը Երուսաղեմում Չորաբաբելի և Հեսուի միջոցով, 3:1-6:22
1. Սկսեցին Տաղավարահարաց Տոնը և ամենօրյա զոհաբերությունները, 3:1-13
 2. Վերակառուցման ծրագրերը ավարտելու քաղաքական խնդիրները, 4:1-24.
 - ա. տանարը, 1-5,24
 - բ. Երուսաղեմի պարիսպները, 6-23
 3. Մարգարեները քաջալերում են վերակառուցելու, սակայն պետք է սպասեն Պարսկաստանի կողմից պաշտոնական թույլատվության, 5:1-17

4. Կյուրոսի հրովարտակը գտնվում է և պաշտոնապես թույլատրվում Տաճարը վերակառուցել, 6:1-22

Գ. Եզրաս Դպիրի ժամանակով երրորդ վերադարձը գերությունից, 7:1-10:44

1. Եզրասի սերնդաբանությունը և վերադարձ դեպի Երուսաղեմ, 7:1-10

2. Արտաշես I-ի նամակը Եզրասին, 7:11-26, և նրա գոհության աղոթքը, 7:27-28

3. Վերադարձը, 8:1-36

4. Խառն ամուսնությունների խնդիրը, 9:1-10:44

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Եզրաս/Նեեմիա գրքերը շարունակում են հետզերության, Պարսկական ժամանակների պատմությունը, որտեղ և ավարտվում է 2 Մնացորդաց գիրքը:

Բ. Այն ցույց է տալիս վերադարձող աքսորյալների ռասայական պատկանելիությունը ըստ՝

1. Ծավալուն տոհմական սերնդաբանության ցանկերի;

2. Ծավալուն Ղևտական բաժինների;

3. Գաղթյալների կրոնական պատկանելիությունը՝ շրջապատող ազգերի հետ իրենց ունեցած առնչության:

Գ. Աստված վերահաստատեց Հակոբի սերնդի հետ ունեցած Իր Ուխտը:

Դ. Այն ցույց է տալիս երկրպագության նոր ձևի զարգացումը, որը կենտրոնանում է տեղական ժողովարանների և դպիրների վրա: Սա անշուշտ չէր բացառում Երուսաղեմի Տաճարում իրականացվող երկրպագությունը:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «Երեմիայի բերանով ասված Տիրոջ խոսքը կատարվի», 1:1 (NIV, «խոսված ...»)

2. «Երկնքի Աստվածը», 1:2 (NASB & NIV)

3. «բոլոր նրանք, ում հոգին Աստված արթնացրել էր», 1:5 (NIV, «...սիրտը Աստված շարժել էր»)

4. «Տիրոջ տան անոթները», 1:7 (NIV, «... տաճարին պատկանող իրերը...»)

5. Ուրիմ և Թումիմ, 2:63 (NASB & NIV)

6. «Գետից այն կողմ տարածքը», 4:16 (NIV, «Եփրատ գետից այն կողմ»)

7. կանգուն, 6:3 (NIV, «ոտնաչափ»)

8. Սովսեսի գիրքը, 6:18 (NASB & NIV)

9. դպիր, 7:6 (NIV, «վարդապետ»)

10. Նաթանայիմ, 7:24 (NIV, «Տաճարի սպասավորներ»)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.

1. Կյուրոս, 1:1

2. Միհրդատ, 1:8; 4:17

3. Սասբասար, 1:8,11; 5:14

4. Չորաբաբել, 2:2

5. Հեսու, 2:2

6. Ասվերոս, 4:6 (NIV, Xerxes)




7. Ասենափար, 4:10 (NIV, Աշուրբանիպալ)

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ (թվագրված)

1. Եփրատ Գետ
2. Երուսաղեմ
3. Սամարիա
4. Եկրատան կամ Ամաթիստ, 6:2



XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ կապ ունեին Չորաբաբելն ու Սաւրասարը:
2. Արդյո՞ք համար 3:6-ը հակասում է 5:16:
3. Ինչո՞ւ է Եզրաս 2 ցանկը նորից հայտնվում Նեեմիա 7-ում:
4. Ո՞րն է աստվածության համար այն հատկանշական պատկերեն անունը, որն այդքան հաճախ կիրառվում էր հետգերության գրքերում ՅԱՀՎԵԻ համար:
5. Ըստ Եզրաս 5:1-ում նշվածի ի՞նչ էին Անգե և Չաքարիա մարգարեները քաջալերում ժողովրդին անել:
6. Ինչո՞ւ էր Կյուրոս արքայի հրովարտակը այդքան կարևոր Հրեաների համար:
7. Ի՞նչ էր իրենից ներկայացնում «խառն ամուսնությունը»: Ինչո՞ւ էին դրանք այդքան կարևոր Եզրասի և Նեեմիայի համար:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



ՆԵՆՄԻԱ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. MT թարգմանության մեջ Եզրաս-Նենմիա գրքերը հանդիսանում են մի ամբողջական գիրք, որը կոչվում է Եզրաս: Վերջին խոսքերը MT-ում հանդիպում են միայն Նենմիայի վերջին մասում:

Բ. Այս գրքի տարբեր անունների հետ կապված ամբողջական քննարկման համար տե՛ս Եզրաս Գրքի Ներածություն, I:

Գ. Նենմիա անունը նշանակում է «ՅԱՎՎԵՆ միսիթարել է»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եզրաս-Նենմիա գիրքը Եբրայական Կանոնի «Գրեր» կոչվող երրորդ բաժնի մի մասն է:

Բ. Այն Մնացորդացներից առաջ է, որը զարմանալի է, քանի որ պատմականորեն և ժամանակագրական առումով այն հաջորդում է Մնացորդացներում տրված պատմական դեպքերին: Ոմանք փորձել են սա բացատրել հետևյալ կերպ.

1. Մնացորդացները Ադամից մինչև Կյուրոս արքան ընկած ժամանակների ամփոփում է
2. Եզրաս-Նենմիան առաջինն է ընդունվել որպես կանոնավոր գիրք
3. Մնացորդացները դրվել են վերջում, քանի որ Հրեաները ցանկանում են, որ Կանոնը ավարտվի դրական նոտայով (Կյուրոսի հրովարտակր):
4. Ոչ ոք իրականում չգիտի Եբրայական Կանոնի «Գրեր» բաժնի կազմավորման սկզբունքը:

Գ. MT թարգմանության Եբրայերեն առաջին խմբագրությունը դրանք բաժանեց մ.թ. 1448թ-ին:

Դ. Սակայն ներքին վկայությունից հայտնի է, որ դրանք սկզբնապես երկու գիրք են եղել.

1. Եզրաս 2-ի ծավալուն սերնդաբանական ցանկը կրկնվում է Նենմիա 7:6-70-ում: Անունները որոշ չափով տարբեր են հեզվում,
2. Եզրաս 7:27-28; 8:1-34; 9:1-ում կան «Ես» բաժիններ, ինչպես նաև Նենմիայում:

Ե. Ինչո՞ւ էին դրանք միասին.

1. Քանի որ մի պատմություն է,
2. Հաստատվել է, որ Եզրաս-Նենմիա գրքերի Եբրայերեն Կանոնում մեկ գիրք լինելու պատճառով ՀԿ-ի գրքերի քանակը Եբրայերեն այբուբենում առկա բաղաձայների քանակին համապատասխանեցնելն է: Սա նշանակում էր, որ միացված էին հետևյալ գրքերը.
ա. Դատավորաց և Հռութ
բ. 1 և 2 Թագավորացները,
գ. 3 և 4 Թագավորացները,
դ. Մնացորդացները,
ե. Եզրաս-Նենմիան,
զ. Երեմիա- Ողբ Երեմիան,
է. Տասներկու Փոքր Մարգարեները:
3. Եզրասի ծառայությունը, որը սկսվում է Եզրաս 7-10-ում, շարունակվում է Նենմիա 8-10-ում:

Զ. MT թարգմանության Եբրայերեն առաջին խմբագրությունը դրանք բաժանեց մ.թ. 1448թ-ին:

Է. Հետաքրքիր է, որ վաղ Սիրիական կանոնը և Թեոդոր Մոփսուեսթին (Անտիոքի թարգմանության դպրոցի ղեկավարը) իրենց ունեցած ներշնչված գրքերի ցանկում բաց են թողել Մնացորդացներ, Եզրաս և Նեեմիա գրքերը:

III. ԺԱՆՐԸ

Ա. Տե՛ս Եզրաս IV, Դ (Եզրաս, Նեեմիա և Մնացորդացներ գրքերի նմանությունները)

Բ. Տե՛ս Եզրաս IV, Է (փաստաթղթերի կիրառությունը)

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Բարա Բաթրա 15 ա ասում է, որ Եզրաս-Նեեմիան մեկ գիրք է՝ գրված Եզրասի կողմից:

Բ. Գեմարան ասում է, որ Նեեմիան օգնել է գիրքը գրելիս (Եզրաս/Նեեմիա)

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Մ.թ.19-րդ և 20-րդ դարերի գիտնականները հավատում էին, որ Եզրաս-Նեեմիան և Մնացորդացները գրվել են Ք.Ա. 4-րդ դարում, քանի որ.

1. Հեսու Քահանայապետի մի ժառանգորդ, որը միացավ Չորաբաբելին երկրորդ դարձի ժամանակ (Կյուրոսի օրոք) Հադդուան էր, իսկ նա գտնվում է Նեեմիա 12:10-11,22 ցանկում:
2. Նրանք պնդում են, որ այս Հադդուայի մասին նշում է Չոզեֆուսը (*Հնություններ*, XI:302-7) որպես Քահանայապետի (Ք.Ա. 351-331) Ալեքսանդր Մեծի Պաղեստին կատարած արշավանքի ժամանակ՝ Ք.Ա. 333-332թթ.:
3. Սա կապում է 1 Մնացորդաց 3:19-24-ում թվարկված Չորաբաբելի վեց սերունդների:
4. Այս գիտնականներից շատերը նաև պաշտպանում են այն կարծիքը, որ Եզրասը վերադարձել է Արտաշես II-ի տիրակալության ժամանակ (Ք.Ա.404-358), մինչ Նեեմիան վերադարձել է Արտաշես I-ի օրոք (Ք.Ա. 465-424թթ.):
5. Նեեմիա 12:26,47 մատնացույց է անում հետագա խմբագրի՝ հավաքագրողի:

Բ. Հետագայում 20-րդ դարի պահպանողական գիտնականները պնդել են, որ այս երեք գրքերի գրառման ժամանակը Ք.Ա. 5-րդ դարն է, քանի որ.

1. Նեեմիա 12:10-11,22-ի Հադդուան հավանաբար եղել է.
 - ա. շատ երիտասարդ, երբ նշվում է առաջին անգամ և ապրել է իսկապես շատ երկար: Նա չի նշվում որպես Քահանայապետ Նեեմիայի գրքում:
 - բ. ոչ թե նույն Հադդուան է, այլ թոռնիկն է միևնույն անունով (տես՝ *Expositor's Bible Commentary*, հատոր 4, էջ՝ 596-586);
 - գ. Չոզեֆուսը սխալ է կրճատել Պարսկական Տիրապետության ժամանակը, քանի որ Պարսից իշխանների անունները կրկնվում են Ք.Ա. հինգերորդ և վեցերորդ դարերում:
 - (1) Արտաշես
 - (2) Դարեհ
2. 1 Մնացորդաց 3:19-24-ում Չորաբաբելի սերնդաբանությունը շարունակվում է միայն՝
 - ա. երկու սերունդ (Յանգ և Հարրիսոն)
 - բ. չորս սերունդ
3. Ք.Ա. չորրորդ դարում Պաղեստինի վրա ազդեցություն թողած մեծ պատմական դեպքերի անդրադարձ չկա.
 - ա. Ալեքսանդր Մեծի արշավանքը (Ք.Ա. 333-332թթ.)
 - բ. Արտաշես III-ի կողմից սանձված ապստամբությունը (Ք.Ա. 358-338թթ.)

4. Հավանական է, որ եթե նույնիսկ Հաղորդան Ալեքսանդր Մեծի հետ ժամանակակիցներ են եղել, ապա Ղևտացիների այս անվանացանկը ավելացվել է գրքի հետագա խմբագրի կողմից, որը փորձել է ճշտել տարեթվերը (Յանգ): Հնարավոր է, որ «Նեեմիայի օրերը» արտահայտության մեջ խմբագրի ապացույց կա, Նեեմ.12:26,47:
5. Եզրասը և Նեեմիան ներկայացվում են այնպես, կարծես նրանք միասին են եղել Երուսաղեմում և ոչ թե տարբեր միապետների օրոք և իրարից առանձին.
 - ա. օրենքի ընթերցանությունը, Նեեմ.8:9
 - բ. Երուսաղեմի պարսպի նվիրաբերումը, Նեեմ.12:26,36:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Ա. Էլեֆանտյան Պապիրուսը (Ք.Ա.408) թվարկում է Եզրաս/Նեեմիա գրքում նշված մի քանի մարդկանց անուններ.
1. Սանաբադատը՝ Սամարիայի կառավարիչը, Նեեմ.2:10,19; 4:1;
 2. Հովնաթանը՝ Եղիասիբ Զահանայապետի թոռը, Նեեմիա 12:10-11,22,23;
 3. Այս մարդկանց մասին հատուկ նշելը ապացույց է այն բանի, որ Եզրասն ու Նեեմիան ապրել և գործել են Արտաշես I-ի իշխանության օրոք (Ք.Ա. 464-424թթ.):
- Բ. Սամարիայի Պապիրուսը մեզ է ներկայացնում Սամարիայի կառավարիչների մի ցանկ՝ Սանաբադատ Որոնացուց մինչև Ք.Ա. 332թ-ին Ալեքսանդր Մեծի կողմից քաղաքի կործանումը: Դրանք նաև ցույց են տալիս, որ Նեեմիա 13:28-ի դեպքերը և նմանօրինակ դեպքերը, որ արձանագրել է Ջոզեֆուսը Սանաբադատ III-ի ժամանակների վերաբերյալ, նույնը չեն:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

- Ա. Նեեմիան վերակառուցում է Երուսաղեմի պարիսպները (քաղաքը ավելի փոքրացնող), 1:1-7:73.
1. ներածությունը առաջին դեմքով, 1:1-2:20;
 2. պարիսպը վերակառուցվում է 52 օրում, 3:1-6:19;
 3. Նեեմիայի եղբայրը՝ Անանիին, նշանակվում է քաղաքի պատասխանատու, 7:1-73:
- Բ. Եզրասի կատարած հոգևոր բարեփոխումները (Եզրաս 7-10-ի շարունակությունը), 8:1-10:39.
1. Եզրասը ընթերցում է Օրենքը և ժողովուրդը արձագանքում է, 8:1-9:4;
 2. Հրեաների համար ՅԱՀՎԵԻ գործերի վերանայումը, 9:5-31;
 3. Ժողովուրդը երդվում է, որ երկրպագելու է ՅԱՀՎԵԻին և հոգ է տանելու Նրա Տաճարի համար (ուխտի նորոգություն) 9:32-10:39:
- Գ. Նեեմիայի կողմից կառավարման բարեփոխումները, 11-13.
1. Նեեմիայի առաջին դարձը դեպի Երուսաղեմ, 11-12.
 - ա. Երուսաղեմի բնակչությանը հաստատելու համար, 11:1-36;
 - բ. Ղևտացի քահանաների անվանացանկը, 12:1-26, 44-47;
 - գ. Երուսաղեմի պարիսպների նվիրաբերումը, 12:27-43:
 2. Նեեմիայի երկրորդ դարձը դեպի Երուսաղեմ, 13:1-31.
 - ա. ուխտի դրժում՝ խախտում, 13:1-5
 - բ. բարեփոխումներ, 13:6-31:
 - (1) Տուբիան հեռացվում է Տաճարի սենյակներից, 13:4-5, 8-9;
 - (2) Տաճարի ընծաները, 13:10-14;
 - (3) խառն ամուսնությունները, 13:1-3, 23-29;
 - (4) Տաճարի համար պաշար, 13:30-31:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Այս գիրքը շարունակում է Եզրասում սկսված պատմությունը: Դրանք երկուսն էլ արձանագրում են Խոստացյալ Երկրում Ուխտի ժողովրդի վերահաստատումը:
- Բ. Ինչպես Եզրասը հոգ էր տանում նոր համայնքի հոգևոր կյանքի համար, Նեեմիան էլ հոգ էր տանում՝
1. քաղաքի շուրջը պաշտպանական կարևորության պարսպի համար,
 2. քաղաքի կառավարչական հարցերի համար:
- Գ. Թե՛ Եզրասը և թե՛ Նեեմիան մտահոգ էին ուխտի (Մովսիսական) հավատարմության համար: Աստծո ժողովրդի մեղքերը, բացառությամբ կռապաշտության, շարունակվում էին մնալ հետգերության շրջանի համայնքում:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻԸ

Ա. Տերմիններ և արտահայտություններ.

1. մատովակ, 1:11 (NASB & NIV)
2. Նիսան, 2:1
3. «Եթե մի աղվես էլ կանգնի, նրա քարե պարիսպը կքանդի», 4:3 (NIV, «Եթե նույնիսկ մի աղվես էլ ցատկի դրա վրա, կքանդի նրանց քարերի պատը»)
4. «մեր աղջիկներին բռնի ստրկացրել են», 5:5 (NIV, «... արդեն ստրկացել են»)
5. «թափ տվեցի հագուստիս փեշը», 5:13 (NIV, «... հանդերձիս ծալքերը»)
6. ամպի սյուն, 9:12 (NASB & NIV)
7. առաջավորության հաց, 10:33 (NIV, «սեղանին դրված հացը»)
8. մշտնջենական..., 10:33 (NIV, «կանոնավոր»)
9. երեխայրիք, 10:35 (NIV, «առաջին պտուղները»)
10. վիճակ գցեցին, որ ժողովրդի մեկ տասներորդին բերեն Երուսաղեմ բնակվելու, 11:1 (NASB & NIV)
11. «Մովսեսի գիրքը», 13:1 (NASB & NIV)

Բ. Համառոտ ներկայացված անձիք.




1. Անանի, 1:2
2. Տուբիա Ամոննացի, 2:10,19
3. Սանաբաղատ Որոնացի, 2:10,19
4. Գեսամ Արաբացի, 2:19
5. Ասափ, 11:17
6. Իդիթունի, 11:17
7. Արտաշես I, 13:6

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Շուշան, 1:1
2. Ազովտոս, 4:7
3. «Չեֆիրիմ, Օնովի դաշտավայրում» 6:2 (NIV, «Օնովի դաշտավայրի գյուղերից»)



XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ էր Նեեմիան տխուր:
2. Ինչպե՞ս էր ցույց տալիս իր տխրությունը:
3. Ինչո՞ւ Նեեմիան պարսից զինվորներ վերցերց (2:9) իր հետ, իսկ Եզրասը՝ ոչ:
4. Ո՞րն էր Նեեմիայի առաջնային գործը:
5. Ինչո՞ւ էին աղքատ հրեաները բարկացած հարուստ հրեաների վրա (գլուխ 5):
6. Ուրվագծի՞ր գլուխ 9 որպես հրեա ժողովրդի համար Աստծո կատարած գործ:
7. Համաձայն 9:17 թվարկի՞ր Աստծո բանավորության գծերից և համառոտ բացատրիր:
8. Ինչո՞ւ ոչ ոք չէր ցանկանում ապրել Երուսաղեմում (գլուխ 11):
9. Ինչո՞ւ էր Նեեմիան այդքան տխրել խառն ամուսնությունների հարցում:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



ԵՍԹԵՐ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Անվանվել է Պարսից Թագուհու անունով:

Բ. Նրա անունը Եբրայերենում Ադասա է, որը նշանակում է մրտենի (2:7): Այս տերմինը հրեաների մոտ խորհրդանշում է ուրախություն (Չաբ. 1:8):

Գ. Նրա անունը պարսկերենում նշանակում է «աստղ»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Գիրքը դժվարությամբ է ընդգրկվել Եբրայական Կանոնի մեջ.

1. հավանաբար այն պատճառով, որ ընդհանրապես չի նշում՝

ա. Աստծո որևէ անուն,

բ. Տանարը,

գ. Մովսեսի Օրենքը,

դ. գոհաբերություն,

ե. Երուսաղեմը,

զ. աղոթք (չնայած ակնարկում է):

2. Մեռյալ Ծովի Գալաները, որոնք գտնվել են 1947թ-ին, ունեն (ամբողջությամբ կամ մասամբ) ՀԿ-ի բոլոր գրքերի կրկնօրինակները, բացառությամբ Եսթեր գրքի:

3. Եսթերը, Հռութի պես, ՆԿ-ում չի մեջբերվում:

4. Մեկնաբանների կողմից այն արժանացել է տարատեսակ մեկնաբանությունների.

ա. Երուսաղեմի Թալմուդը (Megilla 7a) ասում է, որ Եբրայական Կանոնի «Մարգարեներ» և «Գրեր» բաժինները կարող են մի օր անցնեն, սակայն Թորան և Եսթերը՝ ոչ: Այս գրքերը երբեք չեն հնանա (վերցված է Ի.Ջ. Յանգից, /E.J. Young/):

բ. Մայմոնիդը՝ միջին դարերի մի հրեա մեկնաբան (մ.թ. 1204թ.), ասում էր, որ այս գիրքը Մովսեսի Օրենքից հետո իր կարևորությամբ հանդիսանում է հաջորդը:

գ. Մարթին Լյութերը՝ Բողոքական բարեփոխիչը, ասում էր, որ այն պետք է հանվի կանոնից, քանի որ չափազանց Հուդայական է (նա այս բանն ասել է նաև Հակոբոսի և Հայտնության գրքերի համար):

5. Այս գիրքը եղել է մ.թ. 70թ-ից հետո Ջամնիայում քննարկված ամենավիճելի գրքերից մեկը:

6. «Ժողովող» /անկանոնը/ գրքի հեղինակը, որը նաև կոչվում է «Բեն Սիրաքի Իմաստություն»՝ գրված մոտ Թ.Ա. 180թ-ին, ընդհանրապես երբեք Եսթերի մասին չի խոսում:

7. Ըստ երևույթին այս գիրքը ներառվել է Եբրայական Կանոնի մեջ, որպեսզի բացատրի ոչ Մովսեսական Փուրիմ Տոնակատարության ծագումը (9:28-31): 2 Մակաբայեցիների 15:36-ում Փուրիմը կոչվում է «Մուրթքեի Օր»:

Բ. Եսթերի գիրքը հանդիսանում է հատուկ հինգ գալարներից կազմված *Մեգիլլոթ* կոչվող ցանկի մի մասը: Այս հինգ փոքր գրքերը՝ Հռութը, Ժողովողը, Երգ Երգոցը, Ողբ Երեմիան և Եսթերը, կազմում են Եբրայական Կանոնի «Գրեր» բաժնի մի մասը: Դրանցից յուրաքանչյուրն ընթերցվում է ամենամյա հատուկ տոներից մեկի ժամանակ: Եսթերը ընթերցվում է Փուրիմի ժամանակ:

Գ. Եսթեր գրքի տեքստը մեծապես տարբերվում է MT և LXX թարգմանություններում: LXX -ը ավելի երկար է և պարունակում է Մուրթքեի և Եսթերի աղոթքը: Հնարավոր է, որ սա ավելացվել է, որպեսզի օգնի գիրքը հրեական կանոնի կողմից ընդունվելու համար:

Դ. Հոպպեի եկեղեցու խորհուրդը (մ.թ. 393) և Կարթագենը (մ.թ. 397) հաստատեցին Եսթեր գրքի տեղը Քրիստոնեական Աստվածաշնչում:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այն պատմական իրադարձություն է (10:2-ում ընթերցողը քաջավերվում է կարդալ ինքնուրույն Մուրթթեի պատմությունը պարսկական արքունի արձանագրություններում):

Բ. Ոմանք կարող են ասել, որ սա պատմական ֆանտաստիկա է (նովել), որը հոգևոր ճշմարտություն է հայտնում:

1. հեզնանքի կիրառությունը
2. զգուշավոր դավը
3. գլխավոր կերպարները հայտնի չեն պատմությունից

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գոյություն ունեն շատ տեսություններ այս անանուն գրքի հեղինակի շուրջ.

1. Ռարբի Ազարիասն ասում է, որ գիրքը գրել է Հովակիմ Քահանայապետը, Դարեհ I-ի տիրակալության օրոք՝ Ք.Ա. 6-րդ դարի վերջում:
2. Թավմուղը՝ Բաբա Բաթրա 15ա, ասում է, որ Մեծ Ժողովարանի մարդիկ են գրել Եսթերի դերը: Ըստ երևույթին սա Երուսաղեմում Եգրասի կողմից կազմված առաջնորդների մի խումբ է, որը հետագայում դարձավ Մինեդրոն /Սանեդրին/: Չնայած «գրել» տերմինը կիրառված է «խմբագրելու», «հավաքագրելու» կամ «հավաքելու» իմաստով:
3. Իսկ Եգրասը, Ալեքսանդրիացի Կլեմենտը և Ջոզեֆուսն (*Հնույթուններ*, 11:6:1) ասում են, որ Մուրթթեն է գրել, սակայն Եսթեր 10:3-ը կարծես թե հակասում է այս փաստը (եթե իհարկե այն հետագայում խմբագրի կողմից կատարած հավելում չէ):
4. Իսիդորն ու Ավգուստինն ասում են, որ Եգրասն է գրել:

Բ. Ակնհայտ է, որ ոչ ոք չգիտի: Սակայն հաստատ է, որ հեղինակը եղել է Պարսկաստանում մի հրեա գերի, որը ծանոթ է եղել Պարսից պալատին:

Գ. Այս անհայտ հեղինակը օգտվել է հետևյալ աղբյուրներից.

1. Մուրթթեի հիշատակարանից, 9:20
2. Պարսկական պատմական փաստաթղթերից, 2:23; 3:14; 4:8; 6:1; 8:13; 10:2;
3. Հավանաբար բանավոր ավանդույթներից, հատկապես նահանգներում կատարված դեպքերի հետ առնչվող
4. Թե ինչի՞ն է վերաբերում 9:32-ի «գիրքը», անհայտ է:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս գիրքը նշում է Ասվերոս Պարսից Արքայի մասին, որը պարսկերենում նշանակում է «գորավոր մարդ»: Շատ գիտնականներ համաձայն են, որ սա պատմության մեջ հայտնի Քսերքս I (Ք.Ա. 486-465) հունարեն անվանումով թագավորն է:

Բ. Սակայն LXX-ը և Ջոզեֆուսը նրան անվանում են «Արտաշես», որը Քսերքսին հաջորդող Արտաշես I-ի անունն է (Ք.Ա. 465-424):

Գ. Եսթեր գրքի առաջին գլուխը հավանաբար արտացոլում է Հունաստանի վրա Պարսկաստանի կողմից արշավանք ծրագրելու ժամանակը: Հերոդոտոս պատմաբանից մեզ հայտնի է (2:8), որ

Պարսկաստանը ներխուժեց Հունաստան և Ք.Ա. 480թ-ին ետ մղվեց: Նա ասում է, որ Պարսից արքան տուն վերադարձավ և շատ ժամանակ անցկացրեց իր հարեմի հետ (9:108):

Դ. Ըստ աստվածաշնչյան ժամանակագրության այս գիրքը ընկած է Եզրաս 6 և 7 գլուխների միջև: Եզրասի արձանագրության մեջ այս հատվածում 57 տարի տևողությամբ բաց թողնված պատմական անցք գոյություն ունի: Եզրաս մարդը մինչև գլուխ 7-ը ներկայացված չէ:

Ե. Եսթեր 10:1-3 ակնարկում է Ասվերոս I-ի մահից հետո ժամանակը: Նա սպանվում է Ք.Ա. 465թ:

Չ. Ք.Ա. հինգերորդ դարի վերջը կարծես ավելի համոզիչ է գրքի թվագրման համար.

1. Եսթեր գրքում Եբրայերենի տեսակը շատ նման է Մնացորդացների, Եզրասի և Նեեմիայի Եբրայերենին,
2. Պարսկերեն վարկային բառապաշարի առկայությունը,
3. Հեղինակի կողմից պարսկական ավանդույթներին և պալատական կյանքին գիտակ լինելու փաստը: Նման մի օրինակ է 1:6-8, 10:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՎԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Նիփուրից սեպագիր արձանագրությունը, որը գրվել է Արտաշես I-ի տիրակալության օրոք (Ք.Ա. 465-424թթ.), հաստատում է Միջագետքում հրեական մեծաքանակ բնակչության ներկայությունը՝ Ք.Ա. 538թ-ին Կյուրոս II-ի կողմից թույլատրված վերադարձից հետո:

Բ. Հերոդոտոսի պատմությունը.

1. Քսերքս I-ի մասին Հերոդոտոսի պատմությունը կարծես թե համընկնում է Եսթերի պատմական ուղեծրի հետ.
 - ա. Ժողովք է հրավիրում Հունաստանի դեմ ռազմարշավը ծրագրելու համար,
 - բ. իր պարտությունից հետո շատ ավելի ժամանակ է անցկացնում իր հարեմի հետ,
 - գ. նկարագրում է Քսերքսին որպես կամակոր, անպարկեշտ և ցանկասեր մարդ:
2. Սակայն սա տալիս է երկու կողմն էլ: Հերոդոտոսը նաև անվանում և նկարագրում է Քսերքսի կնոջը: Նրա անունը Ամեստրիս էր, և նա պետք է, որ լիներ «յոթի ընտանիքից»: Պարսից Արքան ուներ յոթ մտերիմ խորհրդատուներ (1:14): Հերոդոտոսը նշում է, որ Ամեստրիսը ընկերակցեց Քսերքսին իր Հունական Արշավանքի ժամանակ:

Գ. Պերսեպոլիսի Իլամական քարե արձանագրությունները (Դարեհ I և Քսերքս I օրերից) անունների մեջ նշում են նաև Մուրթքեի անունը, որպես քաղաքի դարպասների պահապան:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (համատեքստ)

Ա. NIV Սերտողության Աստվածաշնչի Եսթեր գրքի ներածական ուրվագիծը շատ օգտակար է: Այն գործածում է Եսթեր գրքում առկա երեք խնջույքները /տոները/ պատմության կառուցվածքին հետևելու համար.

1. Թագավորի խնջույքը, 1:1-2:18;
2. Եսթերի խնջույքը, 2:19-7:10;
3. Փուրիմի Տոնը, 8-10

Բ. Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարդացեք՝

1. NIV Սերտողության Աստվածաշունչ, էջ՝ 719
2. Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնաբանություն, հատոր՝ 4, էջ՝ 796:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Ակնհայտ է, որ գիրքը բացատրում է ոչ Մովսիսական ամենամյա տոն համարվող Փուրիմի ծագումը՝ սկիզբը (9:28-32): Մյուս միակ ոչ Մովսիսական ամենամյա հրեական տոնակատարությունը Հանուկկան է: NIV Սերտողության Աստվածաշնչի էջ՝ 176-ում կա տոների մի շատ գեղեցիկ սանդղակ:
- Բ. Հալածանքների ժամանակ Աստծուն հավատարիմ մնալու քաջալերության գիրք է (հատկապես այն մարդկանց համար, ովքեր մնացին գերության երկրում):
- Գ. Հստակ ցույց է տալիս Աստծո առաջնորդող ձեռքը ոչ միայն Իսրայելի, այլ նաև Պարսկաստանի պատմության մեջ: Աստծո որևէ անվան և նորմալ հրեական հոգևոր ծեսերի (բացի ծոմապահությունից) մասին ակնարկների բացակայությունը գրական հակադրություն է, որով շեշտադրվում է Աստծո խորհրդավոր ազդեցությունը և առաջնորդությունը ամբողջ մարդկության պատմության մեջ (4:14):
- Դ. Ոմանք այս գիրքը դիտարկում են որպես Ուխտի Ժողովրդին և հետևաբար Մեսիային բնաջինջ անելու Սատանայի կողմից մեկ այլ փորձ.
1. Աղամի մեղքի անկումը,
 2. Հրեշտակների խառնվելը մարդկանց հետ (Ծննդոց 6);
 3. Աբրահամը և Իսահակը նվիրում են իրենց կանանց,
 4. Եսթերում Հրեա ժողովրդին կործանել ցանկանալը:




IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

- Ա. Տերմիններ և արտահայտություններ
1. «յոթ ներքինիներ», 1:10 (NASB & NIV)
 2. «պարսից և մարաց յոթ իշխանները», 1:14 (NIV, «յոթ ազնվականները...»)
 3. «Պարսից և Մարաց օրենքի մեջ, որպեսզի այն չփոխվի», 1:19 (NASB & NIV)
 4. հարճեր, 2:14 (NASB & NIV)
 5. Ազագացի, 3:1, 10; 8:5 (NASB & NIV)
 6. Փուր, 3:7; 9:24 (NASB & NIV)
 7. կնիք մատանի, 3:10; 8:2 (NASB & NIV)
 8. Սատրապ /կուսակալ/, 3:12 (NASB & NIV)
 9. «ոսկե գավազանը», 4:11; 5:2 (NASB & NIV)
 10. «հիսուն կանգուն բարձրությամբ կախադան», 5:14; 7:9-10 (NIV, «յոթանասունհինգ ոտնաչափ բարձրություն»)
 11. «Փուրիմի այս օրերը», 9:28-32 (NASB & NIV)
- Բ. Համառոտ ներկայացված անձիք.
1. Ասվերոս, 1:1 (NIV, «Քսերքս»)
 2. Վաշթի, 1:9
 3. Մուրթթե, 2:5
 4. Համան ազագացի, 3:1

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵՉԻ ՎՐԱ – առանց քարտեզ


XI. ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ էին թագավորի խորհրդատուները այդքան մտահոգ Վաշթի թագուհու մերժողական պահվածքի համար (1:16-22):
2. Ինչո՞ւ Մուրթենն չխոնարհվեց Համանի առջև:
3. Ինչո՞ւ պետք է Համանը ցանկանար ոչնչացնել ամբողջ հրեա ժողովրդին, միայն այն պատճառով, որ մի հրեա չէր խոնարհվել իր առջև:
4. Ի՞նչ պատճառ է ներկայացնում Համանը թագավորին հրեա ազգին ոչնչացնելու համար:
5. Թվարկե՛ք 4:1-3-ում արձանագրված հրեաների սգալու ծեսերի առանձնահատկությունները:
6. Ի՞նչ առնչություն ունի նախախնամության աստվածաբանական վարդապետությունը 4:14-ի հետ:
7. Ինչպե՞ս է 8:17 համապատասխանում գրքի նպատակի հետ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԺԱՆՐԸ

Ա. Մերձավոր Արևելքում տարածված գրական տեսակ՝ ժանր.

1. Միջագետք (3 Թագ.4:30; Ես.47:10; Դան.2:2):

ա. Շումերիան ուներ իմաստության զարգացած ավանդույթ՝ թե՛ առակագրության և թե՛ էպոսագրության (ՆԻՓՈՒՐ) ժանրերում:

բ. Բաբելոնի առակագրության իմաստությունը կապված էր քահանայի, մոզի հետ: Այն չէր կենտրոնանում բարոյական սկզբունքների վրա: Այնքան էլ զարգացած ժանր չէր համարվում ինչպես Իսրայելում:

գ. Ասորեստանը նույնպես ուներ իմաստասիրական ավանդույթ՝ Աքիկարի ուսմունքները: Նա Սենեքերիմի խորհրդատուներից էր (Ք.Ա. 704-681):

2. Եգիպտոս (3 Թագ.4:30).

ա. «Վեգիր Պտահհոտեպի ուսմունքը», գրված մոտ Ք.Ա. 2450թ-ին: Նրա ուսմունքները հանգավորված և ոչ թե առակագրության ձևաչափով էին: Կառուցվածքորեն նման էին ինչպես հոր կողմից որդուն ուղղված խրատները, այնպես էլ «Մերիկարե Թագավորի համար ուսմունքները», գրված մոտ Ք.Ա. 2200թ-ին:

բ. Ամենհոթեպի Իմաստությունը՝ գրված մոտ Ք.Ա. 1200թ-ին, շատ նման է Առ.22:17-24:22:

3. Փյունիկե.

ա. Ուզարտայում կատարված հայտնագործությունները ցույց են տվել Փյունիկյան և Եբրայական իմաստության միջև եղած կապը, հատկապես հանգերը: Աստվածաշնչյան Իմաստասիրական Գրականության մեջ առկա շատ անսովոր ժանրեր և հազվադեպ բառեր այժմ հասկանալի են Ռաս Շամոայում (Ուզարտա) հնագիտական հայտնագործություններից:

բ. Երգ Երգոցը շատ նման է Փյունիկյան հարսանեկան երգերին, որոնք կոչվում են *wasps* /բրետներ/, գրված մոտ Ք.Ա. 600թ-ին:

4. Քանան (Երեմ.49:7; Աբդիա 8) – Օլբրայթը բացահայտել է Եբրայական և Քանանական իմաստասիրական գրականության միջև ընդհանրությունները, հատկապես Ուզարտայից Ռաս Շամոայի տեքստերը, որոնք գրվել են Ք.Ա. 15-րդ դարում:

ա. հանախ միևնույն բառերն են հայտնվում գույգերի տեսքով

բ. շրջադարձումների առկայությունը

գ. ունեն մակագրություններ

դ. ունեն երաժշտական նոտագրություն

5. Աստվածաշնչյան Իմաստասիրական Գրականությունը պարունակում է մի քանի ոչ-իսրայելական գրեր:

ա. Հոբը Եդովմից

բ. Ագուրը Մասսայից (Մաուդյան Արաբիայում գտնվող մի իսրայելական թագավորություն /տես՝ Ծանոթոց 25:14 և 1 Մնացորդաց 1:30/)

գ. Լեմուելը Մասսայից

Բ. Գրական առանձնահատկությունները.

1. Հիմնականում երկու տարբերվող ձևաչափեր.

ա. առակագրություն (սկզբնապես բանավոր տեսքով)

(1) կարճ

(2) մշակութային հեշտ հասկանալի (տարածված դեպքերով)

(3) խորհելու խթանող ճշմարտության սահմանումներ

(4) սովորաբար հակադրություններ կիրառող

(5) ընդհանրապես ճիշտ, սակայն ոչ միշտ մասնավոր կիրառությամբ:

- բ. երկար զարգացումներ ունեցող հատուկ թեմաներ, գրական աշխատություններ (սովորաբար գրավոր)՝ ինչպես Հորը, Ժողովողը և Հովանը:
- (1) մենախոսություններ
 - (2) երկխոսություններ
 - (3) ճառեր
 - (4) նրանք առնչվում են կյանքի կարևոր հարցերի և առեղծվածների հետ
 - (5) իմաստունները ցանկանում էին մարտահրավեր նետել աստվածաբանական ստատուս քվոյին:
- գ. Իմաստության անձնավորումը (մշտապես իգական սեռով): Իմաստություն տերմինը իգական սեռի էր:
- (1) Հաճախ Առակացում իմաստությունը նկարագրվում է որպես կին.
 - (ա) դրական իմաստով.
 - 1) 1:20-33
 - 2) 8:1-36
 - 3) 9:1-6
 - (բ) բացասական իմաստով.
 - 1) 7:6-27
 - 2) 9:13-18
 - (2) Առակաց 8:22-31-ում իմաստությունը անձնավորվում է որպես ստեղծագործության առաջնեկ, որի միջոցով Աստված ստեղծեց մնացած ամեն ինչը (3:19-20): Սա կարծես թե հիմք է հանդիսանում Հովհաննեսի համար Հովհ.1:1-ում կիրառելու «բանը /logos/» տերմինը Հիսուս Մեսիայի համար:
 - (3) սա նաև կարելի է տեսնել Ժողովող 24-ում:
2. Այս գրականությունը Օրենքից և Մարգարեներից տարբերվում է նրանով, որ դիմում է անհատի և ոչ թե ամբողջ ազգին: Այստեղ չկան պատմական կամ կրոնական ակնարկներ: Հիմնականում կենտրոնանում է ամենօրյա, հաջողակ, ուրախ, բարոյական կյանքի վրա:
 3. Աստվածաշնչյան իմաստասիրական գրականությունն իր կառուցվածով, բայց ոչ բովանդակությամբ, նման է իրեն շրջապատող հարևան երկրների նմանատիպ գրականությանը: Միակ ճշմարիտ Աստվածն է այն հիմքը, որի վրա հիմնված է ամբողջ աստվածաշնչյան իմաստությունը (տես՝ Հոր 12:13; 28:28; Առ.1:7; 9:10; Սաղմ.111:10): (Բարեկրոնում Ապստուն, Եան կամ Մարդուքն էր: Եգիպտոսում Թոթն էր):
 4. Եբրայական իմաստասիրությունը շատ գործնական էր: Այն հիմնված էր փորձառության վրա և ոչ թե հատուկ հայտնության: Դրա ուշադրության կենտրոնում անհատն էր՝ կյանքում հաջողակ լինելու նպատակով (թե՛ սուրբ և թե՛ աշխարհիկ մարդկանց համար): Այն աստվածային՝ վերին զգացողություն է:
 5. Քանի որ իմաստասիրական գրականությունը կիրառում էր մարդկային դատողություն, փորձառություն և դիտարկում, այն համարվում էր միջազգային և համամշակութային: Հաճախ չսահմանվող միաստվածության կրոնական աշխարհայացքն էր, որ Իսրայելի իմաստասիրությունը դարձրեց նորահայտ:

II. ՀՆԱՐԱՎՈՐ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ՝ ԾԱԳՈՒՄԸ

- Ա. Իմաստասիրական գրականությունը Իսրայելում զարգացավ այլընտրանքային կամ մյուս տեսակի հայտնությունների համար որպես հավասարակշռող կողմ (Երեմ.18:18; Եզեկ.7:26):
1. քահանա – օրենք – ձև (հավաքական)
 2. մարգարե – ճառ – շարժառիթ (հավաքական)
 3. իմաստուն – իմաստություն – գործնական, հաջողակ ամենօրյա կյանք (անհատական)
 4. Ինչպես որ Իսրայելում կային կին մարգարեուհիներ, այնպես էլ կային կին իմաստուններ (տես՝ 2 Թագ.14:1-21; 20:14-22):

- Բ. Այսպիսի գրականությունը կարծես թե ձևավորվել է՝
1. որպես խարույկի շուրջ պատմվող ժողովրդական պատմություններ
 2. որպես ընտանեկան ավանդույթներ, որոնք փոխանցվել են արու գավակներին
 3. գրվել և հովանավորվել են Արքունի Պալատի կողմից.
 - ա. Դավիթը կապված է Մաղմոսներին
 - բ. Սողոմոնը կապված է Առակացին (3 Թագ.4:29-34; Մաղմ.72 և 127)
 - գ. Եզեկիան կապված է խմբագրված իմաստասիրական գրականությանը:

III. ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Այն հիմնականում ունի «ինչպես» կենտրոնանալ ուրախության և հաջողության վրա նպատակը:
Ի վերջո այն անհատական մոտեցմամբ է՝ Հիմնված է՝
1. նախորդ սերունդների փորձառության վրա,
 2. կյանքում պատճառահետևանքային կապի վրա:
- Բ. Այն համարվում էր առաջնորդների և քաղաքացիների հաջորդ սերնդին ճշմարտությունը փոխանցելու և խրատելու հասարակության ընտրած միջոցը:
- Գ. ՀԿ-յան իմաստասիրությունը, չնայած միշտ չէ, որ արտահայտվում է այդ մասին, սակայն ամեն տեսակ կյանքի ետևում տեսնում է Ուխտի Աստծուն:
- Դ. Դա ավանդական աստվածաբանության համար մարտահրավերի և հավասարակշռության միջոց էր: Իմաստունները ազատամիտ էին և կախված չէին գրքերի ճշմարտություններից: Նրանք համարձակվում էին հարցնել «Ինչո՞ւ», «Ինչպե՞ս», «Իսկ եթե՞»:

IV. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

- Ա. Ասացվածքային կարճ խոսքերը՝
1. փնտրե՛ք ճշմարտությունն արտահայտող կյանքի ընդհանուր տարրերը,
 2. գլխավոր ճշմարտությունը ներկայացրե՛ք մի պարզ նախադասությամբ,
 3. քանի որ համատեքստը չի օգնելու, փնտրե՛ք միևնույն թեմայի շուրջ առկա զուգահեռ հատվածներ:
- Բ. Ավելի երկար գրական հատվածները՝
1. համոզվե՛ք, որ ներկայացնում եք ամբողջ համատեքստի կենտրոնական ճշմարտությունը,
 2. համատեքստից համարներ մի՛ առանձնացրեք,
 3. ստուգե՛ք գիրքը գրվելու պատմական իրողությունը կամ պատճառը:
- Գ. Մի քանի տարածված սխալ մեկնաբանություններ (Ֆիլի և Ստյուարտ, *Ինչպես Կարդալ Աստվածաշունչն Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 207 /*Fee and Stuart How to Read the Bible for All it is Worth*):
1. Մարդիկ չեն կարդում ամբողջ Իմաստասիրական Գրականությունը (ինչպես Հորը և Ժողովողը) և ապա փնտրում դրա կենտրոնական ճշմարտությունը, այլ առանձնացնում են գրքի համատեքստից որոշ մասեր և բառացիորեն կիրառում դրանք մերօրյա կյանքում:
 2. Մարդիկ չեն հասկանում գրական ժանրի յուրահատկությունը: Մա խիստ համառոտ և խորհրդապատկերորեն ներկայացված Հնագույն Մերձարևելյան գրականություն է:
 3. Առակացը ընդհանուր ճշմարտությունների սահմանումներ է տալիս: Եվ պարտադիր չէ, որ դրանք ճիշտ լինեն բոլոր դեպքերի, ժամանակների, ճշմարտության սահմանումների համար:

V. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա. Հին Կտակարան

1. Հոր
2. Սաղմոսներ 1,19,32,34,37,49,73,104,107,110,112,127-128,133,147,148
3. Առակաց
4. Ժողովող
5. Երգ Երգոց
6. Ողբ Երեմիա
7. Հովնան

Բ. Հավելյալ Կանոնավոր /Անկանոն/ գրքեր

1. Տորիթ
2. Բեն Սիրաքի Իմաստություն (Ժողովողի)
3. Սողոմոնի Իմաստություն (Իմաստության Գիրք)
4. IV Մակկարայեցիներ

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսի առակները
2. Հակոբոսի գիրքը

ԵՔՐԱՅԱԿԱՆ ՊՈՆԶԻԱ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Նմանատիպ պոեզիան կազմում է ՀԿ-ի 1/3 մասից ավելին: Այն հատկապես բնորոշ է Եբրայական Կանոնի «Մարգարեներ» և «Գրեր» բաժիններին:
- Բ. Շատ է տարբերվում անգլիական պոեզիայից: Անգլիական պոեզիան զարգացել է հունարեն և լատիներեն պոեզիայից: Եբրայական պոեզիան շատ ընդհանրություններ ունի քանանացիների պոեզիայի հետ: Մերձավոր Արևելքի պոեզիան չունի շեշտադրված տողեր, հանգեր կամ ռիթմեր:
- Գ. Իսրայելի հյուսիսային մասում՝ Ուզարտայում (Ռաս Շամրա) հնագիտական հայտնագործությունը օգնել է գիտնականներին հասկանալու ՀԿ-յան պոեզիան: Ք.Ա. 15-րդ դարի պոեզիան ակնհայտ առնչություն ունի աստվածաշնչյան պոեզիայի հետ:

II. ՊՈՆԶԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. Այն շատ համապարփակ է:
- Բ. Փորձում է պատկերավոր կերպով արտահայտել ճշմարտությունը, զգացմունքները կամ փորձառությունները:
- Գ. Հիմնականում գրավոր է, ոչ թե բանավոր: Խիստ կառուցվածքային է: Այս կառուցվածքը արտահայտվում է՝
 1. հավասարակշիռ տողերում (զուգահեռականություն)
 2. բառախաղերում:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Ա. Եպիսկոպոս Ռոբերտ Լոուրթ իր *Լեկցիաներ Եբրայացիների Սուրբ Պոեզիայի վերաբերյալ* գրքում (Robert Lowth, *Lectures on the Sacred Poetry of the Hebrews /1753/*) առաջինն էր, որ բնութագրեց աստվածաշնչյան պոեզիան որպես մտքի հավասարակշիռ տողեր: Շատ ժամանակակից անգլերեն թարգմանություններ ֆորմատավորված են ցույց տալու պոեզիայի տողերը՝
 1. հոմանիշներով - տողերն արտահայտում են միևնույն իմաստը, սակայն տարբեր բառերով՝
 - ա. Սաղմոս 3:1; 49:1; 83:14; 103:3
 - բ. Առակաց 20:1
 - գ. Եսայի 1:3
 - դ. Ամովս 5:24
 2. հակաթեոսիկ /անհամատեղելի/ - տողերն արտահայտում են հակառակ մտքեր՝ հակադրության կամ դրական ու բացասական սահմանումների միջոցով.
 - ա. Սաղմ. 1:6; 90:6
 - բ. Առակաց 1:6,29; 10:1,12; 15:1; 19:4
 3. սինթետիկ – հաջորդ երկու կամ երեք տողերը զարգացնում են տվյալ միտքը – Սաղմ. 1:1-2; 19:7-9; 29:1-2
- Բ. Ա. Բրիգգն իր *Սուրբ Գրքի Մերտողության Ընդհանուր Ներածություն* գրքում (1899) /A. Briggs *General Introduction of Holy Scripture/* արժարժել է Եբրայական պոեզիայի վերլուծության հաջորդ փուլը.
 1. խորհրդանշական. նախադասության մի ենթամասը տառացի է, իսկ երկրորդը՝ փոխաբերական, Սաղմ. 42:1; 103:3

2. կլիմատիկ կամ աստիճանական. նախադասության ենթամասերը ճշմարտությունը հայտնում են աճման կարգով, Սաղմ.19:7-14; 29:1-2; 103:20-22:
3. ներկառուցված. մի շարք ենթամասեր, սովորաբար առնվազն չորսը, կապված են իրար հետ՝ 1-ինը 4-րդի, և 2-րդը՝ 3-րդ տողի ներքին կառուցվածքով – Սաղմ.30:8-10ա:

Գ. Ջ. Բ. Գրեյն իր *Եբրայական Պոեզիայի Տեսակները* (1915) գրքում /G. B. Gray *The Forms of Hebrew Poetry*/ զարգացրել է հավասարակշիռ ենթամասերի հասկացությունը՝

1. կատարյալ հավասարակշռությամբ, որտեղ առաջին տողում գտնվող յուրաքանչյուր բառ կրկնվում է կամ հավասարակշռվում երկրորդ տողում գտնվող որևէ բառով – Սաղմ. 83:14 և Եսայի 1:3:
2. անկատար հավասարակշռությամբ, որտեղ ենթամասերը միևնույն երկարության չեն – Սաղմ. 59:16; 75:6:

Դ. Հնչյունային ձևաչափի տեսակները՝

1. այբուբենի տառախաղիկներ (ակրոստիկոս)
2. բաղաձայների հետ կապված խաղիկներ (ալիտերացիա)
3. ձայնավորների հետ կապված խաղիկներ (ասոնանս՝ համահունչ արտասանություն)
4. բառերի կրկնության խաղիկներ (բառախաղ)
5. նմանատիպ հնչողությամբ բառերի հետ խաղիկներ (օնոմատոպոիա)
6. հատուկ բացման և փակման խոսք (ներառական)

Ե. Հին Կտակարանում կան պոեզիայի մի քանի տեսակներ: Դրանցից մի քանիսը թեմատիկ են և մի քանիսն էլ՝ ժանրային.

1. նվիրաբերման երգ՝ Թվոց 21:17-18
2. աշխատանքի երգեր՝ (ակնարկում է, սակայն չի արձանագրվել, Դատ.9:27-ում); Ես.16:10; Երեմ.25:30; 48:33
3. բալլադներ՝ Թվոց 21:27-30; Ես.23:16
4. երգեր գինարբուքի. բացասական՝ Ես.5:11-13; Ամոլս 6:4-7 և դրական՝ Ես.22:13
5. սիրո պոեմներ՝ Երգ Երգոց, հարսանեկան առածներ՝ Դատ.14:10-18, հարսանեկան երգ՝ Սաղմոս 45
6. ողբեր/սգո երգեր՝ (ակնարկվում է, սակայն չի արձանագրվել, 2 Թագ.1:17 և 2 Մնաց.35:25) 2 Թագ.3:33; Սաղմ.27,28; Երեմ.9:17-22; Ողբ.; Եզեկ.19:1-14; 26:17-18; Նաում 3:15-19
7. պատերազմական երգեր՝ Ծննդ.4:23-24; Ելից 15:1-18; Թվոց 16:35-36; Հեսու 10:13; Դատ.5:1-31; 11:34; 1 Թագ.18:6; 2 Թագ.1:18; Ես.47:1-15; 37:21
8. հատուկ երանիներ կամ առաջնորդական օրհնություն՝ Ծննդ.49; Թվոց 6:24-26; 2 Օր.32; 2 Թագ.23:1-7
9. կախարդական տեքստեր՝ Բաղասամ, Թվոց 24:3-9
10. սուրբ պոեմներ՝ Սաղմոսներ
11. ակրոստիկոսներ՝ Սաղմ.9,34,37,119; Առակ.31:10 և Ողբ Երեմ.1-4
12. անեծքներ՝ Թվոց 21:22-30
13. ծաղրական պոեմներ՝ Ես.14:1-22; 47:1-15; Եզեկ.28:1-23:

IV. ԵԲՐԱՅԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ա. Փնտրե՛ք տան կամ շեշտադրված հատվածի (սա արձակի մեջ պարբերության պես է) կենտրոնական ճշմարտությունը: RSV տարբերակը առաջին ժամանակակից թարգմանությունն էր, որ պոեզիան վերածեց տների: Ավելի լավ յուրացման համար համեմատե՛ք այս հասկացության արդի թարգմանությունները:

- Բ. Գտն՝ք փոխարերական՝ այլաբանական լեզուն և արտահայտն՝ք այն արձակի տեսքով: Հիշեք, որ նմանատիպ գրականությունը շատ համապարփակ է, և ընթերցողին շատ տեղ է տրամադրվում լրացնելու համար:
- Գ. Չմոռանաք ավելի երկար արևելյան շնչով գրված պոեմները կապել իրենց գրական համատեքստի և պատմական միջավայրի հետ:
- Դ. Դատավորաց 4 և 5 շատ օգտակար են հասկանալու, թե ինչպես է պոեզիան ներկայացնում պատմությունը: Դատավորաց 4 արձակ է, իսկ Դատավորաց 5-ը՝ միևնույն իրադարձությունը ներկայացված պոետիկ տեսքով:
- Ե. Փորձն՝ք գտնել առկա զուգահեռների տեսակը, լինի դա համագոր, հակաթետիկ, թե՛ սինթետիկ: Սա շատ կարևոր է:

ՀՈՐ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքն անվանվել է իր գլխավոր կերպարի անունով: Հորը շատ տարածված անուն էր: Այս անվան նշանակությունը մեկնաբանվում է որպես՝

1. «որտեղ է Հայրը»
2. «թշնամի»
3. «գոջացող»

Բ. Սա մի հզոր, արտիստիկ և նշանակալի գիրք է.

1. Լյութերն ասել է, որ այն «Սուրբ Գրքի մյուս գրքերից ավելի հոյակապ, բարձրորակ գիրք է»:
2. Թեննիսոնն ասել է, որ այն «թե՛ հնագույն, և թե՛ արդի ամենահրաշալի պոեմն է»:
3. Կարլին ասել է, «Աստվածաշնչում կամ դրանից դուրս ոչ մի այլ ավելի արժեքավոր գրվածք գոյություն չունի»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այն գտնվում է Երբայական Կանոնի Գրեր բաժնում:

Բ. Որոշ Երբայերեն ձեռագրերում այս գիրքը հաջորդում է Երկրորդ Օրինացին, քանի որ թե՛ Հորը և թե՛ Արրահամը պատմականորեն ապրել են միևնույն ժամանակաշրջանում:

Գ. Հոր գրքի ներկայիս դիրքը Աստվածաշնչյան պոետիկ գրքերի շարքում առաջադրվել է Վուգաթայի կողմից և հաստատվել Տրենտի Խորհրդի կողմից:

III. ԺԱՆՐԸ

Ա. Հորը գրական մի այնպիսի ժանրի մաս է կազմում, որը Մերձավոր Արևելքում մեծ տարածում ունեցող ժանր էր և կոչվում էր «իմաստասիրական գրականություն»:

Բ. Քանի որ գիրքը հիմնականում պոեմ է՝ արձակ նախաբանով (1-2) և վերջաբանով (42), գիտնականների միջև շատ քննարկումներ են տեղի ունեցել գրքի ժանրի շուրջ.

1. պատմական իրադարձություն,
2. փիլիսոփայական, աստվածաբանական թեմայի թատերական ներկայացում,
3. առակ:

Գ. Հորը որոշ գրական նմանություններ ունի հետևյալ (ոչ աստվածաբանական) գրքերի հետ՝

1. Մի շումերական գրության, որը կոչվում է «Շումեր Հորը», թվագրված մոտ Ք.Ա. 2000թ.
 - ա. բողոք առաջին դեմքով,
 - բ. չարչարանքների շուրջ, որին արժանի չէր,
 - գ. աստծո կողմից լքված լինելու շուրջ,
 - դ. դատական լսման խնդրանք,
 - ե. բացահայտված մեղք,
2. Մի բաբելոնական գրության, որը կոչվում է «Ես փառավորելու եմ Իմաստության Տիրոջը»: Երբեմն այն կոչում են «Բաբելոնացի Հորը», թվագրված մոտ Ք.Ա. 1300-1100թթ.
 - ա. մենախոսություն առաջին դեմքով,
 - բ. աստվածների կողմից թողնված և ընկերների կողմից լքված,
 - գ. առողջության և հարստության վերջնական վերահաստատում,

3. Մի բարեխոնական գրության, որը կոչվում է «Մարդկային թշվառության մասին երկխոսություն»: Երբեմն այն անվանում են «Բարեխոնյան Թեոդիսիա», թվագրված է մոտ Ք.Ա. 1000թ.
 - ա. տառապանքի մասին ակրոստիկ երկխոսություն,
 - բ. տառապողի և իր ընկերների միջև,
 - գ. ընկերը պաշտպանում է ավանդական տեսակետներ և չարչարվողը մատնանշում է ակնհայտ պրոբլեմներ, ինչպես օրինակ՝ ամբարիշտների բարգավաճելը,
 - դ. բոլոր խնդիրները ինչ-որ տեղ մարդկային ձախողումների հետևանք են հանդիսանում:
4. Մի Եզրիպտական գրության, որ կոչվում է «Պերնախոս Գյուղացու բողոքները»:
5. Մի Եզրիպտական գրության, որ կոչվում է «Կյանքից Հոգնած Մարդու բանավեճն Իր Հոգու հետ»: Այն նաև կոչվում է «Ինքնասպանության շուրջ Բանավեճ»:

Դ. Գիրքը պարունակում է մի քանի ժանր: Այն չի համապատասխանում այս կատեգորիաներից և ոչ մեկին.

1. մոնոլոգ՝ մենախոսություն
2. դիալոգ՝ երկխոսություն
 - ա. ընկերներ
 - բ. ՅԱՀՎԵ
3. արձակ նախաբան և վերջաբան

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն անանուն է:

Բ. Բաբա Բաթրա 14ր պնդում է, որ Մովսեսն է գրել գիրքը: Որոշ Եբրայերեն ձեռագրեր և Միրիակ թարգմանությունը, Պերշիտան այս գիրքը դնում են Երկրորդ Օրինացից հետո:

Գ. Հնարավոր է, որ մի հրեա փիլիսոփա վերցրել է Հոբի պատմական կյանքը և հարմարեցրել այն, որպեսզի սովորեցնի փիլիսոփայական, աստվածաբանական ճշմարտություն:

Դ. Որոշ գիտնականներ պնդում էին, որ 3-41 գլուխների պոեմը գրվել է հնագույն հեղինակի կողմից, մինչ նախաբանը (1-2) և վերջաբանը (42) ավելացվել է հետագայում ինչ-որ խմբագրի կողմից:

Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ մենք մեր արդի, արևմտյան մշակույթի մեջ լիարժեք չենք հասկանում Հնագույն Մերձավոր Արևելքի գրելաոճերն ու տեխնիկաները: Համմուրաբի Կողմ սկսվում և վերջանում է բանաստեղծական ոճով, իսկ մեջտեղում՝ արձակ է:

Ե. Հոբ մարդը.

1. Հոբը վաղ պատմական անձ է, քանի որ.
 - ա. նշվում է Եզեկիել 14:14, 20 և Հակոբոս 5:1-ում:
 - բ. նրա անունը, չնայած ոչ նույն մարդու, հայտնվում է Արմառնայի տեքստերում, Եզրիպտական Կգովքների տեքստերում, Մարի տեքստերում և Ուգարտական տեքստերում:
 - գ. 42:11-ում գտնվող դրամական բաժինը՝ *kesitah*, այլ տեղ կարելի է միայն հանդիպել Ծննդոց 33:19 և Հեսու 24:32-ում:
2. Ըստ երևույթին Հոբը հրեա չէր.
 - ա. Հոբի և իր ընկերների միջև իրենց գրույցներում կիրառված Աստծո ընդհանուր տարածում ունեցող անունները.
 1. *Elohim* (Աստված) 1-2 և 20, 28, 32, 34, 38 գլուխներում,
 2. *El* (Աստված) շատ անգամներ,
 3. *Shaddai* (Ամենակարող) շատ անգամներ:
 - բ. հավանաբար իմաստուն մարդ էր Եդովմից.
 1. Հուս (Ծննդ.36:28; Երեմ.25:20; Ողբ.4:21)

2. Թեման (Ծննդ.36:11)
3. համեմատելով «արևելքից մարդը» խոսքի հետ (Հոր 1:3; Դատ.6:3,33; Ես.11:14; Եզեկ.25:4,10)

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Գրքի պատմական միջավայրը համապատասխանում է Ք.Ա. երկրորդ հազարամյակի Նահապետական ժամանակաշրջանին: Մի քանի օրինակներ.

1. Հորն իր ընտանիքի համար կատարում էր քահանայի աշխատանքը (1:5)
2. Հորի երկարակեցությունը՝ 140+ տարի (42:16)
3. անասնապահությամբ զբաղվելու կիսաքոչվոր ապրելակերպը,
4. Սաբայեցիների և Քաղդեացիների քոչվոր ավազակախմբերը (1:15,17)
5. Հորը տարվա մի մասն ապրում էր քաղաքում, մյուս մասը՝ իր հոտերի ու նախիրների հետ:

Բ. Ըստ ժանրի գիրքը թվագրվում է իմաստասիրական գրականության ստեղծման դարաշրջանին: Սա պետք է, որ լինի Դավթի օրերից մինչև Հուդայի Թագավորները՝ հատկապես Եզեկիան:

Գ. Ռ.Կ. Հարրիսոնն ընդունում է, որ գրքի գրառման տարեթիվը ապացույցների համաձայն լավագույնս համապատասխանում է ոչ ուշ, քան Ք.Ա. հինգերորդ դարի ավարտը:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Հուսի աշխարհագրական տեղակայությունն անհայտ է: Գոյություն ունի երկու վարկած՝

1. Եդովմի երկրում.
 - ա. հայտնի էր իր իմաստուններով, Երեմ.49:7
 - բ. Հորի երեք ընկերներից մեկը Թեմանից էր, որը Եդովմի քաղաքներից է: Այն անվանվել է Եսավի ժառանգորդներից մեկի անունով, Ծննդ.36:15
 - գ. Հուսը նշվում է որպես քոռեցի Սեիրի ժառանգորդ. տես՝ Ծննդ.36:20-30: Այս մարդիկ կապված էին Եդովմի տարածաշրջանի հետ:
 - դ. Հուսը նույնականացվում է Եդովմի հետ Ողբ 4:21-ում:
2. Արամի տարածաշրջանում.
 - ա. Հորի գրքում գերակշռում է արամերեն գրականության ոճը
 - բ. Քաղդեացի գավթիների ներկայությունը, 1:17
 - գ. Ծննդ. 10:23-ը կապում է Հուսը Արամի հետ, տես՝ Ծննդ.22:20-22:
3. Հնարավոր է, որ Հուսն իր մեջ բովանդակում է Պաղեստինի արևելյան մասի՝ հյուսիսային Արամից մինչև հարավային Եդովմը, մի քանի ցեղեր:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Արձակ նախաբան (երկնային խորհուրդը՝ ժողովը), 1-2

Բ. Հորի ընկերները, 3-37

1. Հորի ողբը, 3
2. երկխոսության երեք շրջանները, 4-31
 - ա. առաջին շրջան, 4-14

(1) Եղիփազ, 4-5	(4) Հոր, 9-10
(2) Հոր, 6-7	(5) Սոփար, 11
(3) Բաղդադ, 8	(6) Հոր, 12-14
 - բ. երկրորդ շրջան, 15-21

(1) Եղիփազ, 15	(5) Սոփար, 20
----------------	---------------

(2) Հոր, 16-17

(6) Հոր, 21

(3) Բաղդադ, 18

(4) Հոր, 19

գ. երրորդ շրջան՝

(1) Եղիփազ, 22

(2) Հոր, 23-24

(3) Բաղդադ, 25

(4) Հոր, 26

(5) Հորի եզրակացությունը, 27

(6) հեղինակի մեկնաբանությունը (իմաստության գովաբանություն և առեղծված), 28

(7) Հորի մենախոսությունները, 29-31

3. Եղիուսի խոսքերը, 32-37

ա. արձակ, 32:1-5

բ. պոետիկ, 32:6-37:24

Գ. Աստված պատասխանում է Հորին, 38:1-42:6

1. Աստված պատասխանում է որպես արարիչ, 38-39

2. Աստված պատասխանում է որպես Դատավոր, 40:1-2,6-41:34

3. Հորը զոջում է, 40:3-5 և 42:1-6

Դ. Արձակ վերջաբան, 42:7-17

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս գիրքը գրվել է ավանդական ուխտի աստվածաբանությունը հավասարակշռելու համար (2 Օր.27-29). արդարներն այս կյանքում օրհնվում են, իսկ ամբարիշտները՝ պատժվում: Ավանդական հրեական այս աստվածաբանությունը փոխանցվում է Հորի երեք ընկերների խոսքերի միջոցով: Հետաքրքիր է նաև նշել Եղիուսի պես երիտասարդի հատուկ մարտահրավերը ավանդականին, որը հանրորեն բանավիճում և ուղղում է Հորին և նրա երեք ընկերներին:

Բ. Այս գիրքը հաստատում է, որ Աստված արդար է և վերջին հաշվով Նա է ամեն ինչ կարգավորում, թե՛ այս կյանքում (Հորի վերականգնումը, 42:10-17) և թե՛ հաջորդ (14:7-17; 19:23-27):

Գ. Բոլոր տեսակի տառապանքները անձնական մեղքի հետևանք չեն: Սա էին պնդում երեք ընկերները (տես՝ 4:7-11; 8:3-7; 11:13-15; 15:12-16; 22:21-30): Մենք ապրում ենք անարդար և մեղքի աշխարհում: Երբեմն ամբարիշտները բարգավաճում են (Սաղմ.73): Հաճախ արդարները տառապում են: Սատանան Հորին հավատալու մեջ մեղադրում էր նրան Աստծո կողմից ցուցաբերված բարեհաճության համար:

Դ. Այս գիրքը մեզ գաղափար է տալիս հոգևոր տերությունների վերաբերյալ: Գոյություն ունի մի բանասարկու, որը մարդու հակառակորդն է: Սատանան Աստծո ծառան է, ՀԿ-ում մի հետապնդվող հրեշտակ (Ա.Բ.Դեյվիդսոն, *Հին Կտակարանյան Աստվածաբանություն*, /A.B. Davidson, *An Old Testament Theology*/, տպագրվել է T & T Clark -ի կողմից, էջ՝ 300-306): Դժվար է պարզաբանել, թե ինչու Սատանա տերմինն ունի որոշիչ հոդ: Հնարավոր է այն արտահայտում է ավելի շուտ նրա գործողությունները, քան պարզապես անունը: Մի քանի այլ գործակալներ նույնպես նկարագրվում են որպես «հակառակորդներ»:

1. մարդիկ.

ա. 1 Թագ.29:4

բ. 2 Թագ.19:22

գ. 3 Թագ.5:4

դ. 3 Թագ.11:14-22,23-25

- ե. Սաղմ.71:13
- զ. Սաղմ.109:6,20,29
- 2. հրեշտակներ.
 - ա. Տիրոջ հրեշտակը, Թվոց 22:21
 - բ. Սատանան, Հոր 1-2, 1 Մնաց.21:13; Չաք.3:1-2

Ե. Աստված երբեք չի հայտնում Հորին իր չարչարանքների, տառապանքների պատճառը: Կյանքը առեղծված է: Աստծուն վստահելը շատ ավելի կարևոր է, քան տեղեկությունը:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (NASB)

Ա. Տերմիններ և / կամ արտահայտություններ

- 1. անարատ /կատարյալ/, 1:1; 2:3 (NASB & NIV)
- 2. Աստծո որդիներ, 1:6; 2:1 (NIV, «հրեշտակներ»)
- 3. խեցի, 2:8 (NIV, «ջարդված կավի մի կտոր»)
- 4. Ծեղ /գերեզման/, 7:9; 11:8 (NIV, «գերեզմանը»)
- 5. պապիրուս, 8:11 (NASB & NIV)
- 6. Ռախար, 9:13; 26:12-13 (NASB & NIV)
- 7. Կորուստ, 26:6; 28:22; 31:12 (NIV, «Կործանում»)
- 8. փրկագին, 33:24; 36:18 (NASB & NIV)
- 9. Լևիաթան, 3:8; 41:1 (NASB & NIV)
- 10. բեհեմոթ, 40:15 (NASB & NIV)
- 11. աստվածարդարացում

Բ. Անձիք.




- 1. «արևելքի մարդիկ», NASB (NIV, «արևելքի բոլոր մարդիկ») 1:3
- 2. Սատանա, 1:6
- 3. Սաբայեցիներ, 1:15
- 4. Քաղդեացիներ, 1:17
- 5. Ամենակարողը (*Shaddai*), 6:4,14; 13:3; 22:3,26
- 6. Եղիուս, 32:2

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

- 1. Հուս, 1:1
- 2. Թեման, 4:1
- 3. Եղովմ


XI. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1. Ի՞նչ է նշանակում վախենալ Աստծուց: 1:1,9; 28:28
- 2. Արդյո՞ք Հորը անմեղ էր (անարատ): 1:1,8,22
- 3. Ովքե՞ր են «արևելքի մարդիկ»: 1:1
- 4. Ի՞նչ կապ ունի գրքի գրառման տարեթվի հետ այն փաստը, որ Հորն իր ընտանիքի համար քահանա էր հանդիսանում. 1:5
- 5. Ո՞րն է Սատանայի Երկնքում Աստծո առջև գտնվելու փաստի ենթատեքստը: 1:6-12
- 6. Աստծո առջև ի՞նչ կերպերով էր Սատանան մեղադրում Հորին: 1:6-12; 2:1-6
- 7. Արդյո՞ք 14:7-17 և 19:23-29 հհ. սովորեցնում են մարմնի հարության մասին, ինչու և ինչու ոչ:
- 8. Արդյո՞ք Աստված պատասխանում է Հորի հարցերին:
- 9. Արդյո՞ք Հորը ընդունեց, որ ինքը մեղանչել է: 40:3-5; 42:1-6
- 10. Հորի երեք ընկերներին Աստված ի՞նչ է ասում, որ անեն: (42)
- 11. Հորի կողմից իր անմեղության հաստատումը ինչպե՞ս է արտացոլում Աստծո բնավորությունը, 40:8:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՄԱՂՄՈՍՆԵՐ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Եբրայերենում գիրքը վերնագրված է «Փառաբանության Երգեր» կամ «Փառաբանություններ» (*Tehellim*): Սա զարմանալի է, քանի էր Սաղմոսներից շատերը ողբեր կամ տրտուհներ են:

Բ. LXX-ում վերնագրված է “*psalmos*”, որը նշանակում է «քաղել՝ հավաքել»: Հունարեն այս տերմինը կիրառվում է Դուկ.20:42; 24:44 և Գործք 1:20-ում Սաղմոսների համար: Ոչ բոլոր սաղմոսներն էին երաժշտական գործիքներով նվագակցմամբ երգելու համար նախատեսված, սակայն LXX-ում այսպես են վերնագրել ամբողջ գիրքը:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Սաղմոսները Եբրայական Կանոնի «Գրեր» կոչվող երրորդ բաժնի մի մասն են կազմում: Եբրայական կանոնի այս բաժինը կազմված է՝

1. իմաստասիրական գրականությունից

ա. Հոր

բ. Սաղմոսներ

գ. Առակներ

2. տոնական գրքերից

ա. Հռութ

բ. Ժողովող

գ. Երգ Երգոց

դ. Ողբ Երեմիա

ե. Եսթեր

3. պատմական գրքերից

ա. Դանիել

բ. Եզրաս

գ. Նեեմիա

դ. Մնացորդացներ

Բ. Սաղմոսները որպես հավաքածու գտնվում են LXX-ում և Մեռյալ Ծովի Գալարներում:

Գ. Սաղմոսները մեջբերվում են ՆԿ-ում շատ ավելի հաճախ, քան որևէ այլ ՀԿ-յան գիրք:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գրական ժանրը տարածված էր Հնագույն Մերձավոր Արևելքում: Աստվածաշնչյան սաղմոսները նման են Բարեխոսից, Եգիպտոսից և Քանանից գտնված օրհներգների տեսակներին: Գիտնականները սերտ կապ են տեսնում.

1. Սաղմոս 104:20-30 և Աթոնի եգիպտական հիմնի միջև (Ք.Ա. 14-րդ դար)

2. Սաղմոս 29-ը գրեթե նույնն է ինչ Բահադին նվիրված Ուգարտական պոեմը, բացառությամբ աստվածության անվան:

Բ. Ռաս Ծամրայի հնագիտական հայտնագործությունը Ուգարտա քաղաքից, ցույց է տալիս Քանանացիների պոեզիայի և Սաղմոսների միջև եղած նմանությունը:

Գ. Գրական ձևաչափը Իսրայելի ներսում առկա հնագույն ժանր է.

1. Մովսեսի երգը, Ել.15:1-17
2. Մարիամի երգը, Ել.15:21
3. Իսրայելի երգը, Թվոց 21:17-18
4. Դեբորայի երգը, Դատ.5
5. Աննայի երգը, 1 Թագ.2:1-10
6. «Ուղիղ» գրքից Աղեղի երգը, 2 Թագ.1:17-27

Դ. Երեք հիմնական տեսակները.

1. փառաբանության սաղմոսներ – բնորոշվում են «Փառաբանե՛ք Տիրոջը», «երգեցե՛ք Տիրոջը» հրամայական արտահայտությամբ մեկնարկով:
2. ողբի սաղմոսներ – բնորոշվում են «Ով, Տեր» բացականչական մեկնարկով, որին հաջորդում է տրտունջ կամ աղերս
3. իմաստասիրական սաղմոսներ – նման են իմաստասիրական գրականության կարգերին

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Սաղմոսներից շատերի հեղինակները նշված են ըստ ավանդության իրենց վերնագրերում կամ մակագրություններում: Երկու կերպ կարող ենք դիտարկել այս վերնագրերը.

1. դրանք երբայերեն տեքստի մի մասն են կազմում, և հետևաբար կանոնական են: Սակայն, Սաղմոսները, որոնք գտնվել են Մեռյալ Ծովի Գալարներում, չունեն այս վերնագրերն ու մակագրությունները:
2. դրանք ներշնչված հեղինակների կողմից գրված բնագրերը չեն և պետք է դիտարկվեն որպես հնագույն ավանդույթներ և ոչ թե ներշնչված ճշմարտություններ: Կարծես թե դրանցից առնվազն երկուսը հակասում են այլ կանոնական տեքստերի.
 - ա. Սաղմ.34-ի վերնագիրը 1 Թագ.21:10բ-ին
 - բ. Սաղմ. 56-ի վերնագիրը 1 Թագ.21:10-ին
3. ևս մեկ խնդիրն այն է, որ երբայերենի «...ի» վերջածանցը կարող է հասկացվել տարբեր կերպերով.
 - ա. «գրված ... կողմից»
 - բ. «գրված ... համար»
 - գ. «գրված ... ինչ-որ մեկին»
 - դ. «պատկանում է ինչ-որ ժամանակի»
 - ե. «ինչ-որ մեկի առաջնորդության ներքո»

Բ. MT թարգմանության վերնագրերում նշված հեղինակները.

1. Դավիթ, (1 Թագավորաց 16:16-18), (MT) Սաղմոս 73-ի հեղինակը; (LXX) 84-ի հեղինակը; (Vulgate) 53-ի հեղինակը
2. Անանուն – 50 սաղմոսներ; 1, 2, 10, 33, 43, 71, 91, 93-97, 104-107, 118-119, 135, 137, 146-150
3. Ասափ, Դավթի երգչախմբի խմբավարը (1 Մնաց.15:16-17; 16:5), 12 սաղմոսներ. 50, 73-83
4. Կորիսի որդիները, Ղևտացի երաժիշտների ընտանիք (1 Մնաց.9:19; 15:17) 11 սաղմոս. 42-49՝ բացի 43-ից, 84-88՝ բացի 86-ից:
5. Իդիթոմի՝ երգչախմբի ղևտացի խմբավար, (1 Մնաց.16:41-42; 25:1-3; 2 Մնաց.5:12) 3 սաղմոս. 39, 62, 77
6. Սողոմոն, 2 սաղմոս՝ 72, 127. . «գրված ... կողմից», «գրված ... համար», «գրված ... ինչ-որ մեկին», «պատկանում է ինչ-որ ժամանակի» կամ «ինչ-որ մեկի առաջնորդության ներքո»
7. Մովսես, 1 սաղմոս՝ 90
8. Եզրահացիները (1 Մնաց.6:33; 15:17)
 - ա. Եթան՝ Սաղմոս 89 (ոմանք կարծում են Աբրահամ) 1 Մնաց.15:17, 19
 - բ. Եման՝ Սաղմոս 88 (նաև Կորիսի որդիներից) 3 Թագ.4:31; 1 Մնաց.4:31; 15:19

- Գ. Հրեական գրերից պահպանված ավանդույթներ Սաղմոսներ գրքի հեղինակի վերաբերյալ.
1. Բաբա Բաթթա 14բ. «Սաղմոսներ գիրքը գրել է Դավիթը տաս ծերերի օգնությամբ՝ առաջին՝ Ադամի օգնությամբ, Մելքիսեդեկի և Աբրահամի, Մովսեսի, Եմանի, Իդիթոմի և Ասափի ու Կորիսի երեք որդիների հետ»:
 2. Սինեդրիոն 38բ (Թավմուդ) վերագրում է Սաղմ.139-ը Ադամին և Սաղմ.110-ը՝ Մելքիսեդեկին:
- Դ. LXX -ը Սաղմոսները վերագրում է Երեմիային, Եզեկիելին, Անգեին և Չաքարիային (112, 126, 127, 137, 146-149):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Սաղմոսների գրառման տարեթիվը դժվար է որոշել երկու պատճառով.
1. անհատական բնույթի սաղմոսները կապված են հատուկ դեպքերի հետ, որոնք առիթ են եղել հեղինակներին դրանք գրելու
 2. սաղմոսները հավաքագրվել են հինգ գրքերում՝ խմբագրական գործընթացի միջոցով
- Բ. Սաղմոսները ներառում են Իսրայելի կյանքի բոլոր ժամանակահատվածներից պոեմներ.
1. Հրեական ավանդույթն ասում է.
 - ա. Ադամը գրել է Սաղմ. 139
 - բ. Մելքիսեդեկը գրել է Սաղմ. 110
 - գ. Աբրահամը գրել է Սաղմ. 89
 - դ. Մովսեսը գրել է Սաղմ. 90
 2. ժամանակակից գիտությունը սաղմոսները բաժանել է երեք հիմնական ժամանակահատվածների.
 - ա. նախքան գերությունը (I, II և IV գրքերը)
 - բ. գերության շրջանի (III գիրքը)
 - գ. գերությունից հետո (V գիրքը)
- Գ. Ալեհայտ է, որ Սաղմոսներից շատերը վերագրված են Դավթին.
1. Դավիթը երաժշտություն էր գրում, նվագում և երգում, 1 Թագ. 16:16-18
 2. Նա էր Ղևտական երաժշտական խմբերի նախաձեռնողն ու ստեղծողը (Տաճարի երգիչների) 1 Մնաց. 15:1-16:43, 25:1-31; 2 Մնաց. 29:25-30
 3. Սաղմոսների առաջին երկու գրքերը վերագրված են նրան, Սաղմ. 72:20
 4. Նրա Սաղմոսները հայտնվում են ամբողջ գրքի հինգ բաժիններում էլ

VI. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Ա. Գոյություն չունի ընդհանուր թեմա կամ ձևաչափ: Գոյություն ունի.
1. ընդհանուր նախաբան (արդար մարդու հատկանիշները) – Սաղմոս 1 և հավանաբար Սաղմոս 2
 2. գրքերի յուրաքանչյուր հինգ բաժինները նաև ավարտվում են օրհներգությամբ, 41:13; 72:18-19; 89:52; 106:48
 3. ընդհանուր փակման խոսք (օրհներգ) – Սաղմոս 150
- Բ. Հինգ Գրքերի յուրահատկությունները.
1. Գիրք 1 – Սաղմոսներ. 1-41
 - ա. բոլորը, բացի 4 գլուխներից (1, 2, 10, 33), վերագրված են Դավթին
 - բ. ՅԱՀՎԵ Աստծո անունը, գերակշռում է. ՅԱՀՎԵ 273 անգամ, իսկ Էլոհիմ՝ 15
 - գ. հավանաբար Սավուղի հետ Դավթի ընդհարման տարիները

2. Գիրք 2 – Սաղմոսներ 42-72 (72:20 ցույց է տալիս խմբագրին)
 - ա. Սաղմոս 42-49 – Կորիսի որդիներինն է (բացի 43)
 - բ. Էլոհիմը, որպես Աստծո անուն գերակշռում է. Էլոհիմ՝ 164 անգամ, ՅԱՀՎԵ՝ 30
 - գ. հավանաբար Դավթի թագավորական օրերում
3. Գիրք 3 – Սաղմոսներ 73-89
 - ա. Սաղմոսներ 73-83, Ասափ
 - բ. Սաղմոսներ 84-88, Կորիսի որդիները (բացի 86)
 - գ. 26 սաղմոսներ վերագրվում են Դավթին
 - դ. ՅԱՀՎԵն որպես Աստծո անուն նշվում է 44 անգամ, Էլոհիմը՝ 43
 - ե. հավանաբար ասորական ճգնաժամի տարիներին
4. Գիրք 4 – Սաղմոսներ 90-106
 - ա. Սաղմոսներ 101, 103 Դավթինն են
 - բ. Սաղմոս 90՝ Մովսեսինը
 - գ. Բոլոր մյուս սաղմոսները անանուն են
 - դ. ՅԱՀՎԵ անունը կիրառված է 104 անգամ, Էլոհիմը՝ 7
 - ե. հավանաբար Բաբելոնյան ճգնաժամի տարիներին
5. Գիրք 5 – Սաղմոսներ 107-150
 - ա. Սաղմոս 119 ընդարձակ ակրոստիկոս է Աստծո Խոսքի վերաբերյալ
 - բ. ՅԱՀՎԵ՝ 236 անգամ, Էլոհիմ՝ 7
 - գ. Սաղմոսներ 146-150 փառաբանության Սաղմոսներ են, որոնք սկսում են «Փառաբանի՛ր Տիրոջը» խոսքով
 - դ. հավանաբար Աստծո հետագա օրհնությունների հույսի սաղմոսներ

Գ. Սաղմոսների տարբեր համարակալումներ

1. MT MSS
 - ա. Բերախոթ 9բ – Սաղմոս 1 և 2 հաշվում է որպես 1
 - բ. Սաբբաթ 16 – սաղմոսների ընդհանուր թիվը 146 է, որպեսզի համընկնի Հակոբի ապրած տարիների թվի հետ
2. LXX
 - ա. Սաղմոս 9 և 10 միասին կազմում են մեկ ակրոստիկոս սաղմոս
 - բ. Սաղմոս 114 և 115 միասին երկուսն էլ Հալլել Սաղմոսներ /Hallel Psalms/ են
 - գ. Սաղմոս 116 և 147 յուրաքանչյուրը բաժանված է երկու մասի
3. Սաղմոսների թիվը հնարավոր է կապված է առաջին ժողովարանում ամենամյա Մուրբ Գրքի ընթերցանության ցիկլի հետ

Դ. Սաղմոսները խմբավորելու տարբեր կերպերի օրինակներ.

1. ըստ թեմայի կամ նյութի
 - ա. փառաբանության երգեր
 - (1) Աստծուն որպես Արարիչ, 8, 19, 104, 139, 148
 - (2) ընդհանրապես Աստծուն, 33, 103, 113, 117, 134-136, 145-147
 - բ. գոհության երգեր, 9-10, 11, 16, 30, 32, 34, 92, 116, 138
 - գ. ողբեր/սգո երգեր/տրտունջներ
 - (1) հավաքական, 12, 14, 44, 53, 58, 60, 74, 49, 80, 83, 85, 89, 90, 94, 106, 123, 126, 137
 - (2) անհատական, 3-7, 13, 17, 22, 25-28, 31, 35, 38-43, 69-71, 86, 88, 102, 109, 120, 130, 139-143
 - դ. թագավորական երգեր
 - (1) Աստված որպես Թագավոր, 47, 93, 96-99
 - (2) Իսրայելի Թագավորը կամ Մեսիան, 2, 18, 20, 21, 45, 72, 89, 101, 110
 - ե. երգեր Միոնի մասին, 46, 48, 76, 84, 87, 122
 - զ. ուխտի երգեր

- (1) ուխտի նորոգության, 50, 81
- (2) քահանայական օրհնության, 134
- (3) Տաճարի վերաբերյալ, 15, 24, 68

է. իմաստության մասին երգեր, 36, 37, 49, 73, 111, 112, 127, 128, 133
 ը. ՅԱՀՎԵի հավատարմությանը վստահելու երգեր, 11, 16, 23, 62, 63, 91, 121, 131
 թ. սուտ աստվածների և կռապաշտության դատապարտության երգեր, 82, 115

2. ըստ հեղինակի կամ խոսողի.
 - ա. Դավթի երգերը, որտեղ հիմնականում կիրառվում է Աստծո ՅԱՀՎԵ անունը, Սաղմ.1-41
 - բ. Դավթի երգերը, որտեղ հիմնականում կիրառվում է Աստծո Էլոհիմ անունը, Սաղմ.51-72
 - գ. Դավթի Ղևտացի երաժիշտների և երգիչների երգերը
 - (1) Կորիսը և իր որդիները, Սաղմ.42-49, 84-88
 - (2) Ասափը և իր որդիները, Սաղմ.73-83
 - դ. փառաբանողների երգեր, Սաղմ.111-118, 140-150
 - ե. ուխտավորների երգեր, որոնք տոնական օրերին գալիս են Երուսաղեմ երկրպագության, Սաղմ.120-134
3. համաձայն Իսրայելի պատմության մեջ պատմական իրադարձությունների, հիմնված մակագրությունների կամ բովանդակության վրա. Սաղմ.14, 44, 46-48, 53, 66, 68, 74, 76, 79, 80, 83, 85, 87, 108, 122, 124-126 և 129

Ե. Փոխկապակցված Սաղմոսներ

1. Սաղմոս 14 և 53 նույն են, բացառությամբ Աստծո անվան
 - ա. Սաղմոս 14-ում նշվում է ՅԱՀՎԵ անունը
 - բ. Սաղմոս 53-ում՝ Էլոհիմ
2. Սաղմոս 103 և 104 կապված են՝
 - ա. միևնույն բացման և փակման խոսքերով
 - բ. Սաղմ.103 ներկայացնում է ՅԱՀՎԵին որպես Փրկիչ և Ազատագրող
 - գ. Սաղմ.104 ներկայացնում է Էլոհիմին որպես Արարիչ և Պահապան
3. Սաղմոսներ 32 և 51, երկուսն էլ Բերսաբեի հետ Դավթի մեղքի վերաբերյալ են
4. Սաղմոսներ 57:7-11 և 60:5-12 միավորված են Սաղմ.108-ում
5. Սաղմոս 18-ը կրկնվում է 2 Թագ.21:1-51-ում:

Զ. Ինչու 150 Սաղմոսներ 5 Գրքերում

1. հավանաբար 150 սաղմոսները գուցահեռվում են Օրենքի 150 ժողովարանական բաժինների հետ, որոնք հանրորեն ընթերցվում էին շաբաթ օրերին
2. հավանաբար հինգ գրքերը գուցահեռվում են Մովսեսի հինգ գրքերի հետ

VII. ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒԲՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Ա. Երաժշտական տերմինները մակագրություններում կիրառվում են նկարագրելու Սաղմոսների տարբեր տեսակները.

1. *MIZMOR* նշանակում «քաղեյ»: Սրանք այն Սաղմոսներն էին, որոնք նախատեսված էին երգելու և երաժշտական գործիքներով նվագակցելու համար: Գոյություն ունեն այսպիսի 57 սաղմոսներ:
2. *SHIR* վերաբերում է բոլոր տեսակի երգերին: Գոյություն ունեն այսպիսի 30 սաղմոսներ:
3. *MASCHIL* կամ *MASKIL*, որը մատնանշում է հատուկ նշանակության երգերը կամ ուսուցանելու սաղմոսները: Գոյություն ունեն այսպիսի 30 սաղմոսներ:
4. *MITCHTAM* կամ *MITKHTAM* – այս տերմինի նշանակությունն անհայտ է: Հավանական երբրայերեն արմատից ելնելով, այն կարող է նշանակել «ոսկե» կամ «թանկագին». ըստ արքադերեն արմատի վերլուծության, այն կարող է նշանակել «թաքուն» կամ

«չտպագրված»։ համաձայն արաբերեն արմատի վերլուծության, այն կարող է նշանակել «քավող» կամ «ներող»։ Գոյություն ունեն այսպիսի 6 սաղմոսներ։

5. *PALAL* նշանակում է աղոթք։ Այն կիրառվում է նկարագրելու Դավթի Սաղմոսները I & II գրքերում (տես՝ Սաղմոս 72:20)։ Նաև կարելի է այն գտնել Սաղմ.17, 86, 90, 102, 142 և հավանաբար 122 մակագրություններում։

Բ. Երաժշտական տերմիններ, որոնք նկարագրում են Սաղմոսներ երգելը կամ նվագելը

1. *SELAH* կիրառվում է 71 անգամ 39 սաղմոսներում և Ամբակում 3:3, 9, 13-ում։ Դրա նշանակությունն անհայտ է։ Եղել են մի քանի վարկածներ.
 - ա. LXX-ից «դադար» խորհրդածության կամ դրամատիկ էֆեկտների համար
 - բ. Եբրայերեն «բարձրացնել» արմատից, հետևաբար, ձայնի բարձրացում կամ ֆորտե
 - գ. Ռաբբիներն ասում են, որ այն «Ամեն» բառի պես հաստատության խոսք է, որը նշանակում է «հավիտյան»։
2. *SHIGGAION* կամ *SHIGIONOTH* կիրառվում է Սաղմ.7 և Ամբ.3-ում։ Այն ողբ է կամ սգո երգ, որը վիշտ է արտահայտում։ Այն ունի չափազանց զգացմունքային պոետիկ ձևաչափ։
3. *NEGINOTH* կիրառվում է 6 անգամ և Ամբ.3:19-ում։ Այն նշանակում է «լարային գործիքներով»։
4. *SHEMINITH* կիրառվում է երկու անգամ։ Հնարավոր է նշանակում է «օկտավայի վրա» կամ «ութի վրա»։ Այն *ALAMOTH*-ի հակառակն է, հետևաբար գուցե վերաբերում է տղամարդկանց ձայներին (տես՝ 1 Մնաց.15:21)։
5. *ALAMOTH* կիրառվում է 4 անգամ։ Այն վերաբերում է իգական սեռի սուպրանո ձայներին (տես՝ 1 Մնաց.15:20)։
6. *MECHILOTH* կիրառվում է մեկ անգամ։ Նշանակում է «փողային գործիքներով»։
7. *GITTITH* կիրառվում է 3 անգամ։ Նշանակում է «տավիղով»։
8. Գոյություն ունեն մի քանի հատվածներ, որոնք հատուկ կերպով նշում են տոնայնությունները, Սաղմ.9, 22, 45, 53, 56, 57-59, 60, 62, 69, 75, 77, 80 և 88

VIII. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Իսրայելը հավատում էր կյանքն ամբողջովին կապված է Աստծո հետ ուխտի միջոցով։ Սաղմոսները Աստծուն ուղղված մարդու կյանքի խորը զգացողություններն են։

Բ. Իսրայելը հավատում էր մեկ և միակ անձնական, հոգատար Աստծուն։ Հավատքը եկեղեցական կամ կրոնական բնույթի չէ, այլ անձնական և ամենօրյա։ Սաղմոսների բանաստեղծական ոճը օգնում է մեզ արտահայտելու Աստծուն մեր իսկ կրոնական էությունը։ ՀԿ-ի գլխավոր կերպարը Աստված է։

Գ. Հնարավոր է, որ բոլոր Սաղմոսներն էլ սկսում են անձնական հավատքի անհատական արտահայտություններով, որոնք հետագայում կիրառվեցին հավատքի համայնքի կողմից (տես՝ Սաղմ.23; 139, և այլն)։

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տերմիններ և / կամ արտահայտություններ

1. «առանձնացված» (*kadosh*) 4:3 (NASB & NIV)
2. «վստահել» (*emeth*) 4:5 (NASB & NIV)
3. «Քո ճանապարհը հարթիր», 5:8 (NASB & NIV)
4. «գթասարություն» (*hesed*) 6:4 (NIV, «անփոփոխ սեր»)
5. «զղջալ», 7:12 (NIV, «ետ դառնալ»)
6. «մարդու որդի», 8:4 (NASB & NIV)
7. «փրկություն», 9:14 (NASB & NIV)

8. «գուր/փոս», 9:15 (NASB & NIV)
9. «բաժակ», 11:6; 75:8 (NIV, «վինակ»)
10. «արդարություն», 15:2 (NIV, «արդար»)
11. «քերովբե», 18:10 (NIV, «քերովբեներ»)
12. «եղջերուի ոտքերի պես», 18:33 (NIV, «եղնիկի ոտքերի պես»)
13. «փրկիչ», 19:14 (NASB & NIV)
14. «վինակ», 22:18 (NASB & NIV)
15. «մահվան ստվերի ձոր», 23:4 (NASB & NIV)
16. «Քո թևերի հովանու ներքո», 57:1; 91:4 (NASB & NIV)
17. «քուրձ», 69:11 (NASB & NIV)
18. «կյանքի գիրք», 69:28; 139:16 (NASB & NIV)
19. «սայթաքուն տեղեր», 73:18 (NIV, «սայթաքուն հող»)
20. «ամբարիշտների եղջյուրները», 75:10 (NASB & NIV)
21. «բարձր տեղեր», 78:58 (NASB & NIV)
22. «Ռախաբ», 89:10 (NASB & NIV)
23. «կործանել», 118:10,11, 12 (NASB & NIV)
24. «անկյունաքար», 118:22 (NIV, «գլխավոր քար»)
25. «զոհասեղանի եղջյուրներ», 118:27 (NASB & NIV)

Բ. Անձիք




1. Չորքերի Տեր (ՅԱՀՎԵ Սաբբաովթ) NASB, 24:10 (NIV, «Ամենակարող Աստված»)
2. Իդիթոմ, 62 ներածություն (NASB & NIV)
3. Իսմայելացիներ, 83:6 (NASB & NIV)
4. Մեքիսեղեկ, 110:4 (NASB & NIV)

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Սիոն, Սաղմ.2:6
2. Բասան, 22:12
3. Կաղեսքառնեա, 29:8 (NIV, «Կաղես»)
4. Հերմոն լեռ, 42:6 (NIV, «Հերմոնի բարձունքները»)
5. Սելով, 78:60
6. Թաբոր լեռ, 89:12
7. Բել-փեգովր, 106:28 (NIV, «Փեգովրի Բելը»)


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ է Սաղմոս 2-ը համարվում տիեզերական և Մեսիական սաղմոս:
2. Նկարագրեք այն տարբեր փոխաբերությունները, որոնք կիրառվում են Սաղմոս 18:1-2-ում Աստծուն նկարագրելու համար:
3. Թվարկե՛ք Սաղմոս 19-ում գտնվող հայտնության երկու տեսակները և բացատրե՛ք:
4. Ի՞նչ է նկարագրում Սաղմոս 22-ը մարգարեական իմաստով:
5. Բացատրե՛ք Սաղմոս 32 և 51-ի պատմական հիմքը:
6. Ինչի՞ մասին է խոսում Սաղմոս 38-ը (ձեր իսկ բառերով):
7. Բացատրե՛ք Սաղմոս 42:1-ի փոխաբերությունը:
8. Բացատրե՛ք, թե ինչի մասին է խոսում 51:11-12:
9. Ի՞նչ է նշանակում վախենալ Աստծուց: 67:7
10. Կյանքի ի՞նչ խնդրի է առնչվում Սաղմոս 73:
11. Ի՞նչ անսովոր բան կա Սաղմոս 119-ի կառուցվածքում: Ո՞րն է հիմնական թեման:
12. Կյանքի ի՞նչ խնդրի է առնչվում Սաղմոս 139:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԱՌԱԿԱՅ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Եբրայերենում վերնագիրը առաջին յոթ համարներն են և թեման h.7-ը:

Բ. LXX-ում այն կոչվում է «Սողոմոնի առակներ»:

Գ. Վուլգատայում այն կոչվում է «առակների գիրք»:

Դ. Անգլերեն վերնագիրը ծագել է Եբրայերեն *mashal* տերմինից, որը նշանակում է «նման լինել»:
Առակները կարճ էին, մտածելու տեղիք տվող, և սովորաբար երկտող սահմանումներ:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եբրայական Կանոնի «Գրեր» երրորդ բաժնի մի մասն է կազմում:

Բ. Թալմուդը, Բաբա Բաթրա 14բ տալիս է իմաստասիրական գրքերի հերթականությունը հետևյալ կերպ՝ Սաղմոսներ, Հոր և Առակներ: Այս գրքերի հեղինակությունը վերագրում է՝

1. Հորի գիրքը՝ Մովսեսին
2. Սաղմոսները՝ Դավթին
3. Առակները՝ Եզեկիային

Գ. Ռաբբիները պնդում են, որ Սողոմոնը, որը հայտնի էր իր իմաստությամբ, գրել է երեք գիրք.

1. Երգ Երգոցը, երբ դեռ երիտասարդ էր
2. Առակացը, երբ միջահասակ էր
3. Ժողովողը, երբ ծեր էր և դառնացած: Այս ավանդույթը արտահայտվեց LXX-ում այս երեք գրքերը միասին խմբավորելու միջոցով:

III. ԺԱՆՐԸ

Ա. Առակացը իմաստասիրական գրականության մի յուրահատուկ տեսակ է:

Բ. Գոյություն ունեն առակներով ասացվածքների մի քանի տեսակ (տես՝ Քլայդ Ֆրանցիսկո, *Հին Կտակարանի Ծանուցում*, էջ՝ 265 /Clyde Francisco, *Introducing the Old Testament*):

1. պատմական առակներ. սրանք անցյալում հայտնի և նշանավոր առակներ են, որոնք դառնում են ներկայի բացահայտ ճշմարտություններ:
2. փոխաբերական առակներ. սրանք երկտող ասացվածքներ են, որոնք համեմատում են տարբեր երևույթներ.
ա. օգտագործելով համեմատություններ՝ «ինչպես» կամ «նման/պես»
բ. օգտագործելով հակադրություններ
3. առեղծվածներ. սրանք հանելուկներ կամ գլուխկոտրուկներ են
4. այլաբանական առակներ. սրանք ավելի երկար, ավելի զարգացումներով համեմատություններ և հակադրումներ են
5. ուսուցողական՝ հորդոր առակներ. սրանք այնպիսի ճշմարտություններ են, որոնք նախատեսված են երիտասարդ տղաներին պատրաստելու կառավարական կամ առաջնորդական գործի համար

Գ. Առակները Սաղմոսների պես պարունակում են համագործեր՝ զուգահեռներ.

1. հոմանիշ զուգահեռներ – Առակ.8:1

2. հակադրական գուգահեռներ – Առակ.28:1
3. համադրական գուգահեռներ – Առակ.26:1

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Առակացը ըստ ավանդույթի առնչվում է Սողոմոնի հետ, ինչպես որ Սաղմոսները՝ Դավթի: Պատճառն այն է, որ Սողոմոնը հայտնի էր իր իմաստությամբ (տես՝ 3 Թագ.3:12; 4:29-34; 10:1), ինչպես նաև այն փաստը, որ Սողոմոնի անունը նշվում է Առակ.1:1; 10:1 և 25:1-ում:
- Բ. Առակացը Սաղմոսների պես հանդիսանում է խմբագրական հավաքագրման արդյունք: Գոյություն ունեն մատնանշված մի քանի հեղինակներ.
1. Սողոմոն՝ 1:1; 10:1; 25:1
 2. իմաստուն մարդիկ (գիտուններ)՝ 22:17; 24:23
 3. Ագուր՝ 30:1
 4. Լեմուել՝ 31:1
- Գ. Առակացում խմբագրական գործընթացը կարելի է տեսնել 25:1-ում, որտեղ արձանագրվում է, որ Եզեկիայի արքունի մարդիկ հավաքագրեցին Սողոմոնի առակները: Հավանաբար դրանցից շատերը մինչ այդ ժամանակ եղել են բանավոր տեսքով:
- Դ. Գլուխ 30 և 31 գրված են Մասսայից մարդկանց կողմից: Այս տերմինի շուրջ թարգմանիչների միջև տարաձայնություններ կան: Ժամանակակից շատ անգլերեն տարբերակներ այս տերմինը թարգմանում են «խոսքերը» կամ «լուծը»: Ամերիկայի Հրեական Հրատարակչության Ընկերությունը այն թարգմանում է որպես տեղանուն: Այս MASSA տերմինը վերաբերում է Սաուդյան Արաբիայում գտնվող Իսմայելական մի թագավորության (տես՝ Ծննդ.25:14 և 1 Մնաց.1:30):
- Ե. Ակնհայտ նմանություններ կան «Իմաստունների խոսքերը» 22:17-24:22 և «Ամանեմոայի խրատները» թվագրված մոտ Ք.Ա. 1200թ-ին, միջև: Ավելի ընդարձակ քննարկման համար տես Ջոն Հ. Ուոլթոն, *Հնագույն Իսրայելական Գրականությունը իր Նշակույթային Համատեքստում*, /John H. Walton, *Ancient Israelite Literature in Its Cultural Context*, Grand Rapids: Zondervan, 1990. էջ՝ 192-197/:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Այս գրքի տարեթիվն ունի Սաղմոսների պես նույն խնդիրը: Գոյություն ունեն դիտարկվող երկու տարեթիվեր.
1. անհատական առակների գրառման տարեթիվը
 2. դրանք մեկ կանոնավոր գրքի հավաքագրվելու տարեթիվը:
- Բ. Առակներից շատերը գրվել են Սողոմոնի օրոք, հատկապես 10:1-22:6 և 25:1-29:27:
- Գ. Գոյություն ունեն շատ նմանություններ գլուխ 30-ի Ագուրի խոսքերի և Ուգարտայից Ռաս Շամրայի տեքստերի միջև: Այս տեքստերը Ք.Ա. 15-րդ դարից են:
- Դ. Առակաց կանոնավոր գիրքը՝ 1-29 գլուխները, հավաքագրվել են Եզեկիայի օրոք (Ք.Ա. 710-687թթ.): Հետագայում ավելացվել են վերջին երկու գլուխները:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Գրքի վերնագիրը, 1:1-6

Բ. Թեմայի սահմանումը, 1:7

Գ. Իմաստության գովարանություն (անձնավորում), 1:8-9:18

Դ. Սողոմոնի առակները (հակադրական գույգեր), 10:1-22:16

Ե. Իմաստունների խոսքերը (Եգիպտական իմաստության պես), 22:17-24:22

Զ. Իմաստունների այլ խոսքեր, 24:23-24

Է. Սողոմոնի առակները (թեմատիկ), 25:1-29:27

Ը. Ագուրի խոսքերը (պատասխան ազնուստիկ մարդուն), 30:1-33

Թ. Լեմուելի խոսքերը (իր մորից), 31:1-9

Ժ. Աստվածավախ կնոջ գովարանությունը (ակրոստիկոս), 31:10-31

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Չնայած որ հաճախ չի ասվում, սակայն Առակացը հիմնված է միաստվածության անձնավորություն հանդիսացող Աստծո թե՛ ստեղծագործության և թե՛ անհատ հավատացյալների կյանքերում ներգրավված՝ ակտիվ լինելու ենթադրության վրա (տես՝ 1:7; 3:5-6; 9:10; 14:26-27; 19:23):

Բ. Այսպիսի գրականության տեսակը բալանասավորում է (տես՝ Երեմ. 18:18; Եզեկ. 7:26).

1. «Օրենքը» (քահանաները)

2. «Մարգարեները» (մարգարեները)

Այն չի կենտրոնանում Իսրայելի պատմության կամ կրոնի վրա, այլ անհատ իսրայելացու ուրախ, բարոյական և հաջողակ կյանքի վրա:

Գ. Սկզբնապես այն նախատեսված է եղել հարուստ երիտասարդներին դաստիարակելու կառավարական ծառայության կամ համայնքային առաջնորդներ պատրաստելու համար (տես՝ 1:8-9):

Դ. Այն ներշնչված գաղափարներ է հաղորդում ամենօրյա, գործնական, աստվածահաճո կյանքի համար: Այն կարելի է նկարագրել «ձիու գերբնական զգայունություն՝ բնագոյ» արտահայտությամբ:

Ե. Պետք է հիշել, որ Առակացը ճշմարտության ընդհանուր սահմանումներ է տալիս: Դրանք միշտ չէ, որ բացատրում են կամ վերլուծում անհատի խնդիրները կամ իրավիճակները:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԿԱՍ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տերմիններ և/կամ արտահայտություններ.

1. առակներ (*mashal*), 1:1 (NASB & NIV)

2. իմաստություն (*hokmah*), 1:2 (NASB & NIV)

3. Տիրոջ վախը, 1:7 (NASB & NIV)
4. «Իմաստությունը աղաղակում է փողոցներում» 1:20 (NIV, «Իմաստությունը կանչում է փողոցներում»)
5. «պարզամիտներ... ծաղրասերներ... հիմարներ», 1:22 (NIV, «միամիտներ... ծաղրողներ... հիմարներ»)
6. օտար կին, 2:16 (NIV, «շնացող կին»)
7. «նա կենաց ծառ է», 3:18 (NASB & NIV)
8. «Տիրոջը գարշելի է /նողկանք է/», 3:32; 17:15 (NIV, «Տերը զգվում է»)
9. «քո ջրամանից ջուր խմիր», 5:15 (NASB & NIV)
10. «երաշխավոր», 6:1 (NIV, «ապահովագրում»)
11. անարժեք/անօրեն մարդ (*belial*), 6:12 (NIV, «անզգամ»)
12. «Տերն ինձ ուներ Իր ուղու սկզբում», 8:22 (NIV, «Տերն ինձ ծնունդ տվեց որպես Իր գործերի առաջնեկը»)
13. «Դժողքն ու Կորուստը Տիրոջ առջև են», 15:11; 27:20 (NIV, «Մահն ու կործանումը Տիրոջ առջև են»)
14. փրկիչ (*Go'el*), 23:11 (NIV, «ապահապան»)
15. տոկոս, 28:8 (NIV, «չափից շատ շահույթ»)
16. պատգամ (*massa*), 30:1; 31:1 (NASB & NIV)




Բ. Անձիք

1. Եզեկիայի մարդիկ, 25:1
2. Ագուր, 30:1
3. Իթիել, Իթիելլ և Ուբալ, 30:1
4. Լեմուել, 31:1

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ - չկան


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞րն է Եբրայերեն «Իմաստություն» և «գիտություն» բառերի միջև տարբերությունը:
2. Ինչո՞ւ է 1:7-ը այդքան կարևոր:
3. Ինչո՞ւ է իմաստությունը անձնավորված որպես կին:
4. Ո՞րն էր իմաստության դերը ստեղծագործության ժամանակ:
5. Բացատրե՛ք «երկու ճանապարհները» (4:10-19):
6. Բացատրե՛ք 30:7-9-ի աղոթքը:
7. Թվարկե՛ք 21:10-31-ի աստվածավախ կնոջ հատկանիշները:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԺՈՂՈՎՈՂ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Եբրայերեն անունը, ըստ 1:1-ի՝ Երուսաղեմի թագավոր Դավթի որդի «*Qoheleth*-ի Խոսքերը», արտահայտությունն էր: Գրքի հակիրճ վերնագիրը եղավ *Qoheleth*, որը 3 Թագ.8:1-ում կիրառվում էր Սողոմոնի համար: Այն իգական սեռի ածանց է Եբրայերենի *Qahal*՝ «համայնք» կամ «ժողով» բառի համար:

Բ. Գիրքը կոչվեց «Ժողովող», որը LXX-ից լատինացված տարբերակն է: Սա հունարեն «նա, որ ժողով է գումարում» տերմինն է, «կանչել, հավաքել» արմատից:

Գ. *Qoheleth* տերմինը կարող է նշանակել.

1. նա, որ լսարան է հավաքում, հետևաբար, ուսուցիչ, քարոզիչ, բանավիճող, և այլն:
2. հավանաբար փոխաբերորեն այն վերաբերում է ճշմարտություն հավաքողի՝ փիլիսոփայի կամ գիտունի:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Ժողովողը իմաստասիրական գրականության մի տեսակի օրինակ է: Այն իրերի կամ երևույթների ընդարձակ քննարկում է, ինչպես Հոբի գրքում:

Բ. Եբրայական կանոնի «Գրեր» երրորդ բաժնի մի մասն է կազմում:

Գ. Այն նաև հանդիսանում է Մեգիլոթ կամ «հինգ գալարներ» կոչվող հինգ փոքր գրքերի հատուկ խմբավորման մի մասը: Սրանցից յուրաքանչյուրը ընթերցվում էր ամենամյա որևէ տոնի ժամանակ: Ժողովողը ընթերցվում էր Տաղավարահարաց կամ Վրանների տոնի ժամանակ:

Դ. Այս գրքի արմատական բնույթի պատճառով այն մերժված է եղել Շամմայի պահպանողական ռաբբիական դպրոցի կողմից, սակայն պաշտպանվել է Հիլելի ազատական լիբերալ ռաբբիական դպրոցի կողմից: Այս քննարկումը շարունակվել է անգամ մինչև Ջամնիայի օրերը՝ Երուսաղեմի անկումից հետո (մ. թ. 70-90թթ.):

Ե. ՀԿ-ի մի քանի կանոնավոր գրքեր դժվարությամբ են ընդունվել.

1. Ժողովողը – դառը, բացասական, ոչ ավանդական հոգի
2. Երգ Երգոցը – ֆիզիկական սիրո հաստատություն
3. Եսթեր – Աստծո անվան, հրեական Տաճարի կամ տեսարանների բացակայություն
4. Եզեկիել – նրա Տաճարը տարբերվում էր Մովսեսի Տաճարից
5. և ինչ-որ առումով Դանիելի գիրքը – 7-12 գլուխների հայտնության բնույթի մարգարեությունների պատճառով

Զ. Ժողովողը ի վերջո ընդունվեց, քանի որ.

1. այն վերագրվեց Սողոմոնին
2. ունի ավանդական ավարտ՝ ամփոփում,
3. այն հնչեցնում է մարդկային փորձառության ճշմարտություններ և հայտնում է Հրեական համայնքի հետզերության խառնաշփոթ վիճակը

III. ԺԱՆՐԸ

- Ա. Հորի գրքի պես Ժողովողը պետք է մեկնաբանվի որպես մի ամբողջություն: Այն մինչև 12 գլուխը իր մեջ խայթող հեզնանք է պարունակում:
- Բ. Այն անհարգալի՝ հեզնական կերպով է դիտարկում կյանքն առանց Աստծո: Կենտրոնական արտահայտությունը «արևի տակ» խոսքն է՝ 1:3,9,14; 2:11,17,18,19,20,22; 3:16; 4:1,3,7,15; 5:13,18; 6:1,5,12; 7:11; 8:9,15,17; 9:3,6,9,11,13; 10:5; 11:7; 12:2 (31 անգամ):

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն անանուն է:

- Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ այն Սողոմոնի կողմից գրված երեք գրքերից մեկն է (Midrash Shir hasherem Rabbah I, 1, sec.10)
1. Երգ Երգոցը, երբ նա դեռ երիտասարդ էր
 2. Առակացը, երբ միջին տարիքում էր
 3. Ժողովողը, երբ ծեր էր և դառնացած
- Գ. Անշուշտ 1-2 գլուխները գրական առումով պատկանում է Սողոմոնին՝ նրա իմաստության, հարստության և դիրքը պատճառով: Սակայն այստեղ կան մի քանի ակնարկներ, որոնցից կարելի է հասկանալ, որ նա չէ իրական հեղինակը.
1. 1:12-ում, «Ես՝ ... Իսրայելի թագավոր էի» (NIV) – անցյալ ժամանակով
 2. 1:16-ում, «... ես ավելի մեծ եմ ... քան բոլոր նրանք, որ ինձնից առաջ եղել են Երուսաղեմում» (NASB) – միայն Դավիթն էր եղել Սողոմոնից առաջ
 3. 4:1-3, 5:8 և 8:9-ում քննարկվում է կառավարական չարաշահումները, սակայն որպես անհույս վիճակում գտնվող
 4. Սողոմոն անունը այլևս գրքում չի հայտնվում
- Դ. Սողոմոնի հեղինակության շուրջ գիտական բանավեճերի համար կարդացեք Ս. Ֆ. Քեյլի *Հին Կտակարանի Ներածություն*, հատոր 1, էջ՝ 516-529 /C. F. Keil, *Introduction to the Old Testament*/:
- Ե. Բարա Բաթրա 15ա ասում է, որ Եզեկիայի մարդիկ են գրել Առակացը, Ժողովողը և Երգ Երգոցը, սակայն ըստ երևույթին այս ասելով նրանք նկատի են ունեցել, որ նրանց կողմից խմբագրվել կամ հավաքագրվել են իմաստասիրական գրքերը:
- Զ. *Qoheleth* տերմինը կարող է լինել հատուկ անուն կամ տիտղոս: Այն նման է տիտղոսի, քանի որ.
1. ունի որոշիչ հոդ 7:27 և 12:8-ում
 2. իզական սեռով է տրված, որը ենթադրում է պաշտոն, սակայն կիրառում է արական սեռի բայեր,
 3. սա հազվադեպ տերմին է, որը միայն յոթ անգամ է հանդիպում և այն էլ միայն այս գրքում:
- Է. Գրքի միակ հատվածը, որը հայտնում է հեղինակի կամ հետագա խմբագրի մասին, 12:9-14 է: Ըստ երևույթին նա եղել է իմաստության գիտուն ուսուցիչ:
- Ը. Ակնհայտ պարադոքսները կամ հակասությունները բացատրվել են որպես.
1. հեզնանք՝ կյանքն առանց Աստծո («արևի տակ եղող...»)
 2. ավանդական հրեական իմաստություն և դրա մարտահրավերները (մեջբերվում էին բանավեճերի համար)

3. իմաստության ուսուցիչը, նրա աշխույժ երիտասարդ աշակերտը և պատմիչը (երկխոսություն)
4. մեղավոր մարդու ներքին կոնֆլիկտը (կյանքի օրագիր)
5. հետագա խմբագիրները, օրինակ, 12:9-12 (*Qoheleth*-ի հանդեպ դրական) և 12:13-14 (*Qoheleth*-ի հանդեպ բացասական):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Ժողովողի տարեթվի հետ կապված ունի երկու հարց կա.

1. Ե՞րբ է շարադրվել գիրքը,
2. Ե՞րբ է բերվել իր վերջնական կանոնավոր տեսքին:

Բ. Պատմական միջավայրը պետք է որ լիներ Սողոմոնից հետո: Նա հանդիսանում է 1-2 գլուխների գրական կերպարը:

Գ. Գրքի վերջնական տեսքը մատնացույց է անում ավելի ուշ ժամանակի՝ տարեթվի.

1. Եբրայերենի լեզվական ոճը հետզերության շրջանի է, սակայն նախքան Ք.Ա. 400-300թթ. ա. Արամերեն բառերը և արտահայտությունները բ. Եբրայերենի շարահյուսությունը
2. կան գրական գուգահեռներ Փյունիկյան իմաստասիրական գրականության մեջ, մոտ Ք.Ա. 600-400թթ-ի:
3. Մեռյալ Ծովի Գալարներում (4Q) գտնված Բեն Սիրաքի *Շողովողի* գրքում հայտնվում են Ժողովողից որոշ ակնարկներ: Սրանք թվագրվում են Ք.Ա. երկրորդ դարի հնության գրքեր:

VI. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Այս գիրքը դժվար է ուվագծել: Այն ավելի շուտ նման է կյանքի օրագրի, քան կազմավորված գրական աշխատության: Այն նման է «մարգարիտներ լարի վրա» կոչվող ռաբբիական ուսմունքին: Այնուամենայնիվ այս գրքում կան համադրված շարժառիթներ՝ նպատակներ, եթե ոչ՝ համադրելի թեմաներ:

Բ. Շատ հավանական է, որ եղել են խմբագրական հավելումներ.

1. բացման խոսքը, 1:1
2. 1:2 և 12:8 խոսքերը ակնարկում են, որ 1:1 և 12:9-14 հավելումներ են
3. երկու ավելացված վերջաբաններ՝ ա. 12:9-12 (երրորդ դեմքով) բ. 12:13-14 (ավանդական աստվածաբանություն)

Գ. Ակնհայտ է, որ 1-2 գլուխները խոսում են Սողոմոնի մասին, որպես գրական կերպարի:

Դ. Գլուխ 3-ը հրաշալի բանաստեղծություն է մարդու կյանքի ընդհանուր փորձառությունների վերաբերյալ:

Ե. Մնացածը հեշտ չէ ուրվագծելը՝ կոնսպեկտելը:

VII. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա. Կանոնի մեջ այս գրքի հենցը ներկայությունը կարծես թե ենթադրում է, որ Աստված չի մերժում անկեղծ, կասկածամիտ փնտրողին:

- Բ. Վերջնական հարցեր տալը չի հիասթափեցնում:
- Գ. Ժողովողը ընդունում է Աստծո գոյությունը և գրված է ՀԿ-յան հավատքի հունով:
- Դ. Չարը մարդու պատճառով է, և ոչ թե Աստծո (տես՝ 7:29; 9:3)
- Ե. Աստծո ճանապարհները հնարավոր չէ ճանաչել: Մարդը պետք է պայքարի կյանքի իմաստի՝ նպատակի համար:
- Չ. Ուղղափառ հայացքներով հանդերձյալ կյանքի վերաբերյալ կասկածը և Աստծուն լիովին ճանաչելու մարդու ունեցած կարողության շուրջ կասկածը. մինչդեռ Աստված գթառատ է:
- Է. Աշխարհն իր տեսակով անարդար և դաժան է, պետք է որ ավելին լինի:
- Ը. Գոհացի՛ր կյանքից, այն Աստծուց է տրված: Վայելի՛ր այն երբ և որտեղ կարող ես (2:24):
- Թ. Պարզ պատասխանները, որոնք չեն համապատասխանում կյանքի փորձառություններին, դրանք «ոչ» պատասխաններն են: Մենք պետք է առերեսվենք կյանքի ունայնության իրականության հետ, եթե Աստված չկա:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Այս գրքի հիմնական նպատակն է ցույց տալ առանց Աստծո մարդու գոյության ունայնությունը: Այն մի փոքրիկ բուկլետ է ինքնաբավ նյութապաշտներին ու մտավորականներին դարձի բերելու համար: Բ. Հ. Քերրոլն ասում էր, որ իր անապաշխար օրերին Ժողովողի և Հոբի գրքերը աներևակայելի մեծ ազդեցություն են թողել իր վրա՝ ցույց տալով կյանքի դատարկությունն ու մատնացույց անելով Աստծուն:
- Բ. Ուրախությունն ու գոհունակությունը գտնվում են (2:24;3:12-13,22;5:18-20;8:15; 9:7-9;12:13-14).
 1. Աստծո հանդեպ ունեցած հավատքի և հնազանդության մեջ,
 2. ընտանիքի և տան հաճույթների մեջ,
 3. մարդու աշխատանքի մեջ:
- Գ. Այս գիրքը Աստծո և հանդերձյալ կյանքի վերաբերյալ ազնուստիկ մոտեցում ունի: Այն չի պատասխանում վերջնական իրականության հարցերին, այլ միայն ներկայիս իրականության.
 1. Հրեաների համար, այն ցույց է տալիս պարզունակ չափազանցությունների սխալը, որոնք կատարում են ավանդական աստվածաբանները ("երկու ճանապարհները»)
 2. Հեթանոսների համար այն ցույց է տալիս առանց Աստծո երկրավոր կյանքի սնանկությունը:
 3. Կյանքի հարցերին տրված հեշտ պատասխանները ընդհանրապես սխալ են լինում: Նույնիսկ հավատքը առեղծվածային է: Հայտնությունն էլ ամեն ինչ չէ, որ հայտնում է:
- Դ. Այս գրքի հեղինակը կյանքը վերլուծելու համար կիրառել է բնական և ոչ թե հատուկ հայտնություն: Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵՆ, գրքում արձանագրված չէ: Բոլոր իմաստասիրական գրքերի պես այստեղ էլ կիրառվում է Աստծո ընդհանուր անունը:
- Ե. Այս գիրքը հավասարակշռության է բերում Առակացի մաքրամաքուր ասացվածքները, որոնք առաջարկում են հաջողակ կյանք: Կյանքը, բնությունը, մարդը, Աստված առեղծվածային են: Գաղտնիքը ոչ թե գիտության, այլ հավատքի մեջ է. ոչ թե ունեցվածքի, այլ՝ ընտանիքի, և ոչ թե մարդու, այլ՝ Աստծո մեջ: Կյանքի պարզագույն հաճույքները՝ ընտանիքը, աշխատանքը,

ընկերները, սնունդը այս կյանքում ուրախություն են ապահովում: Հաջորդ կյանքը քողարկված է, սակայն Աստված է այնտեղ:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «ունայնություն ունայնության» 1:2 (NIV, «անիմաստություն, անիմաստություն»)
2. «արևի ներքո/տակ» 1:3 (NASB & NIV)
3. «շատ իմաստության մեջ շատ վիշտ կա» 1:18 (NIV, «քանի որ շատ իմաստության հետ շատ տխրություն է գալիս»)
4. «հասկացա, որ նրանց երկուսին էլ միննույն դիպվածն է սպասում» 2:14 (NASB & NIV)
5. «Նա նաև հավերժությունը դրեց նրանց սրտում» 3:11 (NASB & NIV)
6. «Աստված նրանց բացահայտելու է...» 3:18 (NASB & NIV)
7. «այդ երկուսից ավելի լավ է նա, որ բնավ գոյություն չի ունեցել...» 4:2-3 (NIV, «այս երկուսից ավելի լավ է նա, որ բնավ չի եղել»)
8. «վախեցիր Աստծուց» 5:7 (NIV, «կանգնիր Աստծո երկյուղի մեջ»)
9. «արծաթ սիրողն արծաթից չի կշտանալու» 5:10 (NASB & NIV)
10. «խիստ շատ արդար մի՛ լինիր, ոչ էլ քեզ չափից ավելի իմաստուն համարիր» 7:16 (NASB & NIV)
11. «փոս փորողն ինքն է ընկնում դրա մեջ» 10:8 (NASB & NIV)
12. «քո հացը նետիր ջրերի երեսին, քանի որ շատ օրեր անց այն գտնելու ես» 11:1 (NASB & NIV)




Բ. Անձիք

1. Ժողովող /Qoheleth/, 1:1
2. պահապանները, 12:3-4 (NIV, «տան պահապանները»)
3. մեկ Հովիվ, 12:11
4. որդի՛ս, 12:12

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ – չկան


XI. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է այս գրքի ընդհանուր նպատակը:
2. Ինչո՞ւ է Սողոմոնը 1-2 գլուխների գրական կերպարը:
3. Ինչո՞վ է մարդը նման կենդանիներին և ինչո՞վ է տարբերվում: 3:12-22
4. Կարո՞ղ ենք մենք ճանաչել Աստծուն:
5. Որտե՞ղ կարելի է գտնել ուրախություն:
6. Ու՞մ էր գրված այս գիրքը և ինչու:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Այս գիրքը, ինչպես և բոլոր ՀԿ-յան գրքերը, սկզբնապես վերնագրված է եղել գրքի առաջին մի քանի խոսքերի հիման վրա: Երբայերենում առաջին խոսքերը հետևյալն են. «Երգ երգոց, որ Սողոմոնինն են», որը դրված է երբայերենի գերադրական աստիճանով: Այստեղից կարելի է ենթադրել, որ այն թագավորական սիրո երգերից լավագույնն է:

Բ. Այս գիրքը Վուլգատայում նաև հայտնի է որպես «Գովաբանություններ» (*canticum canticorum*)

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Քանի որ այս գիրքն ունի անսովոր բովանդակության, այն դժվարությամբ է կանոնավոր գրքի կարգավիճակ ստացել.

1. Շամմայի ռաբբիական դպրոցը (պահպանողական) դեմ էր գրքի կանոնավոր լինելուն
2. Հիլլելի ռաբբիական դպրոցը (ազատական) հաստատեց գրքի կանոնավոր լինելը
3. Չամնիայի (մ.թ. 90) ռաբբիական խորհրդի ժամանակ գիրքը դեռևս քննարկվում էր և արպես կանոնավոր գիրք հարցականի տակ էր
4. Ռաբբի Աբիբայի առաջնորդության օրոք գիրքն ի վերջո ընդունվեց որպես կանոնավոր: Նա այս գրքի մասին ասում է. «Երգ Երգոց գրքի Իսրայելին տրվելու օրից ավելի արժեքավոր օր չկա աշխարհում, քանի որ եթե գրերը սուրբ են, ապա Երգ Երգոցը սրբության սուրբն է»:

Բ. Այն հանդիսանում է Երբայերեն Կանոնից Գրեր բաժնի *Մեգիլոթ* (հինգ գալարները) կոչվող մասնագիտացված գրքերի ցանկի առաջին գիրքը: Դրանցից յուրաքանչյուրը ընթերցվում էր ամենամյա տոներից մեկի ժամանակ: Երգ Երգոցը ընթերցվում էր Չատկի Տոնին.

1. Երգ Երգոց – Չատիկ
2. Հռութ – Պենտեկոստե
3. Ժողովող – Տաղավարահարաց
4. Եսթեր – Փուրիմ
5. Ողբ Երեմիա – Երուսաղեմի անկումը և Սողոմոնի Տաճարի կործանումը

Գ. Երբայական Կանոնի Գրեր բաժինը Երգ Երգոց գիրքը դնում է Սաղմոսներից, Առակացից և Հոբից հետո, Հռութից, Ողբ Երեմիայից, Ժողովողից և Եսթերից առաջ: Անգլերեն /հայերեն/ Աստվածաշունչը հետևում է LXX տարբերակի հերթականությանը:

III. ԺԱՆՐԸ

Ա. Գրքի մեկնաբանության համար ժանրը հիմնական հարցն է: Ժանրը բնագրի հեղինակի մտադրությունը հասկանալու կարևորագույն մասն է: Գիրքն ամբողջությամբ գրված է բանաստեղծական՝ չափածո ձևաչափով:

Բ. Տեսություններ՝

1. Հրեական պեդոգրիաներ՝ այլաբանություններ – Միշնա, Թալմուդ և Թարգումա, բոլորն էլ հաստատում են, որ այս գիրքը նկարագրում է հրեաների պատմությունը՝ Իսրայելի հանդեպ Աստծո տածած սիրո տերմիններով: Իսրայելը ՅԱՀՎԵի հարսանցուն է (տես՝ Ել.34:15-16; Ղևտ.17:7; 20:5-6 և Թվոց 14:33):

2. Քրիստոնեական այլաբանություն – Օրիգանուսը, Ջերոմը, Աթանասիուսը, Օգոստինոսը, Թոմաս Աքինասը և Լյութերը հաստատում են, որ այս գիրքը նկարագրում է եկեղեցուն Քրիստոսի սիրո տերմիններով: Հանախ Եփես.5:21-31-ը տրվում է որպես գուգահեռ հատված:
 3. Ավանդական Ամուսնական Երգեր – Բավական նմանություններ կան այս գրքի և մոտ Ք.Ա. 600թ-ի Սիրիայի սիրո պոեմների միջև, որոնք հայտնի են որպես *wasf*-եր: Հարսնացուն և փեսացուն փոխանակվում են հանդյախոսություններով, միմյանց կոչելով «թագավոր» և «թագուհի»: Նաև կան որոշ նմանություններ եգիպտական սիրային պոեմների հետ, որտեղ սիրեցյալը կոչվում է «քույր» (4:9-10, 12; 5:1-2): Հնագույն Մերձավոր Արևելքում նմանատիպ գրականությունը, որը գովաբանում էր հավատարիմ, ճիշտ ժամանակի մեջ մարդկային սերը, շատ հայտնի էր:
 4. Դրամա /թատերգություն/
 - ա. Գիրքը դրամա է, որը պետք է խաղալ մի քանի դերասաններով.
 - (1) Թագավորը
 - (2) մի հյուսիսային գեղջկուհի,
 - (3) մի հյուսիսային տեղացի սիրեցյալ,
 - (4) երգչախումբը կամ հարեմ («Երուսաղեմի աղջիկները»)
 - բ. այս բեմականացման օրինակը կարելի է լուսաբանել գլուխ 1-ից.
 - (1) հհ. 2-4բ, հարսնացուն,
 - (2) հ. 4գ-ե, երգչախումբը (տես՝ 2:7; 3:6-11; 5:9; 6:1,13; 8:5,8)
 - (3) հհ.5-7, հարսնացուն
 - (4) հ. 8, երգչախումբ
 - (5) հհ. 9-10, փեսան
 - (6) հ.11, երգչախումբ
 - (7) հհ.12-14, հարսնացուն
 - (8) հ. 15, փեսան
 - (9) հհ.16-17, հարսնացուն
 - գ. Հյուսիսային տղա ընկերոջ տեսությունը հիմնված է հետևյալ
 - (1) սիրեցյալը կոչվում է հովիվ, որը հետևում է ոչխարներին
 - (2) գիրքն ավարտվում է հյուսիսում և ոչ թե Երուսաղեմում
 - (3) հարեմը քննադատվում է, 6:8-9
 - դ. *Մինայտիկոս* հունարեն ձեռագիրը յուրաքանչյուր բաժնի համար ունի ենթավերնագրեր, որոնք առնչվում են հարսին և փեսային:
 5. Առակ – Այս տեսությունը փորձում է համադրել տառացին և այլաբանականը: Այն լուրջ է մոտենում մարդու սեռական կյանքի ուրախությանը՝ վայելքին և միակնության ենթատեքստին: Այնուհանդերձ այն կարծես թե լինի Իսրայելին վերաբերող օրինակ:
 6. Տառացի – Այս տեսությունը հաստատում է աստվածատուր մարդկային սեռական կյանքի ասպեկտները: Այն գրքին հաղորդում է անվանական արժեք: Այս տեսակետը պաշտպանվել է Թեոդոր Մոզեսթացու (Theodore of Mosestia) կողմից՝ Անտիոքի թարգմանչական դպրոցի ամենապայծառ դեմքերից մեկը:
- Գ. Այս գիրքը տիպիկ իմաստասիրական գրականություն չէ, չնայած կարող է կատարել միևնույն գործառույթը՝ խրատել երիտասարդներին: Այն կարծես թե ունի բարոյական ուղղվածություն՝ կապված եզակի ամուսնության և մաքրության, ճիշտ ժամանակի մեջ, ճիշտ մարդու հետ կապված սեռական կյանքին:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Բարա Բայթրա 15ա ասում է, որ Եզեկիան և նրա մարդիկ են գրել այս գիրքը: Ըստ երևույթին «գրել են» նշանակում է հավաքագրել կամ խմբագրել են և ոչ թե հեղինակն են հանդիսանում (տես՝ Առակ.25:1):
- Բ. Հրեական ավանդույթը միշտ պնդել է, որ գիրքը գրել է Սողոմոնը.
1. նրա անունը հայտնվում է 1:1,5; 3:7,9,11; 8:11,12-ում
 2. «Թագավորը» տերմինը հայտնվում է 1:4,12; 7:5-ում
 3. Եզիպտական ձիերի մասին է հիշատակվում 1:9-ում, որը համապատասխանում է Սողոմոնի թագավորության ժամանակաշրջանին (տես՝ 3 Թագ. 10:28):
 4. հեղինակը նշել է աշխարհագրական տեղանքներ, որոնք գտնվում են Պաղեստինում, Սիրիայում և տրաստորդանանյան տարածաշրջանում, նույնիսկ մինչև Արաբիա: Սա արտացոլում է Սողոմոնի թագավորության աշխարհագրական սահմանները:
 5. Ռաբբիներն ասում են, որ երբ Սողոմոնը երիտասարդ էր, գրում էր սիրո երգեր (Երգ Երգոց գիրքը), երբ տարեց էր՝ գրեց առականեր (Առակաց գիրքը), իսկ երբ ծերացավ՝ գրեց ամեն բանի ունայնության մասին (Ժողովողի գիրքը):
- Գ. Մի քանի վարկածներ Սողոմոնի հեղինակ հանդիսանալու դեմ.
1. Եբրայերենով «Սողոմոնի Երգ Երգոց» վերնագիրը կարող է նշանակել.
 - ա. Սողոմոնի կողմից,
 - բ. Սողոմոնի համար,
 - գ. Սողոմոնի մասին,
 - դ. Սողոմոնի օրոք,
 - ե. Սողոմոնի ոճով:
 2. Գիրքն ավարտվում է հյուսիսային Իսրայելում (7:10-13) և ոչ թե Երուսաղեմի հարեմում:
 3. Գիրքը կարծես հաստատում է միակնության սեռական կյանքի ուրախությունը, լիարժեքությունն ու բերկրանքը, որը չի համապատասխանում Սողոմոնի կյանքին:
 4. Սողոմոնը հնարավոր է հանդիսանում է միայն Երգ Երգոցի գրական կերպարը՝ փայլաթիթեղը, ինչպես որ Ժողովող 1-2-ում է (Ի. Ջ. Յանգ, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 268 /E.J. Young, *An Introduction to the Old Testament*):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. ՀԿ-յան իմաստասիրական շատ գրքերի պես այս գրքի համար էլ գոյություն ունի թվագրման երկու տեսակետ.
1. բուն պատմական միջավայրը
 2. Կանոնի մեջ հայտնված գրքի տարեթիվն ու տեսակը
- Բ. Պատմական միջավայրը.
1. Սողոմոնի օրոք.
 - ա. բազմաթիվ կանայք ունենալու թագավորի իշխանությունը,
 - բ. որպես կրկներգ ներկայացված հատվածներում հարեմի ներկայությունը
 - գ. իրարից չափազանց տարբերվող աշխարհագրական տեղանքների իմացությունը (ինչպես նաև կենդանիների և բույսերի):
 - դ. Երուսաղեմը Թերսայի հետ գուգահեռելիս, որը նախքան Սամարիան եղել է Իսրայելի մայրաքաղաքը (Ամրի), 6:4
 2. Գրքի վերջնական տեսքը.
 - ա. իգական սեռի հարաբերական մասնիկով քերականական ձևը ավելի ուշ Եբրայերեն է (տես՝ 1:12; 2:7)

բ. Արամներեն և հունարեն բառերի կիրառությունը.

- (1) դրախտ
- (2) պտղատու այգի
- (3) անկողին
- (4) մահիճ՝ կանապե

Գ. Ժամանակակից գիտությունն ունի տարածայնություններ.

1. Ի. Չ. Յանգ – Սողոմոնի օրոք
2. Վ. Ֆ. Օլբրայթ – Զ.Ա. 5-րդ կամ 4-րդ դար
3. Ռ. Կ. Հարրիսոն – անմիջապես գերությունից առաջ վերջնական տեսք ունեք

VI. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Գիրքն ունի մի քանի խրթին կողմեր: Ինչ-որ մեկը հնարավոր է հարցնի արդյո՞ք գիրքն ունի ընդհանուր թեմա կամ նպատակ, թե պարզապես սիրային բանաստեղծությունների մի շարք է:

Բ. Հետևյալ համարները դժվար են մեկնաբանել ընդհանուր թեմայի լույսի ներքո.

- | | |
|---------|-----------|
| 1. 2:15 | 3. 8:5բ-ե |
| 2. 5:7 | 4. 8:8-9 |

Գ. Գիրքը մեկ ընդհանուր թեմայի շուրջ մեկնաբանելու միակ կերպը երեք անձով և երգչախումբով դրամատիկ սցենար առաջադրելն է.

1. թագավորը
2. հյուսիսային երկրամասի աղջիկը
3. հյուսիսային երկրամասի սիրեցյալը
4. հարեմը որպես երգչախումբ

Դ. Այս գիրքը, Եսթերի պես, չի պարունակում Աստծո անուններից որևէ մեկը (8:6 թարգմանված է «բոցավառ կրակ») Ամերիկյան Հրեա Հրատարակչության Ընկերության թարգմանության մեջ):

VII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ակնհայտ է, որ այս գիրքն արտահայտում է մարդկային սիրո՝ սեռական կյանքի, մաքրությունն ու գեղեցկությունը, 8:6-7: Սա կարծես թե դրա հաստատությունն է, սակայն (1) Դավթի սեռական մեղքի և իր ընտանիքում դրա հետևանքների լույսի ներքո, և (2) իր ծեր տարիքում իր օտար կանանց պատճառով Սողոմոնի կռապաշտության լույսի ներքո. այս գիրքը անհրաժեշտություն էր:

Հունական կրոնական դուալիզմի լույսի ներքո, այս ճշմարտությունը անշուշտ մեր օրերում էլ անհրաժեշտություն է: Հոգևորությունը պայմանավորված չէ խստակեցությամբ (ասկետիզմով): Ֆիզիկականն իր էությամբ չարիք չէ:

Բ. Շատերն այս գիրքը դիտարկել են ՀԿ-յան այլաբանության լույսի ներքո, որտեղ Աստված որպես ամուսինն է, իսկ Իսրայելը՝ կինը (այսինքն՝ Ելիցի և Ովսեա 1-3-ի ռաբբիական մեկնաբանությունը):

Գ. Ժանրը և հիմնական նպատակը հասկանալու դժվարությունը ստիպում է մեզ զգուշանալու դոգմատիկ մեկնաբանություններից:

Դ. Գիրքը չունի կրոնական կամ ազգային թեմաների ակնարկներ: Սա շատ անսովոր է որևէ կանոնավոր գրքի համար:

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ/ արտահայտություններ

1. «խունկ» 1:13; 3:6; 4:6,14; 5:1,5,13 (NASB & NIV)
2. «փոքրիկ աղվեսներ», 2:15 (NASB & NIV)
3. «գիշերվա վախեր», 3:8 (NASB & NIV)
4. «թագուհիներ... հարճեր», 6:8,9 (NASB & NIV)
5. մանրագործներ, 7:13 (NASB & NIV)
6. կնիք, 8:6 (NASB & NIV)
7. նա պարիսպ է, 8:9 (4:12) (NASB & NIV)

Բ. Անձիք




1. «թագավորը», 1:4բ, 12
2. «Ես սև եմ, բայց գեղեցիկ», 1:5 (NIV, «Մուգ եմ, մինչդեռ գեղեցիկ»)
3. «որտեղ է արոտավայր գտնում քո հոտը...» 1:7 (NIV, «...արածեցնում...»)
4. «Ես Սարոնի վարդն եմ, հովիտների շուշանը», 2:1
5. «Երուսաղեմի աղջիկներ», 2:7
6. պահապաններ, 3:3; 5:7
7. «ո՛վ Սուլամիթ», 6:13

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Են-գադդի, 1:14
2. Սարոն, 2:1
3. Լիբանան, 4:8
4. Հերմոն լեռ, 4:8
5. Թերսա, 6:4
6. Գաղաադ, 6:5 (Գաղաադ լեռ, 4:1)
7. Դամասկոս, 7:4
8. Կարմեղոս լեռ, 7:5


X. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ է գիրքը գտնվում կանոնում:
2. Այս գրքի մեկնաբանությունը հենց հրեաների գերակշիռ մասի կողմից ինչպիսի՞ն է: Ինչո՞ւ:
3. Գրականության ինչպիսի՞ ժանր է կիրառված: Ինչո՞ւ է սա տարբերություն առաջացնում:
4. Ինչո՞ւ Աստծո անունը կամ Իսրայելի պատմությունը երբեք չեն ակնարկվում այս գրքում:
5. Արդյո՞ք գիրքն ունի ընդհանուր թեմա:
6. Ովքե՞ր են «Երուսաղեմի աղջիկները»:
7. Թվարկե՞ք պատմության մեջ տեղի ունեցող իրադարձությունների տարբեր տեղանքները:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Բացման խոսքեր.

1. Հավատացյալ համայնքը համաձայն չէ մարգարեության մեկնաբանության կերպերի հետ: Դարեր շարունակ որպես ուղղափառության գործառույթ բազմաթիվ նշնարտություններ են հաստատվել, սակայն ոչ այս մեկը:
2. Գոյություն ունեն ՀԿ-յան մարգարեության համար գեղեցիկ գատորոշված փուլեր.

ա. նախամիապետական.

- (1) մարգարեներ կոչվող անհատներ.

(ա) Աբրահամ – Ծննդ.20:7

(բ) Մովսես – Թվոց 12:6-8; 2 Օր.18:15; 34:10

(գ) Ահարոն – Ելից 7:1 (Մովսեսի խոսնակը)

(դ) Մարիամ – Ելից 15:20

(ե) Մովհադ և Էլիադ – Թվոց 11:24-30

(զ) Դեբորա – Դատ.4:4

(է) անանուն – Դատ.6:7-10

(ը) Սամուել – 1 Թագ.3:20

- (2) հատվածներ մարգարեների խմբերի մասին – 2 Օր.13:1-5; 18:20-22

- (3) մարգարեական խումբ կամ միաբանություն – 1 Թագ.10:5-13; 19:20; 3 Թագ.20:35,41; 22:6,10-13; 4 Թագ.2:3,7; 4:1,38; 5:22; 6:1, և այլն:

- (4) Մեսիան` մարգարե կոչված – 2 Օր.18:15-18

բ. գրի չառնող միապետականներ (նրանք դիմում էին թագավորին).

- (1) Գադ – 1 Թագ.22:5; 2 Թագ.24:11; 1 Մնաց.29:29

- (2) Նաթան – 2 Թագ.7:2; 12:25; 3 Թագ.1:22

- (3) Աքիա – 3 Թագ.11:29

- (4) Հեու – 3 Թագ.16:1,7,12

- (5) անանուն – 3 Թագ.18:4,13; 20:13,22

- (6) Եղիա – 3 Թագ.18 – 4 Թագ.2

- (7) Միքիա – 3 Թագ.22

- (8) Եղիսե – 4 Թագ.2:8,13

- գ. դասական գրող մարգարեները (նրանք դիմում են ազգին, ինչպես նաև թագավորին) – Եսայի – Մադաքիա (բացի Դանիելից)

Բ. Աստվածաշնչյան տերմիններ

1. *Ro'eh* = «տեսանող», 1 Թագ.9:9: Այս հատվածն ինքնին ցույց է տալիս *Nabi* տերմինի թարգմանությունը: *Ro'eh* «տեսնել» ընդհանուր տերմինից է ծագել: Այս անձնավորությունը հասկանում էր Աստծո ճանապարհներն ու ծրագրերը և իր հետ խորհրդակցում էին որևէ հարցի շուրջ Աստծո կամքի հաստատման համար:

2. *Hozeh* = «տեսանող», 2 Թագ.24:11: Այն հիմնականում *Ro'eh* բառի հոմանիշն է: Այն ծագել է «տեսնել» տերմինի ավելի հազվադեպ տարբերակից: Ածանցավոր ձևը ավելի հաճախ է կիրառվում մարգարեների մասին խոսելիս:

3. *Nabi* = «մարգարե», Աքքադերենի *Nabu* բայի` «կանչել», և արաբերենի *Naba'a*` «հայտարարել» բայի համանման տերմինը: Սա Հին Կտակարանում մարգարեի համար կիրառվող ամենատարածված տերմինն է: Այն կիրառվել է ավելի քան 300 անգամ: Ճշգրիտ ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն «կանչել» բայը ներկայումս լավագույն տարբերակն է: Հավանաբար լավագույն հասկացությունը բխում է Մովսեսի Փարավոնի հետ Ահարոնի միջոցով շփվելու ՅԱՀՎԵԻ նկարագրությունից (տես` Ել.4:10-16; 7:1; 2 Օր.5:5): Մարգարեն

մի մարդ է, որը Աստծո անունից խոսում է Նրա ժողովրդին (Ամովս 3:8; Երեմ.1:7,17; Եզեկ.3:4):

4. Բոլոր երեք տերմինները կիրառվում են մարգարեի պաշտոնի համար 1 Մնաց.29:29-ում. Սամուել՝ *Ro'eh*, Նաթան՝ *Nabi* և Գադ՝ *Hozeh*:
5. Այս արտահայտությունը *'ish ha – 'elohim*, «Աստծո Մարդ» տալիս է Աստծո համար խոսող մարդու ավելի ծավալուն նշանակությունը: ՀԿ-ում այն կիրառվել է մոտ 76 անգամ, «մարգարեի» իմաստով:
6. «Մարգարե» /*prophet*/ տերմինը բուն հունարեն է: Այն ծագել է՝ (1) *pro* = «նախքան» կամ «համար», և (2) *phemi* = «խոսել»:

II. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

- Ա. «Մարգարեություն» տերմինը Եբրայերենում ունի ավելի ընդարձակ լեզվաբանական հարթակ, քան անգլերենում: Հետուից մինչև Թագավորացներ (բացի Հռութից) պատմական գրքերը հրեաների կողմից պիտակավորվել՝ վերնագրվել են որպես «վաղ կամ նախկին մարգարեներ»: Թե՛ Աբրահամը (Ծննդ.20:7; Սաղմ.105:5) և թե՛ Մովսեսը (2 Օրինաց 18:18) կանչված էին որպես մարգարեներ (նաև Մարիամը՝ Ել.15:20): Հետևաբար, զգուշացեք անգլերենի կասկածելի սահմանումից:
- Բ. «Մարգարեությունը օրենքով հնարավոր է սահմանել որպես պատմության հասկացողություն, որն ընդունում է դրա նշանակությունը միայն աստվածային հոգածության, նպատակի, մասնակցության տերմիններով», *Աստվածաշնչի Մեկնաբանի Բառարան*, հատոր 3, էջ՝ 896 /*Interpreter's Dictionary of the Bible*/:
- Գ. «Մարգարեն ո՛չ փիլիսոփա է, ո՛չ էլ համակարգված աստվածաբան, այլ ուխտի միջնորդ, որը Աստծո խոսքը հասցնում է Իր ժողովրդին, որպեսզի ներկան բարեկարգելով ձևավորի նրանց ապագան», «Մարգարեներ և Մարգարեություն», *Հուդայական Հանրագիտարան*, հատոր 13, էջ՝ 1152 /“Prophets and Preophecy”, *Encyclopedia Judaica*/:

III. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Մարգարեությունը Աստծո համար Իր ժողովրդի հետ խոսելու միջոց է, որով իրենց տվյալ միջավայրում ապահովում է առաջնորդություն և հույսն առ այն, որ իրենց կյանքերը և աշխարհի դեպքերը վերահսկվում են Նրա կողմից: Դրանց պատգամը հիմնականում հավաքական իմաստով է: Այն նախատեսված է հանդիմանելու, քաջալերելու, հավատք և ապաշխարություն հաղորդելու, և Աստծո ժողովրդին տեղեկացնելու Իր մասին և Իր ունեցած ծրագրերի: Սրան պետք է ավելացնել, որ հաճախ այն կիրառվում է Աստծո ընտրությունը որևէ խոսնակի հարցում հստակ հայտնելու համար (2 Օր.13:1-3; 18:20-22): Ի վերջո սա հանգեցնելու էր Մեսիայի ընտրությանը:
- Բ. Հանախ մարգարեն օգտագործում էր իր օրերի պատմական կամ աստվածաբանական ճգնաժամը և պրոյեկտում էր այն որևէ էսկատոլոգիական միջավայրում: Պատմության վերջին ժամանակների այս տեսակետը բացառիկ է Իսրայելում և աստվածային ընտրության, ուխտի խոստումների հարցում Իսրայելի ունեցած զգայունությունը:
- Գ. Մարգարեի պաշտոնը կարծես թե հավասարակշռում է (Երեմ.18:18) և հափշտակում Քահանայապետի պաշտոնը, որպես Աստծո կամքը իմանալու կերպ: Ուրիմն ու Թումիմը փոխակերպվում են Աստծո խոսնակի կողմից բառացի պատգամ հասցնելուն: Մարգարեի պաշտոնն էլ իր հերթին Իսրայելում կարծես թե ննջել է Մաղաբիայից հետո: Այն նորից հայտնվում է Հովհաննեսի Մկրտչի միջոցով Մաղաբիայից 400 տարի անց: Անհայտ է, թե ինչպես է Նոր Կտակարանի

«մարգարեության» պարզևը կապված Հին Կտակարանի հետ: Նոր Կտակարանի մարգարեները (Գործք 11:27-28; 13:1; 14:29,32,37; 15:32; 1 Կորնթ.12:10,28-29; Եփես.4:11) Սուրբ Գրքի համար նոր հայտնություններ հայտնողներ չեն, այլ ուխտի իրավիճակների համար Աստծո կամքի կանխատողներ:

- Դ. Մարգարեությունն իր բնույթով բացառապես կամ հիմնականում կանխատում չէ: Կանխատումը իր պաշտոնը և իր փոխանցած պատգամը հաստատելու մի միջոց է, սակայն պետք է նշել, որ «ՀԿ-յան մարգարեություններից 2%-ից էլ քիչ են կազմում Մեսիական մարգարեությունները, 5%-ից քիչ մարգարեություններ էլ նկարագրում են Նոր Կտակարանյան Դարաշրջանը: 1%-ից ավելի քիչ մարգարեություններ էլ վերաբերում են գալիք բաներին»: (Ֆիլի և Սոյուարտ, *Բնչալիս Կարդալ Աստվածաշունչն Իր ամբողջ Իմաստով*, էջ՝ 166 /Fee & Stuart, *How to Read the Bible For All Its Worth*):
- Ե. Մարգարեները ներկայացնում են Աստծուն ժողովրդին, մինչ քահանաները ներկայացնում են ժողովրդին Աստծուն: Սա ընդհանուր սահմանում է: Գոյություն ունեն բացառություններ ինչպես Ամբակումը, որը հարցեր է ուղղում Աստծուն:
- 2. Մարգարեները հասկանալու դժվարության պատճառներից մեկն այն է, որ մենք չգիտենք, թե նրանց գրքերն ինչպես են կազմավորվել: Դրանք ժամանակագրական չեն: Այդ գրքերը կարծես թե թեմատիկ են, սակայն ոչ միշտ ըստ մեր ենթադրածի: Շատ հաճախ բացակայում է տեսանելի պատմական միջավայրը, ժամանակացույցը կամ պատգամների միջև եղած հստակ բաժանումները: Այս գրքերը դժվար են. (1) կարդացվում մեկ անգամ նստելով, (2) ընդգծել ըստ թեմաների, (3) որոճելու կենտրոնական ճշմարտությունը կամ յուրաքանչյուր պատգամի մեջ բնագրի հեղինակի մտադրությունը:

IV. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հին Կտակարանում կարծես թե առկա է «մարգարե» և «մարգարեություն» հասկացությունների զարգացում: Վաղ Իսրայելում ձևավորվել էր մարգարեների ընկերություն, որն առաջնորդում էր խարիզմատիկ հզոր որևէ առաջնորդ, ինչպես օրինակ Եղիան կամ Եղիսեն: Երբեմն «մարգարեների որդիները» արտահայտությունը գործածվում էր նկատի ունենալով այս խմբին (4 Թագ.2): Մարգարեները առանձնանում էին էքստազի ձևերով (1 Թագ.10:10-13; 19:18-24):
- Բ. Այնուամենայնիվ, այս շրջանից արագ անցում եղավ անհատ մարգարեներին: Կային այնպիսի մարգարեներ (թե՛ իրական և թե՛ սուտ), որոնք հավասարեցվում էին Թագավորի հետ, և ապրում էին արքունի պալատում (Գադ, Նաթան): Նաև կային այնպիսիները, որոնք անկախ էին, երբեմն ամբողջովին Իսրայելի հասարակության ստատուս քվոյի հետ ընդհանրապես կապ չունեցող (Ամովա): Մարգարեները թե՛ տղամարդիկ էին, և թե՛ կանայք (4 Թագ.22:14):
- Գ. Մարգարեն հաճախ ըստ մարդու անմիջական արձագանքի հանդիսանում էր ապագան հայտնող: Հաճախ մարգարեի գործը հանդիսանում էր Աստծո տիեզերական ծրագիրը Իր ժողովրդին հայտնելը, որն ազդեցության չէր ենթարկվում մարդկային արձագանքի կողմից: Հնագույն Մերձավոր Արևելքի մարգարեների միջավայրին ոչնչացող էր տիեզերական էսկատոլոգիական ծրագիրը: Կանխատումը և Ուխտի հավատարմությունը հանդիսանում են մարգարեական պատգամների գույգ կենտրոնները (տես՝ Ֆիլի և Սոյուարտ, էջ՝ 150): Մրանից կարելի է ենթադրել, որ մարգարեները հիմնականում ունեն հավաքական կենտրոնացում: Նրանք սովորաբար, սակայն ոչ միանշանակ, դիմում են ազգին՝ ժողովրդին:
- Դ. Մարգարեական նյութերից շատերը բանավոր տեսքով են ներկայացվում: Միայն հետագայում են դրանք հավաքագրվել Մերձավոր Արևելքի Գրականության տարբեր թեմաների, ժամանակա-

գրության կամ այլ ձևաչափերի միջոցով, որոնք մեր համար կորած են համարվել: Եվ քանի որ դրանք հիմնականում բանավոր տեսքով էին, դրանք գրի առնված արձակի պես ձևավորված չէին: Այդ իսկ պատճառով գրքերը անմիջապես դժվարընթեռնելի էին և դժվարհասկանալի առանց հատուկ պատմական միջավայրի:

- Ե. Մարգարեներն իրենց պատգամները փոխանցելու համար գործածում էին որոշակի ձևեր.
1. Դատարանի տեսարան – Աստված Իր ժողովրդին տանում է դատարան, հաճախ ամուսնալուծության դատական գործով, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է իր կնոջը (Իսրայելին) նրա անհավատարմության համար (Ովսեա 4; Միքիա 6):
 2. Թաղման սուգ – նմանատիպ պատգամի հատուկ հանգը և դրան հատկանշական դրան հատկանշական «վայ»-երը, առանձնացնում են այն որպես հատուկ տեսակ (Եսայի 5; Ամբակում 2):
 3. Ուխտի Օրհնության Հռչակում – Ուխտի պայմանական բնույթը շեշտադրվում է և հետևանքները՝ թե՛ դրական և թե՛ բացասական, բարձրաձայնվում են ապագայի համար (2 Օր.27-28):

V. ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ա. 2 Օրինաց 13:1-5 (կանխատու, նշաններ)

Բ. 2 Օրինաց 18:9-22 (սուտ մարգարեներ, ճշմարիտ մարգարեներ)

Գ. Մատթեոս 7 (ապրելակերպ)

Դ. 1 Հովհաննես 4:1-6 (վարդապետական կենտրոնացում)

Ե. Թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք կանչված են և նշանակված որպես մարգարեներ և մարգարեուհիներ.

1. Մարիամ Ելից 15
2. Դեբորա՝ Դատ.4:4-6
3. Ողոա՝ 4 Թագ.22:14-20; 2 Մնաց.34:22-28

2. Իսրայելը շրջապատող երկրների մշակույթներում մարգարեները հաստատվում էին հմայության միջոցով: Իսկ Իսրայելում կատարվում էր.

1. աստվածաբանական ստուգում՝ ՅԱՀՎԵԻ անունը
2. պատմական ստուգում՝ ճշգրիտ կանխատեսումներ:

VI. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Ա. Գտեք բուն մարգարեի (խմբագրի) մտադրությունը՝ նպատակը, ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր պատգամի պատմական միջավայրին ու գրական համատեքստին: Մովորաբար այն պարունակում է Իսրայելի կողմից ինչ-որ կերպ Մովսիսական Ուխտի խախտում:

Բ. Կարդացե՛ք և մեկնաբանե՛ք ամբողջ պատգամը և ոչ թե մի մասը. ըստ բովանդակության կոնսպեկտավորեք: Տեսե՛ք, թե ինչ առնչություն ունի այդ պատգամը իրեն հաջորդող և նախորդող պատգամների հետ: Փորձե՛ք կոնսպեկտավորել ամբողջ գիրքը:

Գ. Պատկերացրե՛ք պատգամի տառացի մեկնաբանությունը, մինչև որ տեքստում ինչ-որ բան ձեզ մատնացույց կանի դրա այլաբանական կիրառությանը. ապա տվյալ տեքստի մեջ ներմուծե՛ք փոխաբերական լեզուն:

- Դ. Վերլուծենք սիմվոլիկ գործողությունը պատմական միջավայրի և զուգահեռ հատվածների օգնությամբ: Միշտ հիշենք, որ Հնագույն Մերձավոր Արևելյան գրականությունը արևմտյան կամ ժամանակակից գրականությունն չէ:
- Ե. Կանխասմանը ցուցաբերեք զգուշավորություն.
1. Արդյո՞ք դրանք միանշանակ վերաբերում են հեղինակի օրերին:
 2. Արդյո՞ք դրանք հետագայում իրականացան Իսրայելի պատմության մեջ:
 3. Արդյո՞ք դրանք դեռևս ապագայի դեպքեր են:
 4. Ունեն՞ք դրանք մերօրյա իրականացում և բացի այդ ապագայի համար են:
 5. Թույլ տվե՞ք, որ Աստվածաշնչի, և ոչ թե ժամանակակից հեղինակները, տան ձեր պատասխանները:
- Չ. Մտահոգող հարցեր.
1. Արդյո՞ք կանխասումը որակավորվում է պայմանական պատասխանի դեպքում:
 2. Հայտնի՞ է արդյոք, թե ում (և ինչու) է ուղղված մարգարեությունը:
 3. Հավանակա՞ն է արդյոք, որ տվյալ մարգարեությունը աստվածաշնչորեն և/կամ պատմականորեն մի քանի անգամ կիրականանան:
 4. ՆԿ-յան հեղինակները ներշնչանքի ներքո ի զորու էին տեսնել Մեսիային ՀԿ-ի տարբեր մասերում, որը մեզ համար տեսանելի չէ: Նրանք կարծես թե կիրառում էին տիպաբանություն կամ բառախաղ: Քանի որ մենք ներշնչված չենք, ավելի լավ է, որ այս մոտեցումը թողնեք նրանց:

VII. ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. *Ուղեցույց Աստվածաշնչյան Մարգարեության համար*, Կառլ Ի. Արմերդինգ և Ու. Ուորդ Գասք /*A Guide to Biblical Prophecy by Carl E. Armerding and W. Ward Gasque*/
- Բ. *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտ /*How to Read the Bible for All It's Worth by Gordon Fee and Douglas Stuart*/
- Գ. *Իմ Ծառաներ Մարգարեները* Էդվարդ Չ. Յանգ /*My Servants the Prophets My Servants the Prophets by Edward J. Young*/
- Դ. *Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնություն*, հատոր 6 «Եսայիա-Եզեկիել», Չոնդերվան /*The Expositor's Bible Commentary, vol.6 "Isaiah – Ezekiel," Zondervan*/
- Ե. *Եսայիայի Մարգարեությունները*, Չ. Ա. Ալեքսանդր, 1976, Չոնդերվան /*The Prophecies of Isaiah by J. A. Alexander, 1976, Zondervan*/
- Չ. *Եսայիայի Մեկնաբանություն* Հ. Ս. Լեոպոլդ, 1971, Բեյքեր /*Exposition of Isaiah, by H. C. Leupold, 1971, Baker*/
- Է. *Մերտողության Ուղեցույց Մեկնաբանություն*, «Եսայիա» Դ. Դեյվիդ Գարլենդ, 1978, Չոնդերվան /*A Study Guide Commentary, "Isaiah" by D. David Garland, 1978, Zondervan*/

ԵՍԱՅԻ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. ՆԿ-ում Եսայի մարգարեության գրքից շատ ավելի հաճախ է մեջբերվում, քան որևէ այլ մարգարեի գրքից (ավելի քան 411 անգամ): Նրա պատգամը բովանդակվում է.

1. մեկ Աստված,
2. մեկ աշխարհ,
3. մեկ հավատք:

Բ. Եսային սքանչելի Մեսիական գիրք է.

1. հատուկ գավակները, 7-14 գլուխները,
2. Ծառայի Երգերը, 42:1-9; 49:1-7; 50:4-11; 52:13-53:12,
3. ապագա Մեսիական Թագավորությունը (Նոր Դարաշրջան), 56-66 գլուխներ

Գ. Ի. Չ. Յանգը իր *Հին Կտակարանի Ներածություն* գրքում ասել է.

1. «Եսայի մարգարեության գիրքը իսկապես ճիշտ է, որ համարվում է ՀԿ-յան մարգարեություններից մեծագույնը» էջ՝ 168
2. «Իսրայելի բոլոր մարգարեներից Եսային ամենալիարժեքն էր հասկանում Աստծո միտքը և Նրա ծրագրերը բոլոր դարերի համար», էջ՝ 171
3. «Հոգևոր հասկացողությամբ ամբողջ ՀԿ-ում նա անգերազանցելի էր», էջ՝ 172:

II. ԳՐՔԻ ԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը անվանվել է իր մարգարեական պատգամները փոխանցողի անունով:

Բ. Եսայիա անունը նշանակում է «ՅԱՀՎԵԻ փրկություն» կամ «ՅԱՀՎԵՆ փրկում է»: Եբրայերեն անունները, որոնք ավարտվում են «իահ» վերջավորությամբ՝ ՅԱՀՎԵ անվան հապավումն են, ինչպես անգլերենում այն անունները, որոնք սկսվում են “j” տառով և մի ձայնավորով, օրինակ՝ Joshua և Joel:

III. ԿԱՆՈՆԸ

Ա. Սա Ուշ Մարգարեներ կոչվող բաժնի չորս գլուխներից առաջինն է.

1. Եսայիա
2. Երեմիա
3. Եզեկիել
4. Տասներկուսը (փոքր մարգարեներ)

Բ. Այն վաղուց և ամբողջովին ընդունվել էր Իսրայելացիների սուրբ գրերի շարքում:

IV. ԺԱՆՐԸ

Ա. Եսայու գրականական հմտությունները գերազանցում են ՀԿ-յան բոլոր մարգարեներին: Նրա բառախաղերը և պոեզիան հիասքանչ են և ինտրիգային: Գիրքը մեծամասամբ պոեզիա է:

Բ. Դժվար է նստել և միանգամից կարդալ ամբողջ Եսայու գիրքը: Դժվար է նաև գիրքը կոնսպեկտելը, քանի որ Եսային քարոզիչ էր և ոչ թե հեղինակ կամ խմբագիր: Նրա գիրքը արձանագրում է նրա բանավոր պատգամները: Երբեմն դրանք փոխկապակցված են.

1. թեմայով,

2. Ժամանակագրությամբ,
3. Հնագույն Մերձավոր Արևելքի մշակութային նորմերով, որոնք շատ տարբեր են մեր նորմերից:

V. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հեղինակի վերաբերյալ հրեական տեսակետները.

1. Թալմուդի Բաբա Բաթրա 15ա ասում էր, որ Եզեկիան և իր մարդիկ են գրել (այսինքն խմբագրել կամ հավաքագրել) Եսայի, Առակաց, Ժողովող և Երգ Երգոց գրքերը: Մրանից կարելի է ենթադրել, որ ամբողջ գիրքը մարգարեի կողմից է գրվել:
2. Բեն Սիրաքը իր «Ժողովող 49:17-25, որը գրվել է մոտ Ք.Ա. 185թ-ին, ասում էր, որ «Ամովսի որդի Եսային» է գրել գիրքը» (1:1; 12:1; 13:1):
3. 2 Մնացորդաց 32:32-ը վկայակոչում է Եսայու տեսիլքը և դրա համագործը Թագավորացներում (4 Թագ.18:19-20:19):

ա. Երուսաղեմի հարուստ ազնվական ընտանիքից, հավանաբար նույնիսկ Ոգիա թագավորի զարմիկն էր:

(1) որոշ վկայություններ կան, որ «իահ» վերջածանցով անունները, որը ՅԱՀՎԵ անվան հապավումն է, դրվում էին գրեթե միայն Հուդայի թագավորական սերնդի մարդկանց:

(2) Թագավորի մոտ Եսայի մարգարեի մուտքի իրավունքը նույնպես հաստատում է նրա հետ ընտանեկան կապի հավանականությունը:

(3) տե՛ս Թալմուդ «Մեգ.» 10բ

բ. ամուսնացած էր մարգարետուհու հետ (8:3)

(1) առաջնեկ որդին՝ «Shear-Jashub», որը նշանակում է «մնացորդը կվերադառնա»

(2) երկրորդ որդին՝ «Մահեր-շալալ-հաշ-բազ» (8:3), որը նշանակում է «ավարառության շտապիր»

գ. Եսային ունեցել է ՀԿ-յան մարգարեներից ամենաերկար մարգարեական ծառայությունը: Նա Աստծո խոսնակն էր Հուդայում՝ Հովթամի թագավորության օրերից (Ք.742-735) մինչև Եզեկիայի օրերը (Ք.Ա. 715-687), ըստ հավանականության Մանասեի թագավորության օրերում էլ (Ք.Ա. 687-642). Մանասեն հավանաբար իշխանակից էր Ք.Ա.696թ-ից:

դ. Եթե 2 Մնաց.26:22 վերաբերում է Եսայուն, ապա նա հանդիսանում էր թագավորի պաշտոնական դպիրը և արքունի պաշտոնական ժամանակագրությունների պահապանը:

ե. ավանդույթներն ասում են, որ նա Մանասեի թագավորության օրոք ստացվում է երկու մասի:

4. Սովսես Բեն Սամուել Իբն Գեդկաթիլյան, մ.թ. շուրջ 110թ-ին ասում էր, որ 1-39 գլուխները պատկանում են Եսայուն, սակայն 40-66 գլուխները գրվել են Երկրորդ Տանարի ժամանակաշրջանում (Պարսից Դարաշրջան, Ք.Ա. 538-430):
5. Իբր Եզրասը (մ.թ. 1092-1167թթ.) հետևեց Գեդկաթիլյայի ուղղույցին և չընդունեց Եսայու 40-66 գլուխները:

Բ. Հեղինակի վերաբերյալ ժամանակակից տեսակետները

1. Ռ.Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն*, Էերդմանգ, 1969 /R. K. Harrison *Introduction to the Old Testament*, Eerdmans, 1969/ գրքում մի գեղեցիկ պատմական ամփոփում է գտնվում.

2. Երկու հեղինակներ հաստատող տեխնիկական պատճառների շուրջ հետաքրքիր քննարկում կարելի է գտնել Ս. Ռ. Դրայվերի *Հին Կտակարանի Գրականության Ներածություն*, վերատպված 1972, /S. R. Drivers' *Introduction to the Literature of the Old Testament*/ գրքում:

3. Ոչ մի երբայերեն կամ հունարեն (LXX) ձեռագիր չի գտնվել, որը 1-39 և 40-66 գլուխների միջև բաժանում է նշում:
 - ա. Մեռյալ Ծովի Գալարներում գոյություն ունի մի երկտողի չափ բաց տարածություն 33 գլխի վերջում: Սա ենթադրում է բաժանում այս մասում և ոչ թե 39 գլխում:
 - բ. Կարծես թե 1-33 և 34-66 գլուխների միջև համագոր կառուցվածք է առկա: Այս երկակի կառուցվածքը, որը հիմնված է հեղինակի տվյալ ժամանակների և հետո ապագա ժամանակների վրա, տարածված էր Եբրայեցի մարգարեների գրքերում (տես՝ Եզեկիել, Դանիել և Չաքարիա):
4. Ժամանակակից գիտությունը միանշանակ չէ այն հարցում, թե քանի հեղինակ ունի գիրքը կամ որտեղ է գիրքը բաժանվում:

Գ. Եսայի գրքի միասնության մի քանի պատճառներ.

1. Քսանհիկոս տերմին են գտնվել Եսայի գրքի երկու բաժիններում էլ, որոնք ՀԿ-ի ոչ մի այլ գրքերում առկա չեն (NIV, Եսայի գրքի Ներածություն, էջ՝ 1014):
2. «Իսրայելի Սուրբը» անվանումը հանդիպում է 13 անգամ 1-39 գլուխներում և 14 անգամ՝ 40-66 գլուխներում, և միայն 6 անգամ ՀԿ-ի բոլոր մյուս գրքերում:
3. Հովհ.12:38,40-ում Հիսուսը մեջբերում է կատարում թե՛ Եսայի 53:1-ից և թե՛ 6:10-ից և երկուսն էլ վերագրում է Եսայուն:
4. Ես.40-66 գլուխների հատվածները վերագրվում են Եսայուն Մատթ.3:3; 8:17; 12:17; Դուկ.3:4; 4:17; Հովհ.1:23; Գործք 8:28 և Հռոմ.10:16-20-ում:
5. Ձեռագրային ապացույց չկա, որ գիրքը 39-րդ գլխից սկսած բաժանվում է (MT կամ DSS):
6. Ոչ մի պատմական նշում 6-րդ դարում մեծ մարգարեի մասին (Diedre- Isaiah): Ռ. Կ. Հարրիսոնը իր *Հին Կտակարանի Ներածություն* /R. K. Harrison, *Introduction to the Old Testament*/ գրքում այս թեմայի շուրջ ավելացնում է.

«Գրական ոճի շուրջ բանավեճերը տասնիններորդ դարի ավարտին մեծապես նորաձև են, սակայն հնագույն Մերձավոր Արևելյան լեզուների ավելի խորը գիտելիքների առումով, դրանք այսուհանդերձ շատ ավելի քիչ կարևոր դեր են խաղում: Ոճերի հետ կապված ենթադրությունների հենց սուբյեկտիվությունը մեծ բողոք է առաջացրել Գրաֆ-Ուելիաուսենի գրական վերլուծության տեսության համախոհների մոտ, որոնք ասում են Աստվածաշնչյան հեղինակին վերաբերող նյութերի առումով ոչ մի անհամապատասխանություն չկա, և ապա մերժում, որ այդ նույն գրքի որոշ հատվածներ պատկանում են այդ հեղինակին՝ յուրաքանչյուր գլխի գրական ոճն և բառապաշարը նույնը չլինելու պատճառով: Ըստ երևույթին դա չի կատարվել իրենցից ավելի շուտ ուսումնասիրողների հետ, որ անտիկ հեղինակի ոճի վերաբերյալ որոշ գաղափար կազմելը միայն հնարավոր է եղել նրան վերագրվող բոլոր նյութերի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, և ինչ-որ հատվածի կամ ամբողջ գրքի հետագա մերժումը կարող էր միայն հաստատվել որոշակի խստապահանջ արտաքին վերահսկողության հիման վրա» - էջ՝ 776:

Դ. Եսայի մարգարեության գրքի մեկից ավելի հեղինակ ունենալու մի քանի պատճառներ.

1. «Եսայիա» անունը 40-66 գլուխներում չի նշվում
2. 40-66 գլուխները չեն համապատասխանում Եսայու պատմական միջավայրին
3. Կարծես թե որոշակի խառնաշփոթ կա Եսայու գրքում, որոնք վերաբերում են.
 - ա. Ասորեստանի հարձակման, գերության և նրանց դատաստանին
 - բ. Բաբելոնի հարձակման, գերության և նրանց դատաստանին:
4. Ըստ երևույթին որոշ պատճառներ կան մեկից ավելի հեղինակ ունենալու տեսության համար.
 - ա. պատմական միջավայրի փոփոխությունը
 - (1) նախքան Հուդայի գրավումը, 1-39
 - (2) գերություն, 40-55
 - (3) Հուդան գերությունից հետո, 56-66

(4) Եսայի 1-39-ում Տաճարը երբեք չի ավիրվելու, մինչ 40-66-ում ակնհայտ է, որ այն արդեն իսկ ավերված է: Թվում է, թե հենց հեղինակն ինքը գերության մեջ է:

բ. տերմինների փոփոխություն է նկատվում, որոնք նկարագրում են Աստծո ընտրյալ.

(1) Մեսիական գավակին

(2) Չարչարվող Ծառային

(3) Իսրայելի, որպես.

(ա) կին (50:1)

(բ) ՅԱՀՎԵԻ ծառաներ (54:17)

5. Ժամանակակից պահպանողական գիտնականները.

ա. Եսայի 56-66 գլուխների վերաբերյալ Ի. Ջ. Յանգի խոսքը օգտակար է, «մեկ ուրիշ հավանականությունն այն է, որ Հոգով առաջնորդվող, խմբագիրը հավաքագրել է Եսայու դպրոցի տարբեր մարգարեներից մարգարեություններ այս բաժնի հիմնական թեմաների շուրջ» - Էջ՝ 188:

բ. Ռ. Կ. Հարրիսոնն ասում է. «Տվյալ հեղինակը հարում է այն տեսակետին, որ Եսայի մարգարեության գիրքը, ինչպես և մյուս ծավալուն մարգարեական գրքերից շատերը, ներկայացնում է տարբեր ժամանակներում ասված խոսքերի ծաղկաքաղ, և որպես այդպիսին աշխատությունն արժանի է Հին Կտակարանյան մյուս մեծ մարգարեություններից ոչնչով չտարբերվող ցուցաբերված վերաբերմունքի: Այս առումով կարևոր է նշել, որ ոճերի կամ գրական արտահայտման տարբերությունների հիման վրա տրված փաստերը այս մոտեցման միջոցով անմիջապես անվավեր են դարձվում, քանի որ հնարավոր է, որ բավականին արդար ծաղկաքաղ է կատարվել հեղինակի ամբողջական ոճը ներկայացնելիս, նրա ստեղծագործական գործունեության տարբեր շրջաններում: Աշխատությունը որպես ծաղկաքաղ նկարագրելու արդարացում այս տերմինի լավագույն իմաստով ներկայացված է մարգարեության բացման խոսքով, որը սահմանում է աշխատության վերնագիրը և հատուկ խոսում է հայտնության նյութի վերաբերյալ, որը Ամովսի որդի Եսային ստացել էր տեսիլքների միջոցով Հուդայի և Երուսաղեմի վերաբերյալ՝ Ոգիա, Հովաթամ, Աքազ և Եզեկիա թագավորների օրոք: Ինչպես և բոլոր ծաղկաքաղերի դեպքում, բավականին ակնհայտ է, որ գիրքը պարունակում է միայն հասանելի մարգարեական խոսքերը և քարոզները, և խիստ հավանական է, որ Եսային գրել է զգալիորեն շատ ավելի նյութեր, քան պահպանվել են իր գրքում: Մարգարեության ծաղկաքաղային բնույթը հետագայում մատնանշվում է Ես.2:1 և 13:1 մակագրությունների առկայությամբ, որոնք հնարավոր է ներկայացնում են կամ նշում են մարգարեական խոսքերի ավելի վաղ հավաքածուների առկայության մասին» - էջ՝ 780:

6. 40-66 գլուխների գրական ոճը տարբերվում է 1-39 գլուխների գրական ոճից:

Ե. Գրքի հեղինակի շուրջ ամփոփիչ մեկնաբանություններ.

1. Աստծուն հավատացող գիտնականները շարունակում են չհամաձայնվել այն բանի հետ, թե ինչպես է մեր ՀԿ-յան Եսայիա գիրքը ներկայիս բովանդակությանը հասել (տես՝ DSS և MT): Հիմնականում պետք է շեշտադրվի ՅԱՀՎԵԻ բնավորությունը և Նրա նպատակները հայտնելու հարցում գրքի ներշնչանքն ու հավաստիությունը:

2. Մենք պետք է անտեսենք ցանկացած ենթադրություններ, որոնք ուրանում են Եսայու միջոցով Աստծո կողմից հավատարմորեն տրված հայտնությունները: Սա նաև իր մեջ բովանդակում է կանխասված մարգարեության մերժումը և ՀԿ-ը մինչև իսկ բացառապես մարդկային, ժամանակավոր, պատմական արձանագրության իջեցնելը:

VI. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եսայի գիրքը 8-րդ դարի մարգարեների մի մասն է.

1. Հյուսիսում Հովնանը, Ամովսը և Ովսեան՝ Հերոբովամ II-ի թագավորության ընթացքում (Ք.Ա. 786-640):
2. Եսային և Միքիան՝ հարավում:

Բ. Նա ծնվել է Ք.Ա. 760թ-ին և մարգարեական պաշտոնին կանչվել է Ք.Ա. շուրջ 742թ-ին՝ Ոգիա թագավորի մահվան տարին (6:1): Ոգիան նաև կոչվում է Ազարիա (Ք.Ա. 783-742):

Գ. Եսային ունեցել է ծառայության երկար տարիներ՝ Ոգիա թագավորի վերջին տարիներից (Ք.Ա. 783-742թթ.) մինչև Հովաթամի (Ք.Ա. 742-735թթ.), Աքազի (Ք.Ա. 735-715), Եզեկիայի (Ք.Ա. 715-687թթ.) և հավանաբար Մանասեի ժամանակները (Ք.Ա. 687-642թթ.):

Դ. Ռ.Ա. Հարրիսոնն ասում է, որ գիրքը հանդիսանում է մարգարեի գրվածքներից և քարոզներից մի ծաղկաքաղ, որոնք գրվել են Հուդայի մի քանի թագավորների ապրած տարիների ընթացքում: Այն վերջնականապես հավաքագրվել և խմբագրվել է մարգարեի մահից հետո՝ Ք.Ա. շուրջ 630թ:

VII. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Ութերորդ Դարի Մարգարեները

1. Աստվածաշնչյան նյութերը գտնվում են՝

ա. 4 Թագ. 14:3-17:6	ե. Ովսեա
բ. 2 Մնացորդաց 25-28	զ. Եսայի
գ. Ամովս	է. Միքիա
դ. Հովնան	
2. Աստծո ժողովրդի մեջ առկա կռապաշտության վիճակի վերաբերյալ ամենապարզ ամփոփումը կարելի է տեսնել Ովսեա մարգարեության մեջ.
 - ա. 2:16, «այլևս Ինձ Բահաղս չես կոչի»
 - բ. 4:12-13, «... դուստրերը պոռնկություն են անելու...»
 - գ. 4:17, «Եփրեմը կուռքերին է միացել, թողե՛ք նրան»
 - դ. 13:2, «տղամարդիկ համբուրում են հորթերին» (ծես)
3. Սոցիալական միջավայրը.
 - ա. Դա տնտեսական բարգավաճման ժամանակ էր և ռազմական ընդարձակման, թե՛ Իսրայելի և թե՛ Հուդայի համար: Սակայն, այս բարգավաճումը շահավետ էր միայն հարուստ դասակարգի համար: Աղքատները շահագործվում և չարաշահվում էին: Կարծես թե կուռքերը քիչ էին, այժմ էլ «եղնիկն ու հրացանն էլ» էին ավելացել այդ ցանկին:
 - բ. Թե՛ Իսրայելի և թե՛ Հուդայի տարածքային սեփականությունն ու կայունությունը մեծապես կախված էին մի քանի փաստերից՝
 - (1) Հյուսիսում Հերոբովամի (Ք.Ա. 786-746թթ.) երկարատև ու բարգավաճ թագավորությունից, և հարավում՝ Ոգիայի (Ք.Ա. 783-742թթ.):
 - (2) Ք.Ա. 802թ-ին Միքիայի Ադադ-Նիրարի III-ի կողմից Ասորիների պարտությունը
 - (3) Իսրայելի և Հուդայի միջև բախումներ չլինելու պատճառով
 - (4) առևտրային երթուղիների հարկումն ու շահագործումը՝ հյուսիսից դեպի հարավ Պաղեստինով ցամաքային ճանապարհով անցնող կամրջով, պատճառ հանդիսացավ տնտեսական մեծ աճ գրանցելու, նույնիսկ շրայություն հարուստ դասի համար:
 - գ. «Մամարիայի հավաքածուները», որոնք թվագրվում են Հերոբովամ II-ի թագավորության ժամանակներում, կարծես թե մատնանշում են Սողոմոնի ժամանակներին շատ նման մի ադամիստրատիվ կազմակերպության: Սա կարծես թե հաստատում է «ունևորների» և «չունևորների» միջև ավելի մեծացող տարբերությունը:
 - դ. Հարուստների անազնվությունը հստակ բնութագրվում է Ամովսի գրքում, որը կոչվում է «սոցիալական արդարության մարգարե»: Օրենսգետների կողմից կաշառակերությունն

ու առևտրում կշիռների մեջ խաբեությունը երկու պարզ օրինակներ են, որոնք ըստ երևույթին տարածված էին թե՛ Իսրայելում և թե՛ Հուդայում:

4. Կրոնական միջավայրը
- ա. Դա մի ժամանակ էր, երբ ավելի շատ արտաքին կրոնական գործերն էին գերիշխում, և շատ ավելի քիչ՝ ճշմարիտ հավատքը: Քանանի պտղաբերության պաշտամունքի ծեսերը խառնվել էին Իսրայելի կրոնին: Ժողովուրդը դարձել էր կռապաշտ, սակայն նրանք դա կոչում էին ՅԱՀՎԵԻ պաշտամունք: Քաղաքական դաշնակիցների հետ Աստծո ժողովրդի կապը նրանց ներքաշել էր հեթանոսական պաշտամունքների և ապրելակերպի մեջ:
- բ. Իսրայելի կռապաշտությունը նկարագրվում է 4 Թագավորաց 17:7-18-ում:
- (1) հ.8-ում նրանք հետևում են Քանանացիների երկրպագության ծեսերին.
 - (ա) պտղաբերության պաշտամունքը (տես՝ Դևտ. 18:22-23)
 - i. բարձր տեղերը, հհ.9,10,11
 - ii. սուրբ սյուները (Բահադի), հհ.10,16
 - iii. Աստարովթ, հ. 16, սրանք Բահադի իզական սեռի կենսակցի փայտե սիմվոլներն էին: Դրանք կամ փորագրված փայտիկներ էին կամ էլ իրական ծառեր:
 - (բ) հմայություններ, հ. 17: Այս բանը դատապարտվում է Դևտ. 19-20 և 2 Օր. 18-ում:
 - (2) Համար 16-ում նրանք շարունակում էին երկու ոսկե հորթերի երկրպագությունը, որն իբրև խորհրդապատկերում էր ՅԱՀՎԵԻ, որոնք կանգնեցված էին Դանում և Բեթելու Հերոբովամի I-ի կողմից (3 Թագ. 12:28-29):
 - (3) Համար 16-ում նրանք երկրպագում էին Բաբելոնի երկնքի աստվածներին՝ արև, լուսին, աստղեր և համաստեղություններ:
 - (4) Համար 18-ում նրանք երկրպագում էին Փյունիկյան պտղաբերության կրակի աստծուն՝ Մոդոքին, զոհաբերելով նրան իրենց երեխաներին (տես՝ Դևտ. 18:21; 20:2-5): Այս ծեսը կոչվում էր «*անողորմ*»: Այն աստծո անունը չէր:

գ. Բահադի պաշտամունքը (տես՝ Ու. Ֆ. Օլբրայթի *Հնագիտությունն ու Իսրայելի Կրոնը* էջ՝ 82, /W.F. Albright's *Archaeology and the Religion of Israel*):

 - (1) Մեր ունեցած հնագիտական լավագույն աղբյուրն է «Ուգարտայի Բահադի Էպոսը»:
 - (ա) Այն բնութագրում է Բահադին որպես տարբեր եղանակներին մահացող և հարություն առնող աստծո: Մոթը նրան հաղթում է և բանտարկում ստորգետնյա աշխարհում: Երկրի վրա ամբողջ կյանքը դադարում է: Սակայն մի աստվածուհու օգնությամբ (*Anat*), նա ամեն զարնան հարություն է առնում և հաղթում *Մոդոքին*: Նա պտղաբերության աստվածն էր և նրան երկրպագում էին կախարհությամբ:
 - (բ) Նա նաև հայտնի էր որպես *Հադադ*:
 - (2) *El*-ը Քանանացիների պանթեոնում գլխավոր աստվածն էր համարվում, սակայն Բահադի հռչակը զավթել էր նրա տեղը:
 - (3) Իսրայելն ամենաշատն էր ընկել Բահադի երկրպագության ազդեցության տակ, Տիվրոսի Թագավորի աղջկա՝ Հեզաբելի միջոցով: Նա որպես կին էր ընտրվել Ամրիի կողմից, իր որդի Աքաբի համար:
 - (4) Իսրայելում Բահադին պաշտում էին տեղի բարձր վայրերում: Նա խորհրդապատկերվում էր մի բարձրաքանդակ քարի տեսքով: Նրա կողակիցը Աստարովթն էր, որի սիմվոլը կյանքի ծառը խորհրդապատկերող մի քանդակված փայտե սյուն էր:

դ. Նշվում են կռապաշտության մի քանի աղբյուրներ և տեսակներ:

 - (1) Բեթելում և Դանում գտնվող ոսկե հորթերը, որոնք կանգնեցվել էին Հերոբովամ I-ի կողմից, ՅԱՀՎԵԻ պաշտամունքի համար:
 - (2) Տեղական բարձր վայրերում Տիվրոսի պտղաբերության աստծո և աստվածուհու երկրպագությունը:
 - (3) Այդ օրերի քաղաքական դաշնությունների հետ աշխատելիս դրանցում ընդգրկված անհրաժեշտ կռապաշտությունը:

5. Ութերորդ դարում Պաղեստինի վրա մեծ ազդեցություն թողած Ասորեստանի և Բաբելոնի կողմից հարձակումների համառոտ ամփոփում.
- ա. Ասորեստանի Տիգրիս-Եփրատ կայսրության վերելքի ժամանակ ութերորդ դարի չորս մարզարեները ակտիվ էին: Աստված այս դաժան ազգին օգտագործելու էր, որպեսզի դատի Իր ժողովրդին, հատկապես Իսրայելին:
- (1) Բացառիկ իրադարձություն էր միջ-Հորդանանյան քաղաքական և ռազմական դաշինքի կազմավորումը, որը հայտնի է որպես «Սիրիա-Եփրատյան Լիգա» (Ք.Ա. 735թ.): Սիրիան և Իսրայելը փորձում էին հարկադրել Հուդային Ասորեստանի դեմ նրանց միանալու հարցում: Փոխարենը Աքադ թագավորը Ասորեստանին օգնության համար նամակ է ուղարկում: Հզոր կայսրություն ունենալու մոլուցքով առաջին Ասորի թագավորը՝ Թիգլաթպալասար III-ը (Ք.Ա. 745-727թթ.) պատասխանում է ռազմական այս մարտահրավերին և ներխուժում Սիրիա:
- (2) Հետագայում Ասորեստանի խամանիկ թագավորը՝ Ովսիան (Ք.Ա. 732-722թթ.), Իսրայելում նույնպես ապստամբեց, դիմելով Եգիպտոսին: Սալմանասար V-ը (Ք.Ա. 727-722թթ.) գրավեց Իսրայելի Սամարիա մայրաքաղաքը Ք.Ա. 722թ-ին: Ասորեստանն այս ժամանակ տեղահանեց ավելի քան 27,000 իսրայելացիների, մինչ ավելի շուտ Թիգլաթպալասարը Ք.Ա. 732թ-ին գերեվարել էր հազարավորների:
- բ. Աքադի մահից հետո (Ք.Ա. 735-715թթ.) Ասորեստանի դեմ միջ-Հորդանանյան երկրների և Եգիպտոսի միջև մեկ ուրիշ ռազմական դաշինք է ձևավորվում (Ք.Ա. 714-711թթ.): Այն հայտնի է որպես «Աշդոդի Ապստամբություն»: Հուդայի բազմաթիվ քաղաքներ ավերվեցին, երբ Ասորեստանը կրկին ներխուժեց երկիր: Սկզբում Եզեկիան հարում էր այս դաշնակցությանը, սակայն հետագայում հետ քաշվեց:
- գ. Այնուամենայնիվ, կրկին, մեկ այլ դաշինք փորձեց օգտվել Ասորեստանի հզոր թագավոր Սարգոն II-ի մահվան առիթից՝ Ք.Ա. 705թ-ին, բոլոր մյուս շատ ապստամբությունների հետ միասին, որոնք տեղի էին ունեցել ամբողջ ասորական կայսրության ընթացքում:
- (1) Եզեկիան լիարժեք մասնակցություն ցուցաբերեց այս ապստամբության մեջ: Այս մարտահրավերի պատճառով Սենեքերիմը (Ք.Ա. 705-681թթ.) արշավեց (Ք.Ա. 701թ.) Պաղեստին և ճամբարեց Երուսաղեմ քաղաքի մոտ (4 Թագ.18-19; Ես.36-39), սակայն նրա բանակը գերբնական հրաշքով բնաջնջվեց Աստծո կողմից:
- (2) Գիտնականների շրջանում կան որոշ հարցեր, թե ինչպես է Սենեքերիմը բազմաթիվ անգամներ արշավել Պաղեստինի վրա: (Օրինակ՝ Ջոն Բրայթը տալիս է միայն մեկ արշավանք Ք.Ա. 701թ-ին և ևս մեկ հնարավոր արշավանք Ք.Ա. 688թ-ին, տես՝ էջ՝ 270):
- (3) Եզեկիային խնայվեց Ասորական ավարը, սակայն բաբելոնյան պատվիրակությանը Հուդայի գանձերը պարծենկոտությամբ ցուցադրելու համար Եսային մարզարեացավ Բաբելոնի կողմից Հուդայի անկման մասին (39:1-8): Երուսաղեմը ընկավ Ք.Ա. 587-586թ-ին Նաբուգոդոնասորի կողմից:
- դ. Եսային նաև կանխասեց Աստծո ժողովրդի նորոգությունը Կյուրոս II-ի՝ Մարա-Պարսկական իշխանի տիրակալության ժամանակով (41:2-4; 44:28; 45:1; 56:11): Նինվեն ավերվեց Ք.Ա. 612թ-ին՝ Բաբելոնի կողմից, իսկ Բաբելոն քաղաքն ընկավ Կյուրոսի բանակի կողմից՝ Ք.Ա. 539թ-ին: Ք.Ա. 538թ-ին Կյուրոսը հրաման արձակեց, որով բոլոր աքսորյալ ժողովուրդները, ինչպես նաև հրեաները, կարող էին վերադառնալ իրենց տները: Նա նույնիսկ այդ մարդկանց իր գանձարանից ֆինանսապես ապահովեց, որպեսզի վերակառուցեն իրենց ազգային տաճարները:

Բ. Միջագետքի Հզոր Երկրների Պատմական Համառոտ Ուսումնասիրություն (կիրառելով հիմնականում Ջոն Բրայթի *Իսրայելի Պատմություն*, /John Bright *A History of Israel*/ էջ՝ 462, գրքի վրա հիմնված տարեթվերը).

1. Ասորեստանի Կայսրությունը (Ծննդ10:11)

- ա. կրոնը և մշակույթը մեծապես ազդեցության էին ենթարկվել Շումերական / Բաբելոնյան Կայսրությունից:
- բ. թագավորների նախնական ցանկը և մոտավոր տարեթվերը.
- (1) 1354-1318 – Ասուր-Ուբալիթ I
 - (ա) գրավել է Զետացիների Կարքեմիշ քաղաքը
 - (բ) սկսեց հեռացնել քետական ներգործությունը և թույլ տվեց, որ զարգանա Ասորեստանը
 - (2) 1297-1266 Ադադ-Նիրարի I (հզոր արքա)
 - (3) 1265-1235 Սալմանասար I (հզոր արքա)
 - (4) 1234-1197 Թուխուլտի-Նինվազ I – Բաբելոնական Կայսրության առաջին արշավանքը դեպի հարավ
 - (5) 1118-1078 Թիզլաթպալասար I /Թագղաթ-Փաղասար I/ – Ասորեստանը դառնում է Միջագետքի մեծագույն ուժերից
 - (6) 1012-972 Աշուր-Ռաբի II
 - (7) 972-967 Աշուր-Ռաշ-Իսու II
 - (8) 966-934 Թիզլաթպալասար II
 - (9) 934-912 Աշուր-Դան II
 - (10) 912-890 Ադադ-Նիրարի II
 - (11) 890-884 Թուխուլտի-Նինվազ II
 - (12) 883-859 Աշուր-Նասիր-Աբալ II
 - (13) 859-524 Սալմանասար III – Քարքարի պատերազմը, Ք.Ա. 853թ.
 - (14) 824-811 Շամաշի-Ադադ V
 - (15) 811-783 Ադադ-Նիրարի III
 - (16) 781-772 Սալմանասար IV
 - (17) 772-754 Աշուր-Դան III
 - (18) 754-745 Աշուր-Նիրարի V
 - (19) 745-727 Թիզլաթպալասար III.
 - (ա) անվանվել է իր Բաբելոնյան գահի անունով՝ Փուդ, 4 Թագ.15:19-ում
 - (բ) շատ հզոր արքա
 - (գ) Ք.Ա.735թ-ին «Միրիա-Եփրատյան Միավորման» կազմավորումն էր, որը փորձում էր միավորել հնարավոր բոլոր ռազմական ուժերը միջհորդանանյան ազգերի՝ Եփրատի գետաբերանից մինչև Եգիպտոս, Ասորեստանի անող ռազմական հզորությունը ճնշելու նպատակով: Հուդայի Աքազ թագավորը հրաժարվեց նրանց միանալու և Իսրայելն ու Միրիան պաշարեցին նրան: Նա Եսայի մարգարեի խորհուրդին հակառակ նամակ գրեց Թիզլաթպալասար III-ին օգնության խնդրանքով (տես՝ 4 Թագ.16: Եսայի 7-12):
 - (դ) Ք.Ա.732թ-ին Թիզլաթպալասար III ներխուժում է և գրավում Միրիան և Իսրայելը և Իսրայելի գահին է նստեցնում մի ծառա թագավորի՝ Ովսեեին (732-722թթ): Հազարավոր հրեաներ Հյուսիսային Թագավորությունից գերեվարվեցին Ասորեստան (տես՝ 4 Թագ.15):
 - (20) 727-722 Սալմանասար V
 - (ա) Ովսեեն դաշինք է կնքում Եգիպտոսի հետ և ենթարկվում հարձակման Ասորեստանի կողմից (տես՝ 4 Թագ.17):
 - (բ) Ք.Ա. 724թ-ին պաշարվում է Սամարիան
 - (21) 722-705 Սարգոն II.
 - (ա) Սալմանասար V-ի կողմից սկսած պաշարումից երեք տարի անց, նրան հաջորդող Սարգոն II-ը գրավում է Իսրայելի մայրաքաղաք Սամարիան: 27,000-ից ավելի մարդ տեղահանվում են դեպի Ասորեստան:
 - (բ) Գրավվում է նաև Զետացիների կայսրությունը:

- (գ) 714-711թթ-ին միջհորդանանյան ազգերի ևս մի դաշնակցություն և Եգիպտոսը ապստամբում են Ասորեստանի դեմ: Այս դաշնակցությունը հայտնի է որպես «Էշդոդի Ապստամբություն»: Նույնիսկ Հուդայի Եզեկիա թագավորն էր սկզբում ներգրավված այս ապստամբության մեջ: Ասորեստանը ներխուժեց և ավերեց Պաղեստինյան մի քանի քաղաքներ:
- (22) 705-681 Մենեքերիմ.
 (ա) 705թ-ին Սարգոն II-ի մահից հետո միջհորդանանյան ազգերի և Եգիպտոսի մեկ այլ դաշնակցություն ապստամբեց: Եզեկիան ամբողջովին սատարում էր այս ապստամբությանը: Մենեքերիմը ներխուժեց 701թ-ին: Ապստամբությունը ձախողվեց, սակայն Երուսաղեմը խնայվեց Աստծո ձեռքի միջամտությամբ (տես՝ Ես.36-39 և 4 Թագ.18-19):
 (բ) Մենեքերիմը ապստամբությունը հանդարտեցրեց նաև Եղամուս և Բաբելոնում:
- (23) 681-669 Էսարհադոն.
 (ա) առաջին ասորի տիրակալը, որ հարձակվեց և գրավեց Եգիպտոսը
 (բ) Բաբելոնի հետ խորին փոխըմբռնման հարաբերության մեջ էր և վերակառուցեց Բաբելոնի մայրաքաղաքը
- (24) 669-663 Աշուրբանիպալ
 (ա) Եգրաս 4:10-ում նաև կոչվում է Ասենափար
 (բ) Նրա եղբայրը Շամաշ-Շումուքին դրվեց Բաբելոնի թագավոր: Սրա արդյունքում Ասորեստանի և Բաբելոնի միջև խաղաղության մի քանի տարիներ եղան, սակայն առկա էր անկախության համար ստորգետնյա մի հոսանք, որը ժայթքեց 652-ին՝ իր եղբոր առաջնորդությամբ:
 (գ) Թերեսի անկումը, Ք.Ա. 663
 (դ) պարտված Ելամը /Եղամը/, Ք.Ա. 653, 645
- (25) 633-629 Աշուր-Էթիլ- իանի
 (26) 629-612 Մինշարիշկուն
 (27) 612-609 Աշուր-Ուբալիթ II.
 - Խառանում գերության մեջ թագադրված թագավոր, Ք.Ա. 614 թ-ին Աշերի և Ք.Ա. 612թ-ին՝ Նինվեի անկումից հետո:
7. Նեո-բեբելոնյան Կայսրություն.
 ա. 703- ? Մերոդադ-Բալադան
 - Ասորեստանի դեմ մի քանի ապստամբություններ վարեց
 բ. 652 – Շամաշ-շում-Թոքին.
 (1) Էսարհադոնի որդին և Աշուրբանիպալի եղբայրը
 (2) Ասորեստանի դեմ ապստամբություն սկսեց, սակայն պարտության մատնվեց
- գ. 626-605 Նաբուպալասար.
 (1) Նեո-Բաբելոնյան Կայսրության առաջին միապետն էր
 (2) հարավից հարձակվեց Ասորեստանի վրա, մինչ Մարաստանի Աավերոսը հարձակվեց հյուսիս-արևելքից
 (3) հնագույն ասորական մայրաքաղաք Աշուրը անկում է ապրում Ք.Ա. 614թ-ին և հզորագույն նոր մայրաքաղաք Նինվեն՝ Ք.Ա. 612թ-ին:
 (4) Ասորական զորքի մնացորդը նահանջում է Խառան: Նրանք նույնիսկ թագադրում են թագավոր:
 (5) 608թ-ին Նեքավոլ /Նեխո/ II Փարավոնը (տես՝ 4 Թագ.23:29) շարժվում է դեպի հյուսիս օգնելու Ասորական զորքի մնացորդին, որպեսզի Բաբելոնի վեր բարձրացող հզորության դեմ մի մեծ պատնեշ կառուցի: Հովսիան՝ Հուդայի աստվածավախ թագավորը (տես՝ 4 Թագ.23), թույլ չտվեց, որ եգիպտական զորքն անցնի Պաղեստինի միջով: Մակեդոնովում տեղի ունեցավ փոքրիկ ռազմական ընդհարում: Հովսիան վիրավորվեց և մահացավ (4 Թագ.23:29-30): Նրա որդի Հովաթազին

դարձրեցին թագավոր: Նեքավով II Փարավոնը շատ ուշ հասավ, որպեսզի կասեցնի Խառանում ասորական զորքի բնաջնջումը: Նա կովի մեջ մտավ թագադրված արքայազն Նաբուգոդոնոսոր II-ի կողմից առաջնորդվող բարեկրակական զորքի դեմ և պարտություն կրեց Ք.Ա. 605թ-ին Եփրատ գետի վրա գտնվող Զարքեմիսում:

Դեպի Եգիպտոս վերադարձի ճանապարհին նա կանգ առավ և թալանեց քաղաքը: Հովաքազի ընդամենը երեք ամիս թագավորելուց հետո Նեքավով II Փարավոնը գահընկեց արեց նրան և երկրից հեռացրեց: Նրա փոխարեն թագադրեց Հովսիայի մյուս որդուն՝ Եղիակիմին /Հովակիմ/ (տես՝ 4 Թագ.23:31-35):

(6) Նաբուգոդոնոսոր II-ը հետապնդեց եգիպտական զորքին դեպի հարավ Պաղեստին, սակայն իր հոր մահվան գույժը լսելով վերադարձավ Բաբելոն:

Ավելի ուշ նույն տարվա մեջ նա վերդառնում է Պաղեստին, Հովակիմին թողնում է որպես Հուդայի թագավոր, սակայն գերեվարում է մի քանի հազար առաջավոր քաղաքացիների և նույնիսկ արքունի ընտանիքից մի քանի հոգու: Դանիելն ու նրա ընկերները այս գերիների մեջ էին:

դ. 605-562 Նաբուգոդոնոսոր II.

(1) 597-538թթ. Պաղեստինը ամբողջապես գտնվում էր Բաբելոնի տիրապետության տակ:

(2) Եգիպտոսի հետ Հովակիմ թագավորի դաշնակից լինելու պատճառով 597թ-ին Երուսաղեմ քաղաքից տեղի ունեցավ մեկ այլ տեղահանում (4 Թագ.24): Նա մահացավ Նաբուգոդոնոսոր II-ի ժամանումից առաջ: Նրա որդին՝ Հովաքիմը միայն երեք ամիս էր թագավորել, երբ գերեվարվեց Բաբելոն: Տաս հազար քաղաքացիներ, ինչպես նաև Եզեկիելը, վերահաստատվեցին Բաբելոն Զաղաքի մոտ գտնվող Զերբար Ջրանցքի մոտ:

(3) 586թ-ին Եգիպտոսի հետ շարունակ շոգոքորություններից հետո, Երուսաղեմ քաղաքը ամբողջովին ավերվեց (4 Թագավորաց 25) և տեղի ունեցավ զանգվածային տեղահանություն: Մեղեկիա թագավորը, որը հաջորդել էր Հովաքիմին, արտրվեց և Գողոթիան նշանակվեց որպես կառավարիչ:

(4) Գողոթիան սպանվեց հրեա դասալիք ռազմական ուժերի կողմից: Այս ուժերը փախան Եգիպտոս և Երեմիային ստիպեցին իրենց միանալ: Նաբուգոդոնոսորը արշավեց չորրորդ անգամ (605, 596, 586, 582) և հնարավորինս տեղահանեց մնացած բոլոր հրեաներին:

ե. 562-560 Եղմարովիաքը, որը հայտնի էր նաև Ամել-Մարդուկ անունով

- Նա քանտից ազատեց Հովաքիմին, սակայն նա ստիպված էր մնալ Բաբելոնում (տես՝ 4 Թագ.25:27-30; Երեմ.52:31):

զ. 560-556 Ներիզլիսար

- Նա Նաբուգոդոնոսորի գեներալն էր, որը բնաջնջեց Երուսաղեմը:

է. 556- Լաբաշի-Մարդուկ

- Նա Ներիզլիսարի որդին էր, սակայն սպանվեց միայն իննը ամիս թագավորելուց հետո:

ը. 556-539 Նաբոնիդ.

(5) Նաբոնիդը արքունի ընտանիքի հետ կապ չունեց, ուստի ամուսնացավ Նաբուգոդոնոսոր II-ի դստեր հետ:

(6) Նա իր ժամանակից շատն օգտագործում էր Թեմա քաղաքում «Մին» աստծուն նվիրված տաճարը կառուցելուն: Նա այս աստվածուհի մեծ քրմուհու որդին էր: Սրանով նա արժանացավ Մարդուկի քուրմերի թշնամությանը, որը հանդիսանում էր Բաբելոնի գլխավոր աստվածը:

(7) Նա իր ժամանակից շատն անց էր կացնում փորձելով հանդարտեցնել ապստամբություններն ու ամրապնդել թագավորությունը:

(8) Նա տեղափոխվեց Թեմա և թողեց պետական գործերը իր որդուն՝ Բադասարին, մայրաքաղաք Բաբելոնում (տես՝ Դանիել 5):

թ. ? – 539 Բաղդասար (համահեղինակ)

- Բաբելոն քաղաքը շատ շուտով ընկավ Գորբիաս Գոթացու օրոք՝ Եփրատ գետի ջրերը ճեղքելով և մտնելով դիմադրություն չցուցաբերող քաղաքը: Քաղաքի քահանաները և ժողովուրդը Պարսիկներին համարում էին որպես ազատագրողներ և Մարդուկի վերականգնողները: Գորբիասը Կյուրոս II-ի կողմից նշանակվեց Բաբելոնի Կառավարիչ: Հնարավոր է, որ Գորբիասը եղել է Դանիել 5:31; 6:1-ի Մարաց Դարեհ արքան: «Դարեհ» նշանակում է «արքայական»:

8. Մարա-Պարսկական Կայսրություն. Կյուրոս II-ի վերելքի ուսումնասիրությունը (Եսայի 44:28; 45:1-7).

ա. 625-585թթ. Կիակարեսը Մարաստանի թագավորն էր, որն օգնեց Բաբելոնին հաղթելու Ասորեստանին:

բ. 585-550թթ. Աստիագեսը Մարաստանի թագավորն էր: Կյուրոսը նրա թոռն էր Մանդանից:

գ. 550-530թթ. Անշամի Կյուրոս II-ը մի վասսալական արքա էր, որը ապստամբեց.

(1) Նաբոնիդի դեմ՝ Բաբելոնական թագավորի, որը աջակցում էր Կյուրոսին:

(2) Կյուրոս II-ը գահընկեց արեց Աստիագեսին:

(3) Նաբոնիդը որպեսզի վերականգնի իշխանության բալանսը, դաշինք կնքեց՝

(ա) Եգիպտոսի հետ

(բ) Լիդիայի Թագավոր Կրոեսուսի հետ (Փոքր Ասիա)

(4) 547 – Կյուրոս II -ը արշավեց Մարդիս դեմ (Լիդիայի մայրաքաղաքը):

(5) 539 – Նոյեմբերի 2-ին, Գոթացի Գորբիասը Կյուրոսի զորքի հետ միասին գրավեցին Բաբելոնը առանց որևէ դիմադրության: Գորբիասը նշանակվեց Բաբելոնի կառավարիչ:

(6) 539 – Հոկտեմբերին Կյուրոս II «Մեծը» անձամբ մուտք գործեց որպես ազատագրող: Ազգային փոքրամասնությունների հանդեպ նրա ցուցաբերած բարեհամբույր քաղաքականությունը հետադարձեցին տեղահանության տարիները որպես ազգային քաղաքականություն:

(7) 538 – Հրեաներին և ուրիշների թույլատրվեց վերադառնալ տուն և վերակառուցել իրենց հարազատ տաճարները:

(8) 530 – Կյուրոսի որդին՝ Կամբիսես II, հաջորդեց նրան:

դ. 530-522 Կամբիսես II-ի թագավորությունը

(1) Ք.Ա.525թ-ին Եգիպտական կայսրությունը միացրեց Մարա-Պարսկական կայսրությանը:

(2) նա կարճատև թագավորեց:

(ա) ոմանք ասում են, որ նա ինքնասպան է եղել,

(բ) Հերոդոտոսն ասում էր, որ նա իր ձին թամբելիս իր իսկ սրով վնասել է իրեն և մահացել դրա հետևանքով առաջացած վարակից:

(3) կեղծ-սմերդիսների կարճատև թագավորությունը – 522

ե. 522-486 Դարեհ I (Հիսպասպես) նստեց թագավորության գահին

(1) Նա արքունի տոհմաձառից չէր, այլ ռազմական գեներալ

(2) Նա կազմավորեց Պարսից Կայսրությունը օգտագործելով Կյուրոսի Սատրապությունների համար մշակած ծրագիրը (տես՝ Եզրաս 1-6; Անգե; Չաքարիա)

(3) Նա ստեղծեց մետաղադրամը, ինչպես Լիդիայում

զ. 486-465 Ասվերոս I-ի թագավորությունը.

(1) հանդարտեցրեց եգիպտական ապստամբությունը

(2) մտադրություն ուներ արշավելու Հունաստան և իրականացնել Պարսկական երազանքը, սակայն պարտություն կրեց Թերմոպոլիսի պատերազմում՝ Ք.Ա. 480թ-ին և Մալամիսի՝ Ք.Ա. 479թ-ին:

(3) Եթերի ամուսինը, որն Աստվածաշնչում կոչվում է Ասվերոս, սպանվում է Ք.Ա. 465թ:

է. 465-424 – Արտաշես I (Լոնգիմանուս) թագավորեց (տես՝ Եզրաս 7-10; Նեեմիա, Մադաքիա)

- (1) Հույները շարունակում էին իրենց առաջխաղացումը, մինչև որ Պելոպոնյան Քաղաքացիական Պատերազմները սկսվեցին դիմադրություն ցուցաբերել
- (2) Հունաստանը բաժանվում է (Աթենական-Պելոպոնյան)
- (3) Հունաստանի քաղաքացիական պատերազմները տևեցին մոտ 20 տարի
- (4) այս ժամանակահատվածում հրեա համայնքը ամրապնդվում է
- (5) Ասվերոս II-ի և Սելիդիանոսի կարճատև թագավորությունը – 423

ը. 423-404 Դարեհ II (Նոթոս) թագավորեց

թ. 404-358 Արտաշես II թագավորեց

ժ. 358-338 Արտաշես III թագավորեց

ի. 336-331 Դարեհ III թագավորեց

9. Եգիպտոս.

ա. Հիքսոսներ (Հովիվ Թագավորներ – Սեմական իշխաններ) – 1720/10 – 1550

բ. 18-րդ Դինաստիա (1570-1310).

(1) 1570-1546 Ամոսիս

(ա) Թեբեսը դարձրեց մայրաքաղաք

(բ) զավթեց հարավային Քանանը

(2) 1546-1525 Ամենոֆիս I (Ամենհոթեփ I)

(3) 1525-1494 Թուրմոզ I

(4) 1494-1490 Թուրմոզ II – ամուսնացավ Թուրմոս I-ի դստեր՝ Հաթշեպսութի հետ

(5) 1490-1435 Թուրմոզ III (Հաթշեպսութի բարեկամը)

(6) 1435-1414 Ամենհոթեպ II

(7) 1414-1406 Թուրմոզ IV

(8) 1406-1370 Ամենհոթեպ III

(9) 1370-1353 Ամենհոթեպ IV (Ախենաթեն)

(ա) երկրպագում էր Արևին, Աթենին

(բ) հիմնադրեց մեծագույն աստծո երկրպագության ձև (միաստվածություն)

(գ) Թեյ-Էլ-Ամառնայի նամակները այս ժամանակներից են

(10) ? – Սմենխար

(11) ? – Թուրանհամոն

(12) ? – Այ

(13) 1340 – 1310 Հարեմհադ

գ. 19-րդ Դինաստիա (1310-1200).

(1) ? – Ռամզես I (Ռամսես)

(2) 1309-1290 – Սեթի I (Սեթոս)

(3) 1290-1224 – Ռամզես II (Ռամսես II)

(ա) համաձայն հնագիտական ապացույցների Ելիցի ժամանակ տիրող փարավոնը

(բ) կառուցեց Ավարիս, Պիթոմ և Ռամզես քաղաքները Հաբարու ստրուկների միջոցով (հավանաբար Սեմական կամ եբրայական ծագման)

(4) 1224-1216 Մերնեփթա

(5) ? – Ամենմեսիզ

(6) ? – Սեթի II

(7) ? – Սիփթա

(8) ? – Թիվոսեթ

դ. 20-րդ Դինաստիա (1180-1065).

(1) 1175 -1144 Ռամզես III

(2) 1144-1065 Ռամզես IV-XI

ե. 21-րդ Դինաստիա (1065-935).

(1) ? – Սմենդես

(2) ? – Խեթիհոր

զ. 22-րդ Դինաստիա (935-725 - Լիբիական).

- (1) 935-914 Միսակ (Սոսենք I կամ Սետենք I)
 - (ա) պաշտօանեց Հերոբոլամ I-ին մինչև Սողոմոնի մահը
 - (բ) գրավեց Պաղեստինը մոտ 925թ-ին (տես՝ 3 Թագ. 14-25; 2 Մնաց. 12)
- (2) 914-874 Օսրքոն I
- (3) ? – Օսրքոն II
- (4) ? – Միսակ II
- է. 23-րդ դիմաստիա (759-715 - Լիբիական)
- ը. 24-րդ դիմաստիա (725-709)
- թ. 25-րդ դիմաստիա (716/15-663 – Եթովպական / Նուբիական).
 - (1) 710/09-696/95 Շաբաբո (Սաբաբու)
 - (2) 696/95-685/84 Շեթփեբո (Սեթիթթու)
 - (3) 690/689,685/84-664 Թիրիաբան (Թահարբա)
 - (4) ? – Թանթամուն
- ժ. 26-րդ դիմաստիա (663-525 - Սաիթիկ).
 - (1) 663-609 Սաղմեթիկուս I (Psamtik)
 - (2) 609-593 Նեբավով II
 - (3) 593-588 Սաղմեթիկուս II
 - (4) 588-569 Արփիես (Հոփրա)
 - (5) 569-525 Ամասիս
 - (6) ? – Սաղմեթիկուս III (Psamtik)
- ի. 27-րդ դիմաստիա (525-401 -Պարսկական).
 - (1) 530-522 Կամբիսես II (Կյուրոս II-ի որդին)
 - (2) 522-486 Դարեհ I
 - (3) 486-465 Ասվերոս I
 - (4) 465-424 Արտաշես I
 - (5) 423-404 Դարեհ II

*տարբեր ժամանակագրության համար տես *Չոնդերվանի Պատկերագրող Աստվածաշնչի Հանրագիտարանը*, հատոր 2; էջ՝ 231 /*Zondervan's Pictorial Bible Encyclopedial*

10. Հունաստան.

- ա. 359-336 Մակեդոնացի Ֆիլիպ II /Փիլիպոս II/
 - (1) կառուցեց Հունաստանը
 - (2) սպանվեց Բ.Ա. 336թ-ին
- բ. 336-323 Ալեքսանդր II «Մեծը» (Փիլիպի որդին)
 - (1) Պարսկաստանի թագավոր Դարեհ II-ին գահընկեց արեց, Իսուսի ճակատամարտի ժամանակ
 - (2) մահացավ Բ.Ա. 323թ-ին Բաբելոնում՝ 32/33 տարեկան հասակում, բարձր ջերմությունից
 - (3) Ալեքսանդրի զենեարայները նրա մահվան ժամանակ կայսրությունը բաժանեցին՝
 - (ա) Կասանդր – Մակեդոնիա և Հունաստան
 - (բ) Լուսմիկուս – Թրակիա
 - (գ) Սելևկիոս I – Սիրիա և Բաբելոն
 - (դ) Պտղոմեոս – Եգիպտոս և Պաղեստին
 - (ե) Անտիգոնես – Փոքր Ասիա (նա երկար չմնաց)
- գ. Սելևկյանները ընդդեմ Պտղոմեականների՝ Պաղեստինի կառավարման համար.
 - (1) Սիրիա (Սելևկյան իշխանները)
 - (ա) 312-280 Սելևկիոս I
 - (բ) 280-261 Անտիոքոս II Սոթեր
 - (գ) 261-146 Անտիոքոս II Թեոս

- (դ) 246-226 Սելևկիոս II Կալինիկոս
- (ե) 226-223 Սելևկիոս III Սերանոս
- (զ) 223-187 Անտիոքոս III Մեծը
- (է) 187-175 Սելևկիոս IV Ֆիլոպատր
- (ը) 175-163 Անտիոքոս IV Էպիֆանես
- (թ) 163-162 Անտիոքոս V
- (ժ) 162-150 Դեմետրիոս I
- (2) Եգիպտական (Պտղոմեական իշխանները).
 - (ա) 327-285 Պտղոմեոս I Սոթեր
 - (բ) 285-246 Պտղոմեոս II Ֆիլադելֆիոս
 - (գ) 246-221 Պտղոմեոս III Էվագատես
 - (դ) 221-203 Պտղոմեոս IV Ֆիլոպատր
 - (ե) 203-181 Պտղոմեոս V Էպիֆանես
 - (զ) 181-146 Պտղոմեոս VI Ֆիլոմեթոր
- (3) Համառոտ ամփոփում.
 - (ա) 301 – Պաղեստինը 181 տարի շարունակ Պտղոմեոսի տիրակալության տակ
 - (բ) 175-163 Անտիոքոս IV Էպիֆանեսը՝ Սելևկյան 8-րդ իշխանը, ուզում էր բռնի ուժով հեղինիզմի դարձնել Հրեաներին, անհրաժեշտության համար.
 - i. կառուցեց գիմնազիաներ
 - ii. կառուցեց Տաճարի մեջ Չևսի հեթանոսական զոհասեղաններ

VIII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Համառոտ Ուրվագիծը

1. Գլուխ 1-39 – մարգարեն և նրա ժամանակները
2. Գլուխ 40-66 (կամ հավանաբար 40-55 և 56-60) – նոր դարաշրջանը

Բ. 1-39 գլուխները, Եսայի մարգարեի օրերի պատմական միջավայրը (նախքան գերությունը)

1. Գլուխ 1-6, Ոգիա և Հովաթամ թագավորների տիրակալության ներքո
2. Գլուխ 7-14, Աքազ թագավորի տիրակալության ներքո
3. Գլուխ 15-39, Եզեկիա թագավորի տիրակալության ներքո (36-39 գլուխները զուգահեռվում են 4 Թագ. 18:13-20:19):

Գ. Գլուխ 40-66, գերության և հետ-գերության շրջանը սպազա թագավորության նախատիպերն են:

1. Ինչպես 1-39 գլուխները արտացոլում են Եսայու քարոզչությունը և ըստ երևույթին բանավոր ներկայացումներ են, այնպես էլ 40-55 գլուխները արտացոլում են մի նոր միջավայր: Աստծո դատաստանը հասել է և այժմ գլխավոր թեման նորոգությունն է: Նաև առկա են ոճային ակնարկներ, որ այս գլուխները այնքան էլ բանավոր տեսքով չեն եղել, որքան գրավոր:
2. Գլուխ 1-39 ըստ երևույթին գործ ունեն որպես տիպար Ասորական և Բաբելոնյան սպառնալիքների հետ, հատկապես 13-14, 21 և 39 գլուխներում: Գլուխ 40-55 գործ ունեն Պարսից ժամանակաշրջանի հետ և Աստծո Ժողովրդի դեպի Ավետյալ Երկիր վերադառնալու՝ նորոգության հետ:
3. Եսայի մարգարեության վերջին գլուխները՝ 56-66, հայտնության պատգամներ են, որոնք կիրառում են հնագույն մերձարևելյան պատմական այլաբանություններ, ներկայացնելով ՅԱՀՎԵԻ տիեզերական միաստվածության համաշխարհային պաշտամունքի նախատիպը:

Դ. Եսայի գրքի ընդհանուր նկարագրության դժվարությունը.

1. Ժամանակակից շատ գիտնականներ գիրքը բաժանում են առնվազն երկու բաժնի՝ 1-39 գլուխները և 40-66: Ռ. Կ. Հարրիսոնը՝ 1-33 և 34-66 գլուխների, DSS տեքստում բացթողման պատճառով: Այս ակնհայտ բաժանումը DSS-ում 33 և 34 գլուխների միջև նոր առաջար-

կույթան ալիք է բարձրացրել, որ Եսայի մարգարեության գիրքը նրա հետևորդների կողմից գրվել է երկու հատորների տեսքով: Ու. Հ. Բրաունլին /W. H. Brownlee/ առաջադրել է, որ այս երկու հատորները իրականում ըստ կառուցվածքի արտացոլում են միմյանց.

Հատոր 1.	Հատոր 2.
Գլուխ 1-5 – ավերում և վերականգնում	Գլուխ 34-35
Գլուխ 6-8 – կենսագրական նյութ	Գլուխ 36-40
Գլուխ 9-12 – աստվածային օրհնության և դատաստանի գործակալները	Գլուխ 41-45
Գլուխ 13-23 – օտար ուժերի դեմ ասված խոսքերը	Գլուխ 46-48
Գլուխ 24-27 – տիեզերական փրկությունը և Իսրայելի ազատագրումը	Գլուխ 49-55
Գլուխ 28-31 – խրատական քարոզներ	Գլուխ 56-59
Գլուխ 32-33 – ազգի վերականգնումը	Գլուխ 60-66

2. Գրքի որոշ ընդհանուր նկարագրություններ կենտրոնանում են պատմական միջավայրի վրա, մինչդեռ մյուսները կենտրոնանում են Մեսիական բովանդակության վրա:

<u>NIV</u>	<u>Leupold</u>
Գլուխ 7-12 «Հուդայի դեմ Արամեական և Իսրայելական սպառնալիքների առիթով մարգարեություններ»	«Էմմանուելի Գիրքը»
Գլուխ 28-33 «Վեց Վայերը. Հինգը Իսրայելում գտնվող անհավատարիմների վրա և մեկը՝ Ասորեստանի»	«Միոնի Գիրքը» (Անկյունաքարը)

3. Մի քանի անհայտ գրական բաժինների օրինակներ (1-12 գլուխները)

ա. Գլուխ 1-12 ընդհանուր նկարագիրը ըստ Ի. Յ. Յանգի, էջ՝ 211-214.

(1) 1:1-12:6 Հուդայի և Երուսաղեմի վերաբերյալ մարգարեություններ

(ա) 1:1-31 Մեծ հանձնարարությունը

(բ) 2:1-4:6 Մեսիայի թագավորությունը և Նրա դատաստանը ժողովրդի վրա

(գ) 3:5-30 Հուդայում տարածված անօրինությունները

(դ) 6:1-13 Տիրոջ տեսիլքը Եսայուն

(ե) 7:1-12:6 Աքազի տիրակալության ժամանակ ասված մարգարեությունները

բ. Գլուխ 1-2 ընդհանուր նկարագրությունը Ռ. Կ. Հարրիսոնի կողմից, էջ՝ 746.

(1) Հուդայի ավերման և վերականգնման վերաբերյալ մարգարեություններ. գլուխ 1-5

(2) Եսայու կանչը. կենսագրական նյութ. գլուխ 6-8

(3) Ներկայիս աշխարհի կայսրությունները և նրանց դերը. գլուխ 9-12

գ. Գլուխ 1-12 ընդհանուր նկարագրությունը՝ ըստ NIV Մերտողության Աստվածաշնչի, /NIV Study Bible/ էջ՝ 1016 .

(1) Գլուխ 1-6

(ա) Ներածություն. Հուդայի դեմ մեղադրանքներ Ուխտը խախտելու համար, գլ. 1

(բ) Հուդայի և Երուսաղեմի ապագայի խրատն ու փառքը, գլ. 2-4

i. Երուսաղեմի ապագայի օրհնությունները (2:1-5)

ii. Տիրոջ խրատը Հուդային (2:6-4:1)

iii. Միոնի վերականգնումը (4:2-6)

(գ) Ազգի դատաստանը և գերությունը (գլ. 5)

(դ) Եսայու բացառիկ առաքելությունը (գլ. 6)

(2) Գլուխ 7-12

(ա) Աքազը զգուշացնում է չվախենալ Արամական և Իսրայելական դաշինքից (գլ. 7)

(բ) Եսայու որդին և Դավթի որդին (8:1-9:7)

(գ) Դատաստան Իսրայելի դեմ (9:8-10:4)

- (դ) Ասորական Կայսրությունը և Դավթի Թագավորությունը (10:5-12:6)
 - i. Ասորեստանի կործանումը (10:5-34)
 - ii. Դավթի սերնդից Թագավորի, Նրա թագավորության հաստատումը (զլ. 11)
 - iii. Ցնծության երգեր ազատագրման համար (զլ. 12)
- դ. Գլուխ 1-12 ընդհանուր նկարագրությունը ըստ Հ. Ս. Լեոպոլդի, էջ՝ 38-40
 - (1) Հուդայի և Երուսաղեմի մասին մարգարեություններ (զլ. 1-12)
 - (ա) Ներածություն. Եսայուն բնորոշ պատգամ (զլ. 1)
 - i. Վերնագիրը, հ. 1
 - ii. Մեղադրական Աստծո կողմից, հհ. 2-4
 - iii. Ազգի արտաքին ավերակ վիճակը, հհ. 5-9
 - iv. Այդ ժամանակի երկրպագության տեսակը որպես փրկության միջոց անարդյունավետ էր, հհ. 10-15
 - v. Ապաշխարության կոչ, հհ. 16-20
 - vi. Մատնանշում է Երուսաղեմում կաշառակերությունը, հհ. 21-23
 - vii. Իսրայելը դատաստանով կազատվի, հհ. 24-31
 - (բ) Դատաստանի միջոցով մինչև Աստծո շնորհառատ խոստումների իրականացում. գլուխներ 2-6
 - i. Միոնի փառավոր ապագան Մեսիական Դարաշրջանում, 2:2-5
 - ii. Միոնի անփառունակ ներկան, 2:6-4:1
 - ա) ներկայում տիրող կեղծ արժեքները, հհ. 6-9
 - բ) սպասվող սարսափելի դատաստանը, հհ. 10-11
 - գ) ինչ է անելու Տիրոջ Օրը բոլոր սուտ արժեքների հետ, հ. 12-17
 - դ) կուռքերի ճակատագիրը, հհ. 18-21
 - ե) Տերը մեղադրում է անպատասխանատու առաջնորդներին, 2:22-3:15
 - i) Անարխիայի հետևանքը, երբ Տերը հեռացնում է ամեն տեսակ պաշտպանություն և հոգածություն, 3:1-12
 - ii) այս աղետի պատճառ հանդիսացող առաջնորդների մեղքը, 3:13-15
 - զ) Տերը մեղադրում է Երուսաղեմի փառամոլ և թեթևամիտ կանանց, 3:16-4:1
 - է) Միոնը մաքրված, 4:2-6
 - ը) Աստծո դատաստանը Իր մեղավոր ժողովրդի հանդեպ, զլ. 5
 - i) խաղողի այգու առակը, հհ. 1-7
 - ii) Իսրայելը արդյունքում ազդիս է տալիս, հհ. 8-23
 - iii) Ասորիների կողմից սպասվող մոտավուտ դատաստան, հ. 24-30
 - թ) Մարգարեի կանչի մեջ նշված Իսրայելի դատաստանը, զլ. 6
 - i) մարգարեի տեսիլքը, հհ. 1-3
 - ii) մարգարեի արձագանքը տեսիլքին, հհ. 4-5
 - iii) նրա թողությունը, հհ. 6-7
 - iv) նրա ուղարկվելը /առաքելությունը/, հհ. 8-9ա
 - v) նրա պատգամը, հհ. 9բ-13
 - (գ) Էմմանուելի Գիրքը (գլուխ 7-12)
 - i. Էմմանուելի նշանը, զլ. 7
 - ա) Վերին Ավագանում տեղի ունեցած դեպքը, հհ. 1-9
 - բ) այդ իրադարձություն շարունակությունը. Խոսք Էմմանուելի վերաբերյալ, հհ. 10-17
 - գ) հետագա շարունակություն. երկրի կանխաաված ավերածությունը, հհ. 18-25
 - ii. խոտվության ժամանակները (Ք.Ա. 734-732թթ.) և թե ինչպես դրանք դիմակայել, զլ. 8

- ա) Դամասկոսի և Սիրիայի հարստությունը ավար կտարվի, հհ. 1-4
- բ) Ասորեստանը հարձակումը Հուդայի վրա, հհ. 5-8
- գ) ապահովությունը, որ կարող է Էմմանուելը տալ, հհ. 9-10
- դ) ումից և ինչից վախենալ, հհ. 11-15
- ե) հավատքով համբերատար սպասում, հհ. 16-18
- զ) ճիշտ կարգախոս օրվա համար, հհ. 19-22
- iii. Չորս անունով երեխան, 9:1-7
 - ա) ամփոփում, հ. 1
 - բ) մեծ ուրախությունը, հհ. 2-3
 - գ) ի՞նչ է վերցվել, հհ. 4-5
 - դ) մեծ ուրախության հեղինակը, հհ. 6-7
- iv. «Նրա ձեռքը դեռ մեկնված է», 9:8-10:4
 - ա) անսուրբ հպարտության պատճառով թշնամիներից պարտություն կկրեն, հհ. 8-12
 - բ) շարունակվող անբարեխղճության պատճառով առաջնորդները կկործանվեն, հհ. 13-17
 - գ) տիրող ամբարշտության պատճառով կլինի քաղաքացիական պատերազմ, հհ. 18-21
 - դ) սոցիալական անարդարության պատճառով կլինի հաշվեհարդարի օր, 10:1-4
- v. Վայ Ասորեստանին, 10:5-34
 - ա) հպարտ Ասորեստանը սխալ է ձևակերպել Աստծուց ունեցած իր հատուկ առաջադրանքը, հհ. 5-11
 - բ) ուշացած դատաստանը հարվածելու է այս գոռոզ գավթիչին, հհ. 12-14
 - գ) իր ամբարտավանության համար Ասորեստանը անտառի կրակի պես այրվելու է, հհ. 15-19
 - դ) Աստծո դատաստանի աղետից հետո, Իսրայելից մի մնացորդ դառնալու է Իրեն, հհ. 20-23
 - ե) երբ Ասորեստանն ընկնի, Սիոնը կազատագրվի, հհ. 24-27
 - զ) Ասորեստանի ռազմավարական առաջխաղացումը, որը գրեթե գրավել էր Սիոնը, առաջնագծից նկարագրված ամփոփագրերի տերմիններով, հհ. 28-32
 - է) ՅԱՀՎԵՆ կկտրի հպարտ ասորական անտառը, հհ. 33-34
 - ը) Դավթի ցեղից բարձրացող Մեսիան և Նրա միջոցով փրկության մեծ գործը, գլ. 11
 - i) Մեսիայի սպառազինությունը, հհ. 1-3ա
 - ii) Իր գործը կատարելու սեփական ճանապարհը, հհ. 3բ-5
 - iii) փոփոխությունը կանդրադառնա նույնիսկ բնության տիրույթում, հհ. 6-9
 - iv) Իր գործի նկարագրությունը այն տերմիններով, թե ինչեր կարող է Նա անել Իսրայելի համար, հհ. 10-16
 - թ) սպասվող մեծ օրվա գովաբանություն, գլուխ 12
 - i) Իսրայելի որոշումը, որպեսզի այսպիսի փառաբանություն մատուցի, հհ. 1-2
 - ii) այդ օրվա օրհնության ամփոփիչ նկարագրություն, հ. 3
 - iii) այսպիսի փառաբանություն մատուցելու հորդոր, հհ. 4-6

IX. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Եսային կոչ է անում Հուդային, որ պահի իր հավատարմությունը Դավթի ուխտին (2 Թագ. 7), սակայն նա նաև վերադառնում է դեպի Աբրահամի հետ ուխտի սկզբնական նպատակին

(Ծննդ.12:1-3), որը Աստծո կողմից Իսրայելի ընտրությամբ աշխարհին ընտրելն էր: Ինչպիսի՛ հակադրություն պետք է, որ լինեն ՅԱՀՎԵԻ տիեզերական թագավորությունը: Աստված ոչ միայն վերականգնելու էր Իսրայելը, այլ նաև նրա միջոցով մեծացնելու էր իր ազդեցությունը ամբողջ աշխարհի վրա:

Բ. Եսային հատկապես կանխասել է իր օրերի և ապագայում սպասվող համաշխարհային իրադարձությունների շարժումը, ըստ որի առաջնորդում է դեպի Աստծո Մեսիայի միջոցով Դավթի Թագավորության վերահաստատումը (նաև Միքիան): Այս Թագավորությունը սուրբ է և տիեզերական (նաև Միքիան): Այս երկուսն էլ Եսայու ներկայացրած միակ, սուրբ և փրկող Աստծո հատկանիշներն են:

Գ. Եսային հստակ ցույց է տալիս Աստծո ժողովրդի ունայնությունը, որոնք վստահում են աշխարհիկ, մեղավոր, մարդկային աղբյուրների: Ազատագրումը գալու է միայն ՅԱՀՎԵԻց:

Դ. Եսային հայտնում է Աստծո փրկության ծրագրի երեք ամենահզոր հատկանիշները.

1. սպասվող Մեսիան
2. Մեսիան որպես Չարչարվող Ծառա
3. Մեսիայի տիեզերական թագավորությունը

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «Լսեցե՛ք, ո՛վ երկինքներ, և ականջ դի՛ր, ո՛վ երկիր», 1:2 (NASB & NIV)
2. «ինչպես մի հյուղ վարունգի արտում», 1:8 (NIV, «ինչպես մի հյուղ սելսի այգում»)
3. «Իմ ինչի՞ն է պետք ձեր առատ զոհերը...», 1:10-15 (NIV, «ձեր զոհերի առատությունը»)
4. «Հիմա եկեք ու պատճառաբանենք իրար հետ...», 1:18 (NASB & NIV)
5. «վերջին օրերում...», 2:2 (NASB & NIV)
6. «և հորդելով նրա մոտ պիտի գան բոլոր ազգերը», 2:2-4 (NASB & NIV)
7. «քթի օղեր /գարդարանքներ/», 3:21 (NASB & NIV)
8. «մի ամպ», 4:5 (NASB & NIV)
9. «ո՛վ կգնա մեզ համար», 6:8 (NASB & NIV)
10. «մի կույս», 7:14 (NIV, «կույսը»)
11. «նախքան Նա /մանկան/ չարը մերժել ու բարին ընտրելն իմանա», 7:15,16 (NASB & NIV)
12. «գայթակղության քար և գրորման վեճ», 8:14 (28:16) (NASB & NIV)
13. «մեռելահարցուկներին ու վիուկներին, որ շնչում ու քրթմնջում են», 8:19 (NASB & NIV)
14. «Ո՛վ Ասորեստան, Իմ բարկության գավազան», 10:5 (NASB & NIV)
15. «նրանից մի մնացորդ է վերադառնալու», 10:22 (NASB & NIV)
16. «Հեսսեի ցողունից մի Ճյուղ պիտի ընձյուղվի», 11:1, 10 (NIV, «... բնից»)
17. «այժամարդ», 13:21; 34:14 (NIV, «անապատի վայրի գազանները»)
18. «Ժողովի լեռան վրա, հյուսիսային կողմերում», 14:13 (NIV, «Ժողովի Լեռան վրա, սուրբ լեռան ամենաբարձրերում»)
19. «Եգիպտոսի երկրում ... Տիրոջ համար մի զոհասեղան է լինելու», 19:19 (NIV, «... Եգիպտոսի սրտում»)
20. Արիել, 29:1-2,7 (NASB & NIV)
21. «ամբողջովին կործանել է նրանց», 34:2 (NIV, «լիովին կործանել է նրանց»)
22. «կարթ քո քթին», 37:29 (NASB & NIV)
23. «իմ բոլոր մեղքերը կոնակիդ ետևը նետեցիր», 38:17 (NASB & NIV)
24. «մեր Աստծո Խոսքը հավիտյան պիտի մնա», 40:8 (NASB & NIV)
25. «Նա է, որ երկրի շրջանակի վրա է նստում», 40:22 (NIV, «որ նստում է վերը՝ երկրի շրջանակի գահին»)

26. «Ես եմ առաջինը, և Ես եմ վերջինը. և Ինձանից բացի Աստված չկա», 41:4; 44:6 (NASB, NIV)
27. «և մեղքերդ չեմ հիշում», 43:25 (NASB & NIV)
28. «Ինձանից բացի Աստված կա՛. հիրավի ուրիշ Վեմ չկա, Ես ուրիշը չգիտեմ», 44:8; 45:5 (NIV, «Ինձանից բացի Աստված կա՛: Ո՛չ, ուրիշ Վեմ չկա, Ես ուրիշը չգիտեմ»)
29. «Ես հաստատում եմ յույսը և ստեղծում խավարը. խաղաղություն եմ բերում ու ստեղծում աղետը», 45:7 (NIV, «Ես եմ հաստատում յույսը և ստեղծում խավարը, Ես եմ բերում բարգավաճումը և ստեղծում աղետը»)
30. «Ո՛վ երկրի բոլոր ծագեր, Ինձ դարձեք ու փրկվեցեք...», 45:22 (NASB & NIV)
31. «ամեն մի ծունկ Ինձ պիտի խոնարհվի ու ամեն լեզու ` խոստովանի», 45:23 (NASB & NIV)
32. «Հանուն Ինձ, հանուն Ինձ, պիտի անեմ դա...», 48:11 (NASB & NIV)
33. «Մի՞թե կինը կմոռանա իր կաթնակեր մանկանը... հիրավի, նրանք կարող են մոռանալ, Ես, սակայն քեզ չեմ մոռանա», 49:15 (NASB & NIV)
34. «Նրա բարկության գավաթը», 51:17 (NIV, «Նրա ցասման գավաթը»)
35. «Աստուծոց հարվածված ու պատուհասի հանդիպած», 53:4 (NASB & NIV)
36. «Տերը հանեց Նրան ճգմել՝ վշտի մատները», 53:10 (NIV, «մինչդեռ Աստծո կամքն էր, որ Նրան ճգմի և չարչարի»)
37. «Փանի որ Տերը քո հավիտենական յույսը պիտի լինի», 60:19-20 (NASB & NIV)

Բ. ԱՆՉԻՔ

1. «Իսրայելի Սուրբը», 1:4; 41:8-9; 42:1,19; 43:10
2. «Սիոնի դուստրը» 1:8
3. «Չորաց Տերը» 1:9 (NIV, «Ամենակարող Տերը»)
4. «Տիրոջ Շառավիղը» 4:2
5. Սերովբեներ 6:2 (NIV, «սերովբեք»)
6. Սեար-Յասուր 7:3
7. Էմմանուել 7:14
8. Մահեր-շալալ-հաշ-բազ 8:3
9. «Ամենակարողը» (Էլշադայ) 13:6
10. «Ո՛վ Լուցիֆեր, որդի՛ առավոտի» 14:12
11. «մեկը արևելքից» 41:2,25 (44:28; 45:1)
12. «Իմ Ծառան» 41:8,9; 42:1, 19; 43:10; 52:13
13. Բել... Ներովր 46:1
14. պահապաններ 52:8
15. ներքինի 56:3




XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Թարսիս, 2:16 (NIV, «առևտրական նավեր»)
2. Եփրեմի ցեղ, 7:2
3. Սիոն լեռ, 8:18
4. Չարուղոնի ցեղ, 9:1
5. Գալիլիա, 9:1
6. Քարքամիս, 10:9
7. Սելա, 16:1; 42:11
8. Տայանիս /Չոան/ 19:13
9. Մեմփիս, 19:13
10. Նեզովր, 21:1 (NIV, «ՆԵԳՈՎՐ»)
11. Թեմա, 21:14
12. Տիվրոս, 23:1
13. Սիդոն, 23:2

14. Արաբիա, 35:1 (NIV, «անապատ»)
15. Կարմեղոս լեռ, 35:2
16. Սարոն, 35:2
17. Արարատ, 37:38
18. Թոբել, 66:19
19. Հավան, 66:19 (NIV, Հունաստան)


XII. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ է Աստված իր ժողովրդին կանգնեցնում դատաստանի առջև: Ի՞նչ էին նրանք արել (գլ.1):
2. Արդյո՞ք Աստված դեմ է գոհերին: (1:10-15)
3. Բացատրե՛ք, թե ինչու են 5:1-7 խոսքերը այդքան հզոր և ազդեցիկ:
4. Ինչո՞ւ Եսայու կանչը նախքան 6-րդ գլուխը չի արձանագրվում:
5. Ինչո՞ւ Եսային 7:14-ում չի կիրառում Եբրայերենի «կույս» տերմինը:
6. Թվարկե՛ք 7-12 գլուխներում այն տեղերը, որտեղ նոր դարաշրջանը նկարագրելու համար գործածվում է երեխա բառը:
7. Բացատրե՛ք 9:8-9 համարներում հյուսիսային ցեղերին բնութագրող երեք անունները:
8. Ինչո՞ւ է Բաբելոնի անկումը նշվում գլուխ 13-ում, երբ գլուխ 10-ում Եսային քննարկում է Ասորեստանի մասին:
9. Ի՞նչ կապ ունեն Ես. 14 և Եզեկ. 28 Սատանայի հետ:
10. Բացատրե՛ք 36-39 գլուխների պատմական միջավայրը:
11. Արդյո՞ք 40:1-2 ենթադրում է, որ Աստծո ժողովուրդը գերության մեջ են: Եթե այդպես է, ինչպիսի կապ ունի սա գրքի հեղինակության հետ:
12. Ինչպե՞ս կարող է 42:1-ի ծառան կապ ունենալ Հիսուսի հետ, սակայն ոչ 19 համարի հետ:
13. Ի՞նչ կապ ունի 52:13-53:12 Հիսուսի հետ, Իսրայելի հետ:
14. Ո՞րն է 56-66 գլուխների աշխարհագրական միջավայրը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԵՐԵՄԻԱ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ

Ա. Այն անվանվել է մարգարեի անվամբ:

Բ. Նրա անունը նշանակում էր.

1. «ՅԱՀՎԵՆ հարձակվում է»
2. «ՅԱՀՎԵՆ հաստատում է»

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Եբրայական Կանոնի «մարգարեներ» բաժնի մի մասն է կազմում:

Բ. Ռաբբիական գրականության մեջ նա հաճախ է մարգարեներից առաջինը համարվում (տես՝ Մատթ.27:9):

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքը բաղկացած է մի քանի ժանրերից.

1. Դասական Եբրայական պոեզիա (Երեմիայի պատգամները)
2. Եբրայական արձակ (գրված Բարուքի կողմից, երրորդ դեմքով)
3. Երեմիայի քարոզների ամփոփումները հաճախ արձակ տեսքով (նաև Բարուքի կողմից)
4. Աստծուն ուղղված կենսագրական բողոքներ, ներկայացված բանաստեղծական տեսքով (Երեմիայի խոստովանությունը)

Բ. Ըստ երևույթին Երեմիայի գրքում առկա են թե՛ բանավոր և թե՛ գրավոր մարգարեություններ: Նաև 36-րդ գլխից հասկանում ենք, որ գրքի որոշ մասեր վերաթելադրված/վերատպված են:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ակնհայտ է, որ 52-րդ գլուխը Երեմիան չի գրել, քանի որ հհ. 31-34 արձանագրում են դեպքեր, որոնք տեղի են ունեցել Բաբելոնում: Գողոթիայի՝ Բաբելոնյան կառավարչի մահից հետո, դավադիր հրեա զորամասերը Երեմիային պարտադրաբար տանում են Եգիպտոս:

Բ. Հավանական հեղինակները կամ խմբագիրները.

1. Երեմիա
2. Բարուք՝ նրա դպիրը
3. հետագա խմբագիրը (Եզրասը կամ Մեծ Ժողովարանի տղամարդիկ)

Գ. Մենք բոլոր մյուս մարգարեներից առավել գիտենք Երեմիայի մասին.

1. Աբիաթարի քահանայական սերնդից (գերեվարված), 3 Թագ.2:26-27
2. Երուսաղեմին մոտ Անաթոլիում մեծացած:
3. Աստծո կողմից կանչվել է երիտասարդ տարիքում, 1:2; 25:3 (Զ.Ա. 627թ.)
4. Մեծ ազդեցություն է թողել նրա գրքի վրա Ովսեա և Երկրորդ Օրինաց աշխատությունները
5. Ժամանակակիցն էր՝

ա. Դանիելի	դ. Սոփոնիայի
բ. Եզեկիելի	ե. Նաումի
գ. Ամբակումի	

6. Իր կանչից հինգ տարի անց Հովսեփի կատարած ռեֆորմների ժամանակ Տանարում գտնվեց «Օրենքի Գիրքը»: Չարմանալի է, որ նրանց ունեցած փոխհարաբերության վերաբերյալ երբեք ոչինչ չի նշվում Աստվածաշնչում: Երբ Օրենքի Գիրքը գտնվեց, Թագավորը խորհրդակցեց Ողղա անունով մի մարգարեուհու հետ (4 Թագ.22:14-20) և ոչ թե Երեմիայի:
7. նրա զգացմունքները կարելի է պարզ տեսնել իր խոստովանության կամ իր գանգատների մեջ:
 - ա. 11:18-12:6
 - բ. 15:10-21
 - գ. 17:14-18
 - դ. 18:18-23
 - ե. 20:7-18
8. Նա բռնի ուժով տարվում է Եգիպտոս, որտեղ սպանվում է հրեա փախստականների կողմից, 43:6:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Երեմիան ծնվել է Անաթոլիայում, Ք.Ա. 640թ-ին:

Բ. Երեմիայի գիրքը թվագրված է 1:2-ում և պարփակվում է Հովսիայի տասներեքերորդ տարուց մինչև Գողողիայի ժամանակը՝ Ք.Ա. 627- Ք.Ա. 582թթ.: Թե որքան ժամանակ Երեմիան ապրեց Եգիպտոսում փախստականների հետ, հայտնի չէ:

Գ. Լաչնիշում հայտնաբերված արձանագրությունը նկարագրում է, որ նրան բռնում են Ք.Ա.587 թ-ին: Այս արձանագրության Եբրայերեն տեքստը կարելի է համեմատել Երեմիայի հետ:

Դ. Երեմիայի պատգամները կենտրոնանում են Սամարիայի անկումից (Ք.Ա. 722թ.) մինչև Երուսաղեմի անկումը (Ք.Ա. 586թ.) կատարված իրադարձությունների վրա:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Ք.Ա. 686թ. – Մանասեն (Ք.Ա. 686-641) դառնում է Հուդայի թագավորը: Նա Հուդայի ամենաամբարիշտ թագավորն էր:

Բ. Ք.Ա. 664թ. – Եգիպտական կայսրությունը Պտոմեոսիքուսի օրոք հզորանում է (Ք.Ա. 664-610):

Գ. Ք.Ա. 648թ. – Հովսիայի ծնունդը:

Դ. Ք.Ա. 642թ. – Ամոն, Հուդայի թագավորը, որին իր ծառաները սպանեցին (4 Թագ.21:19-26):

Ե. Ք.Ա. 640թ. – մահանում է վերջին ամենաազդեցիկ ասորի իշխանը՝ Աշուրբանիպալը:

Զ. Ք.Ա. 640թ. – Հովսիան ութ տարեկան հասակում դառնում է թագավոր (4 Թագ.22:1):

Է. Ք.Ա. 628թ. - Հովսիան բարեփոխումներ է ձեռնարկում (2 Մնաց.34:3; 4 Թագ.23):

Ը. Ք.Ա. 626թ. - Երեմիայի կանչը (Երեմ.1:2):

Թ. Ք.Ա. 626թ. - Նարուբադդասարը (Ք.Ա.626-605թթ.) դառնում է Նեո-Բաբելոնի թագավոր:

Ճ. Ք.Ա. 621թ. - Տանարը վերակառուցող աշխատողների կողմից գտնվում է Օրենքի գիրքը (2 Մնաց. 34:8; 4 Թագ. 22):

Ի. Ք.Ա. 614թ. – Ասորոստանի տարածքային մայրաքաղաքը՝ Ասուրը, հանձնվում է Նեո-Բաբելոնին:

Լ. Ք.Ա. 612թ. – Նինվեն՝ Ասորեստանի առաջին մայրաքաղաքը բնաջնջվում է Նեո-Բաբելոնի և Մարաստանի կողմից:

Խ. Ք.Ա. 609թ. - Հովսիան սպանվում է Մեգադոսի կողմից՝ Փարավոն Նեքավոլ II-ի դեմ կռվելիս (Ք.Ա.610-594թթ.), որը փորձում էր օգնել ասորական բանակից մնացած փախչող զինվորներին (2 Մնաց.35:20-24; 4 Թագ.23:28-30):

- Հովաքազ II (Ք.Ա. 609թ.), Հովսիայի որդին, թագադրվեց իր հոր փոխարեն, սակայն միայն երեք ամսով: Ներավով փարավոնը նրան արքայաց Եգիպտոս:
 - Հովակիմը (Ք.Ա. 609-598թթ.) թագադրվեց Հուդայի վրա Ներավով փարավոնի կողմից: Նաբուգոդոնոսոր II-ը Ք.Ա. 605թ-ին թողեց նրան, որպեսզի թագավորի Հուդայի վրա: Հետագայում նա ապստամբեց, դաշնակցելով Եգիպտոսի հետ: Նրա որդին՝ Հովաքիմը, հաջորդեց իրեն միայն երեք ամսով և Նաբուգոդոնոսորը նրա փոխարեն գահ բարձրացրեց Սեդեկիային՝ Ք.Ա. 597թ-ին:
- Ծ. Ք.Ա. 605թ. – Նեո-Բաբելոնը հաղթում է Եգիպտացիներին և ասորական զորքերի մնացորդին Քարթամիսի ճակատամարտում:
- Կ. Ք.Ա. 605թ. - Նաբուգոդոնոսոր II-ը անցնում է Պաղեստինի միջով պահանջելով հարկահավաք (իր հետ տանելով Դանիելին և առաջին արքայալուսերին): Գոյություն ունեն չորս արշավանքներ, որոնք ազդել են Հուդայի և Երուսաղեմի վրա՝ Ք.Ա. 605, 597, 586 և 582թթ.
- Հ. Ք.Ա. 601թ. - Նաբուգոդոնոսոր II-ը պարտվում է Եգիպտոսին վերահսկելու համար պատերազմում (ոչ-ոքի):

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

- Ա. Գրքի կառուցվածքը թեմատիկ է և ոչ թե ժամանակագրական: Հավանաբար այն հանդիսանում է Երեմիայի կողմից գրված մի քանի գալարների կամ պատգամների հավաքածու՝ 1-25, 30-33 և 46-51:
- Բ. LXX և MT ձեռագրերը մեծապես տարբերվում են: Գրեթե 3000 բառ MT տարբերակից բացակայում են LXX տարբերակում: Նաև 46-51 գլուխներում տրված ազգերի հերթականությունը տարբեր են, ինչպես նաև 25-րդ գլխից հետո այս ազգերի տեղակայությունը գրքում: MSS երկու ավանդույթներն էլ գտնվել են Մեռյալ Ծովի Գալարներում:
- Գ. Փորձնական ուրվագծում (հիմնականում հետևում է Հարրիսունին և Յանգին).
1. Գլուխ 1 – Երեմիայի կանչը և նախապատրաստումը:
 2. Գլուխներ 2-25 – Հուդայի մեղքը Երեմիայի ծառայության առաջին տարիներից ի վեր
 3. Գլուխներ 26-29; 34-35 – մարգարեի անձնական կյանքը:
 - ա. ՅԱՀՎԵի պատգամը Սեդեկիային և Անանիայի արձագանքը, 26-29:
 - բ. Ռեքսիմները, 34-35
 - գ. Եգիպտոսի և Հովակիմից մինչև Սեդեկիա և Գոդոդիա թագավորների տիրակալության ընթացքում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, 36-45
 4. Գլուխներ 30-33 – Աստծո ժողովրդի նորոգության խոստումը.
 - ա. Ֆիզիկապես
 - բ. հոգևորապես
 5. Գլուխներ 46-51 – մարգարեություններ շրջապատող երկրների վերաբերյալ (նաև գլուխներ 25:12-38):
 - ա. Եգիպտոս – 46 (Ես.19; Եզեկ.29-32)
 - բ. Պաղեստին – 47 (Ամովս 1:6-8; Ես.14:29-32; Եզեկ.25:15-17)
 - գ. Մովաբ – 48 (Ամովս 2:1-3; Ես.15-16; Եզեկ.25:8-11)
 - դ. Ամոն – 49:1-6 (Ամովս 1:13-15; Եզեկ.25:1-7)
 - ե. Եդովմ – 49:7-22 (Ամովս 1:11-12; Ես.21:11-12; Եզեկ.25:12-14; Աբդիա)
 - զ. Սիրիա – 49:23-27 (Ամովս 1:3-5; Ես.17:1-3)
 - է. Արաբիա – 49:28-33
 - ը. Եդամ /Իլամ/ - 49:34-38
 - թ. Բաբելոն – 50-51 (Ես.13:1-14; Ամբ.2:6-17)
 6. Գլուխ 52 – Երուսաղեմի անկումը (տես՝ 4 Թագ.24:18-25:30)

- Դ. Հետաքրքիր է նկատել, որ գլուխ 1-25-ում Երեմիայի պատգամները սկսվում են «այն խոսքը, որ եկավ ինձ Տիրոջ /ՅԱՀՎԵԻ/ կողմից» արտահայտությամբ, մինչ 26-51 գլուխներում դրանք սկսվում են «Տիրոջ /ՅԱՀՎԵԻ/ խոսքը եկավ Երեմիային» արտահայտությամբ:
- Ե. Երեմիայի Մարգարեությունների ցանկը ըստ իշխող թագավորների.

Ի. Չ. Յանգ	Ռ. Կ. Հարրիսոն
1. Հովսիայի օրոք (Ք.Ա. 640-) 1:1-19; 2:1-3:5; 3:6-6:30; 7:1-10:25; 11:1-13:27; 14:1-15:21; 16:1-17:27; 18:1-20:18	1:1-19; 2:1-3:5; 3:6-6:30; 7:1-10:25; 18:1-20:18
2. Հովաքազի օրոք (Ք.Ա. 609թ.)	
3. Հովակիմի օրոք (Ք.Ա. 609թ.) 25; 26; 27; 35; 36; 45 46-49	11:1-13:14; 14:1-15:21; 16:1-17:27; 22; 23; 25; 26; 35; 36; 45; 46-48
4. Հովաքիմի օրոք (Ք.Ա. 598-596թթ.)	31:15-27
5. Սեդեկիայի օրոք (Ք.Ա. 597թ.) 21:1-22:30; 23; 24; 27 28; 29; 30-31; 32; 34; 37; 38; 39	21:1-22:30; 24:1-10; 27; 28; 29; 30-31; 32; 33; 34; 37; 38; 39; 49; 50:1-51:64
6. Գողոթիայի օրոք 40; 41; 42; 43-44:30; 50-52	40:1-42:22; 43:1-44:30
7.	Պատմական Հավելված 52:1-34

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆ

- Ա. Դատաստանի ժամանակը հիմա է, քանի որ Հուդան չէր գոյում իր մեղքերի համար: Երեմիան շեշտադրում է մեղքը, դատաստանը և նորոգությունը; 1:4-10:
- Բ. Պատարագային կամծիսական կրոնը առանց Աստծո հանդեպ ունեցած անձնական հավատքի կյանքի, սարսափելի աղետ է, (գլ.7; Ես.29:13):
- Գ. Հուդան անհույս մոլորվել էր ծեսերի, կռապաշտության և մեղքի մեջ: Նա խախտել էր Աստծո ուխտը, որն այստեղ խորհրդապատկերվում է որպես ամուսնության ուխտ՝ պայմանագիր (տես՝ 2:1-3:5):
- Դ. Մարդու անձնական ապաշխարությունն ու հավատքն են Աստծո նոր ուխտի համար հիմք հանդիսանում (31:31-34) և ոչ թե ընտանեկան հավատքը (31:29; Եզեկիել 18):
- Ե. Նոր Ուխտը հավիտենական է՝ մնայուն (31:35-37), քանի որ պայմանավորված չէ մարդկային գործոնով, այլ Աստծո շնորհքով և գորությամբ (Եզեկ.36:26-27):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (NASB)

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. մարգարե, 1:5 (NASB & NIV)
2. նշենի, 1:11 (NASB & NIV)
3. հյուսիսը, 1:13 (NASB & NIV)
4. մեջքդ գոտեպնդի՛ր, 1:17 (NIV, «Պատրաստվի՛ր»)
5. արձակման թուղթ, 3:8 (NIV, «ամուսնալուծության վկայական»)
6. «պղծություն/չնություն գործեց քարի հետ ու փայտի հետ», 3:9 (NASB & NIV)
7. «ձեր սրտերի անթլիատությունը», 4:4 (NIV, «ձեր սրտերը թլփատե՛ք»)
8. «բալասան Գաղասաղում», 8:22 (NASB & NIV)
9. «բոլոր ամենահեռավոր ծագերում», 9:26
10. «կենդանի է Տերը», 12:16 (NASB & NIV)
11. «միջօրեի ավարառու / կործանիչ», 15:8 (NIV, «կեսօրին կործանիչ կուղարկեմ»)
12. «բոլոր երկնային գորքերը», 19:13 (NIV, «բոլոր աստղային գորքերը»)
13. ամբողջովին բնաջինջ անել, 25:9 (NIV, «լիովին բնաջնջել»)
14. «Տիրոջ տան անոթները», 27:16 (NIV, «... իրերը»)
15. «Հակոբի նեղության ժամանակը», 30:7 (NIV, «Հակոբի համար անախորժության ժամանակ»)
16. նոր ուխտ, 31:31 (NASB & NIV)
17. «զվարակը բաժանեցին երկու կտորի և կտորների միջով անցան», 34:18 (NIV, «զվարակը կտրում էին երկու կտորի և ապա քայլում այդ կտորների միջով»)

Բ. Անձիք

- | | |
|---------------------------|---|
| 1. Հովսիա, 1:2,3 | 9. Ռեքաբիմ, 35:1 (NIV, Ռեքաբի Ընտանիքը) |
| 2. Հովակիմ, 1:3 | 10. Արդիմեկեք, 38:7 |
| 3. Բահադ, 2:8 | 11. Գողողիա, 39:14; 40-41 |
| 4. Մանասե, 15:4 | 12. Նեքավով փարավոն, 46:2 (NIV, Նաքովր) |
| 5. Նաբուգոդոնոսոր, 21:2,7 | 13. Քամովա, 48:7,13,46 |
| 6. Անանիա, 28:1 | 14. Բենադադ, 49:27 |
| 7. Բարուք, 32:12,13,16 | 15. Բեյ, 50:2; 51:44 |
| 8. Մողոք, 32:35 | 16. Մարովդաք, 50:2 |




X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

- | | |
|---------------------------|---------------------|
| 1. Անաթովթ, 1:1 | 9. Մասփա, 40:6 |
| 2. Քետիմ | 10. Գաբավոն, 41:12 |
| 3. Մեմփիս | 11. Բեթլեհեմ, 41:17 |
| 4. Սելով, 7:12 | 12. Քարքամիս, 46:2 |
| 5. Ենովմի որդու ձոր, 7:31 | 13. Բեթել, 48:13 |
| 6. Սողոմ և Գոմոր, 23:14 | 14. Հասոր, 49:28 |
| 7. Տյուրոս, 25:22 | 15. Եղամ, 49:34 |
| 8. Լաքիս, 34:7 | |

XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ


1. Ինչո՞ւ է Երեմիա գիրքը դժվար ուրվագծելու՝ կոնսպեկտելու համար:
2. Քանի՞ տարի է քարոզել Երեմիան:
3. Բացատրե՛ք 1:11-16-ում գտնվող երկու տեսիլքները:
4. Ինչո՞ւ է գլուխ 2-ը ներկայացված որպես դատական գործ: (4-8,9,29)
5. Ինչո՞ւ է գլուխ 3-ը ներկայացված որպես ամուսնալուծության դատական գործ:
6. Թվարկե՛ք թե ինչ է չորս պայմաններ է պահանջում Աստված մարդուց 4:1-2 –ում ցույց տրված ապաշխարության համար:

7. Ի՞նչ առնչություն ունեն գլուխ 7 և 26-ը:
8. Արդյո՞ք Երեմիան գլուխ 7-ում դատապարտում է գոհաբերությունների համակարգը:
9. Ինչո՞ւ էին Երեմիայի ծննդավայրի մարդիկ փորձում սպանել նրան: (11-12 գլուխները)
10. Ինչո՞ւ են 12:14-17 և 16:19-21 խոսքերը այդքան կարևոր:
11. Բացատրե՛ք, թեինչ կապ ունեն հավաքական՝ ընդհանուր և անհատական մեղքերը 16:10-13:
12. Ի՞նչ կապ կա 17:10-ի և Գաղ.6:7-ի միջև:
13. Նկարագրեք, թե ինչպես էր Երեմիան տարբեր կերպերով կիրառում գլուխ 18 և 19 տրված բրուտի այլաբանությունը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՈՂԲ ԵՐԵՄԻԱ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- Ա. Եբրայերենում (MT) վերնագիրը գրքի առաջին խոսքն է, որը ներկայացված է «Ա'հ, ինչպես» /'echah/ (1:1, 2:1, 4:1): Սա թաղումների ժամանակ օգտագործվող տարածված տերմին էր:
- Բ. Մեպտուազինտայում (LXX) այն վերնագրվել է «սգալ»՝ հունարենի «աղաղակել» արմատից:
- Գ. Թալմուդն այն անվանել է «ողբեր»:
- Դ. Վուլգատտան վերնագրել է այն «Բովանդակում է Երեմիա մարգարեի ողբերը»:

II. ԿԱՆՈՆԸ

- Ա. Այս գիրքը գտնվում է Եբրայական *Մեգիլոթ* (հինգ գլխարկներ) /*Megilloth*/ կոչվող կանոնի Գրեր բաժնից հատրնտիր գրքերի ցանկում: Դրանցից յուրաքանչյուրը ընթերցվում էր ամենամյա որևէ տոնակատարության ժամանակ.
1. Երգ Երգոցը՝ Չատկի տոնին
 2. Հռութիցը՝ Պենտեկոստեին
 3. Ժողովողը՝ Տաղավարահարաց Տոնին
 4. Եսթերը՝ Փուրիմին
 5. Ողբ Երեմիան՝ Երուսաղեմի անկման և Սողոմոնի Տաճարի կործանման հիշատակի օրը
- Բ. Եբրայական Կանոնի Գրեր բաժինը Երգ Երգոցը դնում է Սաղմոսներից, Առակացից և Հոբից հետո, և Հռութից, Ողբ Երեմիայից, Ժողովողից ու Եսթերից առաջ: Անգլերեն /հայերեն/ Աստվածաշունչը հետևում է LXX-ի հերթականությանը:
- Գ. Ողբ Երեմիան ընթերցվում է Աբ (Հուլիսի կեսերին) ամսվա 9-ին՝ ի հիշատակ Ք.Ա. 586թ-ին Նաբոլզոդոնոստր II-ի գորքի ուժով Սողոմոնի Տաճարի կործանման: Հետագա Հուդայականության մեջ այս օրը նաև հիշատակվում է որպես հռոմեացի զեներալ Տիտոսի կողմից մ.թ. 70 թ-ին Երուսաղեմի անկման օր:

III. ԺԱՆՐԸ

- Ա. Գրքի յուրաքանչյուր հինգ գլուխն էլ հանդիսանում են առանձին ողբ՝ թաղման սուգ: Նմանատիպ բանաստեղծությունները տարածում ունեին Հնագույն Մերձավոր Արևելքում Շումերական թագավորությունից ի վեր: Իսրայելի համար դրանք ներկայիս իրավիճակների համար արտահայտում են վիշտ, սակայն ապագայի համար՝ հույս:
- Բ. Առաջին չորս պոեմները ակրոստիկոսներ են: Յուրաքանչյուր տողը սկսվում է Եբրայերեն այբուբենի հաջորդ տառով: Հնարավոր է սա իրենից ներկայացնում է խորը վշտի սիմվոլիկ արտահայտման կերպ:
- Գ. Եբրայերեն պոեզիան հիմնված է գաղափարական զուգահեռման վրա և ոչ թե հանգերի.
1. Տողը, և ոչ թե բառերն են հանդիսանում գրականական բանալին:
 2. Չուգահեռումը սովորաբար երկու կամ երեք տողեր են.
 - ա. Համագործ՝ հոմանիշ զուգահեռում. տողերն արտահայտում են միևնույն գաղափարը, սակայն տարբեր բառերով.
(1) Սաղմ.3:1; 8:40; 83:14; 103:3

- (2) Առակ.20:1
- (3) Ողբ 1:2,3
- (4) Եսայի 1:3
- (5) Ամովս 5:24
- բ. Անհամատեղելի զուգահեռում. տողերն արտահայտում են հակադարձ գաղափարներ՝ հակադրության կամ խնդրի դրական և բացասական կողմերը սահմանելու միջոցով.
 - (1) Սաղմ.1:6; 90:6
 - (2) Առակ.1:29; 10:1,12; 15:1; 19:4
- գ. Համատեղելի զուգահեռում. տողերը զարգացնում են տվյալ միտքը.
 - (1) Սաղմ. 1:1-2; 19:7-9
 - (2) Ողբ.1:4

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն ինքնին չի ներկայացնում հեղինակին: Սակայն ակնհայտ է, որ այն գրվել է Ք.Ա. 586թ-ի Երուսաղեմի պաշարման և անկման ականատեսի կողմից:

Բ. Բարա Բաթրա 15ա և Երեմ.1:1 Թարգումները գրքի հեղինակությունը վերագրում են Երեմիային:

Գ. Սեպտուագինտան գիրքը սկսում է «և եղավ, որ Իսրայելի գերություն գնալուց հետո, և Երուսաղեմն ամայանալուց հետո, Երեմիան նստեց ողբալու և շարադրեց այս ողբը Երուսաղեմի վրա և ասաց...»: Այն դրված է Երեմիայի գրքից հետո:

Դ. Վուլգատտան գիրքը սկսում է, «Այն ընդգրկում է Երեմիա մարգարեի ողբերը»:

Ե. Փեշիտտան (Մ.թ. 5-րդ դարի Սիրիակ թարգմանություն) գիրքը վերնագրում է «Երեմիա Մարգարեի Ողբերի Գիրքը»:

2. Վկայություններ հեղինակի վերաբերյալ.

1. Երեմիայի համար.

ա. Կարծում ենք, որ Երեմիան է հեղինակը համաձայն 2 Մնաց.35:25-ի: Սակայն ուշադրություն դարձրեք, որ սա ողբ է Հովսիայի համար և ոչ թե Երուսաղեմի:

բ. Երեմիա գրքում շատ հատվածներ իր օրերի համար վշտալի ողբեր են, 7:29; 8:21; 9:1,10, 20 (տես՝ Ողբ.3:48-51):

գ. Առկա է բառապաշարի նմանություն:

դ. 3:1-ի «ես» բառը հնարավոր է վերաբերում է Երեմիային:

ե. Ըստ երևույթին հեղինակը հանդիսանում է Երուսաղեմի անկման ականատես:

2. Երեմիային դեմ.

ա. Երեմիան ասում է, որ Աստված ուղարկեց Բաբելոնին դատաստանի համար, սակայն 3:59-66-ը կարծես թե հակասում է:

բ. Երեմիան չէր ասի, որ մարգարեական պատգամները դադարել են, 2:9գ.

գ. Երեմիան խորհուրդ չէր տա օգնություն խնդրել Եգիպտոսից, 4:17:

դ. Երեմիան հույսը չէր դնի Սեդեկիայի վրա, 4:20

ե. Այս ակրոստիկոսի տեսքով պոեմներն ունեն բարդ կառուցվածք, որոնք շատ են տարբերվում Երեմիայի ինքնաբուխ ոճից:

զ. Յուրաքանչյուր հինգ պոեմների կառուցվածքային ոճերը տարբեր են: Մի քանիսն ունեն երկար տողեր, մի քանիսը՝ կարճ: Տողերի քանակը, որոնք սկսում են միևնույն տառով, տարբերվում են: Այլաբանությունները փոփոխվում են յուրաքանչյուր պոեմում: Այս բոլորը մատնացույց են անում, որ գիրքն ունեցել է մեկից ավելի հեղինակներ:

- V. ՏԱՐԵԹԻՎԸ
- VI. ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

- Ա. Պատմական իրավիճակը Բաբելոնյան գորքի կողմից Բ.Ա. 586թ-ին Երուսաղեմի կործանումն է:
- Բ. Պատմական միջավայրի համար կարող եք ընթերցել 4 Թագ.25:8-12 և Երեմ.52:
- Գ. Ոմանք այս գիրքը դիտարկում են որպես Հուդայում մնացած հրեաների հետ առնչություն ունեցող գրքի և ամեն տարի հիշատակում են Երուսաղեմի անկումը, Երեմ.41:4-5:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

- Ա. Երուսաղեմը անձնավորմամբ է կնոջից մինչև ստրուկ՝ ծառա, գլուխ 1:
- Բ. Արտոնությունը պատասխանատվության է լծում. ՅԱՀՎԵԻ ուխտի բարկությունը, գլուխ 2:
- Գ. Վիշտը անձնավորված տեսքով, գլուխ 3:
- Դ. Արտոնությունը պատասխանատվության է լծում. ուխտի ժողովրդի մեղքը, գլուխ 4:
- Ե. Ուխտի Աստծո վրա հույսը և վստահությունը, գլուխ 5:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Այս պոեմներն արտահայտում են այն վիշտն ու կորստյան զգացումը, որ վերապրում էր Աստծո ժողովուրդը.
 - 1. Երուսաղեմի անկման պատճառով,
 - 2. Տանարի ավերման պատճառով,
 - 3. ՅԱՀՎԵԻ Մովսիսական Օրենքի լուծարման պատճառով: Այս բոլորը սուր զգացողությունների առիթ էին հանդիսանում, քանի որ դրանք Աստված խոստացել էր.
 - (ա) 2 Թագ.7:10-16-ում,
 - (բ) Ես.37:30-35-ում:
- Բ. Այս պոեմները շեշտադրում են.
 - (1) Աստծո ինքնիշխանությունը,
 - (2) Աստծո արդարությունը,
 - (3) Աստծո դատաստանը,
 - (4) Աստծո խոստումները նորոգության համար:
- Գ. Հուդան կործանվեց, քանի որ խախտեց Մովսիսական Ուխտը (2 Օր. 27-28): Բաբելոնի կողմից պարտություն կրելու պատճառը ՅԱՀՎԵԻ թուլությունը չէր, այլ Իր ժողովրդի մեղքը: ՅԱՀՎԵՆ ասպագայում Իր գործյամբ հաղթանակ էր պարզկելու (3:22-23, 25):
- Դ. Աստծո խոստումները թե՛ պայմանական են, և թե՛ առանց պայմանների: Ուխտի գաղափարը պահանջում է պատշաճ արձագանք:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Տերմիններ և արտահայտություններ
 - 1. «Իր բոլոր սիրելիները», 1:2,19 (NASB & NIV)

2. «Հուդայի կույս աղջիկը», 1:15 (NASB & NIV)
3. «Նրա ոտքերի պատվանդանը» 2:1 (NASB & NIV)
4. «Տերը թշնամի է դարձել» 2:5 (NIV, «Տերը թշնամու պես է եղել»)
5. «Ծափ են տալիս... սուլում են... իրենց գլուխները շարժում են» 2:15 (NIV, «ծափ տալ... ծաղրել... թափահարել»)
6. «դեպի Նրան բարձրացրու ձեռքերդ» 2:19; 3:41 (NASB & NIV)
7. «մի՞թե կանայք իրենց պտուղը պիտի ուտեին» 2:20; 4:10 (NASB & NIV)

Բ. Անձիք.




1. «Ես այն մարդն եմ» 3:1

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Հուդա, 1:3
2. Սիոն, 1:4
3. Երուսաղեմ, 1:7
4. Հուս, 4:21


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Բացատրե՛ք Ողբ Երեմիայի գրական կառուցվածքը:
2. Աստվածաշնչյան այս գիրքն ինչպես է մեզ օգնում վերաբերվել վշտին և խուճապին:
3. Գիրքն ինչի՞ն է վերագրում գերեվարվելու պատճառը: (1:5, 18)
4. Ի՞նչ առնչություն ունի 2:17-ը 2 Օր.27-28-ի հետ:
5. Ինչո՞ւ է 3:19-38-ը այդքան կարևոր:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԵԶԵԿԻԵԼ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքն վերնագրվել է իր իսկ գլխավոր խոսնակի՝ Եզեկիել մարգարեի անվամբ:

Բ. Նրա անունը նշանակում էր «Աստված զորացնում է» կամ «Թող Աստված զորացնի»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը որոշակի դժվարությամբ է ընդգրկվել Եբրայական Կանոնի մեջ.

1. Եզեկիելի տաճարը և ծիսակարգերը տարբեր էին Մովսեսինից:
2. ակնառու պատկերավոր լեզուն, հատկապես 1, 8 և 10 գլուխները:

Բ. Շամմայի Ռաբբիական դպրոցի Ռաբբի Անանիա բեն Եզեկիան ասում են, թե օգտագործել է յուդի 300 սավոր, որպեսզի Եզեկիելին հաշտեցնի Մովսեսի հետ (տես՝ Shabb.14b; Menahuth 45a; Hagigah 13a):

Գ. Հրեական ավանդույթն ասում է, որ երբ Եղիան Մեսիայից առաջ վերադառնար, նա կլուծեր Եզեկիելի և Մովսեսի միջև եղած խնդիրը:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքը բազմաժանր է.

1. մարգարեություն (գլուխ 37)
2. ապոկալիպտիկ (գլուխներ 1, 8-10, 38-39, 40-48)
3. պոեզիա
4. արձակ
5. դրամատիկ առակներ (գլուխներ 4-7, 12)
6. տիպաբանություն (գլուխ 16)

Բ. Ինչպես մեկնաբանել 40-48 գլուխները

1. Սկզբնական դիտողություններ.
 - ա. 40-48 գլուխների գրական համատեքստը 33-39 գլուխներում արձանագրված նորոգության խոստումն է:
 - բ. Այս բաժինը հայտնության Տաճարի ճարտարապետական մանրակրկիտ օրինակն է, ինչպես Ելից 25-27-ն է Խորանի համար:
 - գ. Համառոտ ուրվագիծը.
 - 1) Գլուխ 40-43 – վերականգնված Տաճարը
 - 2) Գլուխ 44-46 – վերականգնված ծեսերը
 - 3) Գլուխ 47-48 – վերաբնակեցված երկիրը
 - դ. Այս մարգարեությունը օգտագործում է Աստծո և Աբրահամի և նրա սերնդի միջև հին ուխտը, պատկերելու վերջին ժամանակներում Աստծո ժողովրդի վերականգնումը:
2. Մի քանի հավանական մեկնաբանություններ.
 - ա. Այն երբեք նպատակ չէր ունեցել տառաջիորեն իրականանալու,
 - բ. Այն պայմանական մարգարեություն էր, որին հրեաները պատշաճ կերպով չարձագանքեցին՝ չանսացին:
 - գ. Այն մասամբ իրականացավ Գերությունից վերադարձով Չորաբաբելի և Հեսուի առաջնորդությամբ:

- ե. Այն մշտապես սիմվոլիկ նշանակությամբ է եղել (տես՝ Ջոն Միլթոն *Մեկնաբանված Մարգարեություն* /John Milton *Prophecy Interpreted*):
- զ. Այն իրականանալու է հայտնության՝ ապագայի տանարում:
- 3. Այս տեքստը մեկնաբանելու խնդիրները.
 - ա. Ո՛չ 38 և 39 գլուխների և ո՛չ էլ 40-48 գլուխների համար գոյություն չունի հատուկ պատմական միջավայր: Քանի որ ո՛չ տեքստում և ո՛չ էլ պատմության մեջ չկա պատմական միջավայր, այլ շատ մեկնաբաններ այն դարձնում են էսկատոլոգիական:
 - բ. Նոր Կտակարանը.
 - (1) բացառում է վերջին ժամանակներում զոհաբերության համակարգը Եբրայ. 9 և 10-ում.
 - (2) ներգրավում է հեթանոսներին, մինչ Եզեկ.40-48 գլուխները շատ ազգակենտրոն են:
 - գ. Հիսուսը կարծես թե տնտեսների առակում մերժեց հրեաներին որպես փրկության համար Աստծո ձեռքերում գործիք (տես՝ Մատթ.21:33-46; Մարկ.12:1-12; Դուկ.20:9-19):
 - դ. Չնայած այն բանին, որ հավատում են Աստված գործածելու է Իսրայել ազգին վերջին ժամանակներում (տես՝ Հռոմ.9-11), ես նաև հավատում եմ, որ Եկեղեցին է հոգևոր Իսրայելը (տես՝ Հռոմ.2:28-29; Գաղ.3:1; 6:16; Եփես.2-3):

Գ. Եզեկիելը իր պատգամների մեծ մասը շարադրել է գրավոր տեսքով: Դրանք չեն փոխանցվել բանավոր կերպով, ինչպես օրինակ Եսայի և Երեմիա մարգարեների պատգամները: Դրանք ունեն հստակ կառուցվածք:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Գրքի հեղինակը երբեք կասկածի տակ չի դրվել: Ամբողջ գիրքը, բացի 1:2-3-ից գրված է եզակի թվով և առաջին դեմքով (կենսագրական):
- Բ. Հրեական ավանդույթը, Բաբա Բաթրա 15ա, ասում էր. «Մեծ Ժողովարանի մարդիկ գրեցին Եզեկիելը և Տասներկուսը»: Ինչպես գիտեք այս «գրեց» բառը նշանակում է խմբագրեց կամ հավաքագրեց:
- Գ. Ջոզեֆուսի *Հրեաների Հնությունները* /Josephus' *The Antiquities of the Jews*, 10:5:1/ գրքում ասվում է, որ Եզեկիելը գրել է երկու գիրք: Հնարավոր է, որ սա վերաբերում է Եբրայեցի շատ մարգարեների գրքերին բնորոշ կառուցվածքին, քանի որ դրանք հեշտությամբ բաժանվում են երկու մասի: Առաջին մասում պատմական միջավայրը հանդիսանում է հենց տվյալ հեղինակի օրերը: Գրքի երկրորդ մասում միջավայրը ապագան է (տես՝ Ես.1-39 & 40-66; Դան.1-6 & 7-12; Չաք.1-8 & 9-14 և Եզեկ.1-32 & 33-48): Հնարավոր է, որ Ջերոմի համար սա է պատճառ հանդիսանում Եզեկիելի գրքի միաբանությանը կասկածելու: Նաև ինչո՞ւ էր Ջոզեֆուսը կարծում, որ Եզեկիելը երկու գիրք է գրել:
- Դ. Եզեկիել մարգարեի վերաբերյալ մեր իմացած ամբողջ տեղեկությունը իր գրքից է: ՀԿ-յան որևէ այլ գրքում նրա մասին չի նշվում.
 1. Նա Սադովկի սերնդից սերված քահանա էր, 1:3,
 2. նա ամուսնացած էր, սակայն երեխաներ չունեիր, 24:16-18,
 3. նա Հովաքին Թագավորի հետ միասին գերեվարվեց, երբ քսանհինգ տարեկան էր՝ Ք.Ա. 597 թ-ին, Նաբուգոդոնոսոր II-ի կողմից, 1:1; 3 Թագ.24:24-26,
 4. նա արքայից Բաբելոնից ոչ շատ հեռու գտնվող մի հրեական բնակավայր, արհեստական ոռոգման ջրամբարի՝ Քոբբարի մոտ, 1:1,3, որը կոչվում էր Թելաբիթ, 3:15,
 5. նա առնվազն քսաներկու տարի քարոզեց, 1:1-2; 29:17,
 6. նա ուժեղ, սակայն գթասիրտ մարգարե էր, 9:8; 11:13:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Նա ծնվել է Ք.Ա. մոտ 623թ-ին, Երուսաղեմում:

Բ. Եզեկիելը հանդիսանում է յոթերորդ դարի մարգարեներից մեկը՝ Երեմիա, Դանիել, Նաում, Ամբակում և Սոփոնիա:

Գ. Նաբուքադդասարի և թագադրված արքա Նաբուգոդոնոսոր II-ի Նեո-Բաբելոնյան տիրակալության վերելքի ժամանակներում, Աստված տարբեր տեղերում խոսեց այս մարգարեների միջոցով.

1. Դանիելը գերի է տարվում Նաբուգոդոնոսորի կողմից Ք.Ա. 605 թ-ին: Նա արքայվում է Բաբելոնի պալատ, Դան.1:1:
2. Եզեկիելը Նաբուգոդոնոսորի կողմից գերեվարվում է Ք.Ա. 597թ-ին 10,000 արհեստավորների և Հովաքին Թագավորի հետ միասին, 4 Թագ.24:14-16:
3. Երեմիան մնում է Երուսաղեմում մինչև Գողդիայի մահը:

Դ. Եզեկիելը թվագրում է իր մարգարեությունները: Այս տարեթվերը ցույց են տալիս, որ գիրքը չի գրվել ըստ ժամանակագրական հերթականության:

	Օր	Ամիս	Հովաքինի արքայության տարին
1. տեսիլք, 1:1	5	4	13
2. տեսիլք, 1:2	5	4	5
3. տեսիլք, 8:1	5	6	6
4. ծերակույտի հարցերը, 20:1	10	5	7
5. Երուսաղեմի պաշարումը սկսվեց, 24:1	10	10	9
6. խոսք Տյուրոսի դեմ, 26:1	1	?	11
7. խոսք Եգիպտոսի դեմ, 29:1	12	10	10
8. խոսք Եգիպտոսի դեմ, 29:17	1	1	27
9. խոսք Եգիպտոսի դեմ, 30:20	7	1	11
10. խոսք Եգիպտոսի դեմ, 31:1	1	3	11
11. խոսք Եգիպտոսի դեմ, 32:1	1	12	12
12. խոսք Եգիպտոսի դեմ, 32:17	15	(12)	12
13. Երուսաղեմի անկումը, 33:21	5	10	12
14. նոր Երուսաղեմի տեսիլքը, 40:1	10	1	25

Ե. Այսպիսով Եզեկիելի ծառայությունը սկսվում է մոտ 592թ-ին և շարունակվում է առնվազն մինչև Ք.Ա. 570թ-ը, կամ հավանաբար ավելի երկար:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Եզեկիելի մարգարեությունները կարելի է բաժանել իրարից արմատապես տարբեր երկու պատգամների շարքի.

1. Ք.Ա. 586թ-ի Երուսաղեմի անկումից առաջ նրա քարոզներին բնորոշ էր ապաշխարության կոչը, քանի որ սպասում էին Աստծո զայիք դատաստանին: (1-32)
2. Երուսաղեմի անկումից հետո նրա քարոզները դարձան հույսի, նորոգության և ներման քարոզներ: (33-48)

Բ. Համառոտ ուրվագիծը.

1. Ծառայության նրա կանչը, 1-3
2. Ուխտի ժողովրդի մեղալի վիճակը և Երուսաղեմի անկումը, 4-24:

3. Աստծո դատաստանը շրջապատի երկրների հանդեպ, 25-32
4. Աստծո խոստումը Իր ժողովրդին, քաղաքը և Տանարը վերականգնելու հարցում, 33-37:
5. Ապոկալիպտիկ հարձակում Հյուսիսից, 38-39:
6. Վերականգնված Տանարի տեսիլքը, 40-48:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հրեաները չարչարվում էին իրենց սեփական մեղքի պատճառով և ոչ թե ՅԱՀՎԵԻ թուլության:
- Բ. Ուխտի հավատքն ունի թե՛ հավաքական և թե՛ անհատական մոտեցում: Երեմ. 31:31-34-ում նշված Նոր Ուխտը հիմնականում անհատական բնույթի է, ինչպես 18 և 33 գլուխները: Այն նաև երաշխավորված է Աստծո գործողությամբ (տես՝ 36-37 գլուխները): Սա Նոր Կտակարանում առկա Աստծո ամենակալության և մարդու ուխտի պատասխանատվությունների միջև գտնվող բալանսն է:
- Գ. Աստված հավատարիմ է Աբրահամի և Դավթի սերնդին: Ուխտը վերահաստատվելու է գլուխ 37, 40-48-ում: Գերությունը սիրո արտահայտություն էր:
- Դ. Հրեաների խնդիրները չեն լուծվել, գլուխ 38-39 (տես՝ Դան.7-12): Աստծո ժողովրդի և մեղավոր, փորձությունների մեջ գտնվող մարդկության միջև գոյություն ունի անդադար պայքար (Սաղմ.2):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ




- Ա. Տերմիններ և արտահայտություններ
1. սիկդ, 4:10
 2. Թարսիսի քար, 10:9 (NIV, «հակինթ»)
 3. «նրանց աչքերի առաջ պատը ծակիր և այնտեղից դուրս եկ», 12:5
 4. մոզական գլխաշորեր, 13:18 (NIV, «մոզական բարձիկներ»)
 5. «նոր սիրտ ու նոր հոգի շինեք», 18:31 (NIV, «նոր սիրտ ու նոր հոգի ստացեք»)
 6. «կրակի միջով անցնեք», 20:26 և 31
 7. *Bamah, Բարձունք*, 20:29
 8. «գավազանի տակից անցնել», 20:37
 9. ընտանեկան կուռքեր, 21:21 (NIV, «կուռքեր»)
 10. «քո քիթն ու ականջները հեռացնելու են», 23:25
 11. «դու Եդեմի Աստծո պարտեզումն էիր», 28:13
 12. ձեռքերում,
 13. մշտնջենական ողջակեզ, 46:15 (NIV, «ամեն առավոտ ... որպես մշտնջենական ողջակեզ»):
- Բ. Անձիք.
1. «չորս կենդանի էակներ», 1:5 (NIV, «չորս կենդանի արարածներ»)
 2. մարդու որդի, 2:1
 3. Թամուզ, 8:14
 4. քերովբե, 10:6
 5. Դանիել, 14:14, 20
 6. Ոռդա և Ոռդիրա, 23:4
 7. Սադովկի որդիները, 40:46

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Քորար գետ, 1:1 (NIV, «Կորար Գետ»)
2. Քաղղեացիների երկիր, 1:3 (NIV, «բարեկրնացիների երկիր»)
3. Տիվրոս, 26:2
4. Չավան, 27:13 (NIV, «Հունաստան»)
5. Թորել, 27:13
6. Սոսոք, 27:13
7. Տայանիս, 30:14


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ Ի ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ տեսավ Եզեկիելը գլուխ 1-ում: Ինչո՞վ էր դա տարօրինակ Բարեկրնում:
2. Ի՞նչ է խորհրդանշում գլուխ 2-ի գալարը:
3. Ի՞նչ են ներկայացնում իրենցից 4 և 5 գլուխների սիմվոլիկ գործողությունները:
4. Ինչո՞ւ է 8-րդ գլուխն այդքան ցնցող: Իրական էր արդյոք, թե սիմվոլիկ:
5. Ինչպե՞ս են առնչվում 1 և 11 գլուխները:
6. Ինչո՞ւ է ՀԿ-ում գլուխ 18-ը այդքան տարօրինակ:
7. Ի՞նչ կապ ունի Սատանան Տյուրոսի թագավորի հետ (28): Ինչո՞ւ է գլուխ 28-ը համարվում Սատանայի նկարագրությունը:
8. Ի՞նչ կապ ունեն 36-39 գլուխները Եզեկիելի օրերի հետ:
9. Ի՞նչ կապ ունի 18:30-32-ը 36:26-27-ի հետ:
10. Եզեկիելի տաճարը իրական էր, թե՞ սիմվոլիկ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԴԱՆԻԵԼԻ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Այն անվանվել է գրքի գլխավոր խոսնակի և մարգարեի անունով:

Բ. Նրա անունը նշանակում է «Աստված իմ դատավորն է»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Դանիել գիրքը Եբրայական Կանոնի «Գրեր» բաժնի երրորդ և վերջին մասն է:

Բ. Այդ իսկ պատճառով.

1. Հրեաները նրան համարում էին որպես քաղաքական գործիչ և ոչ թե մարգարե:
2. Այն անդրադարձում է հետագա տարիների ստեղծագործություն (խմբագրություն):
3. Այն պարունակում է Արամերեն հատվածներ (2:4բ-7:28), ինչպես Եզրասի գիրքը:

III. ԺԱՆՐԸ

Ա. Ինչպես շատ եբրայական մարգարեական գրքեր, այս գիրքն էլ բազմաժանր է:

1. 1-6 գլուխները երրորդ դեմքով գրված պատմական իրողություններ են: Դրանք անդրադառնում են Դանիելի կյանքին և ժամանակներին:
2. 7-12 գլուխները ապագայի դեպքեր են, հաճախ արտահայտված առաջին դեմքով և ապոկալիպտիկ նկարագրություններով (տես՝ 7:1,9; 8:1; 9:2):

Բ. Պատմական այս հատուկ իրադարձություններում կարելի է նաև գտնել ապագայի դեպքեր.

1. Եսայի, 1-39 & 40-66
2. Եզեկիել 1-32; 33-48
3. Չաքարիա 1-8 & 9-14:

Գ. Հայտնության գրականությունը յուրահատուկ հրեական ժանր է: Այն կիրառվել է մեծ ճգնաժամերի ժամանակ, որպեսզի մարդկանց լցնի պատմության ընթացքի վրա հավատարիմ Աստծո վերահսկողության և ապագայում փրկության ու օրհնությունների վստահությամբ:

Դ. Այս գիրքը հատկանշական է իր խիստ այլաբանական լեզվով.

1. գույներ,
2. կենդանիներ,
3. թվեր,
4. տեսիլքներ, երազներ
5. հրեշտակային միջամտություն,
6. գաղտնի կողավորված բառեր,
7. սուր երկբայություն /դուալիզմ/ չարի և բարու միջև

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքը չի խոսում իր հեղինակի մասին: 1-6 գլուխները գրված են երրորդ դեմքով, մինչ 7-12-ը՝ առաջին դեմքով, 7:1,9; 8:1; 9:1:

Բ. Հրեական ավանդույթը, Բարա Բաթրա 15ա ասում է. «Մեծ Ժողովարանի մարդիկ գրեցին Դանիելը»: Սա նշանակում է, որ նրանք խմբագրեցին կամ կրկնօրինակեցին այն: Հնարավոր է, որ հենց սա է պատճառը, որ գրքին հատկանշական է ավելի ուշ Եբրայերենը:

Գ. Ավելի վաղ կամ ուշ տարեթվերի համար ներկայացվել են հետևյալ պատճառները.

1. ավելի վաղ տարեթիվը (Ք.Ա. 7-6-րդ դար).
 - ա. գիրքն ինքնին հաստատում է, որ հանդիսանում է Դանիելի տեսիլքները, 7:2,4,6,28; 8:1, 15; 9:1-2; 10:2; 12:4-8:
 - բ. Հիսուսը այս գիրքը վերագրում է Դանիելի հեղինակությանը, Մատթ.24:15:
 - գ. Գրքում պարսկերեն և հունարեն բառերի առկայությունը ապացույց չէ ավելի ուշ թվագրման, քանի որ Դանիելի օրոք այս երկրների միջև գոյություն ունեին առևտրային պայմանագրեր:
 - դ. հետմահու կյանքի մասին աստվածաբանությունը կարելի է նաև տեսնել Հորի և Սաղմոսների գրքերում: Հրեշտակների վերաբերյալ կատարելագործված աստվածաբանություն կարելի է տեսնել Չաքարիայում:
 - ե. Դանիելը համապատասխանում է Բաբելոնյան և Պարսկական արքունի պալատների վերաբերյալ մերօրյա հնագիտական ուսումնասիրությունների արդյունքներին:
2. ավելի ուշ տարեթիվը (Ք.Ա. 2-րդ դար).
 - ա. Եբրայական կանոնում տեղ գտնելը,
 - բ. Պարսկերեն և հունարեն տերմինների առկայությունը,
 - գ. Հետմահու կյանքի և հրեշտակների վերաբերյալ զարգացած աստվածաբանությունը,
 - դ. Պաղեստինի վրա վերահսկողության համար Սելևկյանների և Պտղոմեականների միջև պայքարների կանխասումների յուրահատկությունը, հատկապես 11-րդ գլխում:
 - ե. Դանիելի և Մակկաբայեցիների ժամանակաշրջանի այլ ապոկալիպտիկ գրքերի միջև նմանությունը:
 - զ. Գրքում առկա մի քանի ենթադրյալ «վրիպումներ».
 - (1) «քաղղեացիներ» տերմինի կիրառությունը
 - (2) Դանիելը որպես քաղղեացի (իմաստուն մարդիկ)
 - (3) Բաղդասարը «Բաբելոնի թագավոր» կոչվելը
 - (4) Նաբուգոդոնոսորը Բաղդասարի հայրը կոչվելը
 - (5) «Մարերի Դարեհի» մատնանշումը
 - (6) Պարսկերեն ադմինիստրատիվ *սատրապ* /*satrap*/ տերմինի կիրառությունը:

Դ. Դանիել գրքի միաբանությունը կարելի է տեսնել.

1. Գլուխներ 2, 7 և 8-ի միջև կապը.

<u>Գլուխ 2</u>	<u>Գլուխ 7</u>	<u>Գլուխ 8</u>
ոսկի (Բաբելոն)	առյուծ	խոյ (Պարսկաստան)
արծաթ	արջ	այծ (Հունաստան)
բրոնզ	ընձառյուծ/ինձ	
երկաթ/կավ	գազան	

2. Արամերեն բաժինը սկսվում է 2:4բ-7:28:

Ե. Աստվածաշունչը հաստատում է հետևյալ կայսրությունները.

1. Գլուխ 2-ի ոսկին որպես Բաբելոնը, 2:38
2. Գլուխ 8-ի խոյը որպես Պարսկաստանը, 8:20
3. Գլուխ 8-ի այծը որպես Հունաստանը, 8:21

4. Հետևաբար, չորրորդ թագավորությունը պետք է լինի Հռոմը: Սա այն կայսրությունն է, որի ժամանակ պետք է գա Մեսիան (2:34-35,44; 8:35):

Զ. Ի՞նչ գիտենք Դանիել մարդու մասին.

1. աքտորվել է Ք.Ա. 605թ-ին, 1:1
2. Երուսաղեմում ապրող նշանակալի և հարուստ ընտանիքից էր, 1:3
3. Խելացի էր, 1:4
4. ուներ երագների գիտության և մեկնաբանության հատուկ պարզև, 5:12,14
5. հավատարիմ ծառա էր՝
 - ա. Աստծուն, 6:5
 - բ. թագավորին, 6:4:

Է. ՀԿ-ի Դանիել գրքի Դանիելը Եզեկ.14:14,20 և 28:3-ի նույն Դանիելը չէ: Երբայերենում այս անունները տարբերվում են իրենց գրառմամբ:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Դանիելը գերության է տարվում Նաբուգոդոնոսոր II-ի կողմից, Ք.Ա. 605թ-ին (տես՝ 1:1):

Բ. Դանիելը երագների և տեսիլքների մեկնաբան էր և Բաբելոնի ու Պարսկաստանի թագավորների խորհրդատուն, մինչև Կյուրոս II «մեծի» ժամանակները (1:21; 6:28; 10:1):

Գ. Որոշ գիտնականներ, որոնք մերժում են կանխասված մարգարեությունը, անհանգստանում են Դանիել 11 գլխի պատմական մանրակրկիտ ճշգրտությամբ: Նրանք գիրքը թվագրում են այդտեղ տրված վերջին հատուկ մարգարեության իրականացումից հետո՝ Անտիոքոս IV Էպիֆանեսի վերաբերյալ (Ք.Ա. 175-164թթ.):

Դ. Քանի որ գրքում առաջին դեմքով, եզակի թվով դերանունը շատ հաճախ է գործածվում (տես՝ 7:1,9; 8:1; 9:1), այստեղից կարելի է ենթադրել, որ Դանիելն է հանդիսանում գրքի հեղինակը, որն էլ կրում է իր անունը, և հետևաբար գիրքը պետք է գրված լինի նրա կյանքի օրոք:

VI. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Ա. Համառոտ ուրվագիծ.

1. Դանիելի կյանքը, 1-6
2. Դանիելի տեսիլքները, 7-12:

Բ. Ուրվագիծն ըստ բովանդակության.

1. Դանիելը Նաբուգոդոնոսորի պալատում. գլուխ 1
2. Նաբուգոդոնոսորի երազը և մեկնությունները. գլուխ 2
3. Նաբուգոդոնոսորի կանգնեցրած ոսկե արձանը և Դանիելի երեք ընկերները. գլուխ 3
4. Նաբուգոդոնոսորի երկրորդ երազը և դրա մեկնությունը. գլուխ 4
5. Բաղդասարի խնջույքը և Բաբելոն քաղաքի անկումը. գլուխ 5
6. Մարերի Դարեհ թագավորը, և Դանիելը աշուձների գուրբի մեջ. գլուխ 6
7. Չորս գազանների տեսիլքը. գլուխ 7
8. 7-րդ գլխի տեսիլքը բացատրված և ընդլայնված. գլուխ 8
9. Երուսաղեմի նորոգության համար Դանիելի անհանգստությունը, սակայն ցույց է տրվում հրեաների ապագայի խնդիրները. գլուխ 9
10. Գլուխ 11-12-ի պատգամի ներածական մասը. գլուխ 10

11. Պաղեստինի համար Սելևկյանների և Պտղոմեականների ապագայի պատերազմները. գլուխ 11-12:

VII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Աստված էր/է՛ Տերը՝ վերահսկողը պատմության վրա. վստահի՛ր Նրան և հավատարիմ մնա դժվարին ժամանակներում:

Բ. Աստծո Ժողովրդի (Հրեաների) տառապանքը ավարտված չէր/ չէ:

Գ. Աստված Իր Օծյալի միջոցով հավիտենական Թագավորություն է հիմնելու:

Դ. Լինելու է թե՛ արդարների և թե՛ ամբարիշտների հարություն:

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «քաղղեացիների լեզուն» (սեպագիր), 1:4 (NIV, «Բաբելոնացիների լեզուն և գրականությունը»)
2. «չորրորդը նման է աստվածների որդուն», 3:25 (NASB & NIV)
3. *Մանե, Մանե, Թեկեղ, Ուփարսին, /Mene, Mene, Tekel Upharsin/,* 5:25 (NIV, "...parsin")
4. «երկնքի չոր հողմերը», 7:2 (NASB & NIV)
5. «չորս մեծամեծ գազաններ էլան ծովից», 7:3 (NASB & NIV)
6. «գրքերը բացվեցին», 7:10 (NASB & NIV)
7. «մի ժամանակ և երկու ժամանակներ ու կես ժամանակ», 7:25 (NASB & NIV)
8. «յոթանասուն շաբաթ», 9:24 (NIV, «յոթանասուն յոթնյակ»)
9. «Իշխանի ժողովուրդը», 9:26 (NIV, «կառավարչի ժողովուրդը»)
10. «պղծությունների թև/տարածում», 9:27 (NIV, «տանարի մի թևի վրա պղծությունը կղնի»)

Բ. Անձիք




1. Հովակիմ, 1:1
2. Քաղղեացիներ, 2:2 (NIV, «աստղագետներ»)
3. Բաղդասասար, 2:26
4. հրեշտակային պահապաններ /հայ.՝ դես ու սուրբ մեկը/, 4:13 (NIV, «պատգամաբեր»)
5. Բաղդասար, 5:1
6. Մարաց Դարեհը, 5:31-6:1
7. փոքր եղջյուրը, 7:8
8. Գաբրիել, 7:9
9. մարդու որդի, 7:13
10. փոքր եղջյուր, 8:9
11. Գաբրիել, 8:16
12. Միքայել, 10:13
13. «հարավի իշխան», 11:5 (NIV, «Հարավի թագավոր»)
14. «հյուսիսի թագավոր», 11:6 (NIV, «Հյուսիսի թագավոր»)

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Սենաար, 1:2 (NIV, Բարեղոն)
2. Մարաստան, 8:20
3. Շուշան, 8:2
4. Էլամ, 8:2
5. Հունաստան, 8:21


X. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Քաղղեացի տերմինը ինչպիսի՞ երեք կերպերով է կիրառվում:
2. Ի՞նչ կապ ունեն միմյանց հետ 2, 7 և 8 գլուխների տեսիլքները:
3. Որո՞նք են այն գրքերը, որ նշվում են 7:10 և 12:1 խոսքերում:
4. Ինչո՞վ է դժվար 9:24-27 խոսքերը մեկնաբանելը:
5. Ի՞նչ երկու ազգերի մասին է խոսում գլուխ 11-ը:
6. Դանիելի գրքում կան երկու փոքր եղջյուրներ (7:8 և 8:9). ո՞ւմ են դրանք ներկայացնում:
7. Գրքում որտե՞ղ է նշված մեռելների ընդհանուր հարության թեման:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՈՎՍԵՎ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Այն անվանվել է Մարգարեի անվամբ:

Բ. Նրա անունը նշանակում է «փրկություն»: Այն սկզբնապես եղել է Հեսուի անունը՝ Թվոց 13:16: Այս անունը նույնն է ինչ Ովսեեն (4 Թագ.17:1):

Գ. Որպես մարդ.

1. Բենրիի որդին էր (1:1),
2. Իսրայելի քաղաքացի (7:5), սակայն հայտնի չէ, թե որ քաղաքից էր
3. ինչպես Ամովարը խոսում էր սոցիալական արդարության կարիքի մասին, այնպես էլ Ովսեան խոսում էր ուխտի հավատարմության անհրաժեշտության մասին:
4. նրան կոչել են.
(ա) «Իսրայելի Երեմիան»
(բ) «ՀԿ-ի Հովհաննես Առաքյալը»
(գ) «Իսրայելի առաջին ավետարանիչը»

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը հանդիսանում է «ուշ մարգարեների» մի մասը (Ժողովող 49:10):

Բ. Այն փոքր մարգարեների խմբի՝ Տասներկուսի, առաջին գիրքն է (Բարա Բաթրա 14բ)

1. Ինչպես Եսային, Երեմիան և Եզեկիելը, դրանք բոլորը մի գալարի վրա են:
2. ներկայացնում են տասներկու ցեղերը կամ կազմակերպվածության սիմվոլիկ թիվը:
3. արտացոլում է գրքի ժամանակագրության ավանդական տեսանկյունը:

Գ. «Տասներկուսի» հերթականությունը կամ Փոքր Մարգարեները շատ գիտնականների կողմից կապվել են ժամանակագրական հերթականության հետ: Այնու հանդերձ այս տեսանկյան հետ կապված խնդիրներ կան.

1. Առաջին վեց գրքերը MT և LXX ձեռագրերում տարբեր են.

<u>MT</u>	<u>LXX</u>
Ովսեա	Ովսեա
Հովել	Ամովս
Ամովս	Միքիա
Աբդիա	հովել
Հովնան	Աբդիա
Միքիա	Հովնան

2. Ըստ ներքին ապացույցների Ամովսը ժամանակագրորեն դրված է Ովսեայից առաջ:
3. Հովելի տարեթիվը խիստ վիճելի է: Ես նրան Աբդիայի հետ միասին ցանկում դասում եմ որպես վաղ հետգերության շրջանի մարգարե:

Դ. Ովսեայի տեքստը հավանաբար ամբողջ ՀԿ-ի բոլոր գրքերից ամենադժվարն է:

1. Դա որոշ չափով գրքի զգացմունքային բնույթի պատճառով է:
2. Մի որոշ չափով էլ պատճառը դպրական կրկնօրինակումն է: MT ձեռագիրն ու LXX-ը տարբեր են:
3. Եվ մի որոշ չափով էլ պատճառը Իսրայելի և Հուդայի մեջ խոսվող Եբրայերեն լեզվի տարբերություններն են:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այն հանդիսանում է ութերորդ դարի իսրայելացի մի մարգարեի կյանքի և ժամանակների պատմական իրողություն (հատկապես 1-3 գլուխները):

Բ. Նրա կյանքի պատմությունը այլաբանորեն գործածվեց որպես Աստծո սիրո արտահայտման միջոց.

1. Աստված որպես հավատարիմ երիտասարդ սիրեկան (1-3)
2. Աստված որպես սիրող ծնող (11)
3. Այս փոխաբերությունները հիմնված էին Իսրայելի կողմից մոլորությամբ Բահաղին որպես իրենց «ամուսին» և «տեր» ընդունելու վրա:

Գ. Գրված է գեղեցիկ, հզոր և զգացմունքային պոեզիայի տեսքով, սակայն առանձին մասերով (4-14 գլուխները):

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Համաձայնությունը միշտ եղել է Ովսեան, չնայած, որ մենք շատ քիչ բան գիտենք նրա մասին:

Բ. Բաբա Բաթրա 15ա ասում է, որ Մեծ Ժողովարանի մարդիկ գրեցին «Տասներկուսը»: Սա պետք է որ լինի խմբագրության կամ հավաքագրման իմաստով:

Գ. Ոմանք ունեն հարցեր կապված հետևյալ հատվածների հետ.

1. Հուդայի վերաբերյալ խոսքերը՝ 1:1; 4:15; 5:5,10,12-14; 6:4,11; 8:14; 11:12,
2. Ապագայում բարգավաճման և ազատագրման հատվածները,
3. Ովսեայի ամուսնությունը 1-2 գլուխներում նկարագրված է երրորդ դեմքով, սակայն 3-րդ գլխում՝ երկրորդ դեմքով:

Դ. Առարկությունների պատասխանները.

1. Բոլոր մարգարեները Իսրայելի և Հուդայի բաժանվելը համարում էին սխալ որոշում: Հուդան միշտ դիտարկվել է որպես Աբրահամին և Դավթին տրված ուխտի խոստումների օրինավոր ժառանգորդը:
2. Մարգարեն միավորում է դատաստանի և խոստումների պատգամները: Որպես մեկ աստվածային ուղերձ այս երկուսը միասին են քայլում:
3. Ովսեա գիրքը հնարավոր է նրա քարոզների մի հավաքածու է:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Ովսեան Ք.Ա. ութերորդ դարի մարգարե է.

1. Եսային և Միքիան Հուդայում,
2. Հովնանը, Ամովսը և Ովսեան՝ Իսրայելում

Բ. Ովսեայի ծառայությունը մասամբ համընկավ և ապա հաջորդեց Ամովսի ծառայությանը:

Գ. Նրա քարոզչության թվագրությունը պետք է որ լինի 1:1-ում նշված թագավորների օրերը.

1. Ոզիա (Հուդայի)
2. Հովաթամ (Հուդայի)
3. Աքազ (Հուդայի)
4. Եզեկիա (Հուդայի)
5. Հերոբոլամ II (Իսրայելի)

Դ. Մի քանի գիտական առաջարկներ.

1. Քեյլ /Keil/, Ք.Ա.790-725թթ.
ա. 1:4, սկսել է նախքան Հեուի ազգատոհմի բնաջնջումը
բ. 10:14, ներկա է եղել Սալմանասար V-ի հարձակման ժամանակ
2. Ֆրացիսկո, Ք.Ա. 750-735 թթ.
ա. Ամովսից մի փոքր ուշ
բ. Հերոբովամ II-ի վերջին օրերում
գ. ոչ ուշ, քան Ք.Ա.735թ., քանի որ Ասորեստանը գրավել էր Գադաադի տարածքը
3. Հարրիսոն, նախքան Ք.Ա. 722թ.
ա. Հերոբովամ II մահանում է Ք.Ա. 753թ-ին
բ. Մենահեմը հարկ էր վճարում Թիզբաթալասար III-ին (8:9) մոտ Ք.Ա. 739թ-ին:
գ. Ք.Ա. 735-734 թթ-ի Սիրիա-Եփրատյան Պատերազմի դեպքերը նշվում են 5:8-6:6 (նաև Ես.7-14):
դ. Ովսեայի օրերը բացատրում են 7:11; 9:6 և 12:2-ում Եգիպտոսին ուղղված խոսքերը:
4. Լա-Սոր, Հուբբարդ և Բուշ /La Sor, Hubbard and Bush/, Ք.Ա. 753 մինչև Ք.Ա.722-ից հետո:
ա. սկսվում է Հերոբովամ II-ի մահից հետո, Ք.Ա. 753թ.
բ. տևում է մինչև Եզեկիայի օրերը.
(1) համալիշխան Ք.Ա. 728թ-ից
(2) թագավոր Ք.Ա. 715-ից
գ. քարոզեց Թիզբաթալասար III-ի տիրակալության ընթացքում, Ք.Ա.745-727թ.

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՐԸ

Տես՝ «Ութերորդ Դարի Սարգարենների Պատմական Միջավայրը»՝ Եսայի գրքի ներածության սկզբնամասում:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. (Վերցված է Քլայդ Ֆրանցիսկոյի *Հին Կտակարանի Ներածություն* /Clyde Francisco *Introduction to the Old Testament*, pp. 150-163/)

1. Ներածություն, 1:1
2. Ովսեայի Ընտանեկան Ճզնաժամը, 1:2-3:5
3. Աստծո Բանավեճը Իսրայելի հետ, 4:1-10:15
4. Հայրը և Իր Անառակ Որդին, 11:1-12
5. Ի՞նչ է Անվան մեջ (Հակոբը ի դեմս Իսրայելի) 12:1-15
6. Ազգի Մահը, 13:1-16
7. Այլընտրանք դատաստանի համար, 14:1-9

Բ. (Վերցված է Ի.Ջ. Յանգի *Հին Կտակարանի Ներածություն* /E.J. Young *Introduction to the Old Testament*, pp. 252-254/)

1. Աստծո փոխհարաբերությունն Իր ժողովրդի հետ, 1:1-3:5
2. Սարգարեի տարբեր ճառեր, 4:1-14:9
ա. հյուսիսային ցեղերի հանցանքը, 4-8
բ. հյուսիսային ցեղերի պատիժը, 9:1-11:11
գ. զոջացող ժողովրդի ապագայի օրհնությունները, 11:12-14:9:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. ՅԱՀՎԵՆ անձնական Աստված է: Մեղքը ոչ միայն ուխտի կանոնների խախտում է, նաև դեմ է սիրող Աստծուն (Ամովս):
- Բ. Աստվածաշնչյան հավատքը լավագույնս կարելի է բնորոշել ընտանեկան միջանձնային փոխաբերություններով.
 - 1. ամուսին (Աստված) – կին (Իսրայել)
 - 2. ծնող (Աստված) – երեխա (Իսրայել)
- Գ. ՅԱՀՎԵՆ ընտրել է մեղավոր մարդկության հետ հաղորդակցվել խոստման, զոհաբերության և ուխտի միջոցով: Սա իր մեջ պարունակում է անձնական վստահություն և ուխտի պայմանների հնազանդություն:
- Դ. Ուխտի անհնազանդության հետևանքը դատաստանն է: Դատաստանը միշտ նորոգության նպատակ է հետապնդում: Խրատը ծնողական սիրո դրսևորում է (Եբր. 12:5): Իսրայելի ապագա օրհնությունները պայմանավորված են նրա ներկայիս հնազանդությամբ:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

- Ա. Տերմիններ և արտահայտություններ.
 - 1. պոռնկություն, 1:2 (NIV, «մի պոռնիկ կին»)
 - 2. ճիգ արեք, 2:2 (NIV, «հանդիմանեք»)
 - 3. չամչի կարկանդակներ, 3:1 (NIV, «սուրբ...»)
 - 4. քոռ/քոր /չափման միավոր/, 3:2 (NASB & NIV)
 - 5. սուրբ սյուն, 3:4 (NIV, «սուրբ քարեր»)
 - 6. թերասիխ, 3:4 (NIV, «կուռք»)
 - 7. «նրանք չեն ճանաչում Տիրոջը», 5:4 (NIV, «չեն հասկանում Տիրոջը»)
 - 8. «սահման շարժող/խախտող», 5:10 (NIV, «սահմանի քարեր»)
 - 9. «Եփրեմը խառնվել է ժողովուրդներին», 7:8 (NASB & NIV)
 - 10. «քո հորթը, ո՛վ Սամարիա», 8:5 (NIV, «քո հորթ կուռքը, ո՛վ Սամարիա»)
 - 11. «քամի սերմանեցիր ու մորիկ պիտի հնձես», 8:7 (NASB & NIV)
 - 12. «սգավորների հաց», 9:4 (NASB & NIV)
 - 13. «Ես Եփրեմին քայլել սովորեցրի», 11:3 (NASB & NIV)
 - 14. Ողորմություն [hesed] 4:1; 6:6; 10:12; 12:6 (NIV, «հավատարմություն չկա»)
- Բ. Անձիք
 - 1. Ոզիա, 1:1
 - 2. Աքագ, 1:1
 - 3. Եզեկիա, 1:1
 - 4. Հովասի որդի Հերոբովամը (II), 1:1
 - 5. Գոմեր, 1:3
 - 6. Հեզրայել, 1:4
 - 7. Լո-րուհամա, 1:6
 - 8. Լո-ամմի, 1:9
 - 9. Բահադս, 2:16 (NIV, «իմ ամուսին»)
 - 10. Հարեբ թագավորը, 5:13; 10:6 (NIV, «մեծ թագավորը»)


X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Աքովրի ձորը, 2:15 (Հեսու 7:26)
2. Գաղգաղա, 4:15
3. Բեթ-ավան, 4:15 (Բեթել)
4. Մասիա, 5:1
5. Թարոր լեռ, 5:1
6. Գաբաա, 5:8
7. Ռամա, 5:8
8. Ադամ, 6:7
9. Գաղասադ, 6:8
10. Բաայ-փեզովր, 9:10
11. Լիբանան, 14:6-7

XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ Ի ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք Ովսեան ամուսանցավ պոռնիկի հետ:
2. Աստծո ուխտը Իսրայելի հետ պայմանական է, թե՞ առանց պայմանների:
3. Ի՞նչ կապ ունեն Պահադն ու Գոմերը ՅԱՀՎԵԻ և Իսրայելի հետ:
4. Ինչո՞ւ է ենթադրվում, որ 6:1-3 պարզապես մակերեսային ապաշխարության մասին է:
5. 7:4-6 և 8:4 խոսքերում ո՞ւմ է վերաբերում «նրանք» դերանունը:
6. Արդյո՞ք 8:13 խոսքը հակասում է 11:5-ին:
7. Արդյո՞ք Իսրայելը գերեվարվելու էր Եգիպտոս կամ Ասորեստան: Բացատրե՛ք 11:5-ը 7:10, 8:13 և 9:3 խոսքերի համեմատությամբ:
8. Ինչո՞ւ էին քաղաքական դաշնությունները դատապարտվում ՀԿ-յան բոլոր մարգարեների կողմից:

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՀՈՎԵԼ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Անվանվել է մարգարեի անունով:

Բ. Նրա անունը Աստծո երկու անունների համադրություն է.

1. ՅԱՀՎԵ – Ուխտի Աստծո անունը
 - ա. Ցանկացած Եբրայերեն անուն, որը սկսում է “J” տառով և ապա որևէ ձայնավոր, ապա սովորաբար այն հանդիսանում է ՅԱՀՎԵ անվան հապավումը:
 - բ. Ցանկացած Եբրայերեն անուն, որն ավարտվում է «իա» / “iah”/ վերջավորությամբ, ապա այն նույնպես ՅԱՀՎԵ անվան հապավում է /օր.՝ Եդիա/:
2. Էլ /El/ - Աստծո ընդհանուր անունը
3. Այս երկու Եբրայերեն անունների միջև բայը պետք է նկատի ունենա, որ ՅԱՀՎԵՆ Էլ-ն է:

Գ. Այս անունը շատ տարածված Եբրայերեն անուն էր: Պատմական գրքերում այս անունից ավելի քան տասներեք անգամ նշվում են:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը Եբրայերեն «Մարգարեները» կոչվող կանոնի բաժիններից մի մասն է կազմում:

Բ. Այն հանդիսանում է «Տասներկուսը» կոչվող գալարի մի մասը: Սրանք հայտնի են որպես փոքր մարգարեներ՝ իրենց կարճ բովանդակության պատճառով:

III. ԺԱՆՐԸ

Ա. Սա կիսով չափ արձակ և կիսով չափ դասական Եբրայերեն պոեզիա է:

Բ. Հովելի գիրքը կարծես թե ակնարկում է մի քանի այլ մարգարեների.

- | | |
|---|------------------------------------|
| 1. Հովել 1:15գ – Ամով 4:9; Ես. 13:6 | 4. Հովել 3:10 – Ես. 2:4; Միքիա 4:3 |
| 2. Հովել 2:3 – Ես. 51:3 կամ Եզեկ. 36:35 | 5. Հովել 3:16 – Ամով 1:2 |
| 3. Հովել 2:10 – Ես. 13:10 | 6. Հովել 3:18 – Ամով 9:13 |

Գ. Հովելի վերջին ժամանակների նկարագրությունն արտահայտված է ապոկալիպտիկ տերմինով՝ «Տիրոջ Օրը»:

Դ. Մորեխների պատուհասը մեկնաբանելու մի քանի տեսություններ՝ 1:4; 2:25.

1. սիմվոլիկ, այլաբանորեն

ա. Հրեական Թարգումը՝ 2:25

- 1) ժողովուրդներ
- 2) լեզուներ
- 3) իշխաններ
- 4) արքայություններ

բ. լուսանցքային նշում 6-րդ

- դարի LXX-ի MSS-ում
- 1) Եգիպտացիներ
 - 2) Բաբելոնացիներ
 - 3) Ասորիներ
 - 4) Հունաստանը
 - 5) Հռոմեացիներ

գ. Քրիստոնյա

- մեկնաբանները (18-րդ դար)
- 1) Ասորեստան
 - 2) Քաղդեա
 - 3) Մակեդոնիա
 - 4) Հռոմ

2. անցյալի պատմական դեպքեր

ա. մարգարեն օգտագործում է Եբրայերեն բայի անցյալ ժամանակը

- բ. սա մարգարեությանը բնորոշ միջոց է, որով վերցվում էր մարգարեի կյանքի օրոք տեղի ունեցող դեպքերը և դրանք պրոֆետիզմում ապագա միջավայրում: Իսրայելի ապագան կախված էր ներկայում իր հավատքով և ապաշխարությանը կատարած ընտրություններից:
- 3. ապագայի պատմական դեպքեր
 - ա. իրականում սպասվում էր, որ Իսրայելի մեղքի պատճառով հարձակում էր տեղի ունենալու
 - բ. կիրառվում են մորեխները, քանի որ սովորաբար դրանք նկարագրվում են ռազմական փոխաբերություններով.
 - 1) նման են ձիերի
 - 2) կառքերի ձայնին են նմանում
 - 3) առաջ են շարժվում կարգուկանոնով
 - գ. Հովելը հավանաբար կապված է Հայտնության 9:3-11-ի հետ:
- 4. ապոկալիպտիկ
 - ա. «Տիրոջ Օրը» արտահայտության կիրառությունը նմանատիպ ժանրի ազդանշան է
 - բ. այս ժանրին բնորոշ են գույների և կենդանիների գործածությունը

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Բացի մարգարեի և նրա հոր՝ Փաթուելի անունից, ոչինչ հայտնի չէ, 1:1:

Ա. Այս մարգարեի վերաբերյալ երկու ավանդույթ է եղել.

1. Ռուբենի ցեղից է (Pseudo-Eriphanius)
2. Հուդայի ցեղից էր, քանի որ լավ հասկանում էր Տաճարի կանոններից

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Անհնար է ասել գրքի գրառման ճշգրիտ տարեթիվը (Ջ. Քեմբլ Մորգանն /G. Campbell Morgan/ ասում էր, որ այս գիրքը մարգարեների մեջ կա՛մ ամենաառաջինն է եղել, կա՛մ է՛լ ամենավերջինը).

1. ըստ գրքի ներքին վկայության տրվել է երկու տարեթիվ.
 - ա. գրվել է գերությունից հետո.
 - 1) հնարավոր է այն կապված է Հուդայի վրա սարսափելի հարձակումից, որը այլաբանորեն բնութագրվում է մորեխների պատուհասով:
 - 2) 3:2-ը ակնարկում է, որ Իսրայելը արդեն գերեվարվել էր: «Իսրայել» անունը այժմ գործածվում էր Հուդայի համար, 2:27; 3:1-2,16:
 - 3) 3:6-ը խոսում է հույն աքսորյալի առևտրի մասին, որն ակնարկում է հետգերության տարեթիվ:
 - 4) 3:1,17-ը ակնարկում է, որ Հուդան արդեն գերության մեջ էր և կրկին կանգնած էր հարձակման վտանգի առջև, եթե շարունակեր մնալ մեղքի մեջ:
 - 5) ոչ մի թագավոր չի նշվում, որով կարելի է ենթադրել հետգերության ժամանակաշրջան: Հովելը իր պատգամն ուղղում է ազգի մեծերին և քահանաներին:
 - 6) զավթիչներն այս գրքում անվանվում են «հյուսիսի մարդիկ», որն ակնարկում է հարձակում Միջագետքից (Ասորեստան, Բաբելոն, Պարսկաստան), 2:20:
 - 7) Գերությունից առաջ Բահադի երկրպագությանը բնորոշ տեսարաններ չեն մատնանշվում:
 - բ. գրվել է նախքան գերությունը.
 - 1) հետևյալ հատվածները կարծես թե մատնանշում են Տաճարը, 1:9,13-14; 2:17:
 - 2) 3:4,6,8 համարներում նշված թշնամիները (Փյունիկեն, Պաղեստինը, Եդոմը, Սաբայեցիները) գերությունից առաջ էին և ոչ թե հետո:

2. Համաձայն արտաքին վկայության
 - ա. Եբրայական կանոնում գրքի տեղ գտած դիրքը մանացույց է անում նախագերության տարեթիվ:
 - բ. Այնուհանդերձ այն կարող էր դրվել Ամովսից մոտ, քանի որ դրանք երկուսն էլ խոսում են «ՅԱՀՎԵԻ Օրվա» և մորեխների հարձակման մասին, որպես դատաստանի սիմվոլներ:
3. Ըստ հեղինակի ապացույցները լավագույնս համապատասխանում են գերությունից հետո վաղ շրջանին:

Բ. Տեսություններ Պաղեստինի կողմից կատարած մի հարձակման տարեթվի հիման վրա.

1. Հովաս թագավորի տիրակալության ընթացքում (Ք.Ա. 837-800)
2. Ոգիա թագավորի տիրակալության ընթացքում (Ք.Ա. 783-742)
3. Սեղեկիա թագավորի տիրակալության ընթացքում (Ք.Ա. 598-586)
4. Չորաբաբելի օրոք (Ք.Ա. 589)
5. Մադաքիայի օրոք (Ք.Ա. 430)
6. Աստծո ժողովրդի վրա ապագայում տեղի ունեցող էսկատոլոգիական հարձակում

Գ. Գոյություն ունի գրականական կապ.

1. Հովել 2:32 և Աբդիա 17-ի միջև: Դրանք երկուսն էլ վաղ հետգերության շրջանի են:
2. Հովել 3:16 և Ամովս 1:2-ի միջև: Հովելը մեջբերում է շատ մարգարեների, հավանաբար նա ավելի հաճախ մեջբերում է Ամովսից:

Դ. Չոն Կավլինը մի դիպուկ խոսք է ասել Հովելի գրքի տարեթվի վերաբերյալ. «Քանի որ հստակություն չկա, ապա ավելի լավ է հանգիստ թողնենք այն ժամանակը, երբ նա սովորեցնում էր, և կտեսնենք, որ դա խիստ կարևոր չէր: Ովսեայի ժամանակը չիմանալը ընթերցողի համար կարող էր մեծ կորուստ լինել, քանի որ շատ հատվածներ կան, որոնք առանց պատմությունն իմանալու հնարավոր չէր լինի բացատրել. սակայն ինչ վերաբերում է Հովելի գրքին, այս բանի անհրաժեշտությունը չկա, քանի որ նրա վարդապետության նշանակությունն ակնհայտ է, անգամ եթե դրա ժամանակը անորոշ և անհայտ է»:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋՎԱՃՅՐԸ – Դեկտեմբեր, 1915 (XXVIII, No. 6) National Geographic Magazine ամսագիրն արձանագրում է մարախների աղետ Պաղեստինում: Այս հոդվածը շատ օգտակար է մարգարեի ակնարկները հասկանալու հարցում:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

- Ա. Մարախների ավերիչ աղետի տեսիլքը խորհրդապատկերում է մի հարձակվող զորքի, 1:1-2:27:
- Բ. Տիրոջ Օրը ապաշխարած Աստծո ժողովրդի համար օրհնություն և ոչ թե անեծք է լինելու, 2:28-3:21 (Սոփոնիան հակառակն է):

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մարգարեն իր օրերի դեպքերը տեսնում է որպես գալիք իրադարձությունների սովերը:

Բ. Հովելը կոչ է անում համագգային ապաշխարության օր ունենալու, 1:13-14; 2:12-17:

Գ. Եթե Աստծո ժողովուրդը ապաշխարի, ապա Աստված կրերի թե՛ ֆիզիկական, և թե՛ հոգևոր բարգավաճում՝ օրհնություն (2 Օր.27-28):

Դ. Աստված դատելու է շրջապատող երկրները – 3:1-17:

Ե. Հոգևոր նորոգության այս նոր օրը (տես՝ 2:28-29) ազդելու է.

1. կանանց և տղամարդկանց,
2. ծերերին և երիտասարդներին,
3. ծառային և ազատին: (տես՝ Գործք 2; Գաղ.3:28)

2. «Տիրոջ Օրը» Ամովսին, Հովելին և Սոփոնիային բնորոշ արտահայտություն է: Այն թե ինչպես ենք մենք արձագանքում Աստծուն հիմա, որոշում է, թե ինչ օր կլինի դա մեզ համար՝ օրհնության, թե՞ դատաստանի:

Է. Աստծո բնավորությունը նկարագրվում է 2:13-ում (տես՝ Ել.34:6; Սաղմ.103:8-13 և Նեեմ.9:17):

Ը. 2:28-32-ում Հոգու թափվելը արտացոլում է Նոր Ուխտի Ժամանակաշրջանը (տես՝ Երեմ.31:31-34 և Եզեկ.36:26-27):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «նրա ճյուղերն սպիտակեցին», 1:7 (NASB & NIV)
2. «Տիրոջ Օրը մոտ է», 1:15 (NASB & NIV)
3. «Փո՛ղ հնչեցրեք Սիոնում», 2:1,15 (NASB & NIV)
4. «ձեր սրտերը պատռեցեք, և ոչ թե ձեր հանդերձները», 2:13 (NASB & NIV)
5. բազմողորմ (*hesed*), 2:13 (NIV, «սիրով առատ»)
6. «Իմ Հոգին կթափեմ բոլոր մարդկանց վրա», 2:28 (Գործք 2:16) (NIV, «բոլոր ժողովուրդների վրա»)
7. «ով որ կանչի Տիրոջ անունը, կազատի», 2:32 (Գործք 2:21; Հռոմ.10:13)(NIV, «ամեն ով որ կանչի Տիրոջ անունը, կփրկվի»):
8. «Իմ ժողովրդի վրա վիճակ գցեցին», 3:3 (NASB & NIV)
9. «ձեր խոփերից սրեր կռեցե՛ք», 3:10 (NASB & NIV)

Բ. Անձիք




1. Ամենակարողը (*El Shaddai*), 1:15
2. Սաբայացիներ, 3:8

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

- | | |
|----------------------|---|
| 1. Տիվրոս, 3:4 | 5. Եդովմ, 3:19 |
| 2. Սիդոն, 3:4 | 6. Սիոն, 2:1 |
| 3. Պաղեստին | 7. Մատիմի ձոր, 3:18 (NIV, «Ակացիաների ձոր») |
| 4. Չավան (Հունաստան) | |


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք 1:4-ի մարախները այլ տեսակի էին, թե գտնվում էին մարախների կյանքի տևողության տարբեր փուլերում:
2. Ինչո՞ւ էր քահանաներին ասված, որ սզան:
3. Սահմանե՞ք 1:15-ում կիրառված Աստծո անունը:
4. ՆԿ-ում գլուխ 2-ից ո՞ր երկու համարներն են կիրառված և ո՞ւմ կողմից:
5. Ես.3:15-ը իրական է, թե փոխաբերական. ինչո՞ւ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԱՄՈՎՍ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Այն վերնագրվել է մարգարեի անունով:

Բ. Ամովս նշանակում է.

1. «բեռ լինել»,
2. «բեռ կրել»,
3. «պահպանել»,
4. Ռարբիական մի ավանդույթ պնդում է, որ գիրքը վերնագրվել է այն մարդկանց կողմից, որոնք հակառակվում էին նրա պատգամին, ակնարկելով, որ նա պարզ չէր խոսում կամ էլ կակազում էր:

Գ. ՀԿ-ում սա միակ տեղն է, որտեղ նշվում է այս անունը:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարենների» մի մասն է:

Բ. Այն փոքր Մարգարենների ցանկի «Տասներկու» գրքերից մեկն է:

Գ. MT ձեռագրերի կողմից այն տեղադրվել է փոքր մարգարենների ցանկում երրորդ տեղը, չնայած որ LXX-ը դրել է այն երկրորդ տեղում:

III. ԺԱՆՐԸ

Ա. Սա գրի առնված մարգարեններից առաջինն է:

Բ. Հանդիսանում է դասական եբրայական մարգարեություն: Եբրայերեն պոեզիայի և պատկերազարդման գերազանց օրինակ է:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հրեական ավանդույթը միշտ էլ պնդել է, որ հեղինակը եղել է Թեկուեից Ամովսը:

Բ. Որպես մարդ.

1. Նա Հուդայի Թեկուեից էր, որը գտնվում է Բեթլեհեմից մոտ հինգ մղոն դեպի հարավ-արևելք:
2. Նա մարգարե չէր, ոչ էլ մարգարենների ընտանիքի անդամ էր հանդիսանում (տես՝ 7:14): Սկզբում մարգարենները համայնքներով միասին էին ապրում: Հետագայում ոմանք միացան պալատներին:
3. Ըստ երևույթին նա եղել է «փոքր ոչխարների» նախրապան (տես՝ 1:1): Նրան բնութագրող այս բառը հազվադեպ տերմին է, սակայն կիրառվում է ոչխարներ պահողի համար (տես՝ 4 Թագ.3:4):
4. Նա հանդիսանում էր. (1) պտղատու ծառերի այգեպան, կամ (2) «մոլաթուզ քաղող» (տես՝ 7:14): Այս գործը հնարավոր է պահանջում էր ամենամյա տեղափոխություն տարբեր տեղանքներ: Այս ծառերը կոչվում են «Ժանտաթզենի»: Պտուղը շատ նման է թուզի: Այս պտուղների վրա պետք է մեկ-մեկ ճեղքեր անել, որպեսզի լավ հասունանան: Մերձավոր

Արևելքի ժողովրդի համար այս միրգը շատ կարևոր էր: Դավիթը նույնիսկ հատուկ պահապաններ էր նշանակել դրանց համար (տես՝ 1 Մնաց.27:28):

5. Հրեական ավանդույթն ասում է, որ նա հաջողակ գործարար էր: Սա մի քիչ տարբերվում է այսօրվա այն կարծրատիպից, որ նա աղքատ գյուղացի մարդ էր: Հրեական ավանդույթը ճիշտ է նրա պոեզիայի գերազանցության ու գրական վերլուծության շնորհիվ: 2 Թագ. 14:2բ-ից գիտենք, որ Թեկուեն հայտնի էր իր իմաստուն բնակչությամբ: Նա Իսրայելում առաջին մարգարեն էր, որ արձանագրել է իր պատգամները: Ուշադրություն դարձրեք 5:1; 7:1-9; 8:1 և 9:1-ում առաջին դեմք, եզակի թվով դերանունները:
6. Նա քարոզում էր Իսրայելի հյուսիսային թագավորությունում: Մենք հաստատ գիտենք, որ Բեթելը նրա քարոզի տեղանքն էր, սակայն հավանական է, որ Իսրայելում եղել են շատ ուրիշ աշխարհագրական տեղանքներ էլ, որտեղ նա քարոզել է:

Գ. Հեղինակի հարցը խնդրահարույց է, քանի որ.

1. գիրքն ակնարկում է, որ նա աղքատ հողագործ էր,
2. գրքի ժանրն ու պոեզիան գերազանց են, որից կարելի է ենթադրել, որ հեղինակը կիրթ էր:
3. ասում են, որ նրա քարոզները բանավոր են հնչեցվել, սակայն դրանք գեղեցիկ շարադրված և հանգավորված են, որը ակնարկում է գրավոր գրականության:
4. շատերը կարծում են, որ Ամովսը խմբագրական կամ դպրական աջակցություն է ունեցել:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Հարաբերականորեն այն հեշտ է թվագրել Ք.Ա. 750թ.՝ 10 տարի ուշ կամ շուտ հաշվարկով:

Բ. Ամովսի գրքի առաջին համարը ամենաերկարն ու ամենանճգրիտ տարեթիվ փոխանցելու փորձն է ամբողջ ՀԿ-յան գրքերի մեջ.

1. Ոգիան թագավորեց մոտ Ք.Ա. 783-742թթ. (Բրայթ)
2. Հերոբոլամ II-ը թագավորեց մոտ Ք.Ա.786-746թթ. (Բրայթ)
3. Երկրաշարժը նույնպես գրքի թվագրությունը ճիշտ գտնելու փորձ է (տես՝ 1:1; 8:8; 9:1,5): Ջոզեֆուսը սա կապում է 2 Մնաց.26:16-21 խոսքերի հետ, երբ Ոգիան զոհ մատուցեց: Հնագիտական ուսումնասիրությունները Հազորում հանգել են մոտ Ք.Ա. 760թ. (Յադին, 1964 /Yadin/):

Գ. 5:8 և 8:9 համարներում արևի խավարում է նշվում: Հնարավոր է սա հենց այն նույն խավարումն է, որը նշվում է ասորական փաստաթղթերում, որը տեղի է ունեցել Ք.Ա. 763թ-ի հունիսի 15-ին, սակայն եղել է ևս մեկ արևի լրիվ խավարում Ք.Ա. 784թ-ի, փետրվարի 9-ին:

Դ. Ամովսի հանդիպումը Ամասիայի հետ՝ Բեթելում իշխող քահանայի, որը գործում էր Հերոբոլամ II-ի օրոք, նույնպես լավ հնարավորություն է գիրքը թվագրելու համար (տես՝ 7:10-17):

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Համագոր աստվածաշնչյան նյութը գտնվում է.

- | | |
|--------------------|-----------|
| 1. 4 Թագ.14:3-17:6 | 4. Եսայիա |
| 2. 2 Մնաց.25-28 | 5. Միքիա |
| 3. Ովսեա | |

Բ. Աստծո ժողովրդի մեջ կռապաշտության ամենապարզ ամփոփումը կարելի է տեսնել Ովսեայի գրքում.

1. 2:16, «այլևս Ինձ չի կոչի Բահադս»
2. 4:12-13, «...դուստրերը, որ պոռնկություն են անում...»
3. 4:17, «Եփրեմը կուռքերին է միացել, թողե՛ք նրան»

4. 13:2, «...հորթերին են համբուրում» (ծիսակարգ)

Գ. Սոցիալական իրադրությունը.

1. Թե՛ Իսրայելի և թե՛ Հուդայի համար տնտեսական բարգավաճման և ռազմական հզորացման ժամանակ է եղել: Սակայն այս բարգավաճումը շահավետ է եղել միայն հարուստ խավին: Աղքատներին շահագործել և բռնացել են: Կարծես թե այդ օրերին ավելացել են նաև հավելյալ կուռքեր:
2. Իսրայելի և Հուդայի սոցիալական կայունությունը և սեփականությունը մի քանի հանգամանքներից է եղել կախված.
 - ա. Հյուսիսում Հերոբոլամ II-ի (Ք.Ա.786-746թթ.) և հարավում՝ Ոգիա թագավորի (Ք.Ա. 783-742թթ.) երկարատև և հաջողակ թագավորությունը:
 - բ. Եգիպտոսի և Միջագետքի ժամանակավոր ետ քաշվելը:
 - գ. Ք.Ա. 802թ-ին Սիրիայի Ադադ-Նիրարիի կողմից ասորիների պարտությունը:
 - դ. Իսրայելի և Հուդայի միջև բախումների բացակայությունը:
 - ե. Հյուսիսից մինչև հարավ Պաղեստինի ցամաքային առևտրային կամրջի միջով անցնող կարևոր անցակետերի հարկատվությունը և շահագործումը արագ տնտեսական աճման պատճառ հանդիսացավ, նույնիսկ հարուստ խավի համար շռայլության հնարավորություն:
 1. «Մամարիայի Օստրական», որը թվագրությունը համընկնում է Հերոբոլամ II-ի թագավորության օրերին, կարծես թե մատնացույց է անում Սողոմոնի ադմինիստրատիվ կազմակերպությանը շատ նման մի հաստատության: Սա իրականում կարծես թե հաստատում է «ունևորների» և «չունևորների» միջև մեծացող ջրբաժանը:
 2. Հարուստների անագնվությունը հստակ նկարագրվում է Ամովսի գրքում, որը կոչվում էր «սոցիալական արդարության մարգարե»: Օրենագետների կողմից կաշահակերությունը և առևտրում կշռի մեջ խաբեությունը չարաշահման երկու հստակ օրինակներ են, որոնք ակնհայտ կերպով տարածված էին Իսրայելում և Հուդայում:

Դ. Կրոնական իրադրությունը.

1. Դա ավելի շուտ արտաքին կրոնական գործերի և շատ քիչ իրական հավատքի ժամանակ էր: Քանանի պտղաբերության պաշտամունքները խառնվել էին Իսրայելի կրոնի հետ: Ժողովուրդը կռապաշտության մեջ էր, բայց դա կոչում էր ՅԱՀՎԵիզմ: Քաղաքական դաշնակիցների կողմը Աստծո ժողովրդի շողումը նրանց ներքաշել էր հեթանոսական պաշտամունքի և ծեսերի մեջ:
2. Իսրայելի կռապաշտության մասին գրված է 4 Թագ.17:7-18-ում:
 - ա. հ. 8, նրանք հետևեցին քանանացիների պաշտամունքի ծեսերին.
 - 1) պտղաբերության պաշտամունք
(ա) բարձր տեղեր, հհ. 9, 10, 11
(բ) սուրբ սյուներ (Բահադ), հհ. 10, 16
(գ) Աստարովթ, հ. 16, սրանք Բահադի կողակցի փայտե սիմվոլներն էին: Դրանք կա՛մ փորագրված փայտե սյուներ էին կա՛մ էլ իրական ծառեր:
 - 2) Հմայություն, հ. 17: Այս մասին մանրակրկիտ քննարկվում է Ղևտ.19-20 և 2 Օր.18-ում:
 - բ. հ. 16, նրանք դեռևս շարունակում էին Դանում և Բեթելում Հերոբոլամ I-ի կողմից (3 Թագ.12:28-29) կանգնեցված երկու ոսկե հորթերի պաշտամունքը, որոնք խորհրդապատկերում էին ՅԱՀՎԵին:
 - գ. հ. 16, նրանք երկրպագում էին Բաբելոնի երկնքի աստվածներին՝ արև, լուսին, աստղեր և համաստեղություններ:
 - դ. հ.18, նրանք երկրպագում էին Փյունիկյան պտղաբերության կրակի աստծուն՝ Մոդոքին (տես՝ Ղևտ.18:21; 20:2-5):

3. Բահադիզմ (տես՝ Վ. Ֆ. Օլբրայթի *Իսրայելի հնագիտությունն ու կրոնը*, էջ՝ 82վ. /W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel*):
 - ա. Մեր ունեցած լավագույն աղբյուրը «Ուզարտայի Բահադի Էպոսը» նյութն է.
 - 1) Պատկերում է Բահադին որպես ամեն եղանակի մահացող և հարություն առնող աստծո: Նրան հաղթում է Մոթը և բանտարկում սանդարամետում: Երկրի վրա ամբողջ կյանքը դադարում է: Սակայն մի աստվածուհու օգնությամբ նա ամեն գարուն հարություն է առնում և հաղթում Մոթին: Նա պտղաբերության աստվածն է, որին երկրպագում էին կախարդություն անելով:
 - 2) Նա նաև հայտնի է որպես Հադադ:
 - բ. Էլ-ը քանանացիների պանթեոնում գլխավոր աստվածությունն է, սակայն Բահադի հռչակը զավթել էր նրա տեղը:
 - գ. Իսրայելը ամենաշատը ազդեցություն էր կրել Տիվրոսյան Բահադիզմից Հեզաբելի միջոցով, որը Տիվրոսի թագավորի աղջիկն էր: Նա ընտրվել էր Չամբրիի կողմից իր որդու՝ Աքաբի համար:
 - դ. Իսրայելում Բահադը երկրպագվում էր տեղի բարձր վայրերում: Նա սիմվոլը վեր խոյացող քար էր: Նրա կենակիցն էր Աստարովը, որի սիմվոլը կյանքի ծառը խորհրդանշող փորագրված սյուն էր:
4. Նշված կռապատության մի քանի տեսակներ և աղբյուրներ:
 - ա. Ոսկե հորթերը Բեթելում և Դանում՝ տեղադրված Հերոբոլամ I-ի կողմից, ՅԱՀՎԵԻ երկրպագության համար:
 - բ. Տիվրոսյան պտղաբերության աստծո և աստվածուհու պաշտամունքը տեղի բարձր վայրերում:
 - գ. Այդ օրերի քաղաքական դաշնակցություններում առկա անհրաժեշտ կռապաշտությունը:

Ե. Քաղաքական իրադրությունը Հյուսիսում

1. Հերոբոլամ II-ը վերջին ամենահզոր թագավորն էր Իսրայելում: Նա չորրորդն էր Հեուի սերնդից և վերջին կանխասված թագավորը, որ պետք է թագավորեր (տես՝ 4 Թագ. 10:30): Նա ունեցավ երկարատև և հաջողակ թագավորություն (Ք.Ա. 786-746թթ.):
2. Հերոբոլամ II-ի մահից հետո քսանհինգ տարվա ընթացքում թագադրվեց վեց թագավոր.
 - ա) Չաքաբիան (4 Թագ. 15:8-12): Նա սպանվեց ընդամենը վեց ամիս անց:
 - բ) Մեդոլումը (4 Թագ. 15:13-15): Նա սպանվեց ընդամենը մի ամիս անց:
 - գ) Մանահեմը (4 Թագ. 15:16-22): Նա տաս տարի թագավորեց, սակայն ծանր հարկեր վճարեց Թիզբաթայալասար III-ին:
 - դ) Փակեթիա (4 Թագ. 15:23-26): Նա երկու տարի թագավորեց և սպանվեց:
 - ե) Փակեթ (4 Թագ. 15:27-31): Նա հինգ տարի թագավորեց և սպանվեց: Նա Ասորեստանին տանուլ է տալիս մի քանի քաղաք:
 - զ) Ովսեեն (4 Թագ. 15:30, 17:1-6): Նա ինը տարի թագավորեց և գերեվարվեց Ասորեստանի կողմից, երբ 722թ-ին Սամարիան ընկավ:
3. Ութերորդ դարի ընթացքում Պաղեստինի վրա մեծ ազդեցություն թողած Ասորեստանի և Բաբելոնի հարձակումների վերաբերյալ համառոտ ամփոփում.
 - ա) Ութերորդ դարի չորս մարգարեները ակտիվ էին Ասորեստանի Տիգրիս-Եփրատյան կայսրության վերելքի ժամանակ: Աստված պատրաստվում էր գործածել այս դաժան ազգին, որպեսզի դատի Իր ժողովրդին, հատկապես Իսրայելին: Բացառիկ դեպքերից մեկը եղավ այն, որ կազմավորվեց միջ-Հորդանանյան քաղաքական և ռազմական ալիանսը, որը հայտնի էր որպես «Սիրիա-Եփրատյան Լիգա» (Ք.Ա. 735): Սիրիան և Իսրայելը փորձում էին ստիպել Հուդային միանալ իրենց Ասորեստանի դեմ պայքարելու: Փոխարենը Աքազը Ասորեստանին օգնության համար նամակ է ուղարկում: Առաջին հզոր կայսրություն ստեղծելու մոլուցքով ասորի թագավորը՝ Թիզբաթայալասար III (Ք.Ա. 745-727), արձագանքում է ռազմական

մարտահրավերին և ներխուժում Միրիա: Հետագայում Ասորեստանի խամաճիկ թագավորը Իսրայելում Ռվսենն (Ք.Ա. 732-722թթ.) նույնպես ընթուստանում է, դիմելով Եգիպտոսին: Սալմանասար V-ը (Ք.Ա. 727-722թթ.) կրկին հարձակվեց Իսրայելի վրա: Նա մահացավ նախքան Իսրայելի հանձնվելը, սակայն Ք.Ա. 722թ-ին նրան հաջորդած Սարգոն II (Ք.Ա. 722-705թթ.) գրավեց Իսրայելի մայրաքաղաք Սամարիան: Ասորեստանն այս առիթով տեղահանեց ավելի քան 27,000 իսրայելացիների, իսկ մինչ այդ Ք.Ա. 732թ-ին Թիզլաթպալասարը գերեվարել էր հազարավորների:

- բ) Աքազի մահից հետո (Ք.Ա. 735-715թթ.) մեկ այլ ռազմական դաշնակցություն կազմավորվեց տրանս-հորդանանյան երկրների և Եգիպտոսի միջև ընդդեմ Ասորեստանի (Ք.Ա. 714-711թթ.): Այն հայտնի է որպես «Աշդոդի ապստամբություն»: Հուդայի շատ քաղաքներ ավերվեցին, երբ Ասորեստանը կրկին ներխուժեց: Սկզբում Եգեկիան աջակցում էր այս դաշնակցությանը, սակայն հետագայում ետ քաշվեց աջակցելուց:
- գ) Այնուհանդերձ, ասորական ամբողջ կայսրության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապստամբությունների հետ միասին կրկին ևս մեկ դաշնակցություն փորձեց օգտվել առիթից, երբ Ք.Ա. 705թ-ին Ասորեստանի հզոր թագավոր Սարգոն II-ը մահացավ: Եգեկիան այս ապստամբության մեջ ուներ իր լիակատար մասնակցությունը: Այս մարտահրավերի առիթով Սենեքերիմը (Ք.Ա. 705-681թթ.) ներխուժեց Պաղեստին (Ք.Ա. 701թ.) և ճամբարեց Երուսաղեմ քաղաքի մոտ (4 Թագ. 18-19; Ես. 36-39), սակայն նրա զորքը Աստծո ձեռքով հրաշքով ջախջախվեց: Գիտնականների մեջ հարցեր են մնացել, թե քանի անգամ է Սենեքերիմը ներխուժել Պաղեստին (օրինակ՝ Ջոն Բրայթը տալիս է մի հարձակում՝ Ք.Ա. 701թ. և մեկ այլ հավանական ներխուժում՝ Ք.Ա. 688թ, տես՝ էջ 270): Եգեկիային խնայվեց ասորական ավար, սակայն Բաբելոնյան պատվիրակությանը Հուդայի գանձերը գողոցամտորեն ցուցադրելու պատճառով, Եսային մարգարեացավ Հուդայի անկումը Բաբելոնի կողմից (39:1-8): Երուսաղեմը ընկավ Նաբուգոդոնոսորի ձեռքով Ք.Ա. 587-586թթ.:
- դ) Եսային նաև մարգարեացավ Աստծո ժողովրդի վերականգնման մասին Կյուրոս II մարագ-պարսից թագավորի օրոք (41:2-4; 44:28; 45:1; 56:11): Նինվեն ընկավ Ք.Ա. 612թ-ին Բաբելոնի կողմից, իսկ Բաբելոն քաղաքն ընկավ Ք.Ա. 539թ-ին Կյուրոսի զորքի ձեռքով: Ք.Ա. 538թ-ին Կյուրոսը հրաման արձակեց, որ բոլոր գերեվարված ժողովուրդները, ինչպես նաև հրեաները, կարող են տուն՝ հայրենիք վերադառնալ: Նա նույնիսկ իր գանձարանից ֆինանսապես ապահովեց այդ ժողովուրդներին վերակառուցելու իրենց ազգային տաճարները:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Ա. Դատեր ազգերի դեմ, 1:1-2:3 (գրեթե մինչև 2:16)

- 1. Միրիա (Դամասկոս), 1:3-5
- 2. Փղշտացիները (Գագա), 1:6-8
- 3. Փյունիկիա (Տիվրոս), 1:9-10
- 4. Եդովմ, 1:11-12
- 5. Ամմոն, 1:13-15
- 6. Մովաբ, 2:1-3

Բ. Հատուկ դատեր Աստծո ժողովրդի դեմ, 2:4-6:14

- 1. Հուդա, 2:4-5
- 2. Իսրայել, 2:6-6:14 (Իսրայելի վրա գալիք դատաստանի ենթատեքստը մինչև 6:14)

Գ. Դատաստանի տեսիլքներ, 7:1-9:10

1. Մարախներ, 7:1-3
2. Կրակ, 7:4-6
3. Կապարալար, 7:7-17
4. Ամառային պտուղ, 8:1-14
5. Սրբարանի կործանում, 9:1-10

Դ. Մեսիական հույս, 9:11-15

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ամովսը Աստծո բարկությունը կապում է Իսրայելի կողմից Մովսիսական ուխտի խախտման հետ: Մենք պետք է հասկանանք Հին Կտակարանի հավաքական հավատքի պատասխանատվության և անհատական հավատքի միջև կապը: Մենք էլ Իսրայելի պես ունենք համայնքային մեղքի խնդիրը, սակայն, շատ հաճախ մեր մտքում երկու չափանիշներ կան.

1. մեր անձնական կյանքը և հավատքը,
2. մեր հավաքական, սոցիալական, համայնքային կյանքը:

Բ. Ամբողջ երկրի վրա Աստծո ինքնիշխանությունը ՅԱՀՎԵԻ համար հիմք է հանդիսանում Իսրայելի հետ ունեցած Ուխտից դուրս բոլոր ազգերի հանդեպ դատաստան տեսնելու հարցում: Մա Իսրայելի կողմից մոնոթեիզմի՝ միաստվածության հասկացության հիմքն է:

Գ. Գլուխ 2:9-12. Իսրայելի հանդեպ Աստծո դատաստանը պետք է դիտարկվի պատմության ընթացքում Իր կատարած ողորոմությունների լույսի ներքո: Աստծո կողմից Իսրայելին ընտրելը և նրա հետ ուխտի մեջ մտնելը հարթակ է պատրաստում Իր խիստ դատաստանի համար: Պետք է հիշել, որ «ու՜մ շատ է տրված, նրանից էլ շատ է պահանջվում» (տես՝ Դուկ. 12:48):

Դ. Գլուխ 5-ը անբակտելիորեն հավատքն ու կյանքը կապում է իրար: Ամովսը դատապարտում է հարուստների կողմից աղքատների շահագործումը:

Ե. Իսրայելի սուտ վստահությունն էր՝

1. իր կրոնը (տես՝ 4:4-5; 5:21-23)
2. իր տնտեսական հաջողությունը՝ բարգավաճումը (տես՝ 6:1)
3. իր ռազմական հզորությունը (տես՝ 2:14-16; 6:1բ, 13)

Զ. Նույնիսկ Իսրայելի անհավատության մեջ առկա է Աստծո ուխտի, Աստծո Մեսիայի հանդեպ հույսը, 9:8բ-15:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «երկրաշարժ», 1:1 (NASB & NIV)
2. պալատներ, 1:7 (NASB & NIV)
3. գավազան, 1:8 (NASB & NIV)
4. «այրեց Եդովմի թագավորների ոսկորները», 2:1 (NASB & NIV)
5. «տնանկին՝ մի գույգ կոշիկով», 2:6; 8:6 (NASB & NIV)
6. «գոհասեղանի եղջյուրները», 3:14 (NASB & NIV)
7. «փղոսկրյա տները /ապարանքները/», 3:15 (NIV, «փղոսկրով զարդարված տները»)
8. «Ես ասում եմ, Ես մերժում եմ ձեր տոները», 5:21 (NASB & NIV)
9. պարարտ, 5:22 (NIV, «ընտիր խաղաղության զոհեր»)
10. կապարալար, 7:7 (NASB & NIV)

11. «Սամարիայի մեղքը», 8:14 (NIV, «Սամարիայի ամոթը»)

Բ. Անձիք




1. Նազարացիներ, 2:12
2. Բասանի կովեր, 4:1
3. ողբասացներ, 5:16 (NIV, «ողբացողները»)
4. *Sikkuth /վրասն/*, 5:26 (NIV, «սրբատեղի»)
5. *Kiyyun*, 5:26 (NIV, «պատվանդան»)
6. Ամասիա, 7:10
7. Հերոբոլամ II, 7:10
8. տեսանող, 7:12

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՑԵՉԻ ՎՐԱ

1. Թեկուե, 1:1
2. Կարմեղոս, 1:2
3. Գադաադ, 1:3
4. Գագա, 1:6
5. Աշդոդ, 1:8
6. Ասկալոն, 1:8
7. Ակկարոն, 1:8
8. Թեման, 1:12
9. Բոսրա, 1:12
10. Ռաբբա, 1:14
11. Բեթել, 4:4
12. Գադգադա, 4:4
13. Սողոմ, 4:11
14. Բերսաբեե, 5:5
15. Եմաթ, 6:14
16. Դան, 8:14


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ամովսը աղքատ գյուղացի էր, թե՞ հարուստ գործարար:
2. Մենք պատասխանատու ենք մեր անձնական մեղքերի համար, թե՞ հասարակության ընդհանուր մեղքի:
3. Ո՞րն է 3:2-8-ի շեշտադրումը՝ կարևոր նշանակությունը:
4. Ինչո՞ւ էին Բեթելն ու Գադգադան դատապարտվում: Ինչո՞ւ է դատապարտվում 4:4-5 խոսքերի կրոնական գործերը:
5. Ինչո՞ւ էր Աստված մերժում Իսրայելի զոհաբերությունները:
6. Ինչո՞ւ է 5:25-26 խոսքը բարդ մեկնության համար:
7. Արդյո՞ք Ամովսը դատապարտում էր զոհաբերության համակարգը:
8. Արդյո՞ք Աստված մտափոխվել էր:
9. Ինչպե՞ս է ապաշխարությունը զոջումը կապված ներման հետ (գլուխ 7):
10. Աստծո դատաստանը էսկատոլոգիական է, թե ժամանակավոր:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԱՐԴԻՎ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Կոչվել է մարգարեի անունով:

Բ. Անունը նշանակում է «ՅԱՀՎԵի ծառա»:

Գ. Տարածված եբրայերեն անուն էր (տես՝ 3 Թագ.18:3; 1 Մնաց.3:12; 7:3; 8:38; 9:16,44; 12:9; 27:19; 2 Մնաց.17:7; 34:12; Եզրաս 8:9; Նեեմ.10:5; 12:25):

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը հանդիսանում է ուշ մարգարեների մի մասը (Ժողովողի 49:10)

Բ. Գտնվում է փոքր մարգարեների հավաքածուի՝ «Տասներկուսի» մեջ (Բարա Բաթրա 14բ)

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել գրքերի պես դրանք գտնվում են մի գալարի մեջ:
2. իր կազմությամբ ներկայացնում է տասներկու ցեղերի սիմվոլիկ թիվը
3. արտացոլում է գրքերի ժամանակագրության ավանդական մոտեցումը

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը բազմաթիվ գիտնականների կողմից կապվել է ժամանակագրության հետ: Սակայն այս մոտեցման հետ կապված կան խնդիրներ.

1. Առաջին վեց գրքերը տարբեր են MT և LXX ձեռագրերում.

<u>MT</u>	<u>LXX</u>
Ովսեն	Ովսեն
Հովել	Ամովս
Ամովս	Միքիա
Աբդիա	Հովել
Հովնան	Աբդիա
Միքիա	Հովնան

2. Գրքում առկա ներքին ապացույցները Ամովսին ժամանակագրական իմաստով դնում են Ովսենից առաջ:
3. Հովելի տարեթիվը խիստ վիճելի է: Այն Աբդիայի գրքի հետ միասին ցանկում դնում են որպես հետգերության շրջանի մարգարեական գիրք:

III. ԺԱՆՐԸ – դասական Եբրայերեն մարգարեական պոեզիա

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աբդիա մարգարեի վերաբերյալ ոչինչ հայտնի չէ:

Բ. Մի քանի տեսություններ.

1. Սանեդրին 39բ (Թ-ավուդ) ասում է, որ նա Աքար Թագավորի ծառան էր՝ 3 Թագ.18:3-16:
2. Պսևդո-Էպիֆանեսը (վաղ եկեղեցի) իր «Մարգարեների կյանքը» գրքում ասում է, որ նա Որոզիա թագավորի (Ք.Ա. 842թ.) ռազմական բարձրաստիճան սպաներից մեկն էր, 4Թագ.1:12բ.:
3. Չոն Կավլինը ասում էր, որ Աբդիան եղել է Երուսաղեմի կործանման (Ք.Ա. 586թ.)՝ Նաբուգոդոնոսոր II-ի կամ Բաբելոնի կողմից) ականատեսներից:

Գ. Հնարավոր է անունը եղել է որպես տիտղոս:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս գիրքը լեզվաբանորեն կապված է Երեմիա 49:7-12-ի հետ (Աբդիա հհ. 1-9) և Հովել 2:32 (Աբդիա հ. 10):

1. Ի. Ջ. Յանգը տալիս է հետևյալ հերթականությունը՝ Աբդիա, Երեմիա:
2. Ռ. Կ. Հարրիսոնը ներկայացնում է հետևյալ հերթականությամբ՝ Երեմիա, Աբդիա, (Ք.Ա. 450 թ.) և Հովել (Ք.Ա. 400 թ.): Ըստ այդմ կարելի է հետևություն անել, որ գիրքը գրվել է գերությունից հետո առաջին տարիներին:
3. Քեյլը տալիս է հետևյալ հերթականությունը՝ Աբդիա, Հովել, Երեմիա:

Բ. Ակնհայտ է, որ գիրքը կապ ունի Եդովմի կողմից Հուդայի վրա մի հարձակման և Երուսաղեմի հանդեպ ոտնձգության հետ: Մի քանի հավանական տարեթվեր են.

1. Երբ Ռոբովամի թագավորության հինգերորդ տարում՝ Ք.Ա. 922-915թթ., Եգիպտոսի Փարավոն Սիսակը գրավեց Երուսաղեմը (տես՝ 3 Թագ. 14:25-28; 2 Մնաց. 12:2-10):
2. Երբ Հովրամի թագավորության օրոք՝ Ք.Ա. 849-842թթ. Արաբական լիզան և Փղշտացիները գրավեցին Երուսաղեմը (տես՝ 4 Թագ. 8:20; 2 Մնաց. 21:16-17; 22:1):
3. Երբ Հովսա թագավորի օրոք՝ Ք.Ա. 837-800, սիրիացիները գրավեցին Երուսաղեմը (տես՝ 2 Մնաց. 24:23-24):
4. Երբ Ամասիայի թագավորության օրոք, Եդովմի պարտությունից հետո Իսրայելը (Հովաբազ) գրավեց Երուսաղեմը (տես՝ 4 Թագ. 14:7-14, Ք.Ա. 842թ.):
5. Եդովմացիք հարձակվեցին Հուդայի վրա (տես՝ 2 Մնաց. 28:17; 19:8-9; 4 Թագ. 16:1-20):
6. Նաբուգոդոնոսորը մի քանի անգամ գրավեց Երուսաղեմը՝ Ք.Ա. 605, 597, 586, 582թթ.
 - ա. Ք.Ա. 605թ. Հովակիմի թագավորության օրոք (տես՝ Դան. 1:1-2)
 - բ. Ք.Ա. 597թ. Հովաբիմի թագավորության օրոք (տես՝ 4 Թագ. 24:8-17; 2 Մնաց. 36:9-10; Եզեկիել)
 - գ. Ք.Ա. 586թ. Սեդեկիայի թագավորության օրոք (տես՝ 4 Թագ. 24:18-25:21; 2 Մնաց. 36:11-21; Ողբ Երեմիա; Սաղմ. 137:7):
 - դ. Ք.Ա. 582թ. Բաբելոնացի Գողդոլիա Կառավարչի օրոք (տես՝ 4 Թագ. 25:22-26)

Գ. Գիտնականները պաշտպանել են երկու տարեթիվ.

1. վաղ տարեգրություն՝ Հովրամի թագավորության (Ք.Ա. 849-842թթ.) ժամանակ, ըստ.
 - ա. «Տասներկուսի» մեջ գրքի զբաղեցրած դիրքը.
 - (1) 8-րդ դարի հավաքածուն՝ Ամովս, Ովսեե, Միքիա, (Հովել ?) և Աբդիա
 - (2) 7-րդ դարի հավաքածուն՝ Նաում, Ամբակում և Սոփոնիա
 - (3) Գերությունից հետո հավաքածուն՝ Անգեա, Չաքարիա և Մադաքիա
 - բ. Աբդիան չի նշում Տանարի կործանման մասին
 - գ. գրքում նշված ազգերը նախագերության շրջանի են և ոչ թե գերությունից հետո ընկած ժամանակաշրջանի
 - դ. մեղքերը նման են 8-րդ դարի մարգարեների կողմից թվարկվածներին
 - ե. Արամներն բառեր, արտահայտություններ և դարձվածքներ չկան
2. ուշ տարեգրություն, կապված Նաբուգոդոնոսոր II-ի Երուսաղեմը պաշարելու հետ.
 - ա. հհ. 11-14 կարծես թե համընկնում է Ք.Ա. 586թ-ին Երուսաղեմի անկման հետ
 - բ. Եդովմը մասնակցում էր այս պաշարմանը.
 - (1) ուրախանում է Հուդայի կործանումով
 - (ա) Սաղմ. 137:7
 - (բ) Ողբ. 2:15-17; 4:21
 - (գ) Եզեկ. 36:2-6

- (դ) 1 Եզրաս 4:45, 50
- (2) օգնեց Հուդան կործանելու մեջ.
- (ա) Եզեկ.25:12-14
- (բ) Եզեկ.35:1-15

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Եդովմը որպես մարգարեության առարկա՝ նյութ, հհ. 1-9, 18, 21

1. Եդովմը Եսավից՝ Հակոբի եղբորից, սերված և Մեռյալ Ծովի արևելքում գտնվող մի ազգ է (տես՝ Ծննդ.25-29; 32-33): Եդովմ նշանակում է «կարմիր», մինչ Եսավը նշանակում է «մազոտ» (տես՝ Ծննդ.25:25, 30)
2. Իսրայելին հրամայված էր հարգել Եդովմին (տես՝ 2 Օր.23:7)
3. Իսրայելն ու Եդովմը իրար հետ մշտապես խնդիրներ ունեին.
 - ա. Թվոց 20:14-21
 - բ. Դատ.11:16-17
 - գ. 1 Թագ.14:47-48
 - դ. 2 Թագ.8:14
 - ե. 3 Թագ.11:14-25
 - զ. 4 Թագ.14:22; 16:5-6
 - է. 2 Մնաց.20:10-30; 21:8բ
 - ը. Ամովս 1:6,9
4. Եդովմի դեմ այլ մարգարեություններ.
 - ա. Ես.34:5բ; 63:1բ
 - բ. Երեմ.49:7-22
 - գ. Ողբ.4:21-22
 - դ. Եզեկ.26:12բ; 35:1բ; 36:2-6
 - ե. Ամովս 1:11-12
5. Եդովմը դատապարտվեց, քանի որ.
 - ա. հպարտ էր, հհ. 3-4
 - (1) աշխարհագրական ապահովությամբ
 - (2) քաղաքական դաշնությունների և ռազմական հզորության առումով
 - (3) տնտեսական հարստությամբ
 - (4) ավանդական իմաստությամբ
 - բ. Իր ազգակցի՝ Հուդայի հանդեպ բռնանալու համար, հհ. 10-14
 - (1) ուրախանում է Երուսաղեմի անկմամբ (Ողբ.2:15-17; 4:21)
 - (2) հրաժարվեց օգնել (հ. 15)
 - (3) ակտիվորեն օգնում էր թշնամուն (հ. 14)
 - (4) ավար վերցրեց Երուսաղեմի ունեցվածքը (Երեմ.13:19)
 - գ. ՅԱՀՎԵԻՆ մերժելն ու արհամարհելը (հ. 16):

Բ. Եդովմը Աստծո և Նրա ժողովրդի դեմ ապստամբող բոլոր ազգերի խորհրդապատկերն է, հհ. 15-21 (տես՝ Սաղմ.2):

Գ. Մարգարեության հավանական պատմական իրողությունները.

1. Երուսաղեմի անկումից մոտ հինգ տարի անց՝ Ք.Ա. 580թ.-ին, Նեո-Բաբելոնի կողմից Եդովմի կործանումը
2. Պետրայից Եդովմի տեղափոխումը Նաբաթեան արաբների կողմից՝ մոտ Ք.Ա. 550-449թթ. (տես՝ Մաղ.1:2-5): Նեեմիայի գրքում տրված թշնամի երկրների ցանկում Եդովմը նշված չէ, սակայն այն փոխարինված է Արաբական ցեղերով: Եդովմը տեղափոխվում է Նեգովր /Նեգեվ/:

3. Ալեքսանդրի գեներալի՝ Անտիգոնուսի կողմից Ք.Ա. 312թ-ին Եդովմի պարտությունը (Diodorus Seculus)
4. Նեգովրում Եդովմի պարտությունը Ք.Ա. 175թ-ին Հուդա Մակարայեցու կողմից (տես՝ 1 Մակարայեցիների 5:3,15; 2 Մակարայեցիների 10:15; Ջոզեֆուսի Հրեաների Հնությունները 12:8:1; 13:9:1 /Josephus' *Antiquities of the Jews* 12:8:1; 13:9:1/)
5. Եդովմը հարկադրված ընդունեց Հուդայականությունը Ջոն Հիրկանուսի կողմից՝ Ք.Ա. 125թ-ին: Այժմ նրանք կոչվում են Իդումացիներ /Idumeans/:
6. Հռոմեացի գեներալ Տիտոսը ամբողջովին վերացրեց Իդումացիների ազդեցությունը մ.թ. 70թ-ին:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ալլենի կողմից գրված *Նոր Միջագային Մեկնաբանություն*, էջ՝ 142 /Allen, *New International Commentary*, p. 142/ շարքի «Հովել, Աբդիա, Հովնան և Միքիա» բաժնից վերցված հակիրճ նկարագրություն.

Ա. Եդովմի կործանումը (2-9)

1. Եդովմի անկումը (2-4)
2. Եդովմի լիակատար կործանումը (5,6)
3. Եդովմի դաշնակիցների դավադրությունը (7)
4. Եդովմի իմաստության և ռազմիկների կորուստը (8,9)

Բ. Եդովմի սխալ գործերը (10-14, 15բ)

1. Եդովմի եղբայրագանցությունը (10,11)
2. Եդովմի ծաղրանքը (12)
3. Եդովմի մեղանչումը (13)
4. Եդովմի համագործակցությունը և սպասվող հատուցումը (14, 15բ)

Գ. Եդովմը ՅԱՀՎԵԻ Օրը (15ա, 16-21)

1. ՅԱՀՎԵԻ Օրը (15ա, 16)
2. մնացորդի դերը (17, 21)
3. Հուդայի կրակը և Եդովմի հարդը (18)
4. վերագտած երկիրը (19, 20)

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Աստծո թշնամիները և Աստծո ժողովրդի թշնամիները պատժվելու են: Եդովմը որպես ապստամբ և անհավատ ազգ (տես՝ հ. 15):

Բ. Աստված Իր ժողովրդին փառավորելու է Իր ուխտի խոստումների համաձայն: Սրբությունը ՅԱՀՎԵԻ նպատակն է Իր ժողովրդի համար:

Գ. Պատմական իրադրությունը հետադարձվելու է: Եդովմը կործանվելու է, իսկ Աստծո ժողովուրդը՝ օրհնվելու:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «արծվի պես բարձր տեղում բույն դնես», 1:4 (NIV, «քո բույնը աստղերի մեջ դնես»)
2. «քո եղբոր՝ Հակոբի դեմ կատարածդ բռնության պատճառով», 1:10 (NASB & NIV)
3. «Երուսաղեմի վրա վիճակ գցեցին», 1:11 (NASB & NIV)
4. «մոտ է Տիրոջ օրը», 1:15 (NASB & NIV)

Բ. Անձիք




1. Եսավ, 1:8

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Եդովմ, 1:1
2. Թեման, 1:9
3. Միոն լեռ, 1:17
4. Նեգեվ, 1:19,20 (կամ Նեգեբ)
5. Շեֆելա, 1:19 (NIV, «հարթավայր»)
6. Գադասադ, 1:19


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞րն է Արդիա գրքի գլխավոր թեման:
2. Ինչո՞ւ էր Եդովմը այսքան խիստ պատիժ կրում:
3. Ինչո՞ւ է Եդովմը բոլոր ազգերի համար որպես խորհրդապատկեր գործածվում:
4. ՆԿ-ում Արդիա գրքից մեջբերում կամ ակնարկ կա՞րդյոք:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՀՈՎՆԱՆ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է մարգարեի անունով:

Բ. Անունը նշանակում է «աղավնի»: Սա Իսրայել ազգի խորհրդապատկերն էր.

1. Սաղմոսերգուհի կողմից կիրառվում է դրական իմաստով, Սաղմ.68:13; 74:19,
2. Ովսեայի կողմից կիրառվում է բացասական իմաստով, 7:11
3. Երգ Երգոցում կիրառվում է որպես քնքշության, սիրո խորհրդապատկեր, 2:14; 5:2; 6:9:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը հանդիսանում է ուշ մարգարեների մի մասը (Ժողովողի 49:10)

Բ. Գտնվում է փոքր մարգարեների հավաքածուի՝ «Տասներկուսի» մեջ (Բարա Բաթրա 14ր)

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել գրքերի պես դրանք գտնվում են մի գալարի մեջ:
2. իր կազմությամբ ներկայացնում է տասներկու ցեղերի սիմվոլիկ թիվը
3. արտացոլում է գրքերի ժամանակագրության ավանդական մոտեցումը

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը բազմաթիվ գիտնականների կողմից կապվել է ժամանակագրության հետ: Սակայն այս մոտեցման հետ կապված կան խնդիրներ.

1. Առաջին վեց գրքերը տարբեր են MT և LXX ձեռագրերում.

<u>MT</u>	<u>LXX</u>
Ովսեե	Ովսեե
Հովել	Ամովս
Ամովս	Միքիա
Աբդիա	Հովել
Հովման	Աբդիա
Միքիա	Հովման

2. Գրքում առկա ներքին ապացույցները Ամովսին ժամանակագրական իմաստով դնում են Ովսեեից առաջ:
3. Հովելի տարեթիվը խիստ վիճելի է: Այն Աբդիայի գրքի հետ միասին ցանկում դնում են որպես հետգերության շրջանի մարգարեական գիրք:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այն տարբերվում է փոքր մարգարեների մյուս գրքերից: Գրված է արձակ տեսքով, բացառությամբ 2:2-9 խոսքերը:

Բ. Հովման գրքի ժանրը շատ վիճաբանությունների առիթ է եղել: Շատ գիտնականների անհանգստացնում է գրքերում առկա հրաշքները, կանխասումները և աստվածաբանական տեսակետները: Ոմանք այն դիտարկում են որպես.

1. Ալեգորիա՝ այլաբանություն
2. Առակ (հումորի կիրառմամբ)
3. Տիպաբանություն

Գ. Հովմանի անունը, ինչպես և նրա հոր անունը, հազվադեպ է Եբրայերենում: Մի մարդ և նրա հայրը այս նույն անուններով նշված են 4 Թագ.14:25-ում: Նա ապրել է Հերոբոլամ II-ի (Ք.Ա.

783-743թթ.) տիրակալության օրոք: Հիսուսը Հովնանի մասին խոսեց որպես պատմական անձի՝ Մատթ.12:39-40; 16:4 և Ղուկ.11:29:

Գ. Հնարավոր է, որ Հովնանը Հորի գրքի պես գրվել է մի իմաստունի կողմից, որպեսզի սովորեցնի աստվածաբանական ճշմարտություն: Շատ մարգարեական գրքեր արձանագրում են մարգարեի պատգամները, սակայն Հովնանի գրքում միակ մարգարեական պատգամը հինգ բառ է, որ գրված է 3:4-ում:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հեղինակը մարգարեն է: Նա ներկյացվում է 1:1-ում, ինչպես բոլոր մյուս փոքր մարգարեների գրքերում:

Բ. Հովնանը և իր հայրը՝ Ամաթին, հազվադեպ եբրայական անուններ էին. երկուսին էլ հանդիպում ենք 4 Թագ.14:25-ում: Նա Նազարեթին մոտ գտնվող Գեթ-քոփերից էր և Հերոբոլամ II-ի մարգարեն էր:

Գ. Հնարավոր է, որ ինչ-որ մի իմաստուն մարդ վերցրել է պատմական այս կերպարի կյանքը, ինչպես Հորի դեպքում, և ավելի ընդլայնել այն, որպեսզի ներկայացնի ինչ-որ աստվածաբանական ճշմարտություն: Հավանաբար Հովնանին կանչել էր Իսրայելի Թագավորը, որպեսզի ինքն իրեն պաշտպանի այն հարցում, որ քարոզել էր Իսրայելի թշնամի ազգին: Հովնանը արքունի հյուսիսային դպիր և մարգարե էր: Սա կարող է բացատրել, թե ինչու է նա գրքում այդքան հակամարտող թվում: Հնարավոր է մի իմաստուն մարդ լսել է նրա պաշտպանությունը և տեսել այն մեծամասշտաբ ներգործությունները և գրի է առել Հովնանի փորձառությունը (Ջոն Հարրիս /John Harris ETBU, 1998/):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե հեղինակը 4 Թագ.14:25-ի Հովնանն է, ապա տարեթիվը պետք է որ լինի Ք.Ա. 612թ-ին Նինվեի անկումից առաջ և Հերոբոլամ II-ի թագավորության ընթացքում (Ք.Ա. 783-743թթ.):

Բ. Հանախ ասում են, որ Հովնանը ավելի ուշ է գրվել, սակայն սովորաբար սա ասում են համաձայն.
1. կանխասված մարգարեության մերժման հիման վրա,
2. որպես պատմական գիրք այնտեղ առկա գերբնական տարրերի մերժման հիման վրա,
3. այն ենթադրության, որ գիրքը դիմում է հետգերության ազգային հպարտությանը և բացառիկությանը:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ – Ասորեստանի պատմության մեջ միայն երկու տարեթվեր կան, որ կարող են հանդիսանալ Նինվեի ապաշխարության՝ զոջման իրադարձություն.

1. Հադադ-Նիրարիի (Ք.Ա. 810-783թթ.) թագավորության ժամանակ միաստվածության հակվածությունը
2. Աշուրդան III-ի (Ք.Ա. 771-754թթ.) թագավորության օրոք Ասորեստանում խոշոր պատուհասը

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Ա. Գլուխների բաժանումները ցույց են տալիս դեպքերի զարգացումները:

Բ. Համառոտ նկարագրությունը.

1. Գլուխ 1-Աստծո կամքը մերժվում է, փոխարինվում Հովնանի կամքով: Աստված հաղթում է:

2. Գլուխ 2 - Հովնանը ապաշխարում է (պոեմը գրված է անցյալ ժամանակով և պատկերում է Երուսաղեմի Տաճարում պաշտամունք)
3. Գլուխ 3 – Աստծո կամքը ընդունվում է: Նինվեն ապաշխարում է:
4. Գլուխ 4 - Հովնանի վարքին և գործերին հակառակ հայտնվում է Աստծո բնավորությունը:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս գրքում Հեթանոսները կրոնավոր են, մինչ մարգարեն՝ ըմբոստ.

1. նավաստիները
2. Նինվեի մարդիկ

Բ. Հեթանոսների հանդեպ Աստծո սերը պարզ երևում է 3:10 և 4:11-ում: Աստված սիրում է ոչ միայն մարդկանց, այլ նաև կենդանիներին, 4:11:

Գ. Ատելի, դաժան աստրիները ընդունված են ՅԱՀՎԵԻ կողմից, իրենց ապաշխարության և Նրան հավատալու հիման վրա, 3:5-9: Նրանցից չէր պահանջվում, որպեսզի հրեաներ դառնային:

Դ. Հովնանը խորհրդապատկերում է Աստծո կանչը Իսրայելին, որպեսզի ամբողջ աշխարհի համար քահանաների թագավորություն լինի (տես՝ Ծննդ. 12:3; Ել. 19:4-6): Իսրայելը ավետարանելու և փրկելու փոխարեն դարձել էր ազգայնամոլ, հպարտ և պարծենում էր իր բացառիկությամբ:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «Տերը մի մեծ ձուկ էր նշանակել», 1:17 (NIV, «...մի մեծ ձուկ էր պատրաստել»)
2. Դժողք, 2:2 (NIV, «զերեզման»)
3. գուր, 2:6 (NASB & NIV)
4. «Աստված զղջաց», 3:10 (NIV, «Նա գթաց»)
5. «ողորմություն» (*hesed*) (NIV, «սիրառաստ/գթասիրտ»)
6. «Տերը կարգադրեց մի բույսի /դդմենու/, ... մի որդի, 4:7, ... քամու, 4:8 (NIV, «պատրաստեց»)
7. «մարդիկ, որոնք իրենց աջն ու ձախը չեն զանազանում» 4:11 (NASB & NIV)
8. «և շատ կենդանիներ», 4:11 (NIV, «ինչպես նաև շատ անասուն»)

Բ. Անձիք




1. Ամաթի, 1:1
2. «երկնքի Աստված», 1:9

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Նինվե, 1:2
2. Թարսիս, 1:3
3. Հոպպե, 1:3


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք Հովնանը պատմական դեմք էր:
2. Ինչո՞ւ Հովնանը չէր կամենում գնալ Նինվե:
3. Արդյո՞ք մեծ ձուկը գրքի մեկնության կարևոր կետերից է: Ինչո՞ւ և ինչու՞ ոչ:
4. Նկարագրե՞ք Աստծո բնավորությունը (1:9; 4:2):
5. Ո՞րն է գլխավոր կերպարը՝ Հովնանը, թե Աստված: Ինչո՞ւ:
6. Ի՞նչ պատգամ է հաղորդում այս գիրքը Իսրայելին: Արդյո՞ք Հովնանը նման է Իսրայելին:
7. Ինչպե՞ս է Հիսուսը կիրառում այս գիրքը (տես՝ Մատթ. 12:38-45):



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՄԻՔԻԱ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է մարգարեի անունով:

Բ. Նրա անունը կրճատվել է Միքայիա անունից (Դատ.17:1,4; 3 Թագ.22:13), որը նշանակում էր «ով է ՅԱՀՎԵԻ պես»:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը հանդիսանում է ուշ մարգարեների մի մասը (Ժողովողի 49:10)

Բ. Գտնվում է փոքր մարգարեների հավաքածուի՝ «Տասներկուսի» մեջ (Բարա Բաթրա 14բ)

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել գրքերի պես դրանք գտնվում են մի գալարի մեջ:
2. իր կազմությամբ ներկայացնում է տասներկու ցեղերի սիմվոլիկ թիվը
3. արտացոլում է գրքերի ժամանակագրության ավանդական մոտեցումը

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը բազմաթիվ գիտնականների կողմից կապվել է ժամանակագրության հետ: Սակայն այս մոտեցման հետ կապված կան խնդիրներ.

1. Առաջին վեց գրքերը տարբեր են MT և LXX ձեռագրերում.

<u>MT</u>	<u>LXX</u>
Ովսեե	Ովսեե
Հովել	Ամովս
Ամովս	Միքիա
Աբդիա	Հովել
Հովման	Աբդիա
Միքիա	Հովման

2. Գրքում առկա ներքին ապացույցները Ամովսին ժամանակագրական իմաստով դնում են Ովսեեից առաջ:
3. Հովելի տարեթիվը խիստ վիճելի է: Այն Աբդիայի գրքի հետ միասին ցանկում դնում են որպես հետգերության շրջանի մարգարեական գիրք:

III. ԺԱՆՐԸ

Ա. Չնայած որ ըստ աստվածաբանության այն նման է Ամովսին, ոճով նման չէ: Չնայած որ Միքիան Ամովսի պես գեղեցիկ կերպով շարադրված պոեզիա չէ, այն ունի ճշմարտության շատ հզոր սահմանումներ:

Բ. Այս գրքին բնորոշ են առանց անցումների կողք կողքի շարադրված դատաստանի և նորոգության պատգամները: Ճշմարտությունը ներկված է երկու գույնով՝ սև ու սպիտակ:

Գ. Մարգարեն Ուխտի Աստծուց տվել է գորավոր, նախանձավոր, իմաստալի պատգամներ:

Դ. Միքիան կանխասումների մարգարե է.

1. Սամարիայի անկումը Ասորեստանի ձեռքով, 1:5-7; 6:9-16
2. Երուսաղեմի անկումը Բաբելոնի ձեռքով, 1:9-16; 3:12; 4:10-12; 6:9-16
3. Գերեվարված հրեա ժողովրդի վերադարձը, 2:12-13; 5:5բ-9; 7:7-20
4. Մեսիայի ծննդավայրը, 5:2 և Նրա տիեզերական թագավորությունը, 5:4
5. Հեթանոս ազգերին սպասվող հավատքը, 4:1-5

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ըստ ավանդության մորստացի Միքիա մարգարեն է ամբողջ մարգարեության հեղինակը:

Բ. Մերօրյա գիտնականները փորձել են Միքիայի գիրքը բաժանել մի քանի հեղինակների միջև, ինչպես արել են Մովսեսի գրքերի հետ: Սակայն գոյություն ունի ներքին ապացույց, որ գիրքը միասնական է.

1. մի քանի գլուխ սկսվում է երբայերեն «լսեցե՛ք» տերմինով (*shema*, 2 Օր.6:4), 1:2; 3:1; 6:1:
2. «հովիվներ», «ոչխարներ» փոխաբերությունները կիրառվում են ամբողջ 2:12; 3:2-3; 4:6; 5:1բ; 7:14 խոսքերում:
3. ամբողջ գրքի բովանդակության մեջ առկա են ութերորդ դարի մյուս մարգարեներից մեջբերումներ (տես՝ 4:1-3 խոսքը Եսայի 1:2-4-ի հետ համեմատությամբ):

Գ. Միքիան իր անձով և պատգամներով շատ նման է Ամովսին: Նրանց հայրենի տները միայն մի քանի մղոն էին հեռու իրարից: Երկուսն էլ գյուղից էին և ներքաշված չէին արքունի պալատների քաղաքական ու իշխանական պայքարներում, ինչպես Եսայի մարգարեն:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Գլուխ 1-ի առաջին խոսքը նշում է Միքիայի ծառայության տևողությունը՝ «Հուդայի Հովաթամ, Աքագ ու Եզեկիա թագավորների օրերին»:

Բ. Երեմիա 26:18-ն ասում է, որ նա մարգարեացել է Եզեկիայի թագավորության օրոք:

Գ. Քանի որ 1:1 խոսում է Սամարիայի և Երուսաղեմի մասին և 6:1-16 դատաստանի տեսարան է, որտեղ կանխասվում է Իսրայելի անկումը, պետք է որ նա մարգարեացած լիներ Ք.Ա. 722թ-ին Սամարիայի անկումից առաջ:

Դ. Նրա ծառայությունը շարունակվել է Սամարիայի անկումից հետո էլ: Գիրքը կարծես թե լինի նրա ամբողջ ծառայության տարիների պատգամների մի հավաքածու:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Միքիան 8-րդ դարի մարգարե էր, որը ծառայեց հարավային թագավորությունում, իր օրերում ապրող Եսայի մարգարեի հետ միասին:

Բ. Այդ ժամանակները բարգավաճման և ռազմական առաջխաղացումների ժամանակներ էին: Կրոնական շատ ակտիվ ժամանակաշրջան էր, սակայն միայն ՅԱՀՎԵԻ անվան ներքո քանա-նացիների պտղաբերության երկրպագության ծեսերն էին կատարվում:

Գ. Ասորեստանի արագորեն աճող կայսրությունը Թիզբաթալասար III-ի դինամիկ առաջնորդ-ությանը պանում էր դեպի ջախջախում:

Դ. Պատմական լիարժեք ամփոփման համար տե՛ս Եսայի մարգարեության ներածական բաժինը:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Այս գրքին բնորոշ է հանկարծակի փոփոխությունները՝ 2:5, 12; 3:1; 6:6-8; 7:14-15: Հեղինակը անմիջական անցում է կատարում դատաստանի պատգամից փրկության պատգամներին. համեմատե՛ք 2:10-11-ը 2:12-13-ի հետ:

Բ. Հիմնական նկարագրությունը.

1. Աստծո ժողովրդի վրա սպասվող դատաստանը, 1:1-16
ա. հյուսիսի գերությունը, 1:5-7
բ. հարավի գերությունը, 1:9-16 (3:12)
2. Աստծո ժողովրդի պատիժն ու վերականգնումը, 2:1-13
ա. հարուստների սոցիալական մեղքերը, 1-11
բ. ապագայի հույսը, 12-13
3. Աստծո ժողովրդի առաջնորդները դատապարտվում են, 3:1-12
ա. քաղաքացիական առաջնորդները, 1-4,9,11
բ. մարգարեները, 5-7, (ճշմարիտ մարգարեն, հ. 8), 11
գ. քահանան, 11
դ. հետևանքները, 12 (4:10)
4. Աստծո ժողովրդի ապագայի վերականգնված փառքը, 4-5
ա. բոլոր ազգերի համար տիեզերական հրավերի կոչ, 4:1-5
բ. հրավեր կադին, տնանկին և թույլին, 4:6-8
գ. հավատացյալ համայնքը հարձակման տակ է, սակայն հաղթանակած, 4:9-13
դ. Մեսիայի գալուստը, 5:1-5ա
ե. ապագա հաղթանակ Ասորեստանի հանդեպ, 5:5բ-9
զ. Աստծո ժողովրդի ներկայիս դատաստանը, 5:1, 10-15
5. Աստված Իր ժողովրդին բերում է դատարան, 1-5
ա. մարգարեն խոսում է Աստծո կողմից, 1-5
բ. Աստծո ժողովուրդը պատասխանում է, 6-7
գ. մարգարեն պատասխանում է Աստծո կողմից, 8
դ. Աստծո դատաստանը իջնում է Իր ժողովրդի քաղաքի վրա՝ թե՛ Երուսաղեմի և թե՛ Սամարիայի, 9-16
6. Աստծո դատապարտությունը և խոստացված օրհնությունը Իր ժողովրդի համար շարունակվում է, 7
ա. Աստծո ժողովրդի կողմից շարունակվող սոցիալական մեղքերը, 1-6
բ. Աստծո ժողովրդի ապագա առաջնորդը լինելու Աստծո պես, 14-20

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Միքիան Ամովսի պես դատապարտում է հարուստների, իշխանավորների սոցիալական մեղքերը:

Բ. Միքիան Ովսեայի պես դատապարտում է մարգարեների և քահանաների կրոնական ուխտադրությունը (3:11):

Գ. Միքիան կանխատու է Իսրայելի և Հուդայի կռապաշտության և ուխտի անհավատարմության պատճառով իրենց անկումն ու գերությունը:

Դ. Աստված արդար է: Իր ժողովուրդը պատժվելու է: Աստված նաև ողորմած է և Իր ուխտին հավատարիմ. Իր ժողովուրդը (մնացորդը) փրկվելու է և վերականգնվելու:

Ե. Աստված ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը, 6:8 և ոչ թե անհավատարմության ծեսեր (6:6-7):

Զ. Իսրայելը, Հուդան և հավատացյալ հեթանոսները օրգնվելու են եկող Մեսիայի միջոցով, որը ծնվելու է Բեթլեհեմում (5:2): Այս նոր առաջնորդը լինելու է ՅԱՀՎԵԻ պես (7:18-20):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ.

1. «լեռները հավկելու են» (NASB & NIV)
2. «նրա վերքն անբուժելի է» (NASB & NIV)
3. «ծաղրել», 2:4 (NASB & NIV)
4. «որ Իմ ժողովրդի միսն էք ուտում», 3:3 (NASB & NIV)
5. գուշակություն, 3:6 (NASB & NIV)
6. «Միտնը դաշտի պես պիտի հերկվի», 3:12 (NASB & NIV)
7. «ժողովուրդները... ազգերը... գալու են», 4:1-2 (NASB & NIV)
8. «նրանք իրենց արերից խոփել են ձուլելու», 4:3 (NASB & NIV)
9. «Ում էլքը հնուց, հավիտենական օրերից է», 5:2 (NIV, «Ում սկիզբը հնուց, հինավուրց ժամանակներից է»)
10. «արդյո՞ք իմ անդրանկին տամ իբրև իմ հանցանքի պատարագ», 6:7 (NASB & NIV)
11. «խաբող կշեռքներ», 6:11 (NIV, «կեղծված կշեռքներ»)
12. «ծովի խորքերն ես նետելու նրանց բոլոր մեղքերը», 7:19 (NIV, «մեր բոլոր անօրենությունները նետելու ես ծովի խորքերը»)

Բ. Անձիք




- | | |
|-----------------|-----------------|
| 1. Ներբովթ, 5:6 | 3. Բաղասամ, 6:5 |
| 2. Բաղակ, 6:5 | 4. Ամրի, 6:16 |

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

- | | | |
|----------------------|-------------------------|------------|
| 1. Սամարիա, 1:5 | 6. Բերթեհեմ Եփրաթա, 5:2 | 11. Գաղաաղ |
| 2. Երուսաղեմ, 1:5 | 7. Ներբովթի երկիր, 5:6 | |
| 3. Լաքիս, 1:13 | 8. Սատիմ, 6:5 | |
| 4. Մորեսեթ-գեթ, 1:14 | 9. Գաղգաղա, 6:5 | |
| 5. Սիոն լեռ, 4:7 | 10. Բասան | |


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Թվարկե՛ք 1:8-16-ի ողբի ծիսակարգերը:
2. Մարգարեական բոլոր երեք ձևերը (խոստումի խոսք, դատարանի տեսարան և ողբ, սուգ) առկա են Միքիայում: Տվե՛ք օրինակներ:
3. Ինչպե՛ս է Միքիան նման Ամովսին:
4. Ինչո՞ւ է Միքիան մեջբերվում Երեմիա 26:18-ում:
5. Ո՞ւմ է ուղղված 5:10-15 խոսքը:
6. Թվարկե՛ք, թե ինչեր է անելու Աստված Իր ժողովրդի համար ըստ 7:18-20-ի:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՆԱՎՈՒՄԻ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Կոչվել է մարգարեի անունով:

Բ. Նրա անունը նշանակում է «մխիթարություն» կամ «կարեկցանք» (տես՝ Ես.57:18):

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը Փոքր Մարգարեների մի մասն է, իրենց գրվածքների երկարության պատճառով:

Բ. Դրանք կոչվում են «Տասներկուսը»: Հավանաբար այս գրքերը միացվել են իրար, քանի որ տեղավորվում են մեկ գալարի վրա:

Գ. Դրանք գտնվում են Եբրայական «Մարգարեները» կոչվող կանոնի երկրորդ բաժնում:

Դ. Հրեաները կամենում էին, որ իրենց կանոնում գտնվող գրքերի քանակը համընկնի իրենց այբուբենում առկա բաղաձայների թվի հետ, ուստի մի քանի գրքեր իրար միացրեցին:

III. ԺԱՆՐԸ

Ա. Դասական եբրայական մարգարեություն է (պոեզիա): ՀԿ-ի ամենահզոր պոեմներից մեկն է:

Բ. Նավումը յուրահատուկ և արտիստիկ էր իր բառերի և դարձվածքների ընտրության մեջ: Նա և Եսայիան համարվում են Մարգարեների մեջ ամենամեծ բանաստեղծները: Նրանց միջև գրական կապ կա.

1. Նավում 1:4 և Եսայի 33:19
2. Նավում 1:15 և Եսայի 52:7:

Գ. Նավում 1:2-8 ակրոստիկոս սաղմոս է: Փոքր մարգարեների մոտ յուրահատուկ էր բացման սաղմոսը:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Շատ քիչ բան է հայտնի մարգարեի մասին: ՀԿ-ում սա միակ գիրքն է որտեղ հանդիպում ենք նրա անվանը:

Բ. Նա կոչվում է Ելկեսացի, որը հավանաբար տեղանքի անուն է: Եղել են մի քանի տեսություններ.

1. Ջերոմը և Եվսեբիոսը Ելկեսիա քաղաքը պատկերում են Գալիլիայում :
2. Ուրիշները պնդում են, որ «Նավումի տունը» Կափառնայումն է, սակայն դա հավաստող վկայություն չունենք:
3. Պսևդո-Եպիֆանիոսը այս տեղանքը դնում է հարավային Հուդայի տարածքում, *Մարգարեների Կյանքերը*, XVII, /Pseudo-Epiphanius, *The Lives of the Prophets*, XVII/ Ելկեսիա քաղաքը, որը մոտ էր Միքիայի հայրենի տանը:
4. Մ.թ.16-րդ դարի արաբական մի ավանդույթ այս քաղաքը պատկերում է Իրաքում (գերեվարված ծնողների զավակ): Ելկեսիա քաղաքը Նինվեից 24 մղոն էր հեռու:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Պետք է, որ այն գրված լինի նախքան Ք.Ա. 612թ-ին Նինվեի անկումը:

Բ. Այն գրվել է Թերեսի (Նով-ամոն) անկումից հետո, երբ Ք.Ա. 663թ-ին Աշուրբանիպալը հարձակվեց (տես՝ 3:8բ):

Գ. Հավանաբար գրվել է Ք.Ա. 627թ-ին անմիջապես Աշուրբանիպալի մահից հետո: Նա Ասորեստանի վերջին հզոր թագավորն էր, իսկ Ք.Ա. 626թ-ին Նեո-Բաբելոնը Նաբուբադդասարի օրոք ձեռք բերեց անկախություն:

VI. ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ա. Նավումը գրում է Ասորեստանի անկման մասին, որի մայրաքաղաքը Նինվեն էր: Աստված գործածել է այս դաժան ազգին որպես Իսրայելին դատելու համար մի գործիք (տես՝ Ես. 10:5):

Բ. Առաջին արձանագրված իրադարձությունը տեղի է ունեցել Հեուի օրերում (Ք.Ա. 842-815թթ.): Ք.Ա. 841թ-ին Ասորեստանի թագավոր Սալմանասար III (Ք.Ա. 858-824թթ.) հարկադրեց տուրքեր վճարել:

Գ. Սա շարունակվում էր Ադադ-Նիրարիի (Ք.Ա. 810-782թթ.) օրոք էլ: Դամասկոսը պաշարված էր և Հովասը ստիպված էր հարկեր վճարել:

Դ. Առաջին մեծ պաշարումը և տեղահանությունը տեղի է ունեցել Մենայիմի (Ք.Ա. 752-732թթ.) թագավորության օրոք՝ Թիգլաթպալասար /հայ.՝ Թագղադ-Փաղասար/ III -ի (Ք.Ա. 745-727թթ.) կողմից, Ք.Ա. 732թ-ին: Ըստ երևույթին նա հեռացրեց Փակեեին (Ք.Ա. 740-732թթ.) թագավոր դնելով Ովսեեին (Ք.Ա. 732-722թթ.) (տես՝ 4 Թագ. 15:29); 1 Մնաց. 5:6; 2 Մնաց. 30:6,10; Ես. 9:1: Պաղեստինի վրա այս տիրակալությունը ազդում էր նաև Հուդայի վրա, քանի որ Աքազը (Ք.Ա. 735-715թթ.) նույնպես հարկ էր վճարում:

Ե. Ովսեեն փորձում էր Իսրայելին դաշնակից դարձնել Եգիպտոսի հետ և հարձակման ենթարկվեց Սալմանասար V-ի (Ք.Ա. 727-722թթ.) կողմից: Երեք տարի անց մայրաքաղաք Սամարիան պաշարեց Սարգոն II (Ք.Ա. 721-705թթ.): Իսրայելը գերեվարվեց Մարաստան (տես՝ 4 Թագ. 17:3-20; 18:20-21; Ես. 7:8; 8:4; 10:11; 36:20; Ովս. 9:3; 10:6,14; 11:5): Սարգոն II-ը Ք.Ա. 720թ. և Ք.Ա. 712թ. ներխուժեց և Հուդային ստիպեց հարկեր վճարել:

Զ. Հուդայում Եզեկիան (Ք.Ա. 728-687թթ.) հաջորդեց Աքազին: Սկզբում նա հարկ էր վճարում Սարգոն II-ին: Հետագայում հրաժարվեց Ասորեստանին հարկեր վճարել (տես՝ 4 Թագ. 18): Մենեքերիմը (Ք.Ա. 704-681թթ.) Ք.Ա. 701թ-ին պաշարեց Հուդան, սակայն ստիպված էր հեռանալ, քանի որ Տիրոջ հրեշտակը պատուհաս բերեց նրա զորքի վրա, որի հետևանքով 185,000 ասորի զինվորներ սպանվեցին (տես՝ Ես. 10:16; 36:1-37:38; 4 Թագ. 18:13-19:37; 2Մնաց. 32:1-31):

Է. Հետագայում Մանասեն հարկադրված էր ենթարկվել Ասերիադոնին (Ք.Ա. 681-669թթ.) (տես՝ 2 Մնաց. 33:1-11):

Ը. Ասերիադոնի որդին՝ Աշուրբանիպալը (Ք.Ա. 638-633թթ.) Ասորեստանի վերջին հզոր թագավորն էր: Նրա մահից հետո, արագ անկման ժամանակաշրջանում.

1. Նաբոպալասարը (Ք.Ա. 625-605թթ.) հիմնեց անկախ Նեո-Բաբելոնը:
2. Պսամետի I (Ք.Ա. 664-609թթ.) վերականգնեց Եգիպտոսի անկախությունը:
3. Հովսիան (Ք.Ա. 640-609թթ.) վերականգնեց Հուդայի անկախությունը:

4. Քսերքսեսը /Ասվերոսը/ (Ք.Ա. 625-585թթ.) հիմնեց անկախ Մարաստանը:
Թ. Ասորիների մայրաքաղաք Նինվեն ընկավ Ք.Ա. 612թ-ին՝ Նաբոպալասարի և Քսերքսեսի ձեռքով:
Հին մայրաքաղաք Աշուրը արդեն ընկել էր Ք.Ա. 614թ-ին:

Ժ. Նինվեն գրավում էր 1,850 հեկտար տարածք և 8 մղոնը պարսպապատված էր:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Բացման խոսք, 1:1

Բ. ՅԱՀՎԵԻ խստության և գթառատության մասին Սաղմոս, 1:2-8 (մասնակի ակրոստիկոս):

Գ. Աստծո իրական բնավորությունը, Նինվեի դատավճիռը, Հուդայի ազատագրումը, 1:9-2:2:

Դ. Մեծ քաղաք Նինվեի պաշարման և անկման պոետիկ պատմությունը, 2:3-3:19:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գրքի առանցքային թեման դաժան Ասորական Կայսրության մայրաքաղաք Նինվեի կործանումն է: Այն մայրաքաղաք էր դարձել Մենեքերիմի կողմից, մոտ Ք.Ա. 700թ-ին: Այն գտնվում էր Տիգրիս գետի արևելյան ափին և ուներ հզոր պաշտպանություն /պարսպապատ էր/:

Բ. Ք.Ա. 612թ-ին քաղաքը հիմնահատակ ավերվեց Բաբելոնացիների և Մարերի կողմից, ինչպես և Աշուր մայրաքաղաքը՝ Ք.Ա. 614թ-ին: Նրանք օգտագործեցին գետը, որը հոսում էր պարիսպների շուրջը: Նրանք գետի ընթացքը կանգնեցրին և ջուրը հավաքելուց հետո ամբողջը միանգամից բաց թողեցին: Ջրի հոսանքը տապալեց պարսպի մի մեծ հատված, 2:6:

Գ. Աստված գործածեց դաժան ասորիներին, որպեսզի դատի Իր ժողովրդին (Ես.10:5), սակայն այժմ ասորիներն էին պատժվում: Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք, Գաղ.6:7:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. պատգամ, 1:1 (NASB & NIV)
2. տեսիլք, 1:1 (NASB & NIV)
3. «Տերը երկայնամիտ է», 1:3 (NASB & NIV)
4. «պատվար», 1:7 (NIV, «ապաստան»)
5. «պաշտպանություն», 2:5 (NIV, «պաշտպանիչ վահան»)
6. «գետերի դռները պիտի բացվեն և պալատը պիտի հավի», 2:6 (NIV, «գետերի դարպասները բացվելու են և պալատը փլուզվելու է»)
7. «քո քղանցքը պիտի բացեմ քո երեսին», 3:5 (NASB & NIV)
8. «բոլոր ճանապարհների գլխին քարին խփեցին նրա մանուկներին», 3:10 (NASB & NIV)

Բ. Անձիք

1. Բելիար, 1:15 (NIV, «անօրենը»)
2. Չորաց Տերը, 2:13 (NIV, «Ամենակարող Տերը»)




X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Բասան, 1:4
2. Կարմել /Կարմեղոս/, 1:4

3. Լիբանան, 1:4
4. Նով-ամոն (Թերես), 3:8
5. Նինվե, 1:1


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞րն է այս գրքի գլխավոր նպատակը:
2. Ինչպե՞ս կարող է մի անձին վերաբերի թե՛ 1:3-ը և թե՛ 1:7-ը:
3. Ինչպիսի՞ կապ կա Հովնանի և Նավումի գրքերի մեջ:
4. Ինչո՞ւ էր Նավումը համարվում մեծն պոետ:
5. Ի՞նչ կապ ունի 2:6-ը Նինվեի պատմական անկման հետ:
6. Ինչո՞ւ է 3:8-10-ում նշվում մի եգիպտական քաղաք /Նով-ամոնը/:
7. Թվարկե՛ք 3:14-15-ում առկա հեզնական հրամայականները:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԱՄՔԱԿՈՒՄ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է մարգարեի անունով:

Բ. Ամբակում անունը նշանակում է «փաղաքշել, շոյել» կամ «գրկել»:

Գ. Սեպտուագինտայում նա կոչվում է «Ամբակում/ Hambakoum», որը ասորերեն «բանջարեղեն» նշանակող տերմինն է:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարեներ» բաժնի մի մասն է (Ժողովրդի 49:10 /անկանոն/)

Բ. Այն «Տասներկուսից» փոքր մարգարեների հավաքածուի, մի մասն է (Բարա Բաթրա 14բ):

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել մարգարեների գրքերի պես, դրանք գրված են մեկ գալարի վրա:
2. Ներկայացնում են տասներկու ցեղերը կամ դրանց սիմվոլիկ թիվը:
3. Արտացոլում են տվյալ գրքերի ժամանակագրության ավանդական տեսությունը:

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը շատ գիտնականներ կապել են ժամանակագրության հետ: Ակնհայտ է, որ Նավումը, Ամբակումը և Սոփոնիան մի բաժնում են:

III. ԺԱՆՐԸ – շատ անսովոր է, երբ մարգարեն խոսում է Աստծո հետ ժողովրդի համար: Առաջին գլուխը սուր քննադատություն է կամ թվացյալ երկխոսության միջոցով ճշմարտությունը հաղորդելու կերպ:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Այս մարգարեն խոսում է ՅԱՀՎԵԻ հետ Հուդայի վերաբերյալ: Բոլոր մյուս մարգարեները խոսում են ժողովրդի հետ՝ Աստծո համար:

Բ. Այս մարգարեի կյանքի տարիները համընկնում են Դանիելի, Երեմիայի, Եզեկիելի, Նավումի և Սոփոնիայի ընդհանուր ժամանակշրջանի հետ: Այս մարդկանց մենք կոչում ենք Յոթերորդ Դարի Մարգարեներ:

Գ. Հավանաբար նա եղել է երաժիշտ, որը կապ ուներ Տանարի Երգչախմբի հետ, քանի որ.

1. 3:1 խոսքում կիրառվում է *Shigionoth* տերմինը: NASB անգլերեն տարբերակի ծանոթագրության մեջ այն կոչվում է «խիստ զգացմունքային բանաստեղծական ոճ»: Սա մի անհայտ նշանակության երաժշտական տերմին է, հավանաբար հանգիստ կամ կրեշենդո իմաստով:
2. Մեկ այլ երաժշտական տերմինի՝ *Selah*, կիրառությունը 3:3,9,13 խոսքերում:
3. 3:19-ում «զլխավոր երաժշտին իմ լարային նվագարաններով» արտահայտության կիրառությունը:

V. ՏԱՐԵԹԻՎԸ (գոյություն ունեն երկու հիմնական տեսություն)

Ա. Մանասեի թագավորության օրոք (Ք.Ա. 687-642թթ.): Սա առհասարակ կապված է Կանոնի մեջ Ամբակումի տեղի հետ և նեո-Բաբելոնյան կայսրության՝ քաղղեացիների վերելքի հետ (տես՝ Ամբակում 1:5):

Բ. Հովակիմի թագավորության օրոք (Ք.Ա. 609-598թթ.): Հետևաբար այն տեղի է ունեցել, երբ Նեքավոլ II Փարավոնը պաշտոնաթողվեց և ապա Նարուգոդոնոսորը ասորական զորքի մնացորդին և եգիպտացիներին Քարքեմիսում Ք.Ա. 605 թ-ին ջախջախելուց հետո վերցրեց իշխանությունը ամբողջ տարածաշրջանի վրա:

Գ. /Pseudo-Epiphanius, *Lives of the Prophets*/ *Մարգարեների Կյանքը* գրքում ասում է, որ նա Շմավոնի ցեղից էր: Նա փախել էր Ք.Ա. 586թ-ին Նարուգոդոնոսոր II-ի հաղթանակի ժամանակ և վերադարձել քաղաքի անկումից հետո ու մահացել գերության վերադարձից երկու տարի առաջ: Մակայն տվյալ տեղեկության աղբյուրը ավելի ուշ ժամանակշրջանի է և ոչ հավաստի:

VI. ԴԱՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Գիրքը բաժանված է երկու հիմնական բաժինների.

1. Գլուխ 1 և 2 – մարգարեի և Աստծո միջև երկխոսությունը
2. Գլուխ 3 – փառաբանության բանաստեղծություն՝ նվիրված պատմության վրա Աստծո գեր-իշխանությանը

Բ. Աստծո և Իր մարգարեի միջև երկխոսությունը, 1:2-2:20

1. Ամբակումի գանգատը Աստծուն՝ Իր պատիժը ուշացնելու համար, 1:2-4
2. Աստծո առաջին պատասխանը, 1:5-11
3. Աստծո պատասխանի հետ կապված Ամբակումի բարոյական խնդիրը, 1:12-2:1
4. Աստծո երկրորդ պատասխանը, 2:2-5

ա. Աստծո ծրագիրը հաստատ է, գրի՛ առ, 2:20

- 1) հավատքի օրհնությունը, 2:4,14,20
- 2) չարի դատաստանը, 2:5, 6-20

բ. Աստծո ժողովուրդը պատասխանատու է ուխտի հավատարմության մեջ, 2:4-5 (3:16-19)

գ. Աստված պատժելու է հեթանոսների ագրեսիան և անաստվածությունը, 2:6-20 (5 վայերը)

- 1) 2:6-8, սաստիկ ագրեսիա
- 2) 2:9-11, սաստիկ ագրեսիա
- 3) 2:12-14, սաստիկ ագրեսիա
- 4) 2:15-17, սաստիկ ագրեսիա
- 5) 2:18-20, կռապաշտություն

Գ. Անցյալում ազատագրելու և ապագայում ազատագրելու հույսով Աստծո հավատարիմ զործերի Օրհնության Մաղմոս.

1. Աստծո անցյալում Իր ժողովրդին ազատագրելու զործերը արտահայտված խիստ պոետիկ տեսքով, կիրառելով այլաբանություններ (3:1-15).
ա. ելիցից
բ. ստեղծագործությունից
գ. նվաճումից /Ավետյաց Երկրի/
2. Մարգարեի հավատքը և համբերությունը, որ Աստված կազատի, թեև արտաքին նշան չկա, (2:4; 3:16-19)

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Աստված ստեղծել է բարոյական տիեզերք: Մեղքը դատվելու է: Անգամ Աստծո ընտրյալ ժողովուրդը պատասխանատու է իր գործերի համար (Գաղ.6:7):

- Բ. Նույնիսկ այս մեղավոր աշխարհում Աստված է վերահսկում դեպքերն ու իրադարձությունները: Նա գործածում է չարին Իր նպատակների համար, սակայն չարը նույնպես դատվելու է:
- Գ. Ընդունելի է Աստծուն հարցեր ուղղելը: Սակայն հաճախ Աստծո ներկայությունն է, որ հազեցնում՝ բավարարում է մեզ և ոչ թե Նրա կողմից տրված ռացիոնալ պատասխանները:
- Դ. Այս գիրքը Պողոսի հայտնի աստվածաբանական թեմայի՝ «հավատքով արդարացման», աղբյուրն է հանդիսանում (տես՝ 2:4): Չարն ի վերջո ինքն իրեն բնաջնջելու է: Աստծո ժողովուրդը չար ու դժվարին օրերում պետք է հավատք գործադրի: Հավատքը պետք է կախված չլինի մեր ներկայիս իրավիճակներից, 3:17-19:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «նրանց դատաստանն ու իշխանությունն իրենցից է դուրս գալու», 1:7 (տես՝ 1:11գ) (NIV, «նրանք իրենց համար օրենք են և իրենց սեփական պատիվը բարձրացնողներ»):
2. «ո՛վ իմ Տեր Աստված, իմ Սուրբ», 1:12 (NASB & NIV)
3. «ո՛վ Վեմ», 1:12 (NASB & NIV)
4. «նրանք զոհ են մատուցում իրենց ցանցին», հհ. 15-17 (NIV, «նա զոհ է մատուցում իր ցանցին»)
5. «բայց արդարն իր հավատով պիտի ապրի», 2:4 (NASB & NIV)
6. դժողք /Sheol/, 2:5 (NIV, «գերեզման»)
7. երգիծական ասացվածքներ, 2:6 (NIV, «ծաղրական հանելուկներ»)
8. «բաժակը Տիրոջ աջ ձեռքում է», 2:16 (NASB & NIV)
9. Շիկիոնոթ, 3:1 (NASB & NIV)
10. Սելա, 3:3,9,13 (NASB & NIV)
11. Դու օժեցիր, 3:13 (NIV, «Քո օձյալը»)
12. «իմ ոտները բատրակի /եղնիկ/ նման է դարձնելու», 3:19 (NIV, «իմ ոտքերը դարձնում է եղնիկի նման»)




Բ. Անձիք – չկան

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Քաղդեա /քաղդեացիներ/, 1:6 (NIV, «Բարեկոնացիներ»)
2. Թեման, 3:3
3. Փառան լեռ, 3:3
4. Մադիամ, 3:7


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞վ է այս գիրքը տարբերվում մյուս փոքր մարգարեների գրքերից:
2. Ուրվագծե՛ք /կոնսպեկտավորե՛ք/ Աստծո և մարգարեի միջև գլուխ 1-2-ում երկխոսությունը:
3. Ինչո՞ւ են կարծում, որ Ամբակումը երաժիշտ է եղել:
4. Բացատրե՛ք 1:16-17-ի պատկերը:
5. Ի՞նչ է 2:4 խոսքը ըստ համատեքստի նշանակում: Ինչպե՞ս է Պողոսը կիրառում այս խոսքը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՍՈՓՈՆԻԱԿ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Կոչվել է մարգարեի անունով:

Բ. Նրա անունը նշանակում է.

1. «ՅԱՀՎԵՆ թաքցրել է» կամ
2. «ՅԱՀՎԵՆ հսկում է»

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարեներ» բաժնի մի մասն է (Ժողովողի 49:10 /անկանոն/)

Բ. Այն «Տասներկուսից»՝ փոքր մարգարեների հավաքածուի, մի մասն է (Բարա Բաթրա 14բ):

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել մարգարեների գրքերի պես, դրանք գրված են մեկ գալարի վրա:
2. Ներկայացնում են տասներկու ցեղերը կամ դրանց սիմվոլիկ թիվը:
3. Արտացոլում են տվյալ գրքերի ժամանակագրության ավանդական տեսությունը:

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը շատ գիտնականներ կապել են ժամանակագրության հետ: Ակնհայտ է, որ Նավումը, Ամբակումը և Սոփոնիան մի բաժնում են:

III. ԺԱՆՐԸ

Ա. Սա դասական եբրայական մարգարեություն էր (պոեզիա), որի առանցքային թեմաներն են մեղքը, դատաստանը և վերականգնումը:

Բ. Հավանաբար 3:14-20-ը հին օրհներգ է եղել:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն ունի անսովոր երկար սերնդաբանություն. «... Եզեկիայի որդի, Ամարիայի որդի, Գողո-դիայի որդի, Քուսի որդի Սոփոնիա», 1:1.

1. Սրանից կարելի է եզրակացնել, որ նա եղել է Հուդայի ցեղի արքունի տնից: Եթե ցանկում արձանագրված Եզեկիան Հուդայի թագավորն է (Ք.Ա. 715-687թթ.), ապա հասկանալի է, թե ինչու է այսքան երկար սերնդաբանություն տրվել:
2. Հավանաբար այս երկար ցանկը տրվել է իր հրեա լինելու փաստը ապացուցելու համար, քանի որ նրա հոր անունը՝ Քուսին, եթովպիական էր:

Բ. Շատերը հավատում են, որ նա եղել է Հովսիա թագավորի բարեկամը /cousin/ և հավանաբար աստվածավախ Թագավորի հետ միասին խրատվել է միևնույն ուսուցիչների կողմից:

Գ. ՀԿ-ում երեք ուրիշ անձիք էլ ունեն միևնույն անունը՝ 1 Մնաց.6:36-38; Երեմ.21:1; 4 Թագ.25:18-21; 29:25; 37:3; 52:24-27; Չաք.6:10,14:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Սոփոնիան խոսել է Հովսիա Թագավորի կյանքի օրոք (Ք.Ա. 640-609թթ.):

Բ. Նախքան Հովսիան կհաստատեր բարեփոխումներ (Ք.Ա. 621թ.), Հուդայում առկա լարվածությունների պատճառով, որոնք նշված են գրքում 1:4-6, 8-9, 12; 3:1-3, կարծես թե Սովոնիան դիմել է հենց Հուդայի մարդկանց:

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ա. Ոմանք հարձակման համար Աստծո ձեռքի գործիք են տեսնում Սկյութացի հրոսակախմբերին (NIV, Ֆրանցիսկոյի ճանապարհը, Ք.Ա. 626), որոնք նախկինում հարձակվել էին Ասորեստանի վրա: Հերոդոտոսն (103-106) ասում է, որ Սկյութացիք ներխուժել են Պաղեստինի միջով մինչև Եգիպտոս, նախքան ետ կքաշվեին Պասմետի I Փարավոնի (Ք.Ա. 663-609թթ.) կողմից պատասխան հարված ստանալով:

Բ. Չնայած որ Սյութացիների ներխուժումը հնարավոր էր, սակայն շատ ավելի հավանական է, որ Բաբելոնն է հարձակվել Հուդայի վրա: Շատ գիտնականներ համարում են, որ հարձակվողը եղել է Բաբելոնը:

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (Ռ. Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն* գրքից, էջ՝ 939-940)

Ա. Տիրոջ Օրը, 1:1-2:3

1. Բահադի երկրպագուների դեմ ավերածության սպառնալիքը, 1:2-6
2. Տիրոջ Օրվա հետ կապված դեպքեր, 1:7-13
3. Հաջորդող դատաստանը, 1:14-18
4. Դատաստանից խուսափելու կերպերը, 2:1-3:

Բ. Դատաստաններ օտար ազգերի դեմ, 2:4-15

1. Փղշտացիների երկիրը, 2:4-7
2. Մովաբը և Ամոնը, 2:8-11
3. Եգիպտոսը, 2:12
4. Ասորեստանը, 2:13-15

Գ. Վայեր և Օրհնություններ, 3:1-20

1. Երուսաղեմը պատժելու սպառնալիք, 3:1-7
2. Հավատարիմ մնացորդի համար օրհնության երաշխիքը, 3:8-20

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս մարգարեն զգուշացնում է Հուդայի վերահաս պաշարման մասին: Դատաստանի այս քայլի պատճառը Երուսաղեմում կռապաշտ մնացորդի ներկայություններ, որը սկսել էր Մանասեն: Սովոնիան կիրառում է «Տիրոջ Օրը» հասկացությունը: Հաճախ մարգարեները իրենց օրերի ճգնաժամերը կիրառել են, որպեսզի ցույց տան սպազայի, վերջին ժամանակների դեպքերի նախանշաններ:

Բ. 2:3-ում սպաշխարության կոչ կա: Հուդայի միակ հույսը Մեսիայի սիրո (3:17) և ներկայության (3:15 և 17) վրա էր:

Գ. Ակնհայտ է, որ Աստված գործածեց Ասորեստանին, որպեսզի պատժի Իսրայելին և այս Արգասաբեր Մահիկի կայսրությունը այժմ դատված է, բայց և այնպես Հուդան նույնպես:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. «կռապաշտ քահանաներ», 1:4 (NASB & NIV)
2. «երկնքի զորքեր», 1:5 (NIV, «երկնքի զորություններ»)
3. «Տիրոջ Օրը մոտ է», 1:7 (NASB & NIV)
4. «բոլոր նրանց, ովքեր ցատկում են շեմից», 1:9 (NIV, «բոլոր նրանց, ովքեր խուսափում են ոտք դնել շեմին»)
5. «Մորթար», 1:11 (NIV, «վաճառական թաղամաս/ժողովուրդ»)
6. «նրա մեջ հոտերը պիտի մակաղեն, ազգերի բոլոր կենդանիները... պիտի օթևանեն», 2:14 (NASB & NIV)
7. «բոլոր նրա կողքով անցնողները սուլելու ու ձեռք են շարժելու», 2:15 (NIV, «բոլոր նրա կողքով անցնողները ծաղրելու և բազուկներն են թափ տալու»)
8. «Իմ սուրբ լեռը», 3:11 (NIV, «իմ սուրբ բլուրը»)

Բ. Անձիք




1. Քուսի, 1:1
2. Մեղքոմ, 1:5 (NIV, «մողորք»)
3. Քերեթիներ, 2:5 (NIV, «կերեթիներ»)

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Գագա, 2:4
2. Ասկադոն, 2:4
3. Ազովտոս, 2:4
4. Ակկարոն, 2:4
5. Սոդոմ և Գոմոր, 2:9
6. Եթովպիա, 2:12 (NIV, «քուսեցիներ»)


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ Սովոնիան ՀԿ-յան բոլոր մյուս մարզարեներից ավելի երկար սերնդաբանություն ունի:
2. Ինչո՞ւ է Սովոնիայի դատաստանի մարզարեությունը ավելի վատ, քան Նոյի ջրհեղեղը:
3. Սահմանե՞ք և բացատրե՞ք «Տիրոջ Օրը» հասկացությունը:
4. Ինչո՞վ էր Հուդան ավելի մեղավոր և հանցավոր, քան Իսրայելը:
5. Արդյո՞ք 3:9 խոսքն ունի տիեզերական տարր, որը կապված է հեթանոսների հետ:
6. Ինչպե՞ս է 3:17 մեզ ցույց տալիս Աստծո սիրտը:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ԱՆԳԵՒ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Կոչվել է իր քարոզչի անունով:

Բ. Նրա անունը նշանակում է «Տոնակատարություն»: Անվան վերջում /երրայերեն/ դրված հովտը կամ անգլերենում՝ “i” տառը հնարավոր է ՅԱՀՎԵ անվան հապավումն է, և հետևաբար կնշանակի «ՅԱՀՎԵԻ տոն» (տես՝ 1 Մնաց.6:30) կամ «իմ» դերանունը, որը նույնպես վերաբերում է ՅԱՀՎԵին:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարեներ» բաժնի մի մասն է (Ժողովողի 49:10 /անկանոն/)

Բ. Այն «Տասներկուսից» փոքր մարգարեների հավաքածուի, մի մասն է (Բարա Բաթրա 14բ):

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել մարգարեների գրքերի պես, դրանք գրված են մեկ գալարի վրա:
2. Ներկայացնում են տասներկու ցեղերը կամ դրանց սիմվոլիկ թիվը:
3. Արտացոլում են տվյալ գրքերի ժամանակագրության ավանդական տեսությունը:

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը շատ գիտնականներ կապել են ժամանակագրության հետ: Ակնհայտ է, որ Անգե և Չաքարիա մարգարեությունների գրքերը պատմական համարժեքներ են:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքը չորս կամ հինգ քարոզների շարք է (1:13):

Բ. Այն բանաստեղծական չէ:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Անգե են նշվում է Եզրաս 5:1; 6:14 և Չաքարիա 8:9-ում, որտեղ նա կապ ունի Չաքարիայի հետ: Հավանաբար նա էլ գերությունից վերադարձողներից մեկն էր:

Բ. Նրա մասին նաև նշվում է 1 Եզրասի 6:1; 7:3; 2 Եզրասի 1:40-ում, իսկ Ժողովողի 49:11-ը /անկանոն գրքեր/ մեջբերում է Անգե 2:23-ից:

Գ. Ջերոմն ասում է, որ նա քահանա էր, սակայն սա թյուրըմբռնում է, որը ծագել է 2:10-19-ից:

Դ. Իվալդն ու Փասին ասում են, որ 2:3-ը ակնարկում է, որ նա տեսել էր Սողոմոնի Տաճարը, որը նշանակում էր, որ այդ ժամանակ նա գրեթե 70 կամ 80 տարեկան էր:

Ե. Ալեքսանդրիացի Կիրիլը իր օրերում ընդունված մի համընդհանուր կարծիք է նշում, ասելով, որ նա հրեշտակ էր: Սա սերվել է 1:13 խոսքում երրայերեն «պատգամաբեր» տերմինի թյուրըմբռնումից:

Զ. LXX-ը մի քանի Սաղմոսներ է վերագրում Անգեին և Չաքարիային՝ 112, 126, 127, 137, 146-149:

Է. Անգեի բոլոր 4 քարոզները արձանագրված են երրորդ դեմքով, որը ենթադրում է.

1. տարածված գրական տեխնիկա,
2. դպիր կամ խմբագիր:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Անգեեն հետգերության շրջանի մարգարե էր՝ իրեն ժամանակակից Չաքարիայի հետ միասին:

Բ. Գիրքը թվագրված է Դարեհ I (Ք.Ա. 521-486թթ.) արքայի երկրորդ տարվա վեցերորդ ամսվա առաջին օրից (1:1) մինչև իններորդ ամսվա քսանչորսերորդ օրը (2:10,20): Ուստի գրառման տարեթիվը Ք.Ա. 520թ. է: Սա Ք.Ա. 516թ-ին երկրորդ Տանարի կառուցման ավարտից չորս տարի առաջ էր, և իրականացնում է Երեմիայի մարգարեությունը գերության յոթանասուն տարվա վերաբերյալ, որը սկսել էր Ք.Ա. 586թ-ին:

VI. ԱՅԴ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (վերցված է Դոկ. Թեո Լաեթցի *Փոքր Մարգարեները* գրքից /Dr. Theo Laetsch *The Minor Prophets*/, published by Concordia, էջ՝ 385)

Դարեհի թագադրման տարին	Ք.Ա. տարի	Ամիս	Օր	Տեքստ	Բովանդակություն
2	520	6 Սեպտ./Հոկ.	1	Անգ.1:1-11	Անգեև ժողովրդին վեր է հանում գործելու համար
			24	Անգ.1:12-15	Մարդիկ սկսում են կառուցել
		7 Հոկտ./Նոյ.	1	Անգ.2:1-9	Աստծո Տանարի ապագա փառքը
		8 Նոյ./Դեկ.	?	Չաք.1:1-6	Չաքարիան սկսում է մարգարեանալ
		9 Դեկ./Հուն.	24	Անգ.2:10-19 Անգ.2:20-23	Աստված սկսելու է օրհնել Հաստատվելու է Մեսիայի թագավորությունը, աշխարհի իշխանությունները վերացնելուց հետո
4	518	9 Դեկ./Հուն.	24	Չաք.1:7-6:8 Չաք.6:9-15	Չաքարիայի գիշերվա տեսիլքները Հետուի թագադրումը՝ Մեսիայի քահանայության նախապատկերը
			4	Չաք.7,8	Ապաշխարությունը անհրաժեշտ է. օրհնությունը՝ խոստացված
6	516	12 Մարտ/Ապր. ?	3	Եզրաս 6:15 Չաք.9-14	Տանարի նվիրաբերումը Տանարի նվիրաբերումից հետո

- VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ – Գիրքը բաժինների է բաժանված ըստ մարգարեի քարոզների.
- Ա. Առաջին Քարոզը, 1:1-11, Նորոգե՛ք Տաճարը
 - Բ. Առաջնորդների և ժողովրդի արձագանքը, 1:12-15
 - Գ. Երկրորդ Քարոզը, 2:1-9, Տաճարի չափերը խնդիր չէն
 - Դ. Երրորդ Քարոզը, 2:10-19, Աստծո օրհնությունները կհոսեն, եթե ժողովուրդը հնազանդի և նորոգի Տաճարը:
 - Ե. Չորրորդ Քարոզը, 2:20-23, Մեսիայի Տիեզերական Թագավորությունը նախանշված Չորաբարեկի կյանքում:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Գրքի առանցքային թեման Երկրորդ Տաճարի վերակառուցումն է, որը դրանից մի քանի տարի առաջ դեռ արհամարհվում էր.
 - 1. տե՛ս Եզրաս 5:16 (1-ին տարի - Սասրասարի օրոք)
 - 2. տե՛ս Եզրաս 3:8-13 (2-րդ տարի – Չորաբարեկի օրոք)
- Բ. Ֆիզիկական անմիջական օրհնությունների համար Աստծո խոստումները և ապագայի Մեսիական օրհնությունները կապված են Տաճարի վերակառուցման հետ (Մովսիսական Ուխտի նորոգություն):
- Գ. Տաճարի չափը և վայելչությունը խնդիր չէր, որքան դրա ներկայությունը: Ճշմարիտ փառքը Աստծո ներկայությունն էր, որը խորհրդապատկերում էր Տաճարը:




IX. ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

- Ա. Տերմիններ և արտահայտություններ
 - 1. «ձեր ձեղունագարդ տները», 1:4 (NASB & NIV)
 - 2. «քննեցե՛ք ձեր ճանապարհները», 1:5,7 (NIV, «ուշադրությո՛ւն դարձրեք ձեր ճանապարհներին»)
 - 3. «կշարժեմ բոլոր ազգերը», 2:7 (NASB & NIV)
 - 4. «այս վերջին Տան փառքը մեծ պիտի լինի առաջինից», 2:9 (NASB & NIV)
 - 5. «Չորաբարեկ... քեզ որպես կնիք կդնեմ», 2:23 (NASB & NIV)
- Բ. Անձիք
 - 1. Դարեհ I, 1:1
 - 2. Չորաբարեկ, 1:1
 - 3. Հեսու, 1:1
 - 4. «Չորաց Տերը», 1:2 (NIV, «Ամենակարող Տերը»)

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ – Չկան


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1. Ո՞րն է գրքի կենտրոնական թեման:
- 2. Ինչո՞ւ էին գերությունից վերադարձած հրեաները Հուդայում դժվարին կացության մեջ:
- 3. Գլուխ 2-ի ո՞ր բաժիններն են Մեսիական:
- 4. Բացատրե՛ք 2:3 խոսքը:
- 5. Բացատրե՛ք 2:10-19 խոսքերը:
- 6. Ինչո՞ւ են այսքան հրաշալի բաներ գրված Չորաբարեկի մասին, երբ պատմությունը շատ քիչ տեղեկություններ է հաղորդում նրա ձեռքբերումների վերաբերյալ (2:20-23):



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՉԱՔԱՐԻԱԿ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է մարգարեի անունով:

Բ. Նրա անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ հիշում է», «ՅԱՀՎԵԻՑ հիշվող» կամ «ՅԱՀՎԵՆ հիշել է»: Նրա անունն ակնարկում է, որ ՅԱՀՎԵՆ դեռևս հրեաների հետ է և նորոգել է ուխտը:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարեներ» բաժնի մի մասն է (Ժողովողի 49:10 /անկանոն/)

Բ. Այն «Տասներկուսից»՝ փոքր մարգարեների հավաքածուի, մի մասն է (Բարա Բաթրա 14բ):

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել մարգարեների գրքերի պես, դրանք գրված են մեկ գալարի վրա:
2. Ներկայացնում են տասներկու ցեղերը կամ դրանց սիմվոլիկ թիվը:
3. Արտացոլում են տվյալ գրքերի ժամանակագրության ավանդական տեսությունը:

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը շատ գիտնականներ կապել են ժամանակագրության հետ: Ակնհայտ է, որ Անգե և Չաքարիա մարգարեությունների գրքերը պատմական համարժեքներ են:

III. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքը վերջին ժամանակների հայտնության /ապոկալիպտիկ/ գրականության օրինակ է.

1. 1-8 գլուխները հիմնականում արձակ են
2. 9-14 գլուխները հիմնականում բանաստեղծական են

Բ. Այս ժանրը յուրահատուկ էր հրեաներին: Հանախ այն կիրառվում էր ճնշումներով լի ժամանակներում, որով արտահայտում էին այն վստահությունն ու համոզմունքը, որ Աստված է պատմության Տերը և Իր ժողովրդին կազատագրի:

Գ. Հատկանշական է իր.

1. Աստծո տիեզերական ինքնիշխանության ուժեղ զգացողությամբ,
2. այս դարում առկա բարոյ և չարի միջև պայքարով,
3. գաղտնի կողավորված բառերի գործածությամբ,
4. գույների գործածությամբ,
5. թվերի գործածությամբ,
6. կենդանիների և երբեմն էլ կենդանակերպ-մարդկանց գործածությամբ
7. Աստված Իր հայտնությունները հաղորդում է երազների կամ տեսիլքների միջոցով, սովորաբար հրեշտակների միջամտությամբ՝ մասնակցությամբ
8. հիմնականում կենտրոնանում է ապագայի վրա

Դ. Մի քանի այլ օրինակներ.

1. Հին Կտակարան
 - ա. Դանիել 7-12
 - բ. Եզեկիել 37-48 (?)
2. Նոր Կտակարան
 - ա. Մատթեոս 24, Մարկոս 13, Դուկաս 21, 2 Թեսաղ.2
 - բ. Հայտնություն

3. Անկանոն գրքերից.
 - ա. 1 Ենովք
 - բ. 4 Եզրաս
 - գ. Բարուք

Ե. Ջերոմը Չաքարիային անվանում է ՀԿ-ի ամենախորթին՝ անորոշ գիրքը: Մինչդեռ այս գիրքը բազմաթիվ անգամներ մեջվերվում են ՆԿ-ում.

1. 1-8 գլուխները՝ Հայտնության գրքում,
2. 9-14 գլուխները՝ Ավետարաններում

Չ. Այս տեսիլքները մեկնելը դժվար են, սակայն եթե մենք մտապահենք այն պատմական միջավայրը, ապա դրանք պետք է որ կապված լինեն հետզերության Երուսաղեմում Տանարի վերակառուցման հետ: Դրանց առանցքային թեման ներման նոր օրն ու Մեսիայի գալուստն է:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Չաքարիան երբայերենում մեծ տարածում գտած անուն էր: Այն երկու կերպ էր գրվում՝ Չեքարիա և Չաքարիա /Zechariah or Zachariah/: ՀԿ-ում կան 27 անձիք, որոնց անունները գրվում է «ե» տառով և միայն 2-ը, որ գրվում են «ա»-ով:

Բ. Գլուխ 1:1 ասում է, որ նա քահանա էր (տես՝ Եզրաս 5:1; 6:14; Նեեմ. 12:4,16): Հայտնի չէ, թե ինչու է Բարաքիան, որ նշված է 1:1-ում, բացակայում է Եզրաս 5:1 և 6:14-ում: Այստեղից կարելի է ենթադրել, որ Չաքարիան վաղ հետզերության շրջանի մաշգարե էր, ինչպես Անգեեն և Մադաքիան և հավանաբար Աբդիան ու Հովելը:

Գ. Մերօրյա շատ գիտնականներ չեն ընդունում Չաքարիա գրքի ամբողջականությունը: Պատճառը 1-8 գլուխներն են, որոնք նկատելիորեն տարբերվում են 9-14 գլուխներից: 1-8 գլուխներում նշվում է մարգարեի անունը և տրվում են պատմական տարեթվեր: Պատմական միջավայրը հստակ հետզերության շրջանին է պատկանում: Այս բաժնից բազմաթիվ անգամներ Հովհաննես առաքյալը ակնարկում է Հայտնության իր գրքում: Սակայն 9-14 գլուխները տարեթվեր չեն տրամադրում: Ոչ մի մարգարեի անուն չի նշվում: Պատմական միջավայրը էսկատոլոգիական է: Այս բաժնից հաճախակի մեջբերումներ են կատարված Ավետարաններում:

Մատթ. 27:9-ում Հիսուսը Չաքարիա 11:12-13-ից կատարած մեջբերումը վերագրում է Երեմիային: Մա սկիզբ է դնում այն հակմանը, որ 9-14 գլուխները Չաքարիային չեն պատկանում: Այնուհանդերձ, նույնիսկ Մեռյալ Ծովի ձեռագրերը ներկայացնում են Չաքարիա գիրքը որպես մեկ ամբողջություն: Գրքում առկա են մի քանի ներքին ապացույցներ, որոնք մատնացույց են անում գրքի ամբողջականությունը.

1. «երկու» թվի կիրառությունը – 4:3; 5:9; 6:1; 11:7; 13:8
2. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍԲԻ կիրառությունը – 2:7, 10; 3:2, 8; 4:7; 9:9,13; 11:1-2; 13:7
3. «անցուդարձող» խոսքի կիրառությունը, որը բնորոշ է Չաքարիային – 7:14; 9:8,
4. «Տերն ասաց» արտահայտության 16 անգամ կրկնվող կիրառությունը,
5. «բնակվել» բայի *qal* ձևը – 2:8; 7:7; 12:6; 14:10:

(Վերցված են Ռ. Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն* գրքից, էջ՝ 954 /R. K. Harrison's *Introduction to the Old Testament*, p.954/): Գրքի ամբողջականության թեմայի շուրջ ավելի ընդարձակ քննարկման համար կարող եք կարդալ Ի. Չ. Յանգի *Հին Կտակարանի Ներածություն* գրքի, էջ՝ 280 /E. J. Young *Introduction to the Old Testament*, p. 280/:

Դ. Փաստն առ այն, որ Չաքարիան կազմված է պատմական և ապագային վերաբերող բաժիններից, չպետք է զարմացնի: Մենք այս ձևաչափը տեսել ենք նախկինում՝

1. Եսայի 1-39 և 40-66

2. Եզեկիել 1-29 և 30-48
3. Դանիել 1-6 և 7-12

Ե. Էնդրյու Հիլն ու Ջոն Ուոլթոնը /Andrew Hill and John Walton/ ՀԿ-յան իրենց նոր ներածական գրքում /էջ՝ 421/ նշում են այս երկու բաժիններից մի շարք նմանություններ: Այս հետևողական գրական տեխնիկան ներկայացնում է միևնույն հեղինակն ունենալու ապացույց:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Չաքարիա 1:1 ասում է, որ մարգարեն իր ծառայությունը սկսեց Դարեհ I (Ք.Ա. 522-486թթ.) արքայի տիրակալության 2-րդ տարվա 8-րդ ամսում: Շատ գիտնականներ հաստատում են, որ այս Դարեհ I-ը, որը Կիմբեսիս II (Ք.Ա.530-522թթ.)՝ Կյուրոս II-ի որդուց հետո տիրեց Պարսից թագավորության վրա, մահացել է Ք.Ա. 522թ-ին: Դարեհը Պարսկական Չորրի գեներալ էր:

Բ. Այս դեպքում տարեթիվը պետք է լինի Ք.Ա. 519 կամ 520թթ. (Անգեևից 2 ամիս հետո): Նա քարոզեց շուրջ երկու տարի (տես՝ 1:1,7; 7:1):

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (վերցված է Ռ. Կ. Հարրիսոնի *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 950)

Ա. Թվագրված մարգարեություններ, 1-8 գլուխներում

1. Ներածություն և ապաշխարության կոչ, 1:1-6:
2. Ութ տեսիլքներ, որոնք կապված են Երուսաղեմի Տաճարի վերակառուցման հետ, 1:7-6:15
 - ա. Չորս ձիավորները. աստվածային բարեփոխման խոստումը, 1:7-17
 - բ. Չորս ավերիչ եղջյուրները և չորս արհեստավորները, 1:18-21 (2:1-4 Երբ.)
 - գ. Երուսաղեմի անչափելի մեծությունը, 2:1-13 (2:5-17 Երբ.)
 - դ. Հետու սրբացումը, պատգամ ուղղված նրան, 3:1-10
 - ե. Յոթ ճրագներով աշտանակը, 4:1-14
 - զ. Մեծ, թռչող գալարը, 5:14
 - է. Կշռամանի մեջ նստած կինը վտարվում է Բաբելոն, 5:5-11
 - ը. Չորս ձիակառքերը, որոնք պտտում են երկիրը, 6:1-8
3. Պատմական բաժին. Հետուն Մեսիայի խորհրդապատկերը, 6:9-15
4. Չաքարիայի հարցաքննությունը ծոմապահության վերաբերյալ, 7:1-8:23:

Բ. Չթվագրված մարգարեություններ, 9-14

1. Ազգի թշնամիների դատաստանը. խաղաղության իշխանի գալուստը, 9:1-17
2. Երկնային Առաջնորդը հավաքում է Իր ընտրյալ հոտը, 10:1-12
3. Բարի և հիմար հովիվները. հոտի տառապանքը, 11:1-17
4. Էսկատոլոգիական պատգամներ, 12:1-13:6
5. Երկնային թագավորության գտող դատաստանը, 13:7-14:21

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գրքի գլխավոր նպատակն է քաջալերել գերությունից դարձած հրեաներին Տաճարը կառուցելու: Սա մեկնարկում է Սաքասարը՝ Եզրաս 1:8; 5:16, սակայն չի շարունակվում մինչև Չորաբաբելի օրերը: Տաճարը մի քանի տարի շարունակ անտեսված է եղել: Անգեևն հաստատում է, որ դա ժողովրդի անտարբերության պատճառով է եղել, մինչ Եզրասը ակնարկում է, որ դա եղել է շրջապատող նահանգների՝ հատկապես Մամարիայի քաղաքական մանյովրը:

Բ. Այս գիրքը չափազանց Մեսիական է: Հիսուսի կյանքին վերաբերող շատ մարգարեություններ գտնվում են 9-14 գլուխներում.

1. թագավորը հեգ է և հեծած ավանակի վրա, 9:9
2. ծախված երեսուն արծաթով. ծառայի գինը և բրուտի դաշտը որպես գերեզմանատեղ, 11:13,
3. Դավթի սերնդից լինելու փաստի շեշտադրություն, 12:4-9,
4. «նրանք Ինձ պիտի նայեն, ում խոցեցին...», 12:10:

Գ. Աստծո տիեզերական սերն ու թագավորությունը երևում է 2:11; 8:20-23; 14:9,16: Իսկ 9-14 գլուխներում շեշտադրվում է բոլոր ազգերի տիեզերական ապստամբությունը, 12:3 և 14:2 (Սաղմ.2):

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻԸ

Ա. Տերմիններ և արտահայտություններ.

1. վերադարձ, 1:3 (NASB & NIV)
2. «խիստ նախանձախնդիր եմ Երուսաղեմի ու Սիոնի համար», 1:14 (NASB & NIV)
3. «և չափման լար պիտի ձգվի Երուսաղեմի վրա», 1:16 (NASB & NIV)
4. չորս եղջյուրներ, 1:18-21 (NASB & NIV)
5. «Ես նրա շուրջ հրեղեն պարիսպ եմ լինելու», 2:5 (NIV, «Ես Ինքս ... նրա շուրջը»)
6. «Նրա աչքի բիրը», 2:8 (NASB & NIV)
7. «Հետուն կեղտոտ հագուստներ էր հագել», 3:3 (NASB & NIV)
8. թռչող մագաղաթ, 5:1 (NASB & NIV)
9. չաստվածներ, 10:2 (NIV, «կուռքեր»)
10. երկու գավազան. «Գեղեցկություն և Կապեր», 11:7, 14 (NASB & NIV)
11. «Ես Երուսաղեմը ... բաժակ... ծանր քար եմ դարձնելու», 12:2-3 (NIV, «...անշարժ քար»)
12. «կենդանի ջրեր պիտի բխեն Երուսաղեմից», 14:8 (NASB & NIV)

Բ. Անձիք




1. Բարաքիա, 1:1,7
2. Տիրոջ հրեշտակը, 1:11; 3:1
3. Սատանա, 3:1-2
4. Շառավիղ, 3:8; 6:12
5. «երկու օծյալները», 4:14
6. Ադադեմոն, 12:11 (NIV, «Ադադ Ռեմոն»)

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Սիոն, 1:14
2. Սենաար, 5:11 (NIV, «Բաբելոն»)
3. Բեթել
4. Եմաթ, 9:2
5. Սակեդդովի դաշտ, 12:11
6. Ձիթենյաց լեռ, 14:4


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչպե՞ս է Չաքարիան կապված Անգեղի հետ:
2. Ի՞նչ առնչություն ունեն 1:7-6:8 տեսիլքները:
3. Թվարկե՞ք գրքում Մեսիային տրված տիտղոսները՝ անունները:
4. Ովքե՞ր են գլուխ 4-ում տրված ձիթենիները:
5. Ծոմապահության քանի՞ օր է նշված 7-8 գլուխներում:
6. Թվարկե՞ք 9-14 գլուխներում առկա այն մարգարեությունները, որոնք վերաբերում են Քրիստոսի կյանքին:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES

ՄԱՂԱՔԻԱ ԳՐՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ա. Գիրքը կոչվել է մարգարեի անունով

Բ. Նրա անունը նշանակում է «Իմ Պատգամաբերը»:

1. հնարավոր է տիտղոս է, «իմ պատգամաբեր», 3:1
2. հնարավոր է՝ «Իմ հրեշտակ»,
3. հնարավոր է՝ հասուկ անուն:

II. ԿԱՆՈՆԸ

Ա. Այս գիրքը «ուշ մարգարեներ» բաժնի մի մասն է (Ժողովողի 49:10 /անկանոն/)

Բ. Այն «Տասներկուսից»՝ փոքր մարգարեների հավաքածուի, մի մասն է (Բաբա Բաթրա 14բ):

1. Եսայի, Երեմիա և Եզեկիել մարգարեների գրքերի պես, դրանք գրված են մեկ գալարի վրա:
2. Ներկայացնում են տասներկու ցեղերը կամ դրանց սիմվոլիկ թիվը:
3. Արտացոլում են տվյալ գրքերի ժամանակագրության ավանդական տեսությունը:

Գ. «Տասներկուսի» կամ Փոքր Մարգարեների հերթականությունը շատ գիտնականներ կապել են ժամանակագրության հետ: Մաղաքիան փոքր մարգարեներից վերջինն է:

III. ԺԱՆՐԸ

Ա. Ճշմարտությունը հաղորդելու համար կիրառում է սուր քննադատություն: Գրված է հարց ու պատասխանի ձևաչափով: Ներկայացվում է մի ճշմարտություն և ապա մի ենթադրյալ առարկող հարց է ուղղում կամ մեկնաբանություն կատարում, որին խոսողը պատասխան է տալիս:

Բ. Մաղաքիան կոչվել է «Եբրայեցի Սոկրատեսը»:

Գ. Պողոսն ու Հակոբոսը ճշմարտություն ներկայացնելից այս նույն մեթոդն էին կիրառում:

Դ. Այս կառուցվածքը կարելի է տեսնել «Բայց դուք ասում եք...», 1:2, 6, 7 (երկու անգամ), 12, 13; 2:14, 17 (երկու անգամ); 3:7, 8, 13, 14 խոսքերում:

Ե. Եբրայական պոեզիա չէ:

IV. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. “malachi” եբրայերեն տերմինը, որն օգտագործվում է 1:1-ում, նշանակում է «հրեշտակ» կամ «պատգամաբեր»:

1. Շատերը այն որպես հասուկ անուն են ընդունում:
2. LXX տարբերակը այն ընդունում է որպես տիտղոս (տես՝ 3:1):
3. Ըստ Որոզինեսի այս տերմինը վերաբերում էր մի հրեշտակի:

Բ. Թավմուդը (Mecillah 15a) ասում է, որ Մուլթեն է գրեալ այս գիրքը:

Գ. Արամերեն Հովնաթանի Թարգումն ասում է, որ դա եղել է Եզրասի տիտղոսը: Այս մեկնությանը հետևել են Ջերոմը, Ռաշին և Կալվինը:

Դ. Ջոզեֆուսն իր *Հրեաների Հնությունները*, 11:4-5-ում նշում է բոլոր հետզերության շրջանի անձանց իրենց անուններով, բացի Մաղաքիան:

Ե. Նրա անունը այս գրքից ՆԿ-ում կատարված որևէ մեջբերման առնչությամբ չի նշվում:

Զ. 2 Եզրասը թվարկում է հետզերության շրջանի մարգարեներին՝ Անգեե, Չաքարիա և Մաղաքիա:

Է. Քանի որ ոչ մի այլ մարգարեական գիրք անանուն չէ, Մաղաքիան պետք է որ հատուկ անուն լինի: Հիշեք, որ հեղինակը չի ազդում ներշնչանքի վրա:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Նեեմիայի և Մաղաքիայի պատմական հիմքերի միջև մեծ նմանություն կա.

1. լարվածություն տասանորդի հարցի շուրջ, Մաղ.3:8; Նեեմ.10:32-39
2. աղքատները հարստահարված էին, Մաղ.3:5; Նեեմ.5:1-5
3. միջ-կրոնական ամուսնություններ, Մաղ.2:10,11; Նեեմ.13:1-3, 23-24 (Եզրաս 9:1-2):

Բ. Լավագույն տարբերակը կարծես թե Ք.Ա. 450-430թթ. են՝ Նեեմիայի Արտաշես I-ի պալատ վերադառնալուց հետո. Նեեմ.13:6:

VI. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԵԴՈՎՄԻ ՄԻՋԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԸ, 1:2-5

Ա. Նրանց ասվել էր, որ բարեկամների պես հարգեն միմյանց.

1. Թվոց 20:14
2. 2 Օրինաց 2:4-6

Բ. Նրանց միջև շատ հակառակություն կային.

1. Թվոց 20:14-21
2. Դատավորաց 11:16բ
3. 1 Թագավորաց 14:47-48

Գ. Մարգարեություններ նրանց դեմ.

1. Թվոց 24:18
2. Եսայի 34:5բ; 63:1բ
3. Երեմիա 49:7բ
4. Ողբ Երեմիա 4:21-22
5. Եզեկիել 26:12բ; 35:13բ; 36:2-6
6. Ամովս 1:11-12

VII. ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Մաղաքիա գրքի ընդհանուր նկարագրությունը տրված է համաձայն իր վեց բանավեճերի կամ սուր քննադատությունների: Մաղաքիան խոսում էր Աստծո կողմից, ժողովուրդը պատասխանում էր և դարձյալ Մաղաքիան էր խոսում Աստծո կողմից:

Բ. Ընդհանուր նկարագիրը.

1. Աստծո սերը վերադարձող հրեաների հանդեպ, 1:2-5

2. Աստված դատապարտում է քահանաներին, 1:6-2:9
3. Աստված դատապարտում է ապահարզանը, խառը կրոնական ամուսնությունները, 2:10-16
4. Աստված դատապարտում է վատ վերաբերմունքը (ո՞ր է դատաստանի Աստվածը), 2:17-3:6
5. Աստված դատապարտում է Տանարի կարիքների նրանց հովանավորությունը, 3:7-12
6. Աստված դատապարտում է վատ վերաբերմունքը (զուր է Աստծուն ծառայելը), 3:13-4:3
7. Վերջին հորդոր և խոստում, 4:4-6

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մաղաքիան արձանագրում է գերությունից վերադարձող հրեաների անտարբերության և հիասթափության մեղքերը:

Բ. Այս գիրքն ունի ամբողջ մարդկության համար մի քանի խոսքեր՝ հայտարարություններ: Աստված գործածելու է Իսրայելին, որպեսզի փրկի աշխարհը, 1:5,11,14; 3:12:

Գ. Աստծո ժողովուրդը բռնազավթել է Նրա բնավորությունը.

1. 2:17 – Աստված արդարությամբ չի դատում
2. 3:6 – Աստծո անփոփոխ բնավորությունը միակ պատճառն է, որ դեռ Իսրայելը գոյատևում է
3. 3:14 – Չուր է Աստծուն ծառայելը:

Դ. Այս գիրքն ունի մեսիական հույս՝ 3:1; 4:5:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԻՔ

Ա. Տերմիններ և արտահայտություններ

1. պատգամ, 1:1 (NASB & NIV)
2. «բայց դուք ասում եք...», 1:2 (NIV, «Բայց դուք հարցնում եք...»)
3. «դուք կաղն ու հիվանդն եք զոհ մատուցում», 1:8 (NIV, «կաղ կամ հիվանդոտ կենդանիներ»)
4. «քմծիժադում եք դրա վրա», 1:13 (NIV, «արհամարհանքով ծաղրում եք»)
5. «հանդիմանեմ ձեր սերնդին», 2:3 (NIV, «հանդիմանեմ ձեր ժառանգներին»)
6. «օտար աստծո աղջկա ամուսին եղավ», 2:11 (NASB & NIV)
7. «Տերը, ում դուք փնտրում եք, հանկարծակի Իր տանարը կգա», 3:1 (NASB & NIV)
8. «հիշատակի գիրք», 3:16 (NIV, «հիշատակի մագաղաթ»)
9. «արդարության Արեգակը պիտի ծագի, բժշկություն պիտի լինի նրա թևերի վրա», 4:2 (NASB & NIV)

Բ. Անձիք




1. Եսավ, 1:2-3
2. Հակոբ, 1:2
3. Ղևի, 2:4
4. կախարդներ, 3:5
5. օտարական, 3:5
6. Եղիա մարգարեն, 4:5

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Եդովմ, 1:4
2. Հուդա, 2:11
3. Իսրայել, 2:11
4. Քորեթ, 4:4


XI. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչպիսի՞ն է Մադաքիա գրքի կառուցվածքը:
2. Ինչո՞ւ է 1:2-ում նշվում Եսավի մասին:
3. Ինչպե՞ս են քահանաներն ու ժողովուրդը ցույց տալիս իրենց անհարգալից վերաբերմունքը ՅԱՀՎԵԻ հանդեպ:
4. 2:2; 3:9 խոսքերում նշված անեծքը Սուրբ Գրքի որ հատվածից է վերցված: Ի՞նչ է պարունակում:
5. Ինչո՞ւ է Աստված ասում, որ ատում է ապահարգանք՝ ամուսնալուծությունը: 2:16
6. Ինչպե՞ս էր Մեսիան հանկարծակի Տանար գալու:
7. Ինչո՞վ է 3:6-ը այդքան կարևոր:
8. Արդյո՞ք Աստված բարգավաճում է խոստանում տասանորդ տալու դեպքում:
9. Արդյո՞ք նախքան Հիսուսի գալուստը Եղիան եկավ:



**ANCIENT
NEAR EAST**

PALESTINE



0 10 20 30 40

SCALE IN MILES